

E. Loring

1159469

ՎԱՅՄԱՆԻ ՎԱՆՎՊԵՏՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆԻ և ԿՐԹԱՅԻՆ ԱՄՈՒՆԵՄԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՐՆԵՏ

016: [829 Ղափհանենիցյան + 008(11)

ՆԻԿՈՒԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

85



Նվիրվում է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ
ՆԻԿՈՒԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
Ժնեղյան 85-ամյակին

A103039



ԶՈՒԿԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ • 2017



Տպագրվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Գիրքը պատրաստվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում

Գիտական խմբագիր՝

ՌՈՒՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր,
արարազետ, Հայաստանի Հանրապետության արտակարգ և
խազոր դեսպան

Համակարգողներ՝

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, պատմական գիտությունների
թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտու-
տի արարական երկրների բաժնի վարիչ

ՄՐԱԲՍ ՓԱԸԱՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխա-
տող, արարազետ

Գրախոսներ՝

ԱՐՇԱԿ ՓՈԼԱՂՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, արարազետ-քոլեջետ, Միջնալի Արարական
Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության
արտակարգ և խազոր դեսպան

ԱՐՄԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,
արարազետ, եզիպտոսի Արարական Հանրապետությու-
նում Հայաստանի Հանրապետության արտակարգ և խազոր
դեսպան

ՆԿԱՈՒՍԱՅ ՀՈՒԿԱՆՆԻՍՅԱՆ – 85: Լիկորվալ է պատմական գիտու-
Հ 854 թյունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գիտության
վաստակավոր զորիչ Լիկորայ Հովհաննիսյանի ծննդյան 85-ամյակին.—
Եր.: «Ձեռագրակ» հրատ., 2017.— 304 էջ:

ՀՏԴ 94
ԳԱԴ 63.3

*Պատմագիտությունն ազոբատուն է, իսկ
պատմաբանը՝ նրա մենագիր մի խցում
ազոբատանում միայնակ մաքառող, բուրդի
կողմից լրված մի մեքուների ազոբատաց:*

Նիկոլայ Հովհաննիսյան

Այս ինքնատիպ հատորը նվիրված է ականավոր արևելագետ–
արարագետ–միջազգայնագետ, միջազգային մեծ ճանաչում
ունեցող, արտասահմանյան բազմաթիվ գիտական ակադեմիանե-
րի և ընկերությունների անդամ, պատմական գիտությունների դոկ-
տոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գիտության վաստա-
կավոր գործիչ Նիկոլայ Հովհաննիսյանի ծանրակշիռ ու բազմաբե-
ղուն գիտական և հասարակական–քաղաքական գործունեության
լուսարանմանը: Բացառիկ է նրա դերը հայ արդի արևելագիտու-
թյան ձևավորման, զարգացման և կայացման գործում: Նա Հա-
յաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինս-
տիտուտի հիմնադիրներից, հիմնադրողներից և լիդերներից մեկն է:

1984–1995 թվականներին զբաղեցնելով արևելագիտության
ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալի, իսկ 1995–2006
թվականներին՝ տնօրենի պաշտոնը՝ պրոֆեսոր Ն. Հովհաննիս-
յանը կարողացավ պահպանել հայ արևելագետների գենոֆոնը և
հայ արևելագիտական ակադեմիական կենտրոնը վերածել միջազ-
գային չափանիշներով բարձրակարգ գիտական հաստատության,
որն իր ուրույն և արժանի քարձը տեղը գրավեց միջազգային արևե-
լագիտական կենտրոնների համակարգում:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը դասական արևելագետ է,
ականավոր տեսարան–վերլուծարան, որը մասնագետների շրջա-
նում հայտնի է որպես «Նոր զաղափարների գեներատոր», «Մտեղ-
ծագործ և կառուցողական զաղափարների աղբյուր», «Դժաստուն

պատմարան», «Հայրենական գիտության կենդանի լեզունը»: Նա համաշխարհային արևելագիտությունը և իր նախասփրության գլխավոր ոլորտը հանդիսացող արաբագիտությունը հարստացրել է նոր ուղղություններով, նոր հայեցակարգային և հիմնարար տեսադրույթներով: Նա հայկական արաբագիտական դպրոցի հիմնադիրն է, որի քովով անցել են ոչ միայն հայ, այլև տարրեր երկրների և տարրեր ազգերի արաբագետներ: Բարձր գնահատելով հայ տաղանդավոր գիտնականի արաբագիտական ուսումնասիրությունները մասնագետները գտնում են, որ, շնորհիվ նրա աշխատությունների, որոնք հրատարակվել են բազմաթիվ լեզուներով աշխարհի տարրեր երկրներում, հայկական արաբագիտությունը բարձրացել է նոր և ավելի բարձր մակարդակի:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի ուսումնասիրություններում, ի տարբերություն շատ հետազոտողների, բացառիկ տեղ է հատկացված Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում հայերի հարաբերություններին նրանց հյուրընկալ երկրների ժողովուրդների հետ, բացահայտված է այն կարևոր դերը, որ պետությանաստեղծ հայերը խաղացել են տարածաշրջանի երկրների պետական, քաղաքական-տնտեսական և մշակութային կյանքում:

Ն. Հովհաննիսյանը հեղինակել է ավելի քան 550 աշխատությունների, այդ թվում ավելի քան 80 մենագրությունների և 480 գիտական հոդվածների, որոնք լույս են տեսել հայերեն, անգլերեն, արաբերեն, գերմաներեն, ֆրանսերեն իտալերեն, կորեերեն, հունգարերեն, ճապոներեն, պարսկերեն, ռումիներեն, վրացերեն, քրդերեն, ֆրանսերեն լեզուներով: Նրա խմբագրությամբ հրատարակվել է մոտ 70 գիրք: Հայ հռչակավոր արևելագետի աշխատությունները մշտապես գտնվել են գիտական հանրության ուշադրության կենտրոնում: Այդ մասին են վկայում նրա և նրա աշխատությունների վերաբերյալ տարրեր երկրներում հրատարակված մոտ 220 գրախոսականները, գիտական կարծիքները և այլ քննադատական արձագանքները, ինչն ինքնին հազվադեպ երևույթ է:

**ԴՐՈՖԵՍՈՐ ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ
ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

ՀԱՅ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՐԱ ՏԵՍԱԴՐՈՒՅԹԸ

1. ՄՈՒՏԲԸ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Նիկոլայ Հովհաննեսի Հովհաննիսյանը ծնվել է 1930 թվականի հունիսի 10-ին Լենինականում: Հայրը՝ Հովհաննես Հովհաննիսյանը (1906-1993), հայտնի մասնագետ էր, եղել է Լենինականի շոգեքարշային դեպոյի անվանի հրահանգիչ-մեքենավար և մեքենավարների մի ամբողջ սերնդի դաստիարակ-ուսուցիչ: «Վարպետ Հովհաննեսը», ինչպես կոչում էին նրան, մեծ հարգանք ու հեղինակություն էր վայելում և մեծ ներդրում է ունեցել շոգեքարշային դեպոյի կայացման ու զարգացման գործում: Մայրը՝ Սիրուհի Հովհաննիսյանը (1909-1990), ծնվել է Էրզրումում, և 1915 թ. Մեծ եղեռնի ժամանակ, կորցնելով մորը և հարազատներին, հայ քուսազադայների զանազան քարտվանների հետ երկար դեզերումներից հետո, հրաշքով փրկվում և հայտնվում է Ալեքսանդրապոլում, ապաստան գտնում ամերիկյան որբանոցում ու հաստատվում Հայաստանում: Ինչպես նշում է Ն. Հովհաննիսյանը, իր մայրը հավատացած էր և հույս ուներ, որ նքն օրերից մի օր վերադառնա Էրզր, անպայման կգտնի իր հայրական տունը և տան քանաչին, որը այդպես էլ մնաց երազանք:

Ն. Հովհաննիսյանը 1938-1948 թթ. սովորել է Լենինականի № 38 միջնակարգ դպրոցում, որտեղ աչքի է ընկել իր ընդունակություններով և բարձր առաջադիմությամբ: Դպրոցն ավարտելուց հետո, 1948 թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի նո-

րարաց միջազգային հարաբերությունների ֆակտյուստը: Դա մեծ հեղինակություն վայելող և իր քննությունը շատ հետաքրքիր, եզակի ֆակտյուստն էր, որը նրան շատ քան է տվել թե՛ գիտելիքների և թե՛ լեզուների իմացության առումով: Նման կառույց, բացի Երևանից, գոյություն ուներ միայն Մոսկվայում և Կիևում: 1953 թ. գերագանց դիպլոմով ավարտում է այդ ֆակտյուստը և համալսարանի դեկան-վարությունը, հաշվի առնելով նրա հավումները և սնրը գիտության եկատմամբ, նրան երաշխավորում է շարունակել ուսումնասությունն ասպիրանտուրայում, որը նա փայլուն կերպով ավարտում է 1956 թվականին: Դա նրա առջև լայնորեն բացում է գիտության դռները, և երիտասարդ ու խոստումնալից մասնագետը համարձակորեն ոտք է դնում գիտության հանելուկային և զարմանահարշաշխարհը:

Նիկոլայ Հովհաննիսյանը գիտության վերաբերյալ իր նրազանքները վերածեց իրականության, երբ 1960 թ. մարտին աշխատանքի ընդունվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի ետրաստեղծ արևելագիտական առաջին գիտական կենտրոնում՝ արևելագիտության բաժնում, որպես գիտական աշխատող: Այդ պահից սկսած մինչև օրս, կես դարից ավելի, նրա ամբողջ գիտակցական կյանքը և գիտական գործունեությունը կապված է արևելագիտական ակադեմիական կենտրոնի հետ, որի կայացմանը և զարգացմանը նա նվիրել է իր ողջ նշանը և մտավոր կարողությունները՝ հաջորդաբար զբաղեցնելով կրտսեր, ապա ավագ գիտաշխատողի, բաժնի վարիչի, տնօրենի գիտական գծով տնօրենի և տնօրենի պաշտոնները:

1950-1960-ական թվականները կարևոր շրջան հանդիսացան խորհրդային արևելագիտության ձևավորման ու զարգացման համար: Այդ տարիներին մեծ թափ էին ստացել հակազաղութային, ազգային-ազատագրական շարժումները Արևելքում, հատկապես Ասիայում և Աֆրիկայում, ինչպես նաև Լատինական Ամերիկայում: Դարակազմիկ նշանակություն ունեցավ 1960 թ. Միավորված ազգերի կազմակերպության որոշումը գաղութային համաշխարհային համակարգի վերացման մասին, որը մեծապես նպաստեց միջազգային ասպարեզում անկախ և գերիշխան մեծաքանակ պետությունների հայտնվելուն, ինչը, իր հերթին, ստեղծեց միանգամայն նոր իրադրություն, որի արդյունքում, ինչպես դիպուկ նկատել է պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը, «Արևելագիտությունը հասարակական գիտությունների համակարգում մղվեց առաջին պլան»:

Աշխարհի տարրեր երկրներում ձևավորվեցին արևելագիտական հետազոտական կենտրոններ: Այդ գործընթացից դուրս չմնաց և չէր էլ կարող դուրս մնալ Խորհրդային Միությանը, որի կազմի մեջ մտնող տասնհինգ հանրապետություններից ութը աշխարհագրականորեն և պատմականորեն պատկանում էին Արևելքին:



Նկատի պետք է ունենալ նաև այն պարագան, որ այդ շրջանում լայն ծավալ էր ընդունել ստոր պատերազմը երկու հակադիր սոցիալիստական և իմպերիալիստական բլոկների միջև, համապատասխանաբար Խորհրդային Միության և Ամերիկայի Միացյալ Նահանգների գլխավորությամբ: Արևելքը՝ մասնավորապես Մերձավոր և Միջին Արևելքը, այդ պայքարի գլխավոր քառերաբններից մեկն էր, և արևելագիտությունը դարձավ գիտական այն կարևոր ուղղություններից մեկը, որը պետք է ծառայեր վերուշյալ երկու հակոտնյա խմբավորումների մեջ մտնող երկրների ռազմական, քաղաքական, աշխարհաքաղաքական, տնտեսական և մշակութային շահերին:

Խորհրդային արևելագիտության ձևավորման ճանապարհին կարևոր նշանակություն ունեցավ 1960 թ. Մոսկվայում կայացած արևելագետների խորհրդաժողովը, որտեղ արևելագիտության

հիմնախնդիրների մասին ծրագրային փայլուն զնկուցումով հանդես եկավ Խորհրդային Միության Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Անաստաս Միկոյանը: Նիկոլայ Հովհաննիսյանի հիշողության մեջ հատկապես տպավորվել են խորհրդային արևելագետներին հասցեագրված խորհրդային ականավոր ղեկավարի «Արևելքը վաղուց արթնացել է, իսկ արևելագետները շարունակում են քնած մնալ» քննադատական խոսքերը (Ն. Հովհաննիսյան, Բոսֆորից մինչև Խաղաղ օվկիանոս, Մտորումներ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի 35-ամյակի կապակցությամբ: Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXV, Երևան, 2006, էջ 13): Դա մի ահազանգ-ուղերձ էր, հասցեագրված արևելագետներին, որը, իրոք, արթնացրեց խորհրդային արևելագետներին և խթանեց գիտության այդ կարևոր ուղղության զարգացումը: Այդ նպատակով, խորհրդային կառավարության մի շարք որոշումներով, ձևոնարկվեցին անհրաժեշտ քայլեր արևելագիտության զարգացման համար ոչ միայն կենտրոնում՝ Մոսկվայում, այլև Խորհրդային Միության մի շարք արևելյան միութենական հանրապետություններում: Արևելագիտության ինստիտուտներ ստեղծվեցին Վրաստանում, Ադրբեջանում և Ուզբեկստանում, արևելագիտության քաժիններ՝ Հայաստանում և Տաջիկստանում, արևելագիտական խմբեր՝ Ղազախստանում, Թուրքմենստանում, Ղրղզստանում և այլն:

Հայաստանում ստեղծված արևելագիտական հաստատություններ պաշտոնապես կոչվում էր «Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության քաժին», որը գլխավորեց պատմական գիտությունների թեկնածու Հ. Գ. Ինձիկյանը: Նա այդ պաշտոնում մնաց մինչև 1971 թ.:

Ինչպես վկայում է պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը, հայ մտավորականության շրջանում նդան դժգոհության արտահայտություններ այն կապակցությամբ, որ Հայաստանում անմիջապես չստեղծվեց արևելագիտության ինստիտուտ, ինչպես հարևան Վրաստանում, Ադրբեջանում կամ Ուզբեկստանում, թեև նախատեսված էր ինստիտուտ ստեղծել նաև Հայաստանում: Ն. Հովհաննիսյանը, որը լավատեղյակ է եղել այդ հարցին, գտնում է, որ դրա հիմնական «մեղավորներին» պետք է փնտրել Հայաստանի և ակադեմիայի ղեկավարության մեջ, ընդգծելով, որ Հայաստանը դրա իրավունքն ավելի ուներ, քան թե Վրաստանը, Ադրբեջանը և Ուզբեկստանը: Այդ կապակցությամբ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը նշում է.

«Այդ երկրներն իրենց արևելագիտական ավանդույթներով, գիտության այդ ճյուղի հնությունը, սկզբնաղբյուրների առատությամբ և բազմազանությամբ, գիտական նվաճումներով ակնհայտորեն զիջում էին հայ արևելագիտությանը, որը վաղուց իր ինքնուրույն, արժեքավոր և հիմնարար դերակատարությունն էր դրսևորել գիտության այդ համաշխարհային ուղղության մեջ, դերակատարում, որն անհնար էր շփոթել ուրիշ մեկի հետ»։ Իր այդ տեսակետը հիմնավորելու համար, պրոֆ. Ն. Հովհաննիսյանը հղում է կատարում համաշխարհային արևելագիտության և իսլամագիտության մի այնպիսի անառարկելի հեղինակությանը, որպիսին որս մեծ գիտնական Վ. Բարտոլդն է, որը վկայում է. «Եվրոպական գիտնականները XIX դ. սկզբներից գլխավորապես հետաքրքրվում էին հայկական պատմագիտական գրականությամբ՝ հույս ունենալով երևում գտնել նյութեր Առաջավոր Ասիայի պատմության վերաբերյալ: Շարունակելով իր մտորումները՝ որս մեծավաստակ գիտնականը հաստատում է. «Ռուսական գիտությունը պարտական է նաև ծագումով հայկական և վրացական գիտնականներին՝ ինչպես հայկական և վրացական շրջանակներում մշակված գիտական տեսակետների տարածմանը Ռուսաստանում, այնպես էլ հետագայում այդ տեսակետների ճշգրտմանը՝ նվրոպական գիտության մեթոդների հիման վրա» (Бартольд В., История изучения Востока в Европе и России, М., 1925, с. 291, 293):

Հայ արևելագետները, չհաշտվելով բաժնի կարգավիճակի հետ, պայքար ծավալեցին արևելագիտության բաժինը արևելագիտության ինստիտուտի վերածելու համար: Այդ պայքարում իր ակտիվ մասնակցությունն ունեցավ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը: Դա երկարատև և դժվարին պայքար էր, որը տևեց մոտ 12 տարի, և, ի վերջո, պսակվեց հաջթանակով: Հաշվի առնելով արևելագիտական բաժնի և Հայաստանի արևելագետների ներդրումը խորհրդային արևելագիտության զարգացման գործում, վերջապես 1971 թ. հունիսի 24-ին որոշում ընդունվեց արևելագիտության բաժինը Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի վերակազմավորելու մասին, որի հիման վրա 1971 թ. հուլիսի 28-ին Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահությունն ընդունեց համապատասխան որոշում:

1971 թ. հուլիսի 28-ը Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի ծննդյան օրն է:

Դրանով սկսվեց հայ արևելագիտության զարգացման նոր փուլը: Այդ կապակցությամբ Ն. Հովհաննիսյանն այն ճիշտ տեսակետն է արտահայտել, որ «արևելագիտության բաժնի և արևելագիտության ինստիտուտի միջև չպետք է ջրբաժան գիծ տեսնել, նրանց ստեղծումը և զործունեությունը հարկ է դիտել որպես մեկ ամբողջություն, որպես միևնույն կառույցի զարգացման տարրեր փուլեր և աստիճաններ»:

Ինստիտուտի առաջին տնօրեն նշանակվեց Հայաստանի հին պատմության և հելլենիզմի դարաշրջանի ակադեմիկոս մասնագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Խ. Սարգսյանը (հետագայում՝ ակադեմիկոս), որն այդ պաշտոնը զբաղեցրեց ընդհուպ մինչև 1995 թ.:

Հայաստանում արևելագիտական կենտրոնի ստեղծումը կանխորոշեց Ն. Հովհաննիսյանի հետագա գիտական զործունեության զգալիոր ուղղվածությունը: Արևելագիտությունը՝ ի մասնավորին արարագիտությունը, դարձավ այն բնագավառը, որին նա արդեն եվիրել է ավելի քան կես դար:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը արևելագիտության ինստիտուտի հիմնադիրներից և հիմնադրողներից մեկն է: Նա հայ արևելագետների առաջին սերնդի հետ միասին իր ուսերի վրա է կրել նրա հիմնադրման, արևելագիտության ձևավորման ու զարգացման, նրա կառուցվածքի մշակման, զգալիոր ուղղությունների հաստատման, հեռանկարային ծրագրային հիմնախնդիրների առաջադրման, ինչպես նաև կադրերի պատրաստման, միջազգային գիտական կապերի հաստատման ողջ ծանրությունը: Բացառիկ է նրա դերը տեսական հանգուցային հարցերի մշակման, հայեցակարգային նոր տեսադրույթների ներդրման և իրականացման բնագավառում, որոնք ստացել են միջազգային ճանաչում: Դրան նպաստել է նրա գիտելիքների վիթխարի պաշարը, երկաթյա տրամաբանությունը, քննական-վերլուծական մեծ կարողությունները և ընդհանրացումներ կատարելու քարձր մակարդակը, մի կողմից, և նրա զբաղեցրած պաշտոնները, որի մասին կիսովի ստորև, մյուս կողմից:

Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել երկու կարևոր հանգամանքի վրա, որոնք սկզբունքային նշանակություն ունեցան հայ արևելագիտական ակադեմիական կենտրոնի զործունեության մեջ և որի հետ ուղղակիորեն առնչվում են Ն. Հովհաննիսյանի ոչ

միայն գիտական գործունեությունը, այլ արևելագիտական ակադեմիական կառույցում նրա զբաղեցրած տեղն ու դերը:

Առաջին, հայ արևելագիտական կենտրոնի ստեղծումից և մասնազնին քննարկումներից հետո, սահմանվեց հայկական արևելագիտական կենտրոնի գիտահետազոտական ուսումնասիրությունների աշխարհագրական տարածքը: Այդպիսին համարվեց «Մերձավոր և Միջին Արևելքը», այդ աշխարհագրական տարածքի այնպիսի երկու կարևոր երկրներ, ինչպես Իրանը և Թուրքիան, արաբական երկրները՝ Միդիան, Լիբանանը, Իրաքը, Հորդանանը, Պաղեստինը, Եգիպտոսը, այսինքն՝ գլխավորապես այն երկրները, որոնք կազմում են Արաբական Արևելքը՝ «Մաշրիքը»: Քանի որ արաբական երկրների թվաքանակը մեծ էր, և նրանք զբաղեցնում էին Հեղկական օվկիանոսից մինչև Առլանտյան օվկիանոսը ձգվող մի վիթխարի տարածք, Ն. Հովհաննիսյանի հիմնավոր առաջարկությամբ նպատակահարմար գտնվեց կենտրոնանալ քաջատապես Մաշրիքի՝ Արաբական Արևելքի գլխավոր երկրների՝ Միդիայի, Իրաքի, Լիբանանի, Հորդանանի, Եգիպտոսի ուսումնասիրության վրա՝ չհրաժարվելով պատեհ առիթի դեպքում անդրադառնալ նաև Արաբական թերակղզու և Մադրիթի՝ Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրներին:

Երկրորդ, մշակվեցին և սահմանվեցին հայկական ակադեմիական արևելագիտական կենտրոնի՝ քամի, ապա և ինստիտուտի, կառուցվածքային սկզբունքները և ուսումնասիրությունների գլխավոր գիտական ուղղությունները: Այդպիսին համարվեցին արաբագիտությունը, թուրքագիտությունը, իրանագիտությունը և քրդագիտությունը: Կառուցվածքային սկզբունքի հիմքում դրվեց քամիների ստեղծման գաղափարը, որը գործում է մինչև օրս: Պրոֆեսոր Լիկոլայ Հովհաննիսյանն ամենաակտիվ մասնակցություն է ունեցել այդ երկու հիմնարար խնդիրների և ուղղությունների քննարկության ու զարգացման գործում: Ըստ վերոնշյալ գլխավոր ուղղությունների՝ ստեղծվեցին համապատասխան չորս գիտական քամիներ՝ արաբական երկրների, Թուրքիայի, Իրանի և քրդագիտության:

Թեև հայ արևելագիտության համար, ինչպես նշվեց, որպես հետազոտական տարածք սահմանվեց Մերձավոր և Միջին Արևելքը, իսկ գերակա ուղղություններ՝ արաբագիտությունը, թուրքագիտությունը, իրանագիտությունը և քրդագիտությունը, սակայն այդ ուղղությունների շրջանակներում հետազոտվող հիմ-

նախնդիրների վերաբերյալ չկար միասնական տեսակետ: Հայաստանի ակադեմիական և ոչ ակադեմիական շրջանակներում այն մտայնությունը կար, որ վերոնշյալ ուղղությունները պետք է հայագիտական թեքում ունենան, և հիմնական խնդիրը պետք է լինի ուսումնասիրել արաբա-հայկական, քուրք-հայկական կամ իրանա-հայկական հարաբերությունները և այլն: Այդ նույն տեսակետին էին նաև որոշ հայրենադարձ գիտաշխատողներ: Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանն առաջինը եղավ, որ բացահայտորեն հանդես եկավ նման մտայնությունների դեմ: Հիմնավորելով իր տեսակետը՝ հայ գիտնականը գրում էր. «Հայ արևելագիտությունը չի կարող լինել հայագիտության աղախինը: Արևելագիտությունը համաշխարհային գիտություն է, որի քաղկացուցիչ մասերից մեկն էլ հենց հայագիտությունն է: Մենք Հայաստանում պետք է ստեղծենք և զարգացնենք դասական արևելագիտություն, որի շրջանակներում համաշխարհային արևելագիտական հիմնախնդիրների հետ միասին կուսումնասիրվեն նաև մերձավորարևելյան ժողովուրդների և հայերի փոխհարաբերությունների հիմնախնդիրները»: Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի այդ տեսակետը և դրա վրա խարսխված դիրքորոշումը արժանացավ հավանության և, ի վերջո, ընդունվեց պաշտոնապես և դրվեց հայ արևելագիտության՝ որպես գիտական նոր ուղղության, հայեցակարգի հիմքում, որը պահպանվում է մինչև օրս:

2. ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ԵՎ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ

Ականավոր գիտնական, արևելագետ-արաբագետ Նիկոլայ Հովհաննիսյանը, որի գիտական վիթխարի և ծանրակշիռ վաստակի մասին կխոսվի հաջորդ էջերում, արժանացել է քազմաթիվ գիտական աստիճանների և կոչումների, որոնց անդրադառնալը խիստ կարևոր է նրա անցած գիտական ուղու և արևելագիտության քննազավառում նրա բացառիկ ներդրման մասին հստակ և ամբողջական պատկերացում կազմելու համար:

Գիտական աստիճաններ և կոչումներ.

1958 թ. — Պատմական գիտությունների թեկնածու: Ատենախոսությունը, նվիրված «Հայերի իրավիճակը 1907-1914 թթ.» հիմ-

նախնորին, պաշտպանել է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդում:

- 1968 թ. — Պատմական գիտությունների դոկտոր: Առենախոսության քննան՝ «Ազգային-ազատագրական շարժումը Իրանում (1917-1958 թթ.)»: Պաշտպանել է Թրիխիսի պետական համալսարանի գիտական խորհրդում և հաստատվել ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից: Նա դառնում է արարական երկրների նոր և նորագույն պատմության գծով առաջին դոկտորը Խորհրդային Միությունում:
- 1972 թ. — Պրոֆեսոր, կոչումը շնորհվել է ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից:
- 2003 թ. — Գիտության վաստակավոր գործիչ: Շնորհվել է Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով:
- 2003 թ. — Ազգային անվտանգային հիմնախնդիրների համահայկական (Panarmenian) ակադեմիայի անդամ:
- 2006 թ. — Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի բոլակից անդամ:
- 2010 թ. — Շնորհվել է «Գյումրիի պատվավոր քաղաքացի» պատվավոր կոչում:
- 2016 թ. — Շնորհվել է «Եվրասիական միության պետությունների պատվավոր քաղաքացի» (Почетный гражданин Евразийского Союза Государств) կոչում:

Արտասահմանյան ակադեմիաների անդամակցություն

Շնորհվել է.

- 1997 թ. — Փարիզի «Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիայի անդամ:
- 1999 թ. — Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի անդամ:
- 1999 թ. — Մոսկվայի ազգային անվտանգության հիմնախնդիրների գիտությունների միջազգային ակադեմիայի անդամ:
- 2005 թ. — Գերմանիայի բնության և հասարակության գիտությունների միջազգային ակադեմիայի անդամ:
- 2013 թ. — Մոսկվայի համաշխարհային մարդկության հոգևոր միասության և համագործակցության միջազգային ակադեմիայի անդամ:

2016 թ. — Կանադայի միջազգային ինֆորմացման ակադեմիայի անդամ:

Միջազգային գիտական ասոցիացիաների և միությունների անդամակցություն

1985 թ. — Սիրիայի արաբական գիտության պատմության միության անդամ:

2002 թ. — Հյուսիսային Կարոլինայի կենսազբաղական ինստիտուտի հետազոտական միության անդամ-խորհրդակցական, ԱՄՆ:

2002 թ. — ԱՄՆ-ի ազգային աշխարհագրական ընկերության անդամ:

2005 թ. — Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի անդամ, Ֆլորիդա, ԱՄՆ:

2011 թ. — Հայաստանի քաղաքական գիտությունների ասոցիացիայի անդամ:

Քննրիջի (Անգլիա) միջազգային կենսազբաղական կենտրոնի (IBC) կողմից շնորհված գիտական կոչումներ և աստիճաններ

2004 թ. 3 սեպտեմբեր — Տարվա միջազգային գիտնական:

2004 թ. 1 հոկտեմբեր — Մտցվել է Քննրիջի Կապույտ զրքի մեջ:

2004 թ. 15 հոկտեմբեր — Մտցվել է Միջազգային կենսազբաղական քառարանի 32-րդ հրատարակության մեջ:

2004 թ. 3 դեկտեմբեր — 21-րդ դարի ականավոր գիտնական:

2005 թ. 14 հունվար — Աշխարհի առաջատար գիտնական:

2009 թ. 26 հունիս — Մտցվել է 100 քարձրագույն (Top) գիտնականների ցանկում:

2009 թ. 7 օգոստոս — Ճանաչվել է 2008/2009 թթ. ականավոր գիտնական:

2009 թ. 18 սեպտեմբեր — Շնորհվել է Էյեշբեյնի միջազգային մրցանակ՝ գիտական նվաճումների համար:

3. ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Բացառիկ, կարելի է ասել անկյունաքարային դերակատարում է ունեցել Նիկոլայ Հովհաննիսյանը ՀՀ գիտությունների ակադե-

միայն արևելագիտության կենտրոնի կայացման գործում, առանց որի լուսարանության անհնար է հասակ պատկերացում կազմել հայ արևելագիտության և նրա կենտրոնը հանդիսացող արևելագիտության ինստիտուտի անցած ուղու, նրա նվաճումների և համընդհանուր արևելագիտության մեջ նրա տեղի ու դերի մասին:


Ա) ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ �ԱԺՆԻ ՀԻՄՆԱԳԻՒՐ-ՂԵԿԱՎԱՐԸ

Ն. Հովհաննիսյանը 1962 թ. ստանձնեց արաբական երկրների բաժնի վարիչի պարտականությունները: Նա եղավ նրա կազմակերպիչը և ղեկավարեց մինչև 2003 թ., ավելի քան քառասուն տարի, և դարձավ արաբագիտության հայկական դպրոցի հիմնադիրը:

Ն. Հովհաննիսյանի ջանքերի և լայնախոհ ղեկավարության շնորհիվ այդ բաժինը համալրվեց նրիտասարդ, կրթված և օտար լեզուների տիրապետող մասնագետներով, որոնք համախմբվեցին նրա շուրջը: Հայերենից և ռուսերենից բացի մեկ արևելյան և մեկ եվրոպական լեզվի իմացությունը պարտադիր պայման էր այդ բաժնում գիտաշխատող լինելու համար: Այդ բաժինը դարձավ հզոր արաբագիտական կենտրոն: Ինստիտուտում այն տեսակետը կար, որ «Արաբական երկրների բաժինն իր թեմատիկայով, կշիռով և աշխատանքներով մի իսկական ինստիտուտ է ինստիտուտի մեջ»: Դոկտոր Ն. Հովհաննիսյանի հմուտ ղեկավարությամբ Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժինը դարձավ խորհրդային Միության ամենակարևոր արաբագիտական կենտրոններից մեկը՝ ձեռք բերելով միջազգային մեծ ճանաչում:

Արաբական երկրների բաժինն իր թեմատիկայով, ռատմասիրություններով, աշխատանքների բարձր մակարդակներով և հրատարակություններով դարձավ Մոսկվայի և Լենինգրադի արևելագիտական կենտրոնների լուրջ մրցակիցներից մեկը, ապա նաև արաբագիտական համաժողովների կազմակերպման և անցկացման կենտրոն, որը գիտական բարձր մակարդակի կարևոր ցուցանիշներից մեկն էր: Այդ տարիներին խորհրդային Միությունում պարբերաբար գումարվում էին համամիութենական արաբագիտական համաժողովներ, որոնք, ըստ էության միջազգային գիտաժողովներ էին: Այդպիսի գիտաժողովներ գումարվում էին միայն արաբագիտության գծով: Արաբագիտական առաջին և երկրորդ կոնֆերանսները գումարվել էին դեռևս 1961 և 1963 թթ. Լենինգրա-

A103039



դում, Մոսկվայի արևելագիտական ինստիտուտի լենինգրադյան քաժանանուցի հիմքի վրա, որտեղ գերակա ուղղությունը հին և միջին դարերի պատմության և արաբական աղբյուրների ուսումնասիրությունն էր: Մինչդեռ ժամանակներն արդեն փոխվել էին և հայ տաղանդավոր արաբագետը գտնում էր, որ արևելագիտության մեջ առաջնային էր համարվում նոր և հատկապես նորագույն շրջանի արդիական հիմնախնդիրների ուսումնասիրությունը, որը պետք է դառնար հայ արաբագիտության գերակա ուղղություններից մեկը: Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի նախաձեռնությամբ և Մոսկվայում նրա քանակցությունների արդյունքում, համաձայնություն ձևեր բերվեց արաբագետների համամիութենական III համաժողովն անցկացնել Երևանում, որն արժանացավ Հայաստանի կառավարության և գիտությունների ակադեմիայի ղեկավարության հավանությանն ու աջակցությանը:

Արաբագետների համամիութենական III գիտաժողովը կայացավ Երևանում 1969 թ., որին մասնակցում էին Մոսկվայի, Լենինգրադի, Թբիլիսիի, Տաշքենդի, Աշխաբադի, Ալմա Աթայի, Դուշանբեի և այլ կենտրոնների, ինչպես նաև արտասահմանյան մի շարք երկրների՝ Սիրիայի, Իրաքի, Լիբանանի, Եգիպտոսի, Եմենի մասնագետները: Համաժողովում լավեցին հարյուրից ավելի զեկուցումներ, նվիրված արաբական երկրների պատմության, քաղաքականության, միջազգային հարաբերությունների, տնտեսության, մշակույթի, գրականության, լեզվի և արվեստի հիմնախնդիրներին: Համաժողովի աշխատանքները գլխավորում էին կազմկոմիտեի համանախագահներ դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը և ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնի վարիչ Եվգենի Լևրեյնը: Հայ արաբագետներն ակտիվորեն մասնակցեցին գիտաժողովին՝ ներկայացնելով ենտազրքի զեկուցումներ: Համաժողովն անցավ շատ քարձր մակարդակով, և որովմեց ապագայում արաբագիտական համաժողովներ գումարել դարձյալ Երևանում:

Արաբագիտական III համաժողովի նյութերը ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի գրանիշի ներքո 1974 թ. հրատարակեց «Նաուկա» հրատարակչությունը Մոսկվայում, «Արաբական երկրներ. Պատմություն, Տնտեսություն: Երևանում 1969 թ. կայացած արաբագետների համամիութենական III կոնֆերանսի աշխատություններ» խորագրի ներքո:

Երևանը 1979 թ. կրկին դարձավ արաբազետների համամիութենական համաժողովի նստավայր՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնի հիմքի վրա: Ն. Հովհաննիսյանի առաջարկությամբ երա քննարկման առարկա էր ընտրվել արաբական երկրների սոցիալ-քաղաքական զարգացման ընտրոշ գծերը 1950-1970-ական թվականներին հիմնախնդիրը: Նման օրակարգի ընտրությունը պայմանավորված էր նրանով, որ, ինչպես գտնում էր պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը, արաբական երկրների ճնշող մեծամասնությունն արդեն եվանել էր քաղաքական անկախություն և արդեն ժամանակն էր, որ ամփոփվեին և ի մի քերվեին այդ կարևոր գործընթացի առաջին արդյունքները: Միջազգային պրակտիկայում դա նման ամփոփման առաջին և կարեւի է ասել հաջողված փորձն էր: Համաժողովը շատ ներկայացուցչական էր և նրան մասնակցում ու զեկուցումներով հանդես եկան մասնագետներ Խորհրդային Միության թղոր արևելագիտական կենտրոններից: Այդ համաժողովի նյութերն առանձին գրքով լույս ընծայվեց այս անգամ արդեն Երևանում, 1980 թվականին՝ «Արաբական երկրների սոցիալ-քաղաքական զարգացման ընտրոշ գծերը 1950-1970-ական թվականներին, Երևան, 1980», Ն. Հովհաննիսյանի, Ռ. Անդրեասյանի և Օ. Պերեսիպկինի խմբագրությամբ:

1985 թ. երևանում զումարվեց արաբազետների համամիութենական IV և վերջին համաժողովը, որը գլխավորում էին պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը և ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի համաշխարհային տնտնության և միջազգային հարաբերությունների ինստիտուտի բաժնի վարիչ, պրոֆեսոր Գ. Միրսկին: Դա եղավ արաբագիտական համամիութենական գիտաժողովների զագաքնակետը թն հիմնախնդիրների քննարկման մակարդակով, և թն մասնակիցների ռեկորդային քանակով: Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտը և երա արաբական երկրների բաժնեը արդեն մեծ անուն էին հանել և մագնիսի նման իրենց էին ձգում մասնագետներին ոչ միայն համայն Խորհրդային Միությունից, այլն արտասահմանյան տարրեր, հատկապես արաբական երկրներից: Նրանց համար մեծ պատիվ էր մասնակցությունը նման գիտաժողովներին և տնանել իրենց հողվածները հրատարակված համաժողովի նյութերում: Արաբազետների համամիութենական IV համաժողովի նիստերի ժամանակ քննարկվեցին հիմնախնդիրների քալականին լայն շրջանակ,

ի մասնավորին՝ ժամանակակից խորհրդային արարագիտության, արարական երկրների արդի քաղաքական և սոցիալ-տնտեսական հիմնահիմնադիրները, ինչպես նաև արարական մշակույթի, գրականության, փիլիսոփայության, լեզվաբանության, արջուրագիտության և այլ հարցեր: Համաժողովում ոչ միայն ամփոփվեցին արարական երկրների նորագույն պատմության ուսումնասիրության արդյունքները արարագետների համամիութենական III և IV կոնֆերանսների միջև ընկած ժամանակաշրջանում, այլև մատնանշվեցին արարագիտության և արարական երկրների զարգացման ուղիներն ու հեռանկարները ապագայում: Այդ հարցի վերաբերյալ համատեղ զեկուցում ներկայացրին ԽՍՀՄ ԳԱ և ՀՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտների արարական երկրների բաժինների վարիչներ Եվգենի Լեբեդևը և Նիկոլայ Հովհաննիսյանը:

Արարագետների համամիութենական IV համաժողովին ներկայացված զեկուցումները հրատարակվեցին Երևանում, 1988 թվականին, երկու պրակով՝ «Ժամանակակից սովետական արարագիտության պրոբլեմներ. Արարագետների համամիութենական IV կոնֆերանսի աշխատություններ, Երևան, 1985, Պրակ I, Արարական երկրների ժամանակակից քաղաքական և սոցիալ-տնտեսական պրոբլեմներ, Երևան, 1988», որի պատասխանատու խմբագիրներն էին ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Մոսկվայի արևելագիտության ինստիտուտի արարական երկրների բաժնի վարիչ, պ.գ.թ. Եվգենի Լեբեդևը, ՀՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի արարական երկրների բաժնի վարիչ պ.գ.դ., պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը և Մոսկվայի արևելագիտության ինստիտուտի տնտեսագիտական պրոբլեմների բաժնի վարիչ, տ.գ.թ. Ռուբեն Անդրեասյանը: Իսկ երկրորդ պրակում տեղ գտան արարական բանասիրությանը և մշակույթին նվիրված զեկուցումները: Ն. Հովհաննիսյանը այդպիսի բարձր մակարդակներով համամիութենական համաժողովների անցկացումը գտնում էր որպես արևելագիտական տարբեր միջազգային կենտրոնների հետ գիտական համագործակցության վերին աստիճանի կարևոր, օգտակար և ուսանելի ձև:

Անփոփելով արարագիտական համամիութենական IV կոնֆերանսի արդյունքները՝ պ.գ.դ. Գ. Միրսկին հատուկ անդրադարձավ այն կարևոր դերին, որ խաղում է Նիկոլայ Հովհաննիսյանը՝ ընդգծելով նրա կազմակերպչական մեծ ունակությունները և կարգացած զեկուցումների գիտական բացառիկ բարձր մակարդակը: Նա

նշում է. «Մեր կոնֆերանսի լեյտմոտիվը դարձավ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի «Արդի արաբական աշխարհում հեղափոխական գործընթացի յուրահատկությունները և հեռանկարները» զեկուցումը»: Կոնֆերանսի մասնակից թուր պատվիրակությունների ներկայացուցիչները պաշտպանեցին Գ. Միրսկու տեսակետը:

Ինչպես նշվեց, Երևանում գումարված արաբագետների համամիութենական IV համաժողովը եղավ վերջինը, որի պատճառը ոչ բարենպաստ քաղաքական իրադրությունը և հորհրդային Միության փլուզումն էր:

Հայ արաբագետների, արաբական երկրների քաժնի և նրա ղեկավար Ն. Հովհաննիսյանի գործունեությունը շատ բարձր է գնահատվել նախկին հորհրդային Միությունում և արտասահմանյան երկրներում:

Դա իր արտացոլումը գտավ 1985 թ. Երևանում գումարված արաբագետների համամիութենական IV կոնֆերանսում հատուկ այդ հարցի վերաբերյալ ընդունված քանակում, որն ընդունվել է միաձայն: Նրանում արձանագրված է. «Կոնֆերանսը նշում է, որ հորհրդային Հայաստանի մայրաքաղաք Երևանում բազմիցս անցկացված արաբագետների համամիութենական կոնֆերանսները և արաբագիտական այլ խորհրդակցությունները վկայում են Հայաստանում արաբագիտության զարգացման բարձր մակարդակի և աղբյուրագիտական համապատասխան աղբյուրների և կադրերի առկայության մասին, որը կապված է ինչպես հանրապետությունում արևելագիտության ընդհանուր զարգացման հետ, այնպես էլ հայ-արաբական պատմական և մշակութային տարաբնույթ կապերի հետ» (տե՛ս Резолюция IV Всесоюзной конференции арабистов, принятая на пленарном заседании (г. Ереван, 17 мая 1985) — «Проблемы современной советской арабистики. Труды IV Всесоюзной конференции арабистов, Ереван, 1985, Выпуск I, с. 280»): Ինքնին հասկանալի է, որ հայ արաբագիտության նման բարձր գնահատականի արժանանալու գործում մեծ է Նիկոլայ Հովհաննիսյանի դերը և նրա տեսական ու գործնական ներդրումը: Դա վերստին հաստատում էր, որ Նիկոլայ Հովհաննիսյանը հայկական արաբագիտական դպրոցի հիմնադիրն է, նրա անմիճելի լիդերը, որը միջազգային լայն ճանաչում է ստացել:

Արաբագիտական IV համամիութենական կոնֆերանսում ընդունված քանակում, հատուկ նշվեց Հայաստանում արաբագիտական բարձրակարգ կադրերի առկայության մասին: Դա անհեր-

քնյի իրողություն է: Այստեղ արժանի է հիշատակել արարագետների առաջին սերնդի ներկայացուցիչներին, ինչպես Հ. Թուրյանը, Օ. Թովուզյանը, Ա. Բայրամյանը, Ե. Նազարյանը, Հ. Մարգարյանը, Ս. Զուլյանը, որոնց հաջորդեցին երկրորդ, ապա և երրորդ սերնդի ներկայացուցիչները (տևս աշխատության «Հայ արարագիտական դպրոցի նվիրյալները» բաժինը, էջ 162-163):

Կարևոր է նշել, որ նրա աշակերտներն այսօր շարունակում են իրենց տաղանդավոր ուսուցչի գործը արարագիտության, իսկ ոմանք էլ դիվանագիտության ասպարեզում, ինչպես պ.գ.դ., պրոֆեսոր Արշակ Փոլատյանը, պ.գ.դ. Ռուբեն Կարապետյանը, պ.գ.թ. Արմեն Մելքոնյանը, որոնք տարբեր ժամանակներում զբաղեցրել են Հայաստանի դեսպանների պաշտոնները Կահիրեում, Դամասկոսում, Արև Դարիում, իսկ մի քանիսն էլ դիվանագիտական այլ պաշտոններ տարբեր արարական և ոչ արարական երկրներում՝ հմտորեն օգտագործելով հայ արարագիտական դպրոցում ձեռք բերած իրենց գիտելիքները և ուսուցչի տված դասերն ու պատգամները:

Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը, ղեկավարելով արարագիտական բաժինը, տահմանեց արարագիտության ուսումնասիրության զխավոր ուղղությունները՝ ելակետ ունենալով մի կողմից պատմագիտական ավանդույթները, իսկ մյուս կողմից՝ արդիական խնդիրները: Առաջին անգամ էր նման մոտեցում դրսևորվում արարագիտության ուսումնասիրության քնազավատում: Ըստ այդմ, առաջնային համարվեց արարական երկրների, նախ և առաջ Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի, Լիբանանի, Հորդանանի, Պաղեստինի միջին դարերի, նոր և նորագույն պատմության, ազգային-ազատագրական շարժումների, արարական անկախ պետությունների կազմավորման, միջազգային և միջարարական, հայ-արարական հարաբերությունների, արարական աղբյուրների, քաղաքական խլամի և հարակից այլ հիմնախնդիրների ուսումնասիրությունը: Այդ ուղղությունները չեն կորցրել իրենց կարևորությունը, ուստի և հայ արարագետները, արևելագիտության ինստիտուտի արարական երկրների բաժնի (բաժնի վարիչ՝ պ.գ.թ. Լ. Հարությունյան) գիտաշխատողներն այսօր էլ շարունակում են այդ հիմնախնդիրների հետազոտությունը:

Պատկանելի և խիստ տպավորիչ են ՀՀ գիտությունների ակադեմիայի արարական երկրների բաժնի աշխատակիցների հրատարակությունները՝ մենագրությունները, ժողովածուները և հոդված-

ները, որոնք արժանացել են արաբագիտության մասնագետների բարձր գնահատականին: Դրա հաստատումը նշվել է այս արաբագետների աշխատությունների ցուցահանդեսը 2008 թ. Հալեպում, որն ուղղակի ապրեցրեց մասնագետներին և սիրիական հասարակայնությանը՝ մեծ արձագանքներ ունենալով նաև արաբական մյուս երկրներում:

Նիկոլայ Հովհաննիսյանը Թբիլիսիի պետական համալսարանի գիտական խորհրդում 1968 թ. մեծ հաջողությամբ պաշտպանում է դոկտորական ատենախոսություն «Ազգային-ազատագրական պայքարը Իրաքում (1918-1958 թթ.)» թեմայով և նրան շնորհվում է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, որը հաստատվում է խորհրդային Միության Մինխատրների խորհրդին առընթեր բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից: Նա դառնում է արաբական երկրների նոր և նորագույն պատմության մասնագիտությամբ խորհրդային Միությունում առաջին դոկտորը: Իսկ 1972 թ. նրան շնորհվում պրոֆեսորի գիտական կոչում:

Նա գիտահետազոտական աշխատանքը համատեղել է դասախոսական աշխատանքի հետ: Երևանի պետական համալսարանի ռեկտորի հրավերով, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը 1975-1977 թթ. համալսարանի արևելագիտության ֆակուլտետում դասավանդել է «Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն» առարկան, իսկ 1992-1993 թթ. Երևանի Գլաժորի համալսարանում «Դիվանագիտության պատմություն» առարկան՝ հնարավորություն ունենալով տարիների ընթացքում կուտակված իր գիտելիքները փոխանցել համալսարանական ուսանողությանը:

Բ) ԱՐԵՎԵԼԱԿԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳԾՈՒՎ ՏԵՆԱԿԱԼ

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի գիտակազմակերպչական գործունեության համար մի նոր և լայն ասպարեզ բացվեց, երբ նա 1984 թ., նկատի ունենալով նրա տեսական բարձր պատրաստվածությունը, գիտական մեծ վաստակը, գիտական աշխատանքի ընագավառում կուտակված մեծ գիտելիքներն ու փորձը, ղեկավար աշխատանք կատարելու անմիճելի կարողությունները, նշանակվեց արևելագիտության ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալ՝ պահպանելով արաբական երկրների քաժնի վարչի պաշտոնը: Տեղակալի պաշտոնը նա զբաղեցրեց ընդհուպ մինչև 1995 թ.:

Դա շատ պատասխանատու և աշխատատար ոլորտ էր: Նրա՝ որպես տեղակալի, գլխավոր խնդիրներն են եղել ինստիտուտի բոլոր յոթ բաժինների գիտական աշխատանքների համակարգումը, նրանց թեմատիկ պլանների ընտրումը, տարբեր գիտական կոնֆերանսների, այդ թվում և միջազգային, կազմակերպումն ու անցկացումը, ինստիտուտի գիտական խորհուրդների, ներառյալ առենախոսությունների պաշտպանության, համադասումը, գիտական կապերի հաստատումը և ամրապնդումը արևելագիտական տարբեր կենտրոնների հետ, գիտական աշխատությունների քննարկումը և հրատարակությունը և այլն: Ինստիտուտում սկսվեց կիրառվել գիտական սեմինարների կազմակերպում, նվիրված արևելագիտական արդիական խնդիրներին, իսկ բաժիններում լավում էին առանձին գիտաշխատողների հաղորդումներ և այլն: Շնորհիվ Ն. Հովհաննիսյանի ամենաակտիվ և ընդգրկուն գործունեության՝ աննախադեպ կերպով բարձրացավ ինստիտուտի գիտական աշխատանքների մակարդակը, բարելավվեց գիտական մթնոլորտը և աշխուժացավ գիտական կյանքը: Բացվեցին նոր բաժիններ: Գործող չորս բաժիններին՝ արաբական երկրների, Թուրքիայի, Իրանի և քրդագիտության, ավելացան ևս չորսը՝ Հին Արևելքի, Կովկասագիտության և բյուզանդագիտության, որը հետագայում վերանվանվեց Քրիստոնեյա Արևելքի բաժնի, և Արևելյան աղյուրագիտության բաժինները, որոնց ստեղծման և ուղղությունների որոշման հարցում ամենագործուն մասնակցությունն է ունեցել Ն. Հովհաննիսյանը: Նոր բաժինների ստեղծումով ավելի ամրոլջական դարձավ հայ արևելագիտության ուսումնասիրությունների դաշտը, և մեծացավ նրա կշիռը միջազգային արևելագիտության համակարգում:

Այս շրջանում պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի ջանքերի շնորհիվ ակտիվացան արևելագիտության ինստիտուտի և նրա կազմի մեջ մտնող բաժինների գիտական կապերն ու համագործակցությունը Մոսկվայի, Լենինգրադի, Թբիլիսիի, Տաշքենդի, Գուշանբեի արևելագիտական կենտրոնների հետ, այդ թվում կադրերի պատրաստման գործում: Ինստիտուտի մի շարք գիտաշխատողներ երկարամյակետ գործուղվեցին հատկապես Մոսկվայի, Լենինգրադի և Թբիլիսիի կենտրոնները, որտեղ նրանք հաջողությամբ պաշտպանեցին թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ: Իրենց հերթին, այդ կենտրոնների գիտաշխատողներն էին զայիս Երևան, արևելագիտության ինստիտուտ և աշխատում նրա հարուստ գրադարանում: Գիտական համագործակցություն

հաստատվեց նաև արտասահմանյան արևելագիտական կենտրոնների, այդ թվում, Միլիայի, ԳԳՀ-ի, Լեհաստանի, Բուլղարիայի, Ռումինիայի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Լիբանանի, Եգիպտոսի, Իրաքի և այլ երկրների հետ:

Այդ գործընթացը պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը սկսել էր դեռևս նախքան ինստիտուտի տնօրենի տեղակալ նշանակվելը: Այդ առումով հիշատակության է արժանի ԳԳՀ-ի Լայպցիգի համալսարանի, Խորհրդային Միության ԳԱ արևելագիտության ինստիտուտի և Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի համատեղ պատրաստած «Գաղութատիրությունը և նեոգաղութատիրությունը Հյուսիսային Աֆրիկայում և Մերձավոր Արևելքում» (Kolonialismus und Neokolonialismus in Nordafrika und Nahost, Akademie-Verlag, Berlin, 1964), հոդվածների ժողովածուի հրատարակումը գերմաներեն՝ Բեռլինում 1964 թ.: Հայաստանի արևելագիտության ինստիտուտի գիտնականներից ժողովածուում ընդգրկվել էին բուրբազետ դոկտոր Ե. Ն. Սարգսյանի և արարագետ դոկտոր Ն. Հ. Հովհաննիսյանի հոդվածները: Դա արևելագիտության ինստիտուտի պատմության մեջ միջազգային բնագավառում գիտական համագործակցության առաջին դեպքն էր: Նման համագործակցություն էր հաստատվել Հայաստանի արևելագիտության ինստիտուտի և արարական երկրների, մասնավորապես Լիբանանի և Միրիայի արարագետների միջև: Այսպես՝ օրինակ, Հայաստանի արարական երկրների բաժինը պատրաստել էր «Արաքերեն-հայերեն բառարան», որի անհրաժեշտությունը խիստ էր զգացվում հանաքապետության գիտական և ուսումնական հաստատություններում: Այդ հարցը զանվում էր բաժնի վարիչ Ն. Հովհաննիսյանի ուշադրության կենտրոնում: Բառարանի ստեղծումը հաջողությամբ իրականացրին արարական երկրների բաժնի աշխատակիցները, որը 1969 թ. տպագրվեց Բեյրութում՝ լիբանանյան գործընկերների հոգածությամբ ու աջակցությամբ, քանի որ դրա հնարավորությունը չկար Հայաստանում (տես «Արաքերեն-հայերեն բառարան: Կազմողներ՝ Ա. Ա. Չուլջյան, Հ. Ս. Սարգսյան, Բեյրութ, 1969»):

Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանն այդ ընթացքում արտասահմանյան մի շարք գիտական կենտրոնների հրավերով գործուղվում է արտասահման, որտեղ գիտական աշխատանքներին զուգահեռ քննարկում է նրանց հետ գիտական համագործակցություն հաստատելու հարցեր:

1985 թ. Խորհրդային Միության և Սիրիայի Արաբական Հանրապետության միջև համազործակցության պայմանագրի համաձայն, եա մեկ ամսով զործուղվում է Սիրիա, աշխատում Գամասկոսի համալսարանում, Հալեպի արաբական գիտության պատմության ինստիտուտում, Ասադի գրադարանում, հանդիպումներ ունենում սիրիական գիտնականների հետ և քննարկում նրանց և ՀՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի միջև համազործակցության ուղիների և ձևերի հարցեր: Հայ արաբագետին հատկապես հետաքրքրում էին Սիրիայում ուղղիչ շարժման հարցերը և նրա վերաբերյալ պաշտոնական աղբյուրները, որը սիրիական կողմը տրամադրում է Ն. Հովհաննիսյանին: Վերադառնալով Հայաստան՝ նա նման քեմա է առաջարկում արաբական երկրների բաժնի աշխատակիցներից մեկին և նրան տրամադրում իր քերած սկզբնաղբյուրները, որը հետագայում այդ թեմայով պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն և նրան շնորհվում է պատմական գիտությունների թեկնածուի աստիճան: 1986 թ. պատասխան այցով Հայաստանում է լինում սիրիական մասնագետների պատվիրակությունը, որոնք ծանոթանում են ՀՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի, մասնավորապես արաբական երկրների բաժնի աշխատանքների և գործունեության հետ: Սիրիական պատվիրակության անդամները զեկուցումներով հանդես եկան արաբական երկրների բաժնում, ինչպես նաև ՀՀ ԳԱ հեագիտության և ազգագրության ինստիտուտում, որտեղ նրանք զեկուցեցին Սիրիայի Էրլայի շրջանում նորահայտ հնագիտական կենտրոնի մասին:

Սիրիական պատվիրակությանն ընդունում և զրույց է ունենում ՀՀ ԳԱ պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը: Այդ զրույցի ընթացքում ակադեմիկոս Վ. Համբարձումյանը խոսում է միջնադարյան ակադեմիկոս սիրիական աստղագետ Բատանիի և նրա աշխատանքների մասին, ինչը մեծ տպավորություն է բողնում սիրիական պատվիրակության ապշած անդամների վրա: Միաժամանակ պրեզիդենտը նշեց, որ ինքը ողջունում է գիտական համազործակցության հաստատումը ՀՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի և արաբական համապատասխան կառույցների միջև, խոստանալով իր աջակցությունը: Նույն թվականին Սիրիայի արաբական գիտության պատմության ընկերությունը ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանին ընտրում է պատվավոր անդամ: Պատվավոր անդամ է ընտրվում նաև պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը:

1989 թ. մայիս-հունիս ամիսներին Բրիտանական ակադեմիայի հրավերով պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը գործուղման է մեկնում Մեծ Բրիտանիա: Այստեղ նա աշխատում է «Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը Մերձավոր և Միջին Արևելքում» քննարկ վրա: Գիտական աշխատանքներին զուգահեռ նա դասախոսություններ է կարդում Լոնդոնի և Օքսֆորդի համալսարաններում, այդ թվում Լեոնային Ղարաբաղի սկիզբ ատած հիմնախնդրի մասին: Նա հանդիպում և հանգամանակից գրույց է ունենում Բրիտանական արքայական միջազգային հարաբերությունների ինստիտուտի՝ Զաքամ Հաուզի տնօրեն, փոխտնօրեն, սրբ Ձեյմս Էրբրլիի, որը միաժամանակ Մեծ Բրիտանիայի վարչապետ Մարգարիտ Թեյտչերի խորհրդականն էր, և մյուս աշխատակիցների հետ: Փոխտնօրենի և Զաքամ Հաուզի մասնագետները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում ՀՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի և նրա թեմատիկայի նկատմամբ և Ն. Հովհաննիսյանը նրանց մանրամասն տեղեկություններ է հաղորդում ՀՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի, նրա կառուցվածքի և աշխատանքների վերաբերյալ: Նրանք պատրաստակամություն են հայտնում համագործակցել գրքափոխանակության և մասնագետների փոխադարձ այցելությունների և այլ ոլորտներում: Սրբ Էրբրլին Ն. Հովհաննիսյանի հետ զրույցի ընթացքում ցանկություն է հայտնում այցելել Հայաստան և լինել գիտությունների ակադեմիայում ու արևելագիտության ինստիտուտում: Դրական պատասխան ստանալով՝ նա 1990 թ. այցելեց Հայաստան, և նրան ընդունեց ՀՀ ԳԱ պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը: Զրույցի ընթացքում, որին մասնակցել է նաև Ն. Հովհաննիսյանը, քննարկվեցին գիտական համագործակցության վերաբերյալ տարբեր հարցեր: Ակադեմիկոս Վ. Համբարձումյանը հնտաքրքրություն ցուցաբերեց «թեոչերիզմի» Լուրյան և քաղաքականության վերաբերյալ, և Թեյտչերի խորհրդականը ակադեմիայի պրեզիդենտին հանգամանորեն ներկայացրեց այդ հարցը, որն այդ տարիներին հուզում էր միջազգային հանրությանը:

1992 թ. ապրիլին ՀՀ գիտությունների ակադեմիան և «Հայք» հաստատությունը (ԱՄՆ) ստորագրեցին համաձայնագիր համատեղ աշխատանքների վերաբերյալ: Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը նշանակվում է համատեղ աշխատանքների համադրող: Այդ աշխատանքների մեջ մեծ տեղ էր հատկացվում կարևոր հարցերի շուրջը գիտական քննարկումների կազմակերպումը և համա-

պատասխան առաջարկություններ ներկայացվում Հայաստանի ղեկավարությանը: Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի առաջարկությամբ որոշվում է կազմակերպել գիտական քննարկումների շարք՝ նվիրված «Հայաստանը և նրա անմիջական հարևանները» հիմնախնդրին, ինչը նոր անկախություն ձևեր բերած Հայաստանի Հանրապետության համար ուներ քաջատիկ կարևորություն: 1992 թ. սեպտեմբերի 22–25–ին երևանում, ՀՀ ԳԱ նախագահության նիստերի դահլիճում, չորս օր շարունակ ընթանում էր քննարկումների առաջին շարքը: Բոլոր նիստերն անցել են Ն. Հովհաննիսյանի ղեկավարությամբ:

Քննարկումների շարքն արտակարգ, իր նախադեպը չունեցող հետաքրքրություն և աշխուժություն առաջացրեց Հայաստանի Հանրապետության գիտական, և ոչ միայն գիտական, կյանքում: Քննարկումներին մասնակցել են ՀՀ ԳԱ արևելագիտության, պատմության, տնտեսագիտության, փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտների, Երևանի պետական համալսարանի և այլ հաստատությունների նրևելի գիտնականներ, ակադեմիկոսներ, գիտության ղոկտորներ և պրոֆեսորներ, պետական մարմինների պաշտոնյաներ և Երևանում հավատարմագրված ղեկավաններ ու այլ դիվանագետներ: Մասնակցել են ոչ միայն հասարակական, այլև քնական գիտությունների ներկայացուցիչներ: Լեֆ–լնցուն դահլիճում տեղի են ունեցել բուռն քննարկումներ: Քննարկվել են Թուրքիայի, Իրանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ Հայաստանի հարաբերությունների արդի վիճակը և զարգացման հեռանկարները: Այդ երկրներից յուրաքանչյուրին հատկացվել է մեկ օր:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանն իր քաջման խոսքում, դիմելով ներկաներին, ասել է. «Անկախություն նվաճած Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առջև կանգնած են քազում դժվարին և քարդ խնդիրներ: Նման խնդիրներ կանգնած են նաև նրա մերձավորարևելյան քաղաքականության առջև: Դրանց լուծումը, լուծման ճիշտ տարբերակների առաջադրումն ու ընտրությունն անհնար է քաջառապես պետական պաշտոնյաների ուժերով, որքան էլ որ նրանք լինեն օժտված անձնավորություններ»: Շարունակելով իր խոսքը՝ Ն. Հովհաննիսյանն առաջ է քաշում «Իշխանություն–մտավորականություն» դաշինքի գաղափարը՝ նշելով. «Միջազգային փորձը ցույց է տալիս, որ իրենց առջև ծառացած խնդիրները համեմատաբար հաջող են լուծում այն երկրները, որտեղ իշխանությունները սերտորեն համագոր-

ծակցում են մասնագետ-գիտնականների հետ, օգտվում նրանց զաղափարներից՝ հաշվի առնելով նրանց առաջարկությունները և ծրագրերը: Իշխանություն-մտավորականություն դաշինքը կամ համագործակցությունն առավել անհրաժեշտ է անկախության ուղին նոր ոտք դրած և այդ քննազավառում մեծ փորձ չունեցող պետությունների համար, որոնց շարքին է դասվում նաև Հայաստանի Հանրապետությունը» (տե՛ս Հայաստանի գիտությունների ակադեմիա, «Հայք» (ԱՄՆ-Հայաստան) հաստատություն, Հայաստանը և իր անմիջական հարևանները, Երևան, 1992, էջ 5):

Ընդհանուր առմամբ քառօրյա նիստերում լավ է մտ 60 զեկուցում:

1992 թ. նոյեմբերի 17-18-ին տեղի ունեցավ քննարկումների երկրորդ շարքը, նվիրված «Հայ-ռուսական և հայ-արաբական հարաբերությունները» հիմնահարցին, այդ հարաբերությունների արդի վիճակին և զարգացման հեռանկարներին: Առաջին նիստը նվիրված էր հայ-ռուսական հարաբերությունների քննարկմանը: Ելույթ ունեցողներն այն տեսակետն էին արտահայտել, որ բոլոր դեպքերում Հայաստանի իշխանությունները պետք է ձգտեն կայուն հիմքերի վրա կառուցել հայ-ռուսական միջպետական հարաբերությունները՝ հենվելով քաղաքականության վրա՝ դա համարելով կենսական անհրաժեշտություն: Նրանք գտնում էին, որ տարածաշրջանի հետ իր հարաբերությունները կառուցելիս Հայաստանը պետք է ելնի առաջնահերթության սկզբունքից, ընդգծելով, որ առաջնահերթը Ռուսաստանի՝ որպես հզոր պետության հետ հարաբերություններն են: Իսկ որոշ զեկուցումներում այն տեսակետն արտահայտվեց, որ «իր սուվերենության սահմաններում Հայաստանը պետք է խիզախություն ունենա Ռուսաստանի կարծիքից անկախ և անզամ նրա կարծիքին հակառակ, այլ ներկրների հետ հարաբերություններ ստեղծել»: Շատ հետաքրքիր տեսակետ, որին, ցավոք սրտի, Հայաստանը միշտ չէ, որ հետևել է:

Այդ նիստին Ն. Հովհաննիսյանի հրավերով մասնակցել և ելույթ է ունեցել Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Վլադիմիր Ստուպիչինը: Ողջունելով նման քննարկումների կազմակերպումը և դրանք համարելով հետաքրքիր և շատ կողմնորով ուսանելի՝ դեսպանը հատուկ շնչոնց, որ «Հայաստանի և Ռուսաստանի միջև հարաբերություններն ունեն լավ հեռանկարներ»: Մակայն եւ միաժամանակ

շեշտում է, որ «Ռուսաստանի քաղաքականությունը նոր է ծնվում և մեր պետության շահերը մեղրկովկասում որոշված չեն» («Հայք» հաստատություն, Տեղեկագիր, Երևան, 1992, էջ 10): Ինչպես գտնում է պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը, «մեղրկովկասում Ռուսաստանի քաղաքականության անորոշությունը պերմանենտ (անընդհատական) բնույթ է կրել և տարբեր դրսևորումներով շարունակվում է մինչև օրս»:

Նիստերի երկրորդ շարքը, որը տեղի ունեցավ 1992 թ. նոյեմբերի 18-ին, նվիրված էր «Հայաստան-արաբական երկրներ» հարաբերությունների քննարկմանը: Ելույթ ունեցողները շեշտում էին քազմաբնույթ հարաբերությունների հաստատումը ադաբական երկրների հետ, և Հայաստանի մերձավորարևելյան համակարգի անդամ դառնալը կնպաստի տարածաշրջանում ուժերի նոր հաշվեկշիռի ստեղծմանը: Քաղաքական ասպարեզում, անկախ հայկական պետականության հայտնվելով, հնարավոր են դրական տեղաշարժեր ի նպաստ արաբների և հայերի ազգային շահերի: Ելույթներում կարմիր թելի նման անցնում էր այն տեսակետը, որ «Բարեկամական քաղաքական հարաբերությունների, քազմակողմանի տնտեսական և այլ կապերի հաստատումը հակաթաձաձալ տարածքներ զբաղեցնող, վիթխարի քնական հարստություններ և ֆինանսական անսահմանափակ հնարավորություններ ունեցող արաբական աշխարհի հետ Հայաստանի համար ունի կենսական նշանակություն: Այժմ առաջնահերթ խնդիրներից մեկը Արաբական Արևելքում Հայաստանի արտաքին քաղաքականությանը դինամիզմ հաղորդելն է» (տե՛ս ՀԳՄ «Հայք» (ԱՄՆ-Հայաստան) հաստատություն, Հայ-Ռուսական և հայ-արաբական հարաբերությունները, Երևան, 1992, էջ 45):

Երկրորդ շարքի երկու նիստերում լսվեց ևս մոտ 15 զեկուցում: Իսկ եթե վերցնելու լինենք 1992 թ. սեպտեմբերին և դեկտեմբերին կայացած վեց նիստերը միասին, ապա կստացվի, որ զեկուցումով հանդես են եկել 75 գիտնական-մասնագետներ: Դա վերին աստիճանի տպավորիչ ֆենոմեն էր, աննախադեպ երևույթ :

Ուշագրավ է այն հանգամանքը, որ քննարկումներին մասնակցել է ՀՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, Հայաստանի Հանրապետության պրեզիդենտի խորհրդական, ԱՄՆ-ի հայտնի ՌԱԵ վերլուծական կենտրոնի աշխատակից Նիկոլ Շահգալյանը, ՀՀ գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտ Մկրտիչ Ներսիսյանը, ՀՀ արտա-

քին գործերի նախարարի պաշտոնակատար Արման Կիրակոսյանը և ուրիշներ: ՀՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, ինչպես վկայում է պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը, ուշադիր է եղել արևելագիտության ինստիտուտի գործունեության նկատմամբ և քարձր զեմատնել պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի դրսևոգրած նախաձեռնությունը՝ քննարկման առարկա դարձնելով անկախություն ձեռք բերած Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության հիմնախնդիրների հետ առնչվող անցումաբարդային հիմնախնդիրների մասշտաբային քննարկումները: Այդ բացառիկ գիտական կոնֆերանսների շարքի կյուբերը և հիմնադրույթները ներկայացվել են ՀՀ արտաքին գործերի նախարարություն և այլ պատկան մարմիններին, ինչը իր դրական դերակատարումն է ունեցել հետագա տարիներին Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գլխավոր ուղենիշների կանխորոշման և մշակման գործում:

Նիկոլայ Հովհաննիսյանը շահելով Ֆոլքրայթի մրցույթում (ԱՄՆ), 1993-1994 թթ., մոտ մեկ տարի գիտահետազոտական աշխատանքներ է կատարել ԱՄՆ-ի Ջորջ Վաշինգտոն էլիտար համալսարանում: Այստեղ նա աշխատել է «ԱՄՆ-ի քաղաքականությունը Արարական Արևելքում (1980-1988 թթ.)» թեմայի վրա, որն ընդգրկում էր պրեզիդենտ Ռոնալդ Ռեյգանի նախագահության ամբողջ ժամանակաշրջանը: Նա գիտական աշխատանքների հետ միասին դասախոսություններ է կարդացել այդ նույն համալսարանում, ինչպես նաև Ջոն Հոպկինսի, Լոս Անջելեսի, Միչիգանի Ան Արբորի, Բերկլիի և այլ համալսարաններում:

Իսկ ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի արտասահմանյան ծառայությունների ինստիտուտի (US State Department. Foreign Service Institute) հրավերով և առաջարկությամբ, պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը դիվանագիտական մասնագիտական մեծ լսարանի առջև զենուցում է կարդացել «Հայերի դերը միջազգային հարաբերություններում» թեմայով: Նա այցելում է Սալիուակ տուն, որտեղ նրան ընդունում է դեմոկրատիայի (ժողովրդավարության) տնօրեն (White House. Director of Democracy) Մորթոն Հալպերինը, ԱՄՆ-ի պետական դեպարտամենտում նրա հետ Լեոնային Նարաբադի հիմնախնդրի և Հայաստանի արտաքին քաղաքականության մասին հանգամանալից զրույց է ունենում պետական դեպարտամենտի Հայաստանի գծով պատասխանատուն, հանդիպումներ և

գրույցներ է ունենում պաշտպանական տեղեկատվության կենտրոնի փոխտնօրեն, փոխծովակալ Ե. Կերոյի, Մինսկի խմբում դարաբաղյան հարցով ԱՄՆ-ի ներկայացուցիչ, «Միասնական պետության» ծրագրի հեղինակ Ջոն Մարեսկայի հետ և այլն: Այդ բոլորի մասին, կապված Լեոնային Ղարաբաղի կոնֆլիկտի, Հայաստանի արտաքին քաղաքականության և հայ-ամերիկյան հարաբերությունների և հարակից հարցերի վերաբերյալ, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը համապատասխան վերլուծական նյութեր և առաջարկություններ է ներկայացրել Հայաստանի բարձրագույն դեկավարությանը:

Տնօրենի գիտական գծով տեղակալի պաշտոնում պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի այդ տարիների բազմաթիվ լայնածավալ, ստեղծագործ և եռանդուն գործունեությունը խոր հետք է թողել և մեծապես նպաստել արևելագիտության ինստիտուտի միջազգային ճանաչման գործընթացին և այդ համակարգում նրա դերի կարևորության մեծացմանը:

Գ) ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ՀՀ ԳԱՍ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՄԻ ՏՆՕՐԵՆ

1995 թ. փետրվարին արևելագիտության ինստիտուտի կոլեկտիվը պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանին միաձայն ընտրեց Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի տնօրեն: Նա այդ պատասխանատու պաշտոնը վարեց ավելի քան տասնմեկ տարի՝ մինչև 2006 թ. սեպտեմբերը:

Նախորդ տարիների փայլուն, հմուտ, հավասարակշռված և ստեղծագործական գիտակազմակերպչական գործունեությունը, արարագիտության և արևելագիտության քննադալատում ունեցած խոշոր ներդրումը տաղանդավոր պատմաբան-տեսաբան, արևելագետ, միջազգայնագետ Նիկոլայ Հովհաննիսյանին քերել էին մեծ հռչակ և բարձր հեղինակություն, ուստի և նա այդ տեղի համար անընդունելի էր: Ն. Հովհաննիսյանին ինստիտուտի տնօրեն ընտրելու կոլեկտիվի որոշումը, ընդունված կարգի համաձայն, հաստատեցին ՀՀ ԳԱՍ պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը և Հայաստանի կառավարությունը:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանն ինստիտուտի տնօրենի պաշտոնը ստանձնեց մի այնպիսի ժամանակ, երբ իրադրությունը հանրապետությունում շատ ծանր էր, և այդ շրջանը պատմության

մեջ մտել է որպես «ցրտի և մրուրյան տարիներ»: 1991 թ. փլուզվեց Խորհրդային Միությունը, Հայաստանի Հանրապետությունը վերանվաճեց իր պետական անկախությունը և քնակոխեց մի դարաշրջան, որը ստացավ «անցման շրջան» անվանումը: Տարաբախտաբար այդ, այսպես կոչված, «անցման շրջանը» շատ ծանր նստեց նրկրի վրա, որը հայտնվեց անդունդի եզրին: Երկրի տնտեսությունը կաթվածահար նդավ, և նա ընկղմվեց սոցիալ-տնտեսական խոր ճգնաժամի մեջ: Առանձնապես անտանելի պայմաններ տնդծվեցին գիտության համար, գիտական կառույցները հայտնվեցին կործանման եզրին: Դրանից չխուսափեց և չէր էլ կարող խուսափել Հայաստանի գիտությունների ակադեմիան և նրա բոլոր ինստիտուտները, այդ թվում և արևելագիտության ինստիտուտը, որի համար 1990-ական թվականները եղան նրա գոյության ամենաճանր տարիները: Գիտական աշխատողների մեծ մասը ֆինանսական դժվարությունների պատճառով լքեց և հեռացավ ինստիտուտից՝ աշխատանք փնտրելով այլ, գիտությունից հեռու, քայց ավելի լավ վարձատրվող քնագավառներում, իսկ որոշ աշխատակիցներ հեռացան արտասահման: Արդյունքում նստացան գիտաշխատողների շարքերը, որը բարդություններ ստեղծեց լուրջ գիտական ուսումնասիրությունների համար: Այլևս չէր ֆինանսավորվում գիտաշխատողների ուսումնասիրությունների հրատարակումը, չէին գումարվում գիտաժողովներ, չկային գիտական գործուղումների համար անհրաժեշտ միջոցներ: Սակայն դա չփաստեցրեց պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանին: Նա կարողացավ մշակել իրատեսական հայեցակարգ ինստիտուտը ճգնաժամից դուրս քնրելու, նրա կազմալուծումը կանխելու և նոր վերածնունդի համար: Նա մշակեց կուռ և իրատեսական հայեցակարգ, որի առանցքային հիմնադրույթները նդան նրա կողմից ձևակերպված հայեցակարգային հետևյալ խնդիրները:

Առաջին, ստեղծված պայմաններում պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանն իր առաջին և ամենազլխավոր խնդիրը հռչակեց հայ արևելագետների գեներֆունդի պահպանումը: Այդ խնդրի լուծման գործում նա առանցքային տնդ հասկացրեց ինստիտուտի համալրումը նոր, երիտասաջող կադրերով, որը նշանակում էր թարմ արյուն ներարկել ինստիտուտին: Դա այդ ժամանակի համար դարձավ ռազմավարական խնդիր: Ծնորիիվ Ն. Հովհաննիսյանի եռանդուն, հավատարակչոված, մտածված և հեռատես քաղաքականության աներևակայելի ջանքերի գնով հացողվեց բնկում առաջացնել այդ

ողորտում, հույս ու հավատ ներշնչել արևելագետներին սեփական ուժերի և ապագայի նկատմամբ: Ն. Հովհաննիսյանի ջանքերի և արտասահմանյան գիտական ֆոնդերի հետ ունեցած նրա լայն կապերի շնորհիվ դրամաշնորհներ ձևոք բերվեցին արտասահմանյան մի շարք հիմնադրամներից, առաջին հերթին ամերիկյան «Արմեն և Բերսաբե Զերեշյան», «Մակ-Արթուր», «Վինստոն», Կարնեգի, ինչպես նաև նիդերլանդական, ճապոնական և այլ հիմնադրամներից: Ինստիտուտը համալրվեց նոր, երիտասարդ կադրերով, աստիճանաբար աշխուժացավ գիտական կյանքը: Ստացված գրանտների շնորհիվ հնարավոր դարձավ վերսկսել գիտական աշխատությունների՝ մենագրությունների, ժողովածուների և հոդվածների հրատարակությունը: Ամեն տարի կազմակերպվում էին երիտասարդ արևելագետների հանրապետական կոնֆերանսներ, որոշ չափով աշխատակիցներին տրվում էր նյութական և ֆինանսական օգնություն և այլն: Այդ տեսակետից արևելագիտությունը բացառիկ տեղ գրավեց ակադեմիայի հումանիտար գիտությունների համակարգում: Ինստիտուտ սկսեցին վերադառնալ նրա նախկին աշխատակիցները: Շնորհիվ այդ քայլերի՝ Ն. Հովհաննիսյանին հաջողվեց լուծել իր հոշակած գլխավոր խնդիրը՝ պահպանել հայ արևելագետների գեներֆոնդը: Ինստիտուտն մագնիսի պես արդեն իրեն էր ձգում երիտասարդ կադրերին: Կարելի է ասել, որ արևելագիտության ինստիտուտը կարողացավ առաջիններից մեկը հաղթահարել դժվարությունները և դուրս գալ ճգնաժամից: Արդեն 2000-ականների սկզբներին գիտական կյանքը ինստիտուտում մտավ ընակալուն հունի մեջ: Դա հիմք տվեց արձանագրելու, որ արևելագիտության ինստիտուտի վերածնունդը կայացել է, նա վերելք է ապրում և թևակոխել է զարգացման մի նոր՝ ավելի բարձր փուլ, ինչը պետք է համարել պատմական նվաճում: Դա պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի գիտակազմակերպչական գործունեության բարձրագույն փուլն էր, որն իր պատվավոր տեղը կգրավի հայ արևելագիտության պատմության մեջ:

Երկրորդ խնդիրը, որ հատենց արևելագիտության ինստիտուտի և նրա նորընտիր տնօրենի առջև և որն ուներ առանցքային նշանակություն, կապված էր Հայաստանի անկախ պետություն դառնալու իրողության հետ: Ելակետ ունենալով այդ պարագան՝ Նիկոլայ Հովհաննիսյանը գտնում է, որ անհրաժեշտություն է առաջացել փոխել հայ արևելագիտության հայեցակարգը և գործառույթները: Նա նշում է, որ հայ արևելագիտությունը հտորիդային Միության ժամա-

նակ սպասարկում էր Խորհրդային Միության արևելյան քաղաքականության պահանջները: Խորհրդային պետության փլուզումից և վերացումից հետո այդ խնդիրը, բնականաբար, վերացավ, և նրան փոխարինելու եկավ նորը: Եվ պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը հիմնավորում ու առաջադրում է նոր հայեցակարգային մոտեցում՝ նկատի ունենալով, որ Հայաստան անկախ պետությունն արդեն ունի իր սեփական արևելյան քաղաքականությունը, ուստի հայ արևելագիտությունը կոչված է սպասարկելու հենց Հայաստանի արևելյան քաղաքականության պահանջները: Ծարունակելով զարգացնել իր միտքը՝ պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը հանգում է այն եզրակացության, որ այդ պահից սկսած հայ արևելագիտությունը դառնում է ազգային գիտություն: Սա շատ կարևոր եզրահանգում էր, որն իր նշանակությամբ դուրս է գալիս զուտ արևելագիտության շրջանակներից և ձեռք բերում համահայկական հնչելություն: Մյուս կողմից՝ նման մոտեցման շնորհիվ ավելի էր կարևորվում արևելագիտության նշանակությունը, որը չէր կարող չոգևորել արևելագետների հին ու նոր սերունդներին:

Երրորդ խնդիրը, որը նույնպես հայեցակարգային նշանակություն ուներ, և պետք է լրաներ տնօրենը, վերաբերում էր այն հարցին, թե հայ արևելագիտությունը ազգային գիտություն լինելով հանդերձ, այնուամենայնիվ ինչ քնույթի էր լինելու: Արդյո՞ք սովորական, մի նոր շարքային ուղղություն, թե՞ առանձնահատուկ՝ չլրկնելով արդեն գոյություն ունեցող նախորդներին: Համակողմանի վերլուծությունից հետո, Ն. Հովհաննիսյանն առաջադրեց իր նոր տեսադրույթն առ այն՝ որ հայ արևելագիտությունն անկախ Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող գիտական ուղղություն է: Եվ այսօր այդ տեսակետը միճարկման առարկա չէ: Դա քարձրացրեց արևելագիտության կարևորությունը հաշտ հանրապետության ղեկավարության:

Եվ, վերջապես, **չորրորդ խնդիրը**, Ն. Հովհաննիսյանը հիմնավորեց ևս մեկ տեսակետ առ այն, որ հայ արևելագիտությունը Հայաստանի համար պրակտիկ կիրառական նշանակություն ունեցող գիտական ուղղություն է, որը կարևոր է Հայաստանի Հանրապետության արևելյան քաղաքականության գլխավոր ուղղությունների սահմանման և կենսազորման տեսանկյունից:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Լիկոլայ Հովհաննիսյանի այդ հայեցակարգը նորություն էր, որը

1995 թվականից դրվեց ինստիտուտի գիտական, և ոչ միայն գիտական, գործունեության հիմքում:

Արևելագիտության ինստիտուտի կողմից ճգնաժամը հաղթահարելու և վերելքի, կարելի է անգամ ասել, վերածնունդի մասին են վկայում այնպիսի ցուցանիշները, ինչպիսիք են աշխատությունների հրատարակությունը:

Արևելագիտության ինստիտուտը 1960 թվականից, երբ հրատարակվեց առաջին գիրքը, մինչև 1995 թ., այսինքն՝ 35 տարվա ընթացքում, հրատարակել էր 190 աշխատություն՝ մենագրություններ, ժողովածուներ և զրբույկներ: Եվ դա եղել էր ամբողջապես պետական ֆինանսավորումով: Իսկ 1995–2006 թթ., այսինքն այրոֆենտր Նիկոլայ Հովհաննիսյանի տնօրենության 11 տարիների ընթացքում, հրատարակվել է համարյա նույնքան՝ 160 աշխատություն՝ մենագրություններ, ժողովածուներ և զրբույկներ, որոնք ամբողջապես հրատարակվել են Ն. Հովհաննիսյանի ջանքերով ձեռք բերված արտասահմանյան դրամաշնորհների միջոցով: Դա ռեկորդային թոփոք էր և այդ արդյունքներով արևելագիտության ինստիտուտը ՀՀ ԳԱԱ ինստիտուտների համակարգում մրցակցությունից դուրս էր: Հարկ է նշել, որ միայն «Արմեն և Բերսաբե Ջերեջյան հիմնադրամի» միջոցներով և նրա պրեզիդենտներ Արսեն, ասպա նրա որդու՝ Էդվարդ Ջերեջյանների հոգածությամբ հրատարակվել է մոտ 95 աշխատություն, որի համար ինստիտուտը մեծապես նրախտապարտ է այդ հիմնադրամին և նրա ազգանվեր պրեզիդենտներին: Դրանք շատ խոսուն թվեր են, որոնց թիվումբում արևելագիտության ինստիտուտի տնօրեն պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի և համապատասխան ութ քաժինների գիտաշխատողների տրևաջան աշխատանքն է:

Արևելագիտության ինստիտուտի հրատարակած ժողովածուների մեջ իր նշանակությամբ կարևոր տեղ էր զբաղում «Մերձավոր և Միջին Արևելքի ներկրներ և ժողովուրդներ» ժողովածուն, որի առաջին ներկու հատորները լույս են տեսել «Արևելագիտական ժողովածու» խորագրի ներքո՝ համապատասխանաբար 1960 և 1964 թթ.: Հետագայում, հաշվի առնելով, որ «Արևելագիտական ժողովածու» խորագրի ներքո Խորհրդային Միությունում հրատարակվում էին քազմաթիվ ժողովածուներ, զրբույկներ և այլ ելուքեր, արևելագիտության քաժնի վարիչ Հովհաննես Ինճիկյանը դիմեց աշխատակիցներին ժողովածուի համար գտնել նոր անվանում: Բնաարկումներից հետո բնդունվեց Նիկոլայ Հովհաննիսյանի առաջարկը և

ինստիտուտի գլխավոր ժողովածուն III հատորից (1967 թ.) սկսած լույս տեսավ «Անրձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» խորագրի ներքո: Այդ անվանումը պահպանվեց նաև արևելագիտության բաժինը ինստիտուտի վերակազմավորվելուց հետո: Սակայն ժողովածուն դադարեց լույս տեսնել 1989 թվականից, XV հատորից հետո, երբ վրա հասան ծանր ժամանակներ: Նա սկսեց վերահրատարակվել միայն ուղիղ յոթ տարի անց, 1996 թվականից, երբ լույս տեսավ նրա XVI հատորը, ինչը կապված էր արևելագիտության վերածնունդի հետ՝ ինքն իր հերթին դառնալով այդ վերածնունդի ցուցիչներից մեկը: Այդ հարցում տեղի ունեցավ ևս մեկ նորամուծություն: Եթե մինչ այդ ժողովածուն լույս էր տեսնում լավագույն դեպքում երկու-երեք տարին մեկ, ապա այժմ, Ն. Հովհաննիսյանին հաջողվեց հայքայքել ֆինանսական լրացուցիչ միջոցներ և ժողովածուն սկսվեց հրատարակվել ամեն տարի՝ դառնալով յուրատեսակ տարեգիրք: Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի տնօրենության տասնմեկ տարիներին հրատարակվեց ժողովածուի տասնինը հատոր, Հիշտ այնքան, որքան հրատարակվել էր նախորդ երեսուներեք տարիների ընթացքում: Այդ տարիների ընթացքում նա էր ժողովածուի գլխավոր խմբագիրը: Ավելացնենք, որ դա քաջատիկ հրատարակություն էր և խորհրդային Միությունում ոչ մի տեղ նման ժողովածու չէր հրատարակվում:

Հրատարակությունների վերականգնողական շնորհիվ հետագայում ինստիտուտի ավելի քան 65 արևելագետներ պաշտպանել են իրենց գիտական թեզերը և ստացել պատմական գիտությունների քեկնածուի և դոկտորի գիտական աստիճաններ:

Այսօրվացսկ նաև գիտաժողովների գումարման գործընթացը, որին շատ մեծ տեղ էր հատկացնում ինստիտուտի տնօրենը, մասնավոր երիտասարդ արևելագետների տարեկան հանրապետական կոնֆերանսների կազմակերպմանը: Դրանց հաճախ մասնակցում էին նաև Վրաստանի և Ռուսաստանի երիտասարդ արևելագետները: 1995-2005 թթ. գումարվել են ինը նման գիտաժողովներ, որոնք ընթանում էին Ադվերանում, ՀՀ ԳԱԱ սիմպոզիումների տանը: Երևանում կազմակերպվել են նաև մի շարք այլ բնույթի կոնֆերանսներ:

Ն. Հովհաննիսյանը ձեռնարկեց մի շարք քայլեր ինստիտուտում աշխատանքային պայմանների քարելավման ուղղությամբ: Ընդառաջելով նրա խնդրանքին՝ ամերիկյան գործարար Ջորջ Աաառուրյանը արևելագիտության ինստիտուտին նվիրեց մոտ քսան հա-

մակարգիչ, որը տրամադրվեց ինստիտուտի քոլոր քաժիններին, ինչպես նաև առանձին առաջատար գիտաշխատողների: Արևելագիտության ինստիտուտն այդ ժամանակ ՀՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքում առաջին և միակ ինստիտուտն էր, որն ապահովված էր համակարգիչներով: Ինստիտուտի մի քանի սենյակներ, ինչ-ինչ պատճառներով զբաղեցնում էին ինստիտուտի հետ առնչություն չունեցող կազմակերպություններ: Ն, Հովհաննիսյանը կարողացավ ազատել այդ սենյակները և վերադարձնել ինստիտուտին, որոնք տրամադրվեցին համապատասխան քաժիններին: Ինստիտուտն ուներ շատ հարուստ գրադարան, սակայն նրա պայմանները ծանր էին: Ինստիտուտի միջոցներով հնարավոր եղավ կառուցել գրապահոց, ուր տեղավորվեցին մոտ 65 հազարի հասնող փաստաթղթեր, գրքեր, ժողովածուներ, մամուլ և այլ գրականություն:

Ահա այս քոլորը միասին այն մազնիսն էր, որը, ինչպես նշվեց, իրեն էր ձգում երիտասարդ արևելագետներին: Ինստիտուտը համալրվեց մոտ 35 նոր, երիտասարդ, շնորհալի կադրերով, որոնք այսօր կազմում են արևելագիտության ինստիտուտի կադրային կորիզը: Հետևաբար, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը կատարեց իր խոստումը՝ պահպանել հայ արևելագետների գենետիկ ֆոնդը, որը ոչ միայն պահպանվեց, այլև համալրվեց նոր և խոստումնալից կադրերով:

Հայ արևելագիտության միջազգային ճանաչման և այդ համակարգում արժանապատիվ տեղ գրավելու տեսանկյունից շատ կարևոր էր ՀՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի գիտնականների մասնակցությունը Ասիական և Աֆրիկյան ուսումնասիրությունների միջազգային կոնգրեսներին (ICANAS): Ուստի և տնօրենն անում էր ամեն ինչ այդ կոնգրեսներին հայ արևելագետների մասնակցությունն ապահովելու համար՝ պարտադիր պայման համարելով նրանց զեկուցումներով հանդես գալու հանգամանքը: Նրանք, ինչպես և ինքը՝ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը, մասնակցել և զեկուցումներով հանդես են եկել Համբուրգում, Բուդապեշտում, Մոնրեալում, Մոսկվայում կայացած կոնգրեսներին: Դրանցից հատկապես կարևոր էր 2000 թ. Մոնրեալում կայացած կոնգրեսը, որին մասնակցել և նրա շրջանակներում ակտիվ գործունեություն էր ծավալել Ն. Հովհաննիսյանը, մանավանդ միջազգային տարբեր կենտրոնների հետ կապեր հաստատելու ոլորտում: Եվ նրա այդ ջանքերն օվբեցին իրենց պտուղները: Մոնրեալում գու-

մարված XXXVI կոնգրեսում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը միաձայն ընտրվեց Արևելագիտական և ասիական ուսումնասիրությունների միջազգային կազմակերպության անդամ, որը գործում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո: Նրա անդամ են աշխարհի ընդամենը 13 երկրի արևելագիտական կենտրոն, այդ թվում ԱՄՆ-ի, Գերմանիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Ճապոնիայի, Հնդկաստանի և այլն: Իսկ պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը ընտրվեց նրա քյուրոյի անդամ: Արևելագիտության ինստիտուտը դարձավ նաև ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի երկրների Ռազմավարական և միջազգային հարաբերությունների հետազոտական կենտրոնների միջազգային ասոցիացիայի անդամ: Դա ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի միջազգային մակարդակի կառույց լինելու միջազգային ճանաչումն էր, որի մեջ անուրանալի է պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի ներդրումը և դերը:

Նորաստեղծ միջազգային քաղաքական իրողությունները հրամայական դարձրեցին փոփոխություններ մտցնել արևելագիտության ինստիտուտի կառուցվածքային համակարգում: Ն. Հովհաննիսյանի նախաձեռնությամբ ինստիտուտի կազմում ստեղծվեց «Հայաստանի Հանրապետության միջպետական հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հետ» գիտահետազոտական թեմատիկ խումբը, որը հենց ինքն էլ գլխավորեց: Դա նշանակում էր սկզբունքային նոր մտեցում մի այնպիսի կարևոր հարցում, ինչպիսին հարաբերությունները արաբական երկրների, Իրանի և Թուրքիայի հետ: Նախկինում այդ հարաբերություններն իրականացվում էին գլխավորապես համայնքային հարաբերությունների մակարդակով, որն արդեն սպառել էր իրեն այն քանից հետո, երբ Հայաստանի Հանրապետությունը և արաբական երկրները դարձան անկախ և ինքնիշխան պետություններ: Հետևաբար, վերոնշյալ հետազոտական խմբի ստեղծումը խոսում էր այն մասին, որ հայ-արաբական հարաբերությունների ուսումնասիրություններն արդեն իրականացվելու էին միջպետական մակարդակով:

Ն. Հովհաննիսյանի նախաձեռնությամբ փոփոխություն մտցվեց նաև ինստիտուտի ուսումնասիրությունների տարածքի, աշխարհագրական տարածաշրջանի հարցում: Ինչպես նշվել է, ինստիտուտի կազմավորման ժամանակ որպես հայ արևելագիտական կենտրոնի գիտահետազոտական ուսումնասիրությունների տարածաշրջան հաստատվել էր Մերձավոր և Միջին Արևելքը, և գործող ութ բաժինների թեմատիկան խարսխված էր այդ սկզբուն-

քի վրա ու աշխարհագրականորեն սահմանափակված էր այդ տարածքով: Մակայն անկախության նվաճումից հետո ընդլայնվեց Հայաստանի արտաքին քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունների ոլորտը, ընդգրկելով աշխարհի տարբեր շրջաններ և երկրներ, որոնք չէին մտնում Մերձավոր և Միջին Արևելքի աշխարհագրական սահմանների մեջ, այդ թվում և Արևելյան, և Հարավարևելյան Ասիայի տարածաշրջանը: Կարևոր և սկզբունքային փոփոխություններ էին տեղի ունեցել նաև միջազգային հարաբերություններում: Մասնագետներն եկան այն եզրակացության, որ միջազգային հարաբերությունների կենտրոնը Արևմուտքից տեղափոխվում է Արևելյան Ասիա, որտեղ գտնվում են այնպիսի զիզանատներ, ինչպես Չինաստանը, Հնդկաստանը, Ճապոնիան և հարակից որոշ այլ երկրներ: Այդ տեսակետը հիմնավորեցին այնպիսի ականավոր պատմաբան-քաղաքագետներ, ինչպես ԱՄՆ-ի նախկին պետական քարտուղար և պրեզիդենտ Նիքսոնի խորհրդական Հենրի Բիսինջերը, ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջիմի Բարտերի ազգային անվտանգության խորհրդական, պրոֆեսոր Ջրիզև Բժեմիսկին, սոցիոլոգ, քաղաքակրթությունների բախման տեսության հիմնադիր Սեմյուել Հանթինգթոնը և այլք: Հայ ականավոր պատմաբանը Ն. Հովհաննիսյանը, նույնպես այդ տեսակետի կողմնակից էր և գտնում էր, որ Մերձավոր և Միջին Արևելքն այլևս նեղ էր զայիս հայ արևելագիտությանը և նա չէր կարող տեղավորվել լոկ նրա զգեստում: Այսպես հասունացավ արևելագիտության ինստիտուտի կազմում մի նոր գիտահետազոտական քաժին ստեղծելու հարցը: Նրա տեսական-ծրագրային հիմնավորումը տվեց պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը, որը պաշտպանություն գտավ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆադեյ Մարգարյանի, արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի, ապա և վարչապետ Անդրանիկ Մարգարյանի կողմից: Դրանից հետո այդ հարցը ներկայացվեց Հայաստանի կառավարությանն՝ ի հաստատումն: 2002 թ. սեպտեմբերի 18-ին ՀՀ կառավարությունն ընդունեց որոշում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի կազմում ստեղծել Արևելյան Ասիայի երկրների ուսումնասիրության քաժին: Նորաստեղծ քաժնի գլխավոր խնդիրը համարվեց Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի և տարածաշրջանի այլ երկրների պատմության, ներքին և արտաքին քաղաքականության, նրանց հետ Հայաստանի Հանրապետության միջպետական հարաբերությունների, հայ համայնքների պատմության ուսումնասիրությունը, ինչպես նաև Հայաստանի կառավա-

րության և պատկան մարմինների համար վերլուծական կյոթերի և առաջարկությունների պատրաստումը:

Նոր քաճնի ստեղծումով, որը զլխավորեց պ.գ.դ. Ռ. Կարապետյանը, ապա որոշ ժամանակ Ն. Հովհաննիսյանը, խիստ ընդարձակվեց հայ արևելագիտության ուսումնասիրությունների դաշտը, և այսօր այն ընդգրկում է մի վիթխարի տարածք, որը պրոֆեսոր Լիկոլայ Հովհաննիսյանի պատկերավոր արտահայտությամբ «Ձգվում է Բուֆորից մինչև Խաղաղ օվկիանոս, որի արևմտյան եզրը Թուրքիան է, իսկ արևելյանը՝ Ճապոնիան»: Աշխարհում շատ քիչ արևելագիտական կենտրոններ կան այսօր, որ ունեն ուսումնասիրության նման ընդարձակ գիտական դաշտ: Դրանում շատ մեծ է հայ տաղանդավոր գիտնականի դերակատարումը և չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ դա ուղղակիորեն կապված է Լիկոլայ Հովհաննիսյանի անվան հետ:

Ն. Հովհաննիսյանը նոր քաղաքականություն վարեց արտասահմանյան գիտական կենտրոնների հետ գիտական համագործակցության քննազավտում: Նա մեծ ջանքեր գործադրեց համագործակցություն հաստատել երկկողմանի պայմանագրային հիմքի վրա, ինչը շատ արդյունավետ եղավ, մասնավորապես արևելագիտության ինստիտուտի գիտական աշխատողների գիտական գործուղումների, զրքափոխանակության, համաժողովների մասնակցելու տնտանկյունից և այլն: Նրա տնօրենության շրջանում համագործակցության վերաբերյալ պայմանագրեր և հուշագրեր ստորագրվեցին Դանասկոսի մերձավորարևելյան հետազոտությունների ֆրանսիական ինստիտուտի, Կահիրեի համալսարանի լնգվի կենտրոնի, Հայնպի քաղաքապետարանի մշակութային կենտրոնի հետ, որի շնորհիվ արևելագիտության ինստիտուտի արարական երկրների քաճնի ըստ էության քոլոր գիտաշխատողների համար ապահովվեցին գիտական գործուղումներ նշված կենտրոններ: Գործուղումների արդյունքները տպավորիչ էին և մեծապես նպաստեցին հայ արարագետների գիտելիքների հարստացմանը, լնգուների իմացության կատարելագործմանը, ինչն իր հերթին դրական ազդեցություն ունեցավ հայ արարագիտական դպրոցի կայացման վրա: Հայնպի իշխանությունների հետ ձեռք բերված համաձայնության շնորհիվ, հնարավորություն եղավ Հայնպում առաջին անգամ կազմակերպել «Հայ արարագետների աշխատությունների ցուցահանդես»: Դա անակնկալ էր Սիրիայի մտավորականության և պաշտոնյանների համար, որոնք հիացած էին հայ արարագետնե-

րի աշխատություններով, համարելով դա ոչ միայն գիտական, այլև քաղաքական երևույթ:

Պրոֆեսոր Եկեղոյ Հովհաննիսյանը պայմանագրային մեքորը կիրառեց նաև Հարավարևելյան Ասիայի երկրների՝ Հնդկաստանի, Չինաստանի և Ճապոնիայի գիտական կենտրոնների հետ համագործակցություն հաստատելիս:

Առաջին հուշագիրը ստորագրվեց Հնդկաստանի Չանդիգարի ագրարային և արդյունաբերական զարգացման հետազոտական կենտրոնի հետ Երևանում, արտաքին գործերի նախարարությունում, 2003 թ. մայիսի 16-ին: Հուշագիրը ստորագրեցին հնդկական կենտրոնի տնօրեն Ռաչպատ Մալիոտրան և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Եկեղոյ Հովհաննիսյանը: Կողմերը պարտավորվում էին Չանդիգարի նշված կենտրոնում «Հիմնել Կովկասյան ուսումնասիրությունների կենտրոն», և արևելագիտության ինստիտուտը ստանձնում էր նաև կենտրոնի ստեղծման պարտավորությունը: Եվ արևելագիտության ինստիտուտը պատվով կատարեց այդ հանձնառությունը: Այդ կենտրոնի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 2003 թ., երբ Հայաստանի սրբազան Ռոբերտ Քոչարյանի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էր նաև Ն. Հովհաննիսյանը, եղավ Հնդկաստանում և այցելեց Չանդիգար, այդ թվում ագրարային և արդյունաբերական զարգացման հետազոտական կենտրոն: Այնտեղ խոշոր տառերով մի կողմում գրված էր «Հայաստանի Հանրապետություն, գիտությունների ազգային ակադեմիա, արևելագիտության ինստիտուտ», իսկ մյուս կողմում՝ «Հնդկաստան, Չանդիգար, Կովկասյան ուսումնասիրությունների կենտրոն»: Բազմամարդ միտինգում հանդես գալով Ռաչպատ Մալիոտրան՝ շնորհակալություն հայտնեց պրեզիդենտ Ռ. Քոչարյանին, ՀՀ գիտությունների ակադեմիային և արևելագիտության ինստիտուտին ծրագիրն ամրոցությամբ և բարձր մակարդակով իրականացնելու համար: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը գոհունակություն հայտնեց գիտական այդ կենտրոնը հայ գիտնականների օգնությամբ կենսագործելու առիվ և նշեց, որ Հայաստանը պատրաստ է առաջիկայում ևս համագործակցել Հնդկաստանի հետ տարբեր ոլորտներում, այդ թվում և գիտական: Հակիրճ նյութ է ունենում նաև Ն. Հովհաննիսյանը: Տեղի ունեցավ այդ կենտրոնի հանդիսավոր բացումը:

2003 թ. հոկտեմբերի 31-ին Դելիում փոխհասկացության հուշագիր ստորագրեցին Նյու Դելիի քաղաքական հետազոտությունն-

րի կենտրոնի պրեզիդենտ, պրոֆեսոր Չարան Վաճվան և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը, իսկ 2003 թ. դեկտեմբերի 5-ին ակադեմիական համագործակցության վերաբերյալ փոխհասկացության հուշագիր ստորագրվեց ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի և Միջազգային ուսումնասիրությունների չինական ինստիտուտի միջև:

Ուշագրավ է նաև հետևյալ փաստը: Հայ արևելագետները և ճապոնացի մասնագետները համատեղ, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի, դոկտոր Ռուբեն Կարապետյանի և պրոֆեսոր Միքայել Ամիրխանյանի գիտական ղեկավարությամբ և մասնակցությամբ, հայերեն և ճապոներեն լեզուներով պատրաստել էին «Հայաստան-Ճապոնիա. Քաղաքականություն. Տնտեսություն. Մշակույթ (1988-2003)» կոլեկտիվ մեկագրությունը: Պատմության մեջ առաջին անգամ էր նման աշխատություն գրվում: Նիկոլայ Հովհաննիսյանը, ոչ միայն որպես ինստիտուտի տնօրեն, այլև ծրագրի գիտական ղեկավար և գլխավոր խմբագիր, 1993 թ. դեկտեմբերի 1-ին դիմում է Հայաստանում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Իսցի Նոմուրային առ այն, որ իր նախադեպը չունեցող հայ-ճապոնական այդ համատեղ աշխատությունը կծառայի հայ-ճապոնական մերձեցմանը, ավելացնելով՝ «ես պատիվ ունեմ խնդրելու Ձերը գերազանցության աջակցությունը ստանալու «Ճապոնական Ֆոնդի» համապատասխան օգնությունը՝ իրականացնելու զերոնշյալ Ծրագիրը»: Հարցը լուծվում է դրականորեն և «Ճապոնական Ֆոնդը» հոգում է հրատարակության ծախսերը և «Հայաստան-Ճապոնիա» երկլեզու՝ հայերեն և ճապոներեն, գիրքը լույս է տեսնում 2005 թ. երևանում: Թարգմանությունը հայերենից ճապոներեն՝ Կ. Գ. Քարամյանի, ճապոնական տեքստի խմբագիր՝ Կոմիկո Կորայաշի: (Այս ամենի մասին տե՛ս «Հայաստան-Ճապոնիա» գիրքը և «Արևելաասիական ուսումնասիրություններ, Փաստաթղթեր», Հատոր I, Երևան, 2009):

Հաշվի առնելով պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի հարուստ գիտելիքները, գիտակազմակերպչական մեծ կարողությունները՝ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտի 2003 թ. հրամանով նրա վրա, համատեղության կարգով, դրվում են ՀՀ ԳԱԱ հասարակական գիտությունների քաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի տեղակալի պարտականությունները՝ նպատակ ունենալով ակտիվացնել քաժանմունքի գիտական գործունեությունը և բարձրացնել նրա մակարդակը:

Հայաստանի Հանրապետության նախագահի 2003 թ. հոկտեմբերի 8-ի հրամանագրով, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանին շնորհվում է Հայաստանի Հանրապետության «Գիտության վաստակավոր գործչի» պատվավոր կոչում:

2006 թ. աշնանը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում գործողության մեջ դրվեց ինստիտուտների տնօրենների պաշտոնավարության վերաբերյալ տարիքային ցենզով նախատեսած սահմանափակումների կարգը, և ՀՀ ԳԱԱ քսաներեք ինստիտուտների տնօրեններ, այդ թվում և արևելագիտության ինստիտուտի տնօրեն պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը, վայր դրեցին իրենց լիազորությունները: Ինստիտուտի նոր տնօրեն նշանակվեց Թուրքիայի բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Ռուբեն Մաֆրաստյանը:

Դ) ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՊԵՇՏՈՒՈՒՄ

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը նշանակվեց արևելագիտության ինստիտուտի տնօրենի գիտական խորհրդականի պաշտոնում, որը կատարում է մինչև օրս: Նրա առաջարկությամբ ինստիտուտում ստեղծվեց մի նոր կառույց՝ «Մերձավոր և Միջին Արևելքում միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների ուսումնասիրության բաժին»՝ միակը հանրապետությունում, որը զլխավորեց նա:

Ն. Հովհաննիսյանն աջակցեց Կահիրեի համալսարանում հայագիտական հետազոտությունների կենտրոնի ստեղծմանը, որը հանդիսացավ եգիպտոսում ՀՀ դեսպանության և հատկապես ՀՀ դեսպան Ռուբեն Կարապետյանի հետևողական դիվանագիտական ջանքերի արդյունքը: Վերջինիս հրավերով Ն. Հովհաննիսյանը 2007 թ. դեկտեմբերին Կահիրեի համալսարանում հանդես եկավ զեկուցումով «Հայ-արաբական պատմական հարաբերությունները» թեմայով, որը թարգմանվեց արաբերեն և լույս տեսավ առանձին գրքույկով: Այն դարձավ հայագիտական կենտրոնի կողմից հրատարակված առաջին գիտական աշխատությունը:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը տասնյակ տարիներ շարունակ եղել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի և ինստիտուտում գործող քարձրագույն որակավորման հանձնաժողովի «Համաշխարհային պատմություն» մասնագիտա-

կան գիտական խորհրդի անդամ՝ նրանց ստեղծման օրվանից, իսկ 1998–2012 թթ. այդ նրկու գիտական խորհուրդների նախագահ:

Տարբեր տարիներ եղել է նաև ՀՀ ԳԱ պատմության ինստիտուտի, ինֆորմացիայի կենտրոնի և սփյուռքահայության բաժնի գիտական խորհուրդների անդամ:

2007 թ. Ն. Հովհաննիսյանին աշխատանքի են հրավիրում ՀՀ պաշտպանության նախարարության Գ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտում, որտեղ նա համատեղության կարգով ստանձնում է ինստիտուտի պետի խորհրդատուի պաշտոնը՝ իր նպաստը քերելով հայկական ազգային ռազմական գիտության ձևավորման և զարգացման խիստ կարևոր գործին: Նա դառնում է այդ ինստիտուտի գիտական խորհրդի և ինստիտուտում գործող ԲՈՒՀ-ի «Միջազգային հարաբերություններ» և «Քաղաքագիտություն» մասնագիտությունների գծով ատենախոսությունների պաշտպանության մասնագիտական գիտական խորհրդի անդամ:

2007 թ. պրոֆեսոր Հովհաննիսյանին շնորհվում է ՀՀ նախագահի մրցանակ՝ նրա «Արաքսական երկրների պատմություն (VII դ.–2005 թ.)» քառահատոր աշխատության համար:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանն իր ողջ գիտական գործունեության ընթացքում չափազանց մեծ և հոգատար վերաբերմունք է ունեցել գիտական կադրերի նկատմամբ: Գիտական քարձրակարգ կադրերի պատրաստումը եղել է նրա համար ոչ թե նրկրորդական, այլ առաջնային խնդիր: Նրա գիտական ղեկավարությամբ, գիտական խորհրդատվություններով և աջակցությամբ մոտ 50 ասպիրանտներ, հայցորդներ և ընդհանրապես գիտաշխատողներ պաշտպանել են թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ, որոնք րոյրն էլ հաստատվել են թե՛ խորհրդային Միության և թե՛ անկախ Հայաստանի Հանրապետության քարձրագույն որակավորման հանձնաժողովների կողմից: Դրանք եղել են ինչպես Հայաստանի և ԼՂՀ-ի, այնպես էլ արտասահմանյան մի շարք երկրների՝ Ռուսաստանի, Վրաստանի, Լիբանանի, Սիրիայի, Հորդանանի, Իրանի, Եգիպտոսի, Գերմանիայի, Իսրայելի և այլ երկրների գիտական աշխատողներ: Այդ կապակցությամբ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը դիպուկ կերպով նկատել է՝ «Եթե XIX դարում և XX դարի սկզբներին հայ մտավորականներն էին գնում Գերմանիա և այնտեղ ստանում գիտական աստիճան-

ներ, ապա այժմ Գերմանիայից են գալիս Հայաստան գիտական աստիճան ստանալու համար»:

Արևելագիտության ինստիտուտի գոյության տարիներին հայ արևելագետները հրատարակել էին մեծ թվով տարբեր բնույթի աշխատություններ տարբեր լեզուներով, այդ թվում և արաբերեն: Դրանք մենագրություններ էին, հոդվածների ժողովածուներ, գրքույկներ, ատենախոսությունների սեղմագրեր, զեկուցումների բեզեր և այլն: Նիկոլայ Հովհաննիսյանն իրավացիորեն գտնում էր, որ դրանք արժանի են ներկայացնել արաբական գիտական հանրությանը, մտավորականությանը, ընթերցողին և առաջարկում է հայ արաբագետների աշխատությունների ցուցահանդես կազմակերպել Սիրիայում, Հալեպում: Նրա այդ տեսակետը հաղանության է արժանանում ՀՀ գիտությունների ակադեմիայի և արևելագիտության ինստիտուտի ղեկավարության, ինչպես նաև Հալեպում Հայաստանի գլխավոր հյուպատոսության կողմից: Ցուցահանդեսի բացումը տեղի է ունեցել 2008 թ. հոկտեմբերի 22-ին Հալեպում, որի կազմակերպմանը մեծ աջակցություն են ցույց տվել Հալեպի քաղաքային իշխանությունները: Ցուցահանդեսը շուրջալից հաջողություն է ունեցել և մեծ տպավորություն գործել արաբների վրա, նրանք ցնցված էին ի տես հայ արաբագետների վիթխարի աշխատանքների և խոստովանում, որ նման քան չէին ակնկալում իրենց երախտագիտությունը հայտնելով հայ արաբագետներին և հայ եղբայրական ժողովրդին: Հալեպի պետական մշակութային միության նախագահ Մուհամմադ Քամիլը, որն այցելել էր ցուցահանդես և ուշադիր դիտարկել ներկայացված հայ արաբագետների աշխատությունները, որոնց մեջ քիչ չէին օտար լեզուներով, այդ թվում և արաբերենով հրատարակված գրքերը, Ն. Հովհաննիսյանին ողողված իր շնորհակալական նամակում գրում է. «Երջանկացանք, ծանոթանալով արաբների պատմությանը և երկրներին նվիրված հայ եղբայր արաբագետների աշխատություններին: Ուշագրավ է, որ առաջին ոչ արաբ հեղինակը, որ հիշատակել է Մուհամմադ մարգարեի մասին, հայ պատմիչն է՝ Սեբեոսը: Ցույց է տրված հայ եղբայրների մեծ ներդրումը արաբական վերածննդի շարժման մեջ, որն անկասկած հայտնի է շատ արաբների: Անկասկած, այն ինչ ներկայացրել է գիտնական հետազոտող Նիկոլայ Հովհաննիսյանն իր աշխատությունների միջոցով, որոնց թիվը հասնում է 60 գրքի, լուսարանվել են ամենակարևոր հարցերը: Նա նշել է, որ Լեոնային Ղարաբաղի հարցն իր բնույթով նման է արաբական Պաղեստինի

հարցին, որը գրավված է Իսրայելի կողմից, և նա գտնում է, որ անհրաժեշտ է որպեսզի Պաղեստինն ազատագրվի և Լեռնային Ղարաբաղը նույնպես պետք է ազատ լինի: Ն. Հովհաննիսյանը նշում է, որ որ արարների մարդասիրական օգնությունը հայերին վերջիններիս դժվար օրերին ելնում է ղեպների և իրադարձությունների արարների ճիշտ ըմբռնումից, ձևավանդներին և կարիքավորներին օգնելու նրանց ազնիվ ըմբռնումից:

Իմ ողջույնները աշխարհի քոլոր կողմերում գտնվող եղբայր հայերին, Հալեպում գտնվող հայ համայնքի մեր եղբայրներին՝ այն կարևոր հայրենասիրական դերի համար, որ նրանք ունեցան ժամանակին Սիրիան կառուցելու և հաջողությունների հասնելու նպատակով:

Շարունակենք մեր ջանքերը մեր երկու նրկրների և համայն մարդկության բարօրության համար:

Մտիամատ Բամիլ, Հալեպ, 22/10/08»:

Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանին իր ողերձն է հղել նաև ցուցահանդեսն այցելած սիրիացի արաբ արվեստաբաններից մեկը՝ նշելով. «Ուրախ ենք, որ այս ցուցահանդեսի շնորհիվ մենք պատկերացում ենք կազմում այն հետաքրքրությունների մասին, որ դուք ցուցաբերում եք ընդհանրապես տարածաշրջանի հարցերի նկատմամբ՝ հատկապես պատմական, քաղաքական և հասարակական տեսանկյունից: Մենք Հալեպում միասին ենք ապրում մեր հայ եղբայրների հետ, որոնց հետ մենք ընկերներ ենք, և մեզ կապում են փոխադարձ հարգանքը և կյանքը:

Սալահ Խալիդի, արվեստաբան, Հալեպ, 22/10/2008»:

Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանն այդ միջոցառման շրջանակներում, 2008 թ. հոկտեմբերի 23-ին, Հալեպի Ասադի անվան զեղեցիկ արվեստների սրահում, Հալեպի արաբ և հայ հասարակության առջև հանդես է գալիս զեկուցումով՝ «Հայաստանի Հանրապետությունը արաբական ուսումնասիրությունների կենտրոն է» թեմայով:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը 2006–2015 թթ. եղել է ա) արևելագիտության ինստիտուտի «Համաշխարհային պատմություն» որակավորման քննության հանձնաժողովի նախագահ, բ) «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ ասպիրանտուրայի ընդունելության հանձնաժողովի նախագահ և գ) 2011 թ. մինչև օրս՝ արևելագիտության ինստիտուտի առևտրացիոն հանձնաժողովի նախագահ:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ղեկավարությունը 2016 թ. նպատակահարմար գտավ ինստիտուտում զործող երկու բաժինները՝ Մերձավոր և Միջին Արևելյուն միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների ուսումնասիրությունների և Արևելյան Ասիայի երկրների ուսումնասիրությունների բաժինները միավորել մեկ բաժնի մեջ, որը ստացավ «ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի միջազգային հարաբերությունների բաժին» անվանումը: Առաջին անգամ էր ՀՀ ԳԱԱ կազմում ստեղծվում նման կառույց: Նորաստեղծ բաժնի ղեկավար է նշանակվում պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը:

Իսկ 2016 թ. օգոստոսի 8-ից նա համառոտեղությամբ աշխատանքի է անցնում ՀՀ պաշտպանության նախարարության պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի պետի խորհրդականի պաշտոնում:

II

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Նիկոլայ Հովհաննիսյանն ականավոր, ինքնատիպ, քազմակողմանիորեն զարգացած, իր էությանը նորարական քննարկ տաղանդավոր գիտնական է, պատմաբան, արևելագետ-արաբագետ և միջազգայնագետ, որը վաղուց ձեռք է բերել համաշխարհային ճանաչում: Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը, աշխատանքի անցնելով ՀՀ գիտությունների ակադեմիայի արևելագիտական հաստատությունում, նախընտրեց արաբագիտությունը, խորաքափանցորեն կոտրելով այն կարևոր դերակատարությունը, որը կատարելու էր արաբագիտությունը համաշխարհային արևելագիտության գերակա ուղղություններից մեկը: Դրանում մեծ է նաև պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի գիտական ներդրումը՝ որպես այդ ուղղության համաշխարհային հեշակ վայելող մասնագետ:

Չափազանց լայն են ու ընդգրկուն պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակները: Հայ տաղանդավոր գիտնականն ունի քեղմնավոր գրիչ և նրա հրատարակած աշխատությունների թվաքանակը շատ տպավորիչ է, ինչպես նշվել է, ավելի քան 550, որոնց զգալի մասը արտասահմանում՝ տարբեր լեզուներով: Հարկ է նշել, որ այդ բոլոր թարգմանությունները կատարվել են վերոնշյալ լեզուների կրող երկրների անմիջական նախաձեռնությամբ և հրատարակվել նրանց ֆինանսական հոգածության շնորհիվ: Դա վկայում է հայ գիտնականի աշխատությունների նկատմամբ մեծ հետաքրքրության և նրա աշխատությունների գիտական բարձր մակարդակի մասին, մի կողմից, և իրավունք տալիս ասելու, որ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը փնտրված հեղինակ է ոչ միայն արաբական աշխարհում, այլև նրա սահմաններից դուրս, մյուս կողմից:

Ստորև կանդորդառնանք պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի հետաքրքրությունների տեսադաշտում զտնվող մի քանի գիտական ուղղությունների լուսաբանությանը և հայ ակադեմիկոս գիտնականի ներդրմանը այդ ոլորտներում:

1. ԱՐԱՐԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՀԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱԽԻՐՈՒԹՅՈՒՆԸ

1960-1970-ական թվականներին պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում է եղել ազգային-ազատագրական շարժումների ուսումնասիրությունը Արարական Արեւելքի երկրներում, մասնավորապես, Իրաքում, Լիբանանում, Սիրիայում, Եգիպտոսում, Հորդանանում, ինչպես նաև արաբական մի շարք այլ երկրներում: Եվ դա պատահականություն չէր: Դա պատմական մի ժամանակաշրջան էր, երբ ազգային-ազատագրական շարժումները Ասիայում, հատկապես Մերձավոր Արևելքում, հասել էին իրենց զագարենակետին և ազգային անկախության եվաճման, ինքնիշխան պետությունների կազմավորման օրինաչափությունների հետազոտումը դարձել էր համաշխարհային արևելագիտության կենտրոնական հիմնախնդիրներից մեկը: Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանն առաջիններից մեկն էր, որ ձևոնամուխ եղավ արաբական ազգային-ազատագրական շարժումների համալիր ուսումնասիրությանը՝ ընթերցողի սեղանին դնելով տարբեր լեզուներով տարբեր երկրներում հրատարակված յոթ հատորներ: Կարելի է ասել, որ դա աննախադեպ երևույթ էր և նման ծավալի աշխատանք ոչ միայն Հայաստանում, այլև նախկին Խորհրդային Միությունում և այլ երկրներում դեռ ոչ մի հեղինակ չի կատարել:

Այդ կարևորագույն հիմնախնդրին նվիրված Ն. Հովհաննիսյանի առաջին մենագրությունը հրատարակվեց 1964 թ., երևանում, որը կրում էր «Ազգային-ազատագրական պայքարը Իրաքում (1945-1963 թթ.)» խորագիրը: Այդ նույն թվականին նա Բեռլինում գերմաներեն լեզվով հրատարակեց ևս մեկ այլ հետաքրքիր աշխատություն՝ «Իրաքի դեմոկրատական ուժերի պայքարը 1930 թ. անգլո-իրաքյան պայմանագրի դեմ»: Դա հեղինակի գերմաներեն լեզվով հրատարակված առաջին աշխատությունն էր, որը հրատարակվել էր՝ անցնելով միջազգային խառագույն քննարկման մաղով:

Այդ երկու աշխատություններին հաջորդեց երկու մենագրական ուսումնասիրությունների հրատարակությունը՝ «Ազգային-ազատագ-

րական պայքարը Լիբանանում (1939–1958 թթ. Երևան, 1967 թ.)» և «Образование независимой Сирийской Республики (1939–1946 гг., Москва, 1968)»՝ «Միրիական անկախ հանրապետության ստեղծումը (1939–1946 թթ., Մոսկվա, 1968)», որը ոտսերեն լիզվով հրատարակվեց 1968 թ. Մոսկվայում: Հայ գիտնականի այդ մեծագրական ուսումնասիրությունները լայն արձագանք գտան և արժանացան բարձր գնահատականի տարրեր երկրների մասնագետների կողմից: Այսպես, որս արևելագետ Է. Ռիսը խորհրդային ամենահեղինակավոր «Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդներ» («Народы Азии и Африки») ամսագրում «Միրիական անկախ հանրապետության ստեղծումը» մեծագրության վերաբերյալ տպագրված իր գրախոսականում, խոսելով Գրանսիական մանդատի վերացման և անկախ սիրիական պետության ստեղծման մասին, գրում է. «Հատուկ ուսումնասիրություն, նվիրված այդ պրոբլեմին, մինչև այժմ խորհրդային գրականության մեջ զոչոքյուն չունեի: Ն. Հ. Հովհաննիսյանի աշխատասիրությունը հսցողությամբ լրացնում է այդ բացը» (1971, № 1): Սոֆիայի համալսարանի պրոֆեսոր, արարագետ Նենկո Յունկովը, հեղինակին ողոված նամակում հայտնում է նրան. «Միրիայի անկախությանը նվիրված ձեր աշխատությունը կարդացել եմ մեծ հետաքրքրությամբ և այն ինձ շատ դուր եկավ: Գրքի հետ ծանոթացրել եմ և մյուս գործընկերներին, որոնք զբաղվում են արաբական աշխարհով: Մեք կօգտվենք ձեր աշխատությունից»: Բուդաբաշի արարագետը հայտնում է նաև հայ գիտնականին, որ նրա աշխատությունը մտցրել են իրենց աշխատանքային ծրագրերի մեջ, և նրանից օգտվելու են մասնագետները և ապագա արարագետները: Ն. Հովհաննիսյանի վերոնշյալ աշխատությունը գերմանական մասնագետ Յուրգեն Բրանդտը գնահատել է որպես «բարձրարժեք և կարևոր գիտական ուսումնասիրություն» և օգտվել է դրանից Միրիային և Լիբանանին նվիրված իր աշխատությունում, որը հրատարակվել է 1974 թ. Բեռլինում (Yürgen Brandt, *Geschichte der Araber*, Bd. 3 Akademie-Verlag, Berlin, 1974):

Ուշագրավ է ևս մեկ փաստ, որը վկայում է Ն. Հովհաննիսյանի միջազգային ճանաչում ձեռք բերած և փնտրված հեղինակ լինելու մասին: Նրա «Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում» մեծագրությունը Լիբանանի կոմունիստական կուսակցության բաղադրուղիի որոշումով, կուսակցության հիմնադրման հիանալի կապակցությամբ, 1974 թ. թարգմանվում է արաբերեն և հրատարակվում Բեյրութում:



Հ. Կ. ԿՈՒՅԱՆՆԻՍՅԱՆ

ԱՉԳԱՆՐԸ-ԱՉԱՏԱԳՐԱԿԱՆ
ՊԱՆՔԱՐԸ ԼԻՔՆԱՆՈՒՄ
1939-1938

سولاقچہ، قوفاستيان

سوريہ، يسار استديان

النضال التحريري الوطني
في لبنان
(1929-1958)

سولاقچہ

Հ. Կ. ԿՈՒՅԱՆՆԻՍՅԱՆ

ԱՌՐԻԱՆ
ՊԱՆՔԱՐԸ ԿՈՒՅԱՆՆԻՍՅԱՆ
ՄԱՐԿԱՆ ՊԱՆՔԱՐԸ

المردوديون

بن قوفاستيان وبن سولاقچيان

سورية

على درب الكفاح من أجل الاستقلال



ترجمة

المستور الكسندر طشيشيان

Հայ գիտնականի աշխատության հրատարակումն արարել են լեզվով մտցվել էր կուսակցության կետադրյա հորելյանի ամենակարևոր միջոցառումների շարքում: Ինչպես գրքի առաջարանում գրում է լիբանանյան ականավոր քաղաքական գործիչ Իբրահիմ Մուստաֆան, «Գրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը պատմության և հասարակության վերափոխումների օրինաչափությունների հիանալի գիտակ է: Այս գիրքը, որը պարունակում է հարուստ ինֆորմացիա և տալիս է իրադարձությունների խորը վերլուծություն, շատ կարևոր է յուրաքանչյուր մարտնչող առաջադեմ հեղափոխականի համար»: Այս գրքի հրատարակումով հիմք է դրվում հետագայում հայ գիտնականի աշխատությունների արարական լեզվով քարզմաննելու և արարական տարրեր երկրներում հրատարակելու գործընթացին: «Ընդունչյալ գիրքը ցնծությամբ ընդունվեց Լիբանանում: Հնդկնակը լիբանանյան կողմի հրավերով մեկնեց Լիբանան, հանդես եկավ թե՛ արարական և թե՛ հայկական յարաններում: Բեյրութի Ամերիկյան համալսարանի պրոֆեսորայի նախաձեռնությամբ Բեյրութում կայացավ հայ պրոֆեսորի աշխատության հանգամանալից քննարկում, հանդես եկան մեծ հեղինակություն վայելող այդ համալսարանի մասնագետները, ականավոր արարագետներ Քամալ Սալիբին, Նիկոլայ Զիադեիր, Ջեյն Ջեյնը և ուրիշներ, որոնք շատ բարձր գնահատական տվեցին հայ արարագետի աշխատությանը, նշելով, որ այն իր տեսակի մեջ եզակի ուսումնասիրություն է, և իրենք՝ լիբանանցիները, չեն հեղինակել նման ուսումնասիրություն:

1960-ականները կարևոր են եղել Նիկոլայ Հովհաննիսյանի համար ևս մեկ այլ առումով: Նա, ինչպես նշվել է, 1968 թ. Թբիլիսիի պետական համալսարանի մեծ գիտխորհրդում հաջողությամբ պաշտպանում է իր դոկտորական ատենախոսությունը՝ «Ազգային-ազատագրական շարժումը Իրաքում (1917-1958 թթ.)» քննալով, և նրան շնորհվում է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Նա դառնում է արարագիտության նորագույն պատմության գծով խորհրդային Միությունում առաջին և ամենաերիտասարդ գիտությունների դոկտորը:

Ն. Հովհաննիսյանի 1960-ականներին հեղինակած աշխատությունների մեջ իր ուրույն տեղն է գրավում նրա «Հոկտեմբերը և ազգային-ազատագրական շարժման վերելքը Արարական Արևելքում» ուսումնասիրությունը (Երևան, 1969 թ.), որտեղ քննարկվում են արարական ազատագրական շարժումների սկզբնավորումը և

հետագա ընթացքը եզիպտոսում, Իրաքում, Սիրիայում և Լիբանանում: Հատկապես պետք է նշել եզիպտոսում ծախսված հակազաղութային, հակաքրիստանական պայքարի հիմնահարցերի, եզիպտական 1919 և 1922 թթ. ապստամբությունների, ի մասնավորին քրիստանական պրոտեկտորատի վերացման և այլ առանցքային հարցերի խորքային լուսարանությունը: Ըստ Ն. Հովհաննիսյանի, եզիպտոսում քրիստանական պրոտեկտորատի վերացումն ունեցավ համաարարական նշանակություն, որն ապացուցեց արաբներին և գաղութային այլ երկրներին, որ եվրոպական գաղութային տիրապետության վերացումը և անկախության նվաճումը միանգամայն հնարավոր է:

Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը, շարունակելով արաբական ազգային-ազատագրական շարժումների ուսումնասիրությունը, 1970-ական թվականներին գիտական հանրությանն է հանձնում երկ մեծազրական թարգմանարգ աշխատություններ: 1975 թ. նա հայերենով լույս է բերում «Սիրիան անկախության համար մղված պայքարում», որն ընդգրկում է Սիրիայի համար քախտորոշ նշանակություն ունեցող մի ժամանակաշրջան՝ 1917-1946 թվականները՝ Օսմանյան կայսրության տիրապետության կործանումից և ֆրանսիական մանդատի վերացումից մինչև անկախության նվաճումը, երբ 1946 թ. Սիրիայից հեռացավ օտարերկրյա վերջին գնվորը: Նա կարևոր էր ոչ միայն հայ ընթերցողի, թարգմանչույն ուսումնական հաստատությունների ուսանողության, այլև արաբների համար, որոնք տեղյակ էին այդ գրքի գոյության մասին: Եվ ասեա, 2010 թ. այդ գիրքը թարգմանվում է արաբերեն հաջնպահայ մտավորական-գիտնական, մշակութային գործիչ Ալեքսանդր Քեշիշյանի հմուտ թարգմանությամբ, որի վաստակը տպավորիչ է հայ պատմաբանների աշխատությունները թարգմանաբար արաբ ընթերցողին ներկայացնելու քննազատում: Ն. Հովհաննիսյանի սույն աշխատությունը լայն արձագանք է գտնում ոչ միայն Հայկում, այլև Դամասկոսում, արաբական մյուս երկրներում՝ Լիբանանում, Եգիպտոսում Քուվեյթում, Իրաքում և այլն: Նա դառնում է յուրատեսակ դասագիրք արաբական համալսարանական ուսանողության համար:

Արաբական երկրներում ծախսված ազգային-ազատագրական շարժումներին նվիրված Ն. Հովհաննիսյանի ուսումնասիրությունների մեջ իր կարևորությամբ առանձնահատուկ տեղ է զբաղում 1976 թ. ռուսերեն լեզվով հրատարակված նրա «Ազգային-ազատագրական շարժումը Իրաքում (1917-1958 թթ.)» մենագրություն-

նը, որը, ինչպես նշվեց, նրա ղոկտորական առեմնախոսությունն էր եղել: Նման աշխատություն արարագիտության բնագավառում դեռևս չէր հրատարակվել: Դա առաջին ուսումնասիրությունն էր, որտեղ, համակարգված, վերլուծական մեթոդոլոգիայի, տարալեզու հարուստ սկզբնաղբյուրների և մասնագիտական գրականության հենքի վրա, ներկայացված է արարական կարևոր նրկրներից մեկի՝ Իրաքի, մոտ կեսդարյա ամբողջական պատմությունը: Նրանում մանրամասն լուսարանված են Իրաքի սոցիալ-տնտեսական դրության, Իրաքում հաստատված, այսպես կոչված, «սև ոսեիմի» էության բացահայտման, համաիրաքյան հակաբրիտանական ապստամբությունների պատճառների և նպատակների հարցերը: Այդ պայքարի տրամաբանական ավարտը եղավ, ինչպես ցույց է տվել Ն. Հովհաննիսյանը, 1958 թ. հուլիսի 14-ի հեղափոխությունը, Հաշիմյան միապետության տապալումը և Իրաքի Հանրապետության հռչակումը: Հայ արաբագետը դա համարում է արարական ազգային-ազատագրական շարժման ամենակարևոր հաղթանակներից մեկը, որը խթանեց հակաիմպերիալիստական պայքարը ամբողջ արաբական և ոչ միայն արաբական, աշխարհում: Ն. Հովհաննիսյանի այդ մենագրությունն արժանացել է բարձր գնահատականների: ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ականավոր պատմաբան Ա. Լ. Նարոչնիցկին ի դեմս Ն. Հովհաննիսյանի, տեսնում էր մեծ գիտելիքների տեր, տաղանդավոր արաբագետի: Ականավոր արևելագետներ պրոֆեսոր Օ. Տուզանովան (Մոսկվա), պրոֆեսոր Զավրիևը (Թբիլիսի), անդրադառնալով հայ արաբագետի այդ աշխատությանը, ընդգծել են, որ այն ունի գիտական և քաղաքագիտական մեծ նշանակություն և կարևոր ներդրում է Իրաքում և համայն Արաբական Արևելքում հակազաղութային պայքարի ուսումնասիրության բնագավառում:

Այս շարքի վերջին և ինքնատիպ ուսումնասիրությունը հանդիսացավ Ն. Հովհաննիսյանի «Հեղափոխական պրոցեսը արաբական աշխարհում» (Երևան, 1990) մենագրությունը, որտեղ, առաջին անգամ արաբական պատմագիտության մեջ քննարկման առարկա են դառնում այնպիսի հանգուցային հարցեր, ինչպես սոցիալական հեղափոխությունը և նրա դրսևորման յուրահատկությունները արաբական նրկրներում, հեղափոխական գործընթացի, սոցիալ-տնտեսական ու քաղաքական վերափոխումների հեռանկարները արաբական աշխարհում և այլ հանգուցային հարցեր: Դրանք այնպիսի հարցեր էին, որոնք, ինչպես նկատել է հայ արաբագետը, այդ

ժամանակ արդեն սկսել էին դառնալ արարական երկրների առջև կանգնած զլխավոր խնդիրները:

Արարական ազգային-ազատագրական շարժումների ուսումնասիրությանը նվիրված պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի աշխատություններում կարևոր տեղ է հատկացված այդ շարժումներին արարական երկրներում հաստատված հայերի մասնակցության հարցին: Երա տեսակետն այդ հարցում գիտականորեն միանգամայն հիմնավորված և համոզիչ է, ըստ որի՝ հայերն ակտիվորեն մասնակցել են իրենց հյուրընկալ արարական երկրների, մասնավորապես, Լիբանանի, Սիրիայի, Իրաքի Եգիպտոսի և Հորդանանի քաղաքական, հասարակական, տնտեսական, մշակութային կյանքին, արարների հետ կողք կողքի մարտնչել են արարների ազգային անկախության նվաճման համար մղված պայքարին, և տվել ռազմաքիվ զոհեր: «Չնայած այդ հանգամանքին, — ընդգծում է Ն. Հովհաննիսյանը, — եվրոպական և ռուսական շատ հեղինակներ կամ անտեսել են այդ հարցը, կամ էլ շատ մակերեսայնորեն, թուցիկ կերպով են անդրադարձել դրան: Դրանով իսկ նրանք մեղանչել են պատմական ճշմարտության դեմ»: Դա մի կողմից: Իսկ մյուս կողմից, հայ գիտնականը գտնում է, որ այդ հեղինակները, կամա, թե ակամա, ազճատել են արարական ազատագրական, հակափոփոքրիպիստական պայքարի ամբողջական պատկերը: Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանն առաջին հեղինակն է, որ հանգամանորեն անդրադարձել է հայ-արարական ռազմական և քաղաքական համագործակցությանը և ցույց տվել այն կարևոր ներդրումը, որ հայերն ունեցել են իրենց հյուրընկալ բարեկամ արար ժողովրդի անկախության նվաճման պայքարում:

Այստեղ նշվեցին Ն. Հովհաննիսյանի մենագրական ուսումնասիրությունները: Սակայն դրանց հետ զուգահեռաբար, նա հեղինակել է ազգային-ազատագրական պայքարին նվիրված մեծաքանակ հոդվածներ, որոնք տպագրվել են արարական և եվրոպական տարրեր երկրներում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում և այլն :

Արարական ազգային-ազատագրական պայքարին նվիրված պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի աշխատությունների անմիջական ազդեցությամբ Լիբանանում, Սիրիայում, Եգիպտոսում, Իրաքում հայտնվեցին մի շարք ուսումնասիրություններ, որոնց հիմքում դրված են հայ գիտնականի հայեցակարգային դրույթները, ինչպես լիբանանցի պատմաբան Մալեհ Զահր ալ-Դինի, սիրիացի

պատմարան Մախյուժի վաճիկի, եզիպտացի պատմարան Ֆուադ Հասան Հաճիզի և այլոց աշխատությունները: Դա հայ արարագետին բերնց միջազգային մեծ հոչակ և լայն ճանաչում:

2. ԱՐԱՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԻՐՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի գիտական հետազոտություններում առանձնահատուկ տեղ է զբաղում Արաքական Արևելքում, իսկ ավելի լայն առումով՝ Մերձավոր Արևելքում, միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների ուսումնասիրությունը, որին նա նվիրել է մեկ տասնյակից ավելի մենագրական ուսումնասիրություններ և քազմաթիվ հոդվածներ՝ հրատարակված ոչ միայն հայերեն, այլև արաբերեն, անգլերեն, գերմաներեն, ռուսերեն և այլ լեզուներով աշխարհի տարբեր երկրներում: Հայ արաքագետի կարծիքով, ի տարբերություն պատմագիտական հարցերի, որոնց ուսումնասիրությանը համեմատաբար ավելի մեծ ուշադրություն է դարձվել, միջազգային հարաբերությունների և դիվանագիտության հարցերը, կապված արաքական իրողությունների հետ, մեղմ ասած, պատմագիտության մեջ համեմատաբար քիչ են լուսարանված:

Արտաքին քաղաքականության հարցերին նվիրված պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի աշխատություններն անմիջապես իրենց վրա անեռոցին մասնագետների, քաղաքական, դիվանագիտական և հասարակական գործիչների, ամերիկյան, քրիտանական, ռուսական, գերմանական, արաքական պատմաբանների ուշադրությունը: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ հայ միջազգայնագետ-պատմաբանի աշխատությունները ինքնատիպ և արդիական էին թե՛ թեմատիկ առումով և թե՛ իրենց գիտական բարձր մակարդակով:

Այդ աշխատությունների մեջ իր նշանակությամբ առանձնանում է 1980 թ. ռուսերեն լեզվով հրատարակված նրա «Իմպերիալիստական պետությունների քաղաքականությունը Արաքական Արևելքում Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945)» մեծարժևք, իր քննությով եզակի մենագրական ուսումնասիրությունը: Հայտնի է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի մասին զրվել են քազմաթիվ աշխատություններ: Սակայն

մինչև Ն. Հովհաննիսյանի այդ աշխատության լույս աշխարհի գալը, չկար հատուկ մեկնազրույթուն նմիրված մեծ տնրությունների քաղաքականությանը Արարական Արևելքում: Նրա մեկնազրույթունը քաղմապանային աշխատություն է, որտեղ առաջին անգամ գիտական քննարկման է ենթարկվել մի կողմից՝ Անգլիայի, ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի, իսկ մյուս կողմից՝ Գերմանիայի և Իտալիայի քաղաքականությունը Արարական Արևելքում: Հայ արարագետ-միջազգայնագետը գտնում է, որ պատմաբաններն իրենց ուշադրությունը հիմնականում կենտրոնացրել էին եվրոպական քառերաքննի և դրա հետ կապված հարակից խնդիրների լուսարանության վրա: Մինչդեռ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը գտնում է, որ արարական գործոնն իր դերակատարումն է ունեցել Երկրորդ համաշխարհային պատերազմի ծագման և պատճառների մեջ, ուստի այդ հանգամանքի անտեսումը քաջասքար հետևանքներ է ունեցել Երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառների ամբողջական և ճշգրիտ քաջահայտման տեսանկյունից: Մասնագետ պատմաբանները և դիվանագիտական պաշտոնյաները մեծապես տպավորվել են պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի այդ նոր հայեցակարգային մոտեցումից Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջացման պատճառների հարցում: Խոսքն այն մասին է, որ, մինչև Ն. Հովհաննիսյանի վերոնշյալ աշխատության լույս աշխարհի գալը, Արարական Արևելքի դերը պատերազմի ծագման գործում կամ անտեսվում էր, կամ էլ թերագնահատվում և երկրորդական տեղ հատկացվում: Համաձայն չլինելով այդ տեսակետի հետ և հենվելով պաշտոնական փաստաթղթերի, սկզբնաղբյուրների վրա՝ պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը հանգում է այն եզրակացության, որ պատերազմի առաջացման հարցում կարևոր է եղել Արարական Արևելքի դերն այն պայքարում, որ գեում էր մեծ տնրությունների միջև այդ աշխարհամասում տիրապետող դիրքեր հաստատելու համար: Հայ պատմաբանի հայեցակարգային նոր մոտեցումը, նրա նոր տեսակետը միջազգային մեծ ճանաչում ստացավ և բարձր գնահատականի արժանացավ մասնագետների կողմից: Դրա մասին են վկայում ստորև ընթրվող տարբեր երկրների մասնագետ-գիտնականների կարծիքները:

Իրաքի հանրապետ պատմաբան, հրապարակախոս և լրագրող Արու Դարիբը, ընդգծելով հայ գիտնականի աշխատության կարևորությունը և նորոյթը, նշում է, որ նրանում խորը կերպով լուսարանված են արևմտյան տնրությունների քաղաքական և օազ-

մտվարական նպատակներն Արարական Արևելքում և այն կարևոր դերակատարումը, որ այդ տարածաշրջանն ունեցել է պատերազմի ծագման գործում: Այդ կապակցությամբ նա գրում է. «Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի մեծագրության նշանակությունը չի սահմանափակվում միայն աշխարհագրական այդ շրջանով: Այն օգնում է ավելի խորը և ամբողջական ըմբռնելու երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի համաշխարհային քաղաքականությունը» («Ալ-սակաֆա ալ-ջադիդա», Բաղդադ, Ն.Ո. 1/124, արարերեն): Իսկ երկրորդ համաշխարհային պատերազմի պատմության զերմանական հայտնի մասնագետ Հորստ Գիրցի կարծիքով, «Ն. Հովհաննիսյանի հրատարակած զիբրը հանդիսանում է առանձնահատուկ ներդրում» («Militargeschichte» Berlin, 1983, № 2): Հայ գիտնականի այդ արժեքավոր աշխատությունը, որպես նոր խոսք պատերազմի պատճառների վերաբերյալ շատ քարձր է զնահատվել նաև Չեխոսլովակիայում (տես «Cheskoslovensky casopis historicky», Praha, 1982, № 4):

Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի ինքնատիպ աշխատությանը և նրա արժանիքներին հանգամանորեն են անդրադարձել խորհրդային վաստակաշատ պատմաբան մասնագետներ, արևելագետներ, արարագետներ, միջազգային մեծ ճանաչում ունեցող գիտական հանդեսներ և այլն: Մոսկովյան «Вопросы истории» հեղինակավոր ամսագիրը «Պատմագիտությունը ԽՍՀՄ-ում» քառնում ներկայացնելով հայ արարագետի աշխատությունը՝ նշում է. «Ն. Հ. Հովհաննիսյանը «Իմպերիալիստական պետությունների քաղաքականությունը Արարական Արևելքում երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945)» ուսումնասիրությունում քաջահայտում է Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Գերմանիայի և Իտալիայի ռազմաքաղաքական նպատակները Արարական Արևելքում համաշխարհային պատերազմի տարիներին, լուսաբանում է նրանց քաղաքականությունը եզիպտոսի, Իրաքի, Սիրիայի և Լիբանանի հանդեպ, ցույց է տալիս միջինալեռիալիստական հակասությունները և արարական տարբեր քաղաքական ուժերի վերաբերմունքը արևմտյան երկրների նկատմամբ» («Вопросы истории», Москва, 1980, № 9):

Ոչնչադրալ է նաև Ն. Հովհաննիսյանի վերոնշյալ աշխատությանը մեկ այլ հեղինակավոր ամսագրի անդրադարձը, որտեղ ասվում է, որ «Վերջերս Ն. Հ. Հովհաննիսյանի հրատարակված գրքում ցույց է տրված այն սուր պայքարը, որ ընթանում էր այդ տարա-

ծաշրջանում իմպերիալիստական երկու խմբավորումների միջև», ընդգծելով հայ հեղինակի այն տեսակետը, որ «Իմպերիալիստական պետությունների շահերի սուր բախումների արևևա էր Արաքական Արևելքը» («Носак и носевшая история», Москва, 1981, № 1): Սույն գիտական հանդեսը հայ արաբագետ-միջազգայնագետի ռուսամասիրությունն ընդգրկել է կարևոր արդյունքներ արձանագրած խորհրդային պատմաբանների գիտահետազոտական աշխատությունների ցանկում:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի հիշյալ աշխատության վերաբերյալ իր գիտական ծանրակշիռ խոսքն է ասել ականավոր արաբագետ, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի կոմպերսային հետազոտությունների ինստիտուտի ղեկավարներից մեկը՝ դոկտոր Ե. Պիոլինը: Ահա թե ինչ է նա գրում իր զբախտակամում. «Ն. Հ. Հովհաննիսյանի մենագրությունում քաջահայտվում է երկրորդ համաշխարհային պատերազմում Մերձավոր Արևելքում իմպերիալիստական զործողությունների բուն եուցյունը, նրանց դրդիչ շարժառիթները և հետևանքները: Ն. Հ. Հովհաննիսյանը հանգամանորեն և փաստարկված վերլուծում է «ասանցքի երկրների» Գերմանիայի և Իտալիայի քաղաքականությունը Արաքական Արևելքում: Ն. Հ. Հովհաննիսյանի այդ աշխատության հետ ծանոթանալն օգտակար է ոչ միայն մասնագետ-մերձավորարևելագետների, այլև յուրաքանչյուրի համար, ով հետաքրքրվում է արաքական աշխարհի արդի իրադրությամբ» («Азия и Африка сегодня», Москва, 1981, № 6): Չքավարարվելով այդ հոդվածով՝ դոկտոր Պիոլինը նաև նամակ է հղում հեղինակին՝ ավելի հստակեցնելով իր տեսակետները և կարծիքը. «Հարգելի Նիկոլայ: Ես անձամբ չառ բան եմ ձեռք բերել ձեզ հետ ծանոթությունից: Ընտրակալություն զրքի համար, ես այն շատ ուշադիր եմ կարդացել և պետք է շնորհավորեմ իմ կողմից հարգված և սիրելի հեղինակին՝ քանակազին Նիկոլայ Հովհաննիսյանին, գիտական ճակատում մեծ և իսկական հաղթանակի, իսկական հաջողության համար: Գիրքը զերազանց է թե՛ բովանդակային, թե՛ ոճական և թե՛ բեմայի եզակիության առումով»: Հայ արաբագետի աշխատությունն արժանացել է բարձր գնահատականի նաև այլ մասնագետների կողմից, ինչը հաստատում է պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի տեսակետը Արաքական Արևելքի համաշխարհային պատերազմի կարևոր զործոն լինելու վերաբերյալ:

Հայ պատմաբանը մեծ եռանդով շարունակեց արտաքին քաղաքականության և դիվանագիտության հիմնահարցերի ուսում-

նասիրությունը Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո, որը տեղի ունեցավ 1991 թ. սեպտեմբերի 21-ին՝ նրան տունն առնելով Խորհրդային Միության փլուզումից հետո ստեղծված միջազգային նոր իրադրությունը և ուժերի վերադասավորումը, մասնավորապես Մերձավոր ու Միջին Արևելքում, և հայկական անկախ պետության ազգային և անվտանգային շահերը: Դա գործառնական փոփոխություն մտցրեց նաև հայ արևելագիտության առաքելության մեջ: Գրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանն առաջ քաշեց այն տեսադրույթը, որ Հայաստանի Հանրապետության կազմավորումից հետո, հայ արևելագիտությունը՝ որպես գիտություն, ձեռք բերեց ռազմավարական նշանակություն և դասվեց Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող գիտական ուղղությունների շարքը:

Գրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը 1997 թ. ընթերցողի դատին հանձնեց իր տեսակի մեջ մի եզակի մենագություն՝ «Դիվանագիտություն. Ֆունկցիաները, Մարմինները, Պաշտոնյաները», որը հայ իրականության մեջ գրված առաջին նման ուսումնասիրությունն էր: Նման աշխատության ի հայտ գալը միանգամայն պատճառաբանված էր: Ստեղծվել էր անկախ Հայաստանի Հանրապետությունը, որը 1992 թ. մարտի 2-ին դարձավ Միավորված ազգերի կազմակերպության անդամ, նրա կարևոր նախարարություններից մեկը դարձավ արտաքին գործերի նախարարությունը, դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին աշխարհի տարբեր երկրների հետ, ձևավորվեց հայկական դիվանագիտական կորպուսը, որը միջազգային հարաբերություններում և դիվանագիտության բնագավառում հասկացող և կողմնորոշվող, զբաղեւո և քանի-մաց մասնագետների կարիք ուներ: Իսկ զրա համար անհրաժեշտ էր մասնագիտական գրականություն: Ահա այդ խնդրի լուծմանն էր նպատակաուղղված պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի «Դիվանագիտություն» աշխատությունը: Նա քացի տեսականից, ունեցավ նաև կիրառական մեծ նշանակություն և, ըստ էության, ծառայեց և շարունակում է ծառայել որպես դասագիրք ՀՀ արտաքին գործերի նախարարության, հայկական դեսպանությունների և հյուպատոսությունների հարյուրավոր աշխատակիցների համար, որոնք դիվանագիտության վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքները քաղել և քաղում են այդ գրքից:

Շարունակելով անկախ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ուսումնասիրությունը՝ պրոֆեսոր

Ն. Հովհաննիսյանն այդ քննազավառում իր հետազոտությունների արդյունքներն ամփոփեց 1998 թ. անգլերեն լիզվով հրատարակված «Foreign Policy of Armenia, Yerevan, 1998»՝ «Հայաստանի արտաքին քաղաքականությունը», Երևան, 1998 թ.» մեծաթմբ աշխատության մեջ, որը քննատիկ-քովանդակային առումով առաջին աշխատությունն է պատմագիտության մեջ: Նրանում հնդիմակը տվել է Հայաստանի արտաքին քաղաքականության գլխավոր սկզբունքների և ուղղությունների սահմանումը: Աշխատության մեջ կարմիր քննի նման անցնում է Հայաստանի՝ որպես միջազգային-տարածաշրջանային կարևոր գործոն լինելու հայեցակարգային գաղափարը: Հեղինակը կարող կերպով հանդես է գալիս քուրր այն քուրր կարծիքների դեմ, որուցում այս կամ այն կերպ ժխտվում կամ քերազնահատվում էին Հայաստանի արտաքին քաղաքականության գործոն լինելու իրողությունը: Աշխատության ուր գրովանելում քննարկվում են այնպիսի առանցքային հիմնախնդիրներ, ինչպես Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական դրկտրինան, Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի, Արարական Արևելքի երկրների, Այրբեջանի, Վրաստանի և Իսրայելի հետ: Այդ աշխատությունը մեծ արձագանք գտավ քն Հայաստանում և քն արտասահմանյան տարրեր երկրներում: Ընդունված տեսակետ դարձավ, որ նման աշխատություն դեռևս չէր գրվել: Բազմաթիվ գրախոսականներում քնդգծվում էր, որ հեղինակն իր նախադեպը չունեցող աշխատությունում քննարկել է այնպիսի խնդիրներ, որոնք չի կարելի անտեսել ոչ միայն Հայաստանի տեղն ու դերը միջազգային հարաբերություններում, մասնավորապես Մերձավոր և Միջին Արևելքում որոշելիս, այլև տարածաշրջանի երկրների նկատմամբ համապատասխան քաղաքականություն մշակելիս: Հայ գիտնականի աշխատությունը լուրջ ներդրում է ինչպես դիվանագիտության, այնպես էլ Հայաստանի արտաքին քաղաքականության խնդիրների լուսարանման քննազավառում: Ավաճին կարելի է ավելացնել նա մեկ կարևոր հանգամանք, որն ավելի է կարևորում մենագրության նշանակությունը: Խոսքը Հայաստանի կողմից որդեգրած փոխըրացման՝ կոնկրետնետար քաղաքականության և նրա էության քացահաղուման մասին է: Դա կարևոր էր նաև այն առումով, որ շատերը կամ չէին հասկանում կամ էլ քերազնահատում էին փոխըրացական քաղաքականության իմաստն ու կարևորությունը: Ն. Հովհաննիսյանի աշխատությունն իր կարևոր ներդրումն ունեցավ այդ հարցի մեջ հստակություն մոցնելու առումով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԿՈՒՄԱՐԱՅԻՆ

ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵԳՅՆ - 1997

Կ.Ս. ՕԳԱՆՅԱՆ

ПОЛИТИКА
ИМПЕРИАЛИСТИЧЕСКИХ
ДЕРЖАВ
НА АРАБСКОМ ВОСТОКЕ
В ГОДЫ ВТОРОЙ
МИРОВОЙ ВОЙНЫ

Nicolay Hovhannisyán

**THE
FOREIGN POLICY**



Կ.Ս. ՕԳԱՆՅԱՆ

ОТНОШЕНИЯ
ИРАКСКОЙ
РЕСПУБЛИКИ
СО СТРАНАМИ
АРАБСКОГО
ВОСТОКА

ԵՐԵՎԱՆ

СЕРИЯ ГЕОЛОГИЧЕСКАЯ

EVOLUTION OF THE
TRANS-CASPIAN-MIDDLE EASTERN
GEOLOGICAL REGION



USSR ACADEMY OF SCIENCES
Soviet Geological Association
Institute of Sciences, Armenia and
Institute of Geology Studies

НАЗНАЧЕНИЕ

THE EVOLUTION DEVELOPMENT OF THE TRANS-
CASPIAN AND THE MIDDLE EASTERN
(1950 - 1956)

Edited by
of the Soviet Geological Association
of Armenia and North Caucasus Studies
(Yerevan, 1956)

Издана в издательстве
Центрального Департамента Геологического Научного
Института СССР

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի «Հայաստանի արտաքին քաղաքականությունը» մենագրական ուսումնասիրությունը բարձր գնահատականի արժանացավ արտասահմանի մի շարք ակնաւոր դիվանագետների, դիվանագիտության քնազավտի դեկավարների ու մասնագետների կողմից: Դրանց շարքում հարկ է առաջին հերթին նշել միջազգային հարաբերությունների արդի ամենաականավոր մասնագետներից մեկին, ԱՄՆ-ի նախկին նախագահ Ջիմի Բարտերի ազգային անվտանգության հարցերով խորհրդական, ԱՄՆ-ի ռազմավարական և միջազգային հարաբերությունների կենտրոնի պրոֆեսոր Ջրիգն Բեմմինսկուն, որի հետ հայ մասնագետն ունեցել է հանդիպումներ, զրույցներ, քննարկումներ, նամակագրություն և այլն: Ջրիգն Բեմմինսկին, ստանալով պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի «Հայաստանի արտաքին քաղաքականությունը» գիրքը, 1999 թ. հոկտեմբերի 25-ին հնդի-նակին հասցնագրված նամակում գրում է. «Հարգելի պրոֆեսոր Հովհաննիսյան: Շնորհակալություն ձեր գրքի օրինակի համար: Դա վերաբերում է մի քննայի, որի վերաբերյալ ես կարիք ունեմ շատ քան սովորելու: Դատելով թքիլիսիում մեր ունեցած զրույցներից՝ ես վստահ եմ, որ դա օգտակար կլինի ինձ համար»:

Հայաստանի արտաքին քաղաքականությանը նվիրված հայ գիտնականի աշխատությանը ծանոթացել են նաև 1988-1992 թթ. ԱՄՆ-ի Ջորջ Բուշ Ավագի պրեզիդենտության շրջանում պետական դեպարտամենտի քարտուղար (արտաքին գործերի նախարար) Ջեյմս Բեյկերը և Տեխասի Հյուստոնի Ռայս համալսարանի Հանրային քաղաքականություն ինստիտուտի տնօրեն, ականավոր դիվանագետ Էդվարդ Ջերեջյանը: Ակադեմիկոս Ե. Պրիմակովը, պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի հետ հանդիպումներից մեկի ժամանակ նրան բառացիորեն ասել է հետևյալը. «Էդվարդ Ջերեջյանը մեր ժամանակների ամենահայտնի, բարձրակարգ պրոֆեսիոնալ, ամենապատրաստված դիվանագետն է, արդի աշխարհաքաղաքական հիմնախնդիրների անմրցելի գիտակը»: Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանն աշխատանքի բերումով հանդիպել և զրույցներ է ունեցել և Ջեյմս Բեյկերի, և Էդվարդ Ջերեջյանի հետ: Էդվարդ Ջերեջյանի հրավերով պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը մասնակցել է այդ համալսարանում 1996 թ. զումարված միջազգային հարաբերությունների հարցերին նվիրված գիտաժողովին, որին հրավիրված էր նաև խորհրդային Միության առաջին և վերջին նախագահ Մ. Գորբաչովը: Էդվարդ Ջերեջյանը պրոֆեսոր Նիկոլայ

Հովհաննիսյանին ուղարկված նամակում (11.IX.1998 թ.) տեղեկացնում է նրան. «Պարոն Բեյկերը և նա ստացել ենք ձեր նոր գիրքը՝ նվիրված Հայաստանի արտաքին քաղաքականությանը, և մենք արդեն ծանոթանում ենք ձեր տեսակետների հետ»՝ իրենց գոհունակությունը հայտնելով դրա վերաբերյալ:

Մեր ժամանակների այդ երեք ականավոր դիվանագետ-գիտնականների՝ Ջրիգևն Բժեժինսկու, Ջեյմս Բեյկերի և Էդվարդ Ջեքոնյանի բարձր կարծիքները գալիս են հաստատելու պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի միջազգային մակարդակի հետազոտող-գիտնական և նորարար լինելու բարձր վարկը:

Էդվարդ Ջեքոնյանը պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանին առաջարկել էր օգնության կարգով իր տեսակետները ներկայացնել Կասպից ծովի ավազանի ռազմավարական նշանակության մասին, որը հայ գիտնականը համաձայնվել էր կատարել՝ ժամանակին ներկայացնելով համապատասխան ուսումնասիրություն: Է. Ջեքոնյանը նրան ուղարկված վերոնշյալ նամակում, անդրադառնալով նաև այդ խնդրին և իր շնորհակալությունն ու իր գլխավորած ինստիտուտի գոհունակությունը հայտնելով նրան, գրում է. «Ես ցանկանում եմ իմ երախտագիտությունը հայտնել մեր Կասպիական ծրագրի ուսումնասիրություններին ձեր արժեքավոր աջակցության համար»՝ առաջարկելով նրան առաջիկայում նա մասնակցել նման ծրագրերի մշակմանը:

Հայաստանի արտաքին քաղաքականությանը նվիրված պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի անգլերեն լեզվով գրված աշխատությունը դրական մեծ արձագանք գտավ Հայաստանում և Սփյուռքում: Այդ առումով ուշադրության է արժանի պատմական գիտությունների դոկտոր, միջազգայնագետ, պրոֆեսոր Ստեփան Ստեփանյանի հոդվածը: Նա այդ ուսումնասիրության ամենակարևոր արժանիքներից մեկը համարում է Հայաստանի արտաքին քաղաքականության դոկտրինայի մասնագիտական վերլուծությունը, նշելով, որ «Ն. Հովհաննիսյանի այս աշխատությունը լուրջ ներդրում է ՀՀ արտաքին քաղաքականության պատմագիտական քաղաքագիտական վերլուծության և լուսարանության գործում («Հայաստանի Հանրապետություն», 4 նոյեմբեր 1988 թ.):

Ն. Հովհաննիսյանի վերոնշյալ աշխատությունը քաղմակդմա-նիորեն քննարկել է պատմական գիտությունների թեկնածու Հակոբ Չարրյանը՝ «Ենթական աշխատություն Ն. Հովհաննիսյանի հեղինակությանը» խորագիրը կրող հոդվածում, որտեղ մատնանշված

է, որ այդ գրքում քննարկված են Հայաստանի արտաքին քաղաքականության առանցքային հարցեր, առանց որոնց հնարավոր չէ որոշել Հայաստանի տեղն ու դերը Մերձավոր և Միջին Արևելքում: Նա ընդգծում է, որ «Նիկոլայ Հովհաննիսյանն իր ապարնեզում այն եզակի մասնագետներից է, որ հասել է միջազգային ճանաչման: Նրա աշխատությունը լուրջ ներդրում է ինչպես դիվանագիտության, այնպես էլ Հայաստանի արտաքին քաղաքականության խնդիրների լուսարանման քննազավառում: Գրախոսվող աշխատությունը գիտականի և քաղաքականի համադրման լուրջ փորձ է: Իսկ նման մոտեցումը ոչ միայն արժեքավորում, այլև գիտականի կողքին նաև քաղաքական նշանակություն է հաղորդում Ն. Հովհաննիսյանի աշխատությանը» («Ազգ», 8 նոյեմբեր, 1988 թ.):

Իսկ անգլերեն լեզվով հրատարակվող «Նոյյան տապան» պարբերականում Ն. Հովհաննիսյանի աշխատությանը նվիրված հոդվածը, որը վերնագրված էր «Նիկոլայ Հովհաննիսյանն առաջարկում է իր հանձնարարականները Հայաստանի արտաքին քաղաքականության վերաբերյալ», ընդգծված է հետևյալ միտքը. «Գիրքը մի անգամ ևս վկայում է, որ Անդրկովկասյան-Մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանում Հայաստանը դարձել է կարևոր քաղաքական գործոն»: Ընդհանրապես պետք է նշել, որ հայ միջազգայնագետ Ն. Հովհաննիսյանը շատ մեծ նշանակություն է տվել Հայաստանի քաղաքական գործոն լինելու հարցին և դրան անդրադարձել քաղձաքիվ անգամներ: Եվ նրան այդ տեսակետն այսօր չի վիճարկվում և գտել է համընդհանուր ճանաչում, ապա դրանում մեծ է պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի ծառայությունը:

Տարածաշրջանային հարաբերությունների քաղձաքղմանի և խորքային ուսումնասիրությունները, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանին հանգեցրեցին այն եզրակացության, որ առաջացել է մի նոր ռեգիոնալ՝ աշխարհատարածքային շրջան: Նա իր այդ եզրահանգումներն ամփոփեց անգլերեն լեզվով 2000 թ. հրատարակված «Formation of the Transcaucasian-Middle Eastern geopolitical region», Yerevan, 2000» («Մերձավորարևելյան-անդրկովկասյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի ձևավորումը», Երևան, 2000) աշխատությունում: Դա ոչ միայն նոր, այլև համարձակ տեսակետ էր: Եվ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը, հավատարիմ իր գիտական սկզբունքներին, գիտական հանրության փորձագիտական քննությանը հանձնեց իր ուսումնասիրությունը: Նախ, նա իր աշխատությունը ներկայացրեց 2000 թ. օգոստոս-սեպտեմբեր-

րին Մոնթեալյով, Կանադա, կայացած արևելագետների համաշխարհային (ICANAS) XXXVI կոնգրեսին, որի մասնակիցներն արտակարգ հետաքրքրություն ցուցաբերեցին այդ աշխատության նկատմամբ: Այն բարձր գնահատվեց, արժանանալով կոնգրեսի մասնակիցների հավանությանը, իսկ, ըստ ընդունված ավանդության, կոնգրեսի մասնակիցներին ներկայացված մեծաքանակ օրինակները սպառվեցին կայծակնային արագությամբ:

Հայ պատմաբանի այդ նոր աշխատության մասին, ինչպես միշտ, իր տեսակետը հստակ կերպով արտահայտեց պրոֆեսոր Զրիգնև Բժեմինսկին, որը, ծանոթանալով Ն. Հովհաննիսյանի վերոնշյալ աշխատությանը, իր տեսակետն է հայտնում հեղինակին ուղարկած իր նամակով. «Հարգելի պրոֆեսոր Հովհաննիսյան: Հնորիակալություն Անդրկովկասյան տարածաշրջանի անվտանգության խնդրի մասին ձեր հետաքրքիր մտքերն ինձ հետ կիսելու համար: Ես մասնավորապես հետաքրքրված եմ հնարավոր տարածաշրջանային «Անվտանգային պակտի» վերաբերյալ ձեր նկատառումներով և ինձ թվում է արևելաեվրոպական նախադեպի օգտագործումը շատ կառուցողական միտք է: Ես միաժամանակ զգում եմ, որ ՆԱՏՕ-ի ինչ-որ աստիճանական, բայց համատեղ ներգրավումը Ռուսաստանի և մյուսների հետ, տարածաշրջանի կայունությունն ու ինտեգրացումը երաշխավորելու արդյունավետ հետազոտական ուղի է»:

Իսկառ կարևոր են պատերազմի, խաղաղության և դեմաքրաման հարցերով աշխարհի լավագույն մասնագետներից մեկի, Էդինբուրգի համալսարանի անվտանգային ուսումնասիրությունների ամբիոնի վարիչ, Բրիտանական ակադեմիայի անդամ, պրոֆեսոր Ջոն Էրիկսոնի մոտեցումները Ն. Հովհաննիսյանի աշխատությունների գիտական կարևորության վերաբերյալ: Նրա հրավերով պրոֆեսոր Հովհաննիսյանը դեռևս 1989 թ. զեկուցումով հանդես էր եկել Էդինբուրգի համալսարանում: Ջոն Էրիկսոնը, ծանոթանալով հայ մասնագետի աշխատություններին, 2000 թ. սեպտեմբերի 18-ին հետևյալ նամակն է հղում նրան. «Հարգելի պրոֆեսոր Հովհաննիսյան: Ես խորապես երախտագարտ եմ ձեզ «Նարաբադի հիմնախնդիրները. Գործոններ, Չափանիշներ. Լուծման տարբերակներ» և «Անդրկովկասյան-Մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի ձևավորումը» գրքերն ինձ ուղարկելու համար: Դրանք շատ ինքնատիպ, արտակարգ կարևոր և մեծ տեղեկատվություն պարունակող մենագրություն-

ներ են, որ ես կարդացի մեծ օգուտ քաղելով ինձ համար և որոնցից ես ձեռք բերեցի աշխարհաքաղաքական ասպեկտների մասին քարոզ տեսակետներ, որոնց վերաբերյալ ես կարիք ունեի հետագա մասնագիտական այնպիսի ղեկավարության, ինչպիսին ձերն է: Այսպիսին է իմ տպավորությունը ձեր ուսումնասիրությունների կարևորության վերաբերյալ, և ես իմ ազագ զորքնկերոջը Լոնդոնում ծանոթացրեցի ձեր աշխատության և հայտնագործության հետ: Շատ մոտ ապագայում ես հույս ունեմ կազմակերպել հատուկ քննարկում Էդինբուրգի համալսարանում իմ զորքնկերների հետ: Կրկին անգամ իմ անկեղծ շնորհակալությունները ձեզ, որ այնքան քարի գունավեցիք ինձ ուղարկելու ձեր անզևահատելի մնագրությունները: Անկեղծորեն ձեր Ջոն Էրիկսոն, Բրիտանական ակադեմիայի անդամ, 18.IX.2000»: Բրիտանական ակադեմիկոսի քարոզ գնահատականները, կարծում ենք, որևէ մեկնաբանության կարիք չեն զգում: Ավելացնենք միայն, որ դա ոչ միայն հայ գիտնականին, այլև հայ արևելագիտությանը տրված գնահատականն է, և համաշխարհային արևելագիտության մեջ հայ հեղինակի ու հայ արևելագիտության ծանրակշիռ ներդրման ճանաչում:

ԴրոՖեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի վերոնշյալ աշխատությունները նորություն էին, որոնցով նախկինում երբեք չէր զբաղվել հայ պատմագիտական միտքը: Դրանց պետք է ավելացնել նրա ես մեկ աշխատություն ԱՄՆ-ում, Բերկլիի համալսարանի «Լրաբեր»՝ «Newsletter» հանդեսում, հրատարակված «Հայաստանի Հանրապետություն. Քաղաքականություն և դիվանագիտություն» ուսումնասիրությունը, որն անմիջապես հայտնվեց նորանկախ Հայաստանի դիվանագիտության հարցերով զբաղվող մասնագետների ուշադրության կենտրոնում (*The Republic of Armenia. Politics and Diplomacy*, «Newsletter», Berkeley, vol. I, № 1, Winter, 1995):

ԴրոՖեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը, միշտ գտնվելով գիտական որոնումների առաջին գծում, առաջիններից մեկը նկատեց, որ միջազգային հարաբերությունների համակարգում, նրա շրջանակներում, ձևավորվում է հարաբերությունների մի նոր տեսակ, որը նախկինում երբեք չի եղել: Խոսքը, ինչպես նա է քննադատել, միջարարական հարաբերությունների ձևավորման մասին է՝ որպես միջազգային հարաբերությունների և դիվանագիտության առանձին և ինքնուրույն քննազատ, որպես հարաբերությունների հատուկ տեսակ: Հայ մասնագետն այդ նրևույթի ի հայտ գալը համարում է արարական տասնութ անկախ պետությունների պատմության

քատերաբեմում հայտնվելու ուղղակի արդյունք, մի զործընթաց, որն ավարտվեց 1970-ականների կեսերին: Հայտնի է, որ արաբական աշխարհում կաշին քաղականին ազդեցիկ ուժեր, որոնք երազում էին արաբների անկախության եվաճումից հետո մեկ միասնական արաբական պետության, անգամ յուրահատուկ արաբական խայիճայության ստեղծման մասին, որը, սակայն չհաջողվեց: Նորաստեղծ արաբական անկախ պետությունները միմյանց հետ հաստատեցին դիվանագիտական հարաբերություններ, որն ունի իր օրինաչափությունները և առանձնահատկությունները, կազմակերպչական ձևերը և նպատակները, հիմնված արաբական երկրների, որպես եղջարական ժողովուրդների պետությունների, համընդհանուր շահերի վրա: Ինչպես նշում է Նիկոլայ Հովհաննիսյանը, արաբական երկրները դառնալով ՄԱԿ-ի անդամ, միաժամանակ ստեղծեցին Արաբական պետությունների լիգան, որը վակ է մյուս, քոլոր ոչ արաբական երկրների առջև: Դա արաբների համընդհանուր շահերը միջազգային ասպարեզում պաշտպանող, նրանց համահավաք կամքն արտահայտող, արաբական երկրների արտաքին քաղաքականությունը համադրող, նրանց միջև ծագող հակասությունները և կոնֆլիկտները համահարթող մի կարևոր մարմին է: Ժամանակակից միջազգային հարաբերությունները ըստ հայ գիտնականի, անհնար է պատկերացնել առանց միջարաբական հարաբերությունների: Այդ թեմատիկան դարձավ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Նիկոլայ Հովհաննիսյանի կողմից ղեկավարվող արաբական երկրների քաժնի աշխատակիցների առջև կանգնած ամենակարևոր հիմնախնդիրներից մեկը: Եվ հայ արաբագետները՝ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի ղեկավարությամբ, ձեռնամուխ եղան այդ նոր ու քարո երևույթի ուսումնասիրությանը, որի հիմքում դրվեցին նրա ձևակերպված հայեցակարգային դրույթները: Եվ այդ քնազավառում առաջին ուսումնասիրությունը եղավ նրա հեղինակած «Իրաքի Հանրապետության հարաբերությունները Արաբական Արևելքի երկրների հետ» (Երևան, 1985, ուսերեն) իր քնույթով եզակի աշխատությունը, որն իր տեսակի մեջ ցարդ մնում է իր նախադեպը չունեցող աշխատություն: Կարելի է ասել, որ այդ պրոբլեմի ուսումնասիրության բնագավառում Ն. Հովհաննիսյանի և հայ արաբագետների ներդրումը քացառիկ էր: ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների քաժնից դարձավ միջարաբական հարաբերությունների ուսումնասիրության կենտրոն:

Միջազգային հարաբերությունների պրոբլեմի ուսումնասիրությունը պրոֆեսոր Եփեղայ Հովհաննիսյանն իրականացրել է համաշխարհային գործընթացների և մերձավորարևելյան իրողությունների ընդհանուր ֆոնի վրա՝ չսահմանափակվելով միայն արաբական շրջանակներով, այլ դրանք սերտորեն աղերսելով միմյանց հետ: Այդ առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում նրա «Իրանը մերձավորարևելյան տարածաշրջանի համակարգում (1979–1992 թթ., Երևան, 1993)» և «Իրան. Այսպողլահի խոմեյնիի դարաշրջանը (Երևան, 2004)» մեկազգական ուսումնասիրությունները, որոնցում քննարկվում են այնպիսի հանգուցային հարցեր, ինչպես այսպողլահի խոմեյնիի ֆենոմենը, Իրանի հարաբերությունները հարևան արաբական երկրների հետ, իրանա-թուրքական, իրանա-հայկական հարաբերությունները, մերձավորարևելյան կոնֆլիկտի քրդական շնորհ, իրանա-ամերիկյան հարաբերությունները, «Իրանզեյթ» և «Իրան-կոնտրաս» գործարքը և այլն: Դրանք նորություն էին հայ պատմագիտության մեջ:

Ն. Հովհաննիսյանը «Այսպողլահի խոմեյնիի ֆենոմենը» հոդվածում, որը նրա զեկուցումն է այսպողլահի խոմեյնիի ծննդյան հարյուրամյակին նվիրված գիտաժողովում, նշում է, որ «Եթե երբևիցե կազմվելու լինի XX դարի խոշորագույն պետական և քաղաքական գործիչների և հոգևոր առաջնորդների ցանկը, որոնք իրենց խոշոր դրոշմն են դրել դարիս հոգևոր-քաղաքական կերպարի ձևավորման վրա, ապա այդ ցուցակում իր արժանի տեղը կզբաղի մեր հարևան Իրանի Իսլամական Հանրապետության հիմնադիր և հոգևոր առաջնորդ այսպողլահի Ռուհոլլահի խոմեյնին: Խոմեյնիի հայտնվելը պատմության քեմահաղթակում խոշոր երևույթ էր, որը, առանց չափազանցության, կարելի է ասել ցեցեց աշխարհը» (տես Ն. Հովհաննիսյան, Իրան. Այսպողլահի խոմեյնիի դարաշրջանը, Երևան, 2004): Հայ պատմաբանը գտնում է, որ խոմեյնիի հոչակած սկզբունքները «Մի կողմից՝ առաջ բերեցին իր համախոհների ու համակիրների աննախադեպ ցնծությունը, մյուս կողմից՝ խուճապ առաջացրեցին արևմտյան երկրներում, մասնավորապես Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որը, չսփի տապալումով և իմամ խոմեյնիի իշխանության գլուխ գալով, կորցրեց իր ամենասուսպի դաշնակիցներից և հենարաններից մեկին»: Այնուհետև, Ն. Հովհաննիսյանը նշում է, որ «Տագնապալի լուրջ պահեր ապրեց նաև մյուս զեկուսությունը՝ խորհրդային Միությունը, որը խորապես մտալախ էր, այն կապակցությամբ, թե ինչպիսի արձագանք կգտ-

նեն այսօրվախ հումեյնիի հոշակամ կրոնաքաղաքական սկզբունքները հորհրդային Միության տարածքում բնակվող մուսուլման ժողովուրդների մեջ»: Կարևորելով հումեյնիի և Իրանի իսլամական հեղափոխության վերաբերյալ Ն. Հովհաննիսյանի արտահայտած տեսակետները, Մուսկվայում Իրանի Իսլամական Հանրապետության ղեապանությունն իր «Երրորդ հայացք» պարբերականում ռուսերեն լեզվով հրատարակեց հայ գիտնականի «Ինչպիսին մենք գտանք իմամ հումեյնիին» հոդվածը («Кажим мы знаем Ислама Хомейни, «Третий взгляд», № 72, Москва, 2000): Կարևորելով իմամ հումեյնիին և Իրանի իսլամական հեղափոխությանը տրված Նիկոլայ Հովհաննիսյանի տեսակետները, Իրանի Իսլամական Հանրապետության ղեկավարությունը հայ գիտնականին պաշտոնապես հրավիրեց մասնակցելու Թեհրանում կայացած իմամ հումեյնիի ծննդյան հարյուրամյակին նվիրված հանդիսություններին, որտեղ նա կարծիքներ փոխանակեց իրանական քարճրաստիճան պաշտոնյաների և մասնագետների հետ:

Գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև հայ արևելագետի մի շարք աշխատություններ, նվիրված Թուրքիայի քաղաքականությանը, հատկապես «Թուրքիան և Մերձավոր Արևելքը. տարածաշրջանային շահեր և Հայաստանի արտաքին քաղաքականության ռազմավարական խնդիրները» ուսումնասիրությունը, որում լուսարանված են այնպիսի հիմնահարցեր, ինչպես Մերձավոր Արևելքը Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության համակարգում, Թուրքիան որպես պատմաաշխարհագրական գործոն, ռազմավարական գործոն, կողմնորոշում դեպի Արևմուտք, թմ Արևելք, Թուրքիայի մերձավորարևելյան քաղաքականության առաջնահերթությունները, Թուրքիա-Իրան, Թուրքիա-արաբական երկրներ, «Ջրոյական մակարդակի» վերաբերյալ բուրքական տեսությունը, բուրք-բրդական հարաբերությունները, Թուրքիան և նոր պանթուրականությունը, Թուրքիա-Իսրայել և այլն (տես ՀՀ ՊՆ Դ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, Ռազմավարական անվտանգային հետազոտություններ, Հ. 1, Երևան, 2014, էջ 642-654):

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Ն. Հովհաննիսյանի հանդիպումները և քանակցությունները Թուրքիայի տարբեր ղեկավար գործիչների հետ: 1996 թ. մարտին Անքալիա քաղաքում Թուրքիայի արտաքին գործերի նախարարության կազմակերպած միջազգային համաժողովում նվիրված «Ռուսաստանը և ԱՊՀ-ի

ներկրները» թեմային, եւ պաշտոնապես ներկայացրել է Հայաստանը և այդ կարգավիճակով զրույցներ ունեցել Թուրքիայի պրեզիդենտ Սուլեյման Դեմիրելի գլխավոր խորհրդական զեննրալ Չաքրի հետ հայ-թուրքական միջպետական հարաբերությունների և նրանց հետևակարների վերաբերյալ, նախկին արտաքին գործերի նախարար Հալեթօղլուի հետ, որը համառոտն փորձում էր իմանալ հայ գիտնականից, որ «Էթն Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանությունը, ապա որն է լինելու հայերի հաջորդ քայլը»: Առանձնապես պետք է ընդգծել նրա հանդիպումները Թուրքիայի արտաքին գործերի նախարարության նորաստեղծ Կովկասի ղեկարտամենտի ղեկավարի հետ, որի ընթացքում վերջինս Ն. Հովհաննիսյանին քառացիորեն ասել է հետևյալը. «Թուրքիան գտնում է, որ Կովկասում միակ կայացած պետությունը Հայաստանի Հանրապետությունն է: Դուկտոր Ն. Հովհաննիսյանը՝ որպես Հայ Առյուծապետության առցիհացիայի նախագահ, բազմաթիվ հանդիպումներ է ունեցել իր թուրքական գործընկերոջ, Թուրքիայի Առյուծապետության առցիհացիայի նախագահ, ՄԱԿ-ում Թուրքիայի նախկին մշտական ներկայացուցիչ, Թուրքիայի արտաքին գործերի, ապա պաշտպանության նախկին նախարար Հալուլ Բայուքբեհի հետ Լոնդոնում, Հոմում, Աքնեթում, Ստամբուլում, որի ընթացքում նրանց քննարկման մշտական հարցերից մեկը եղել է Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև հարաբերությունների կարգավորման և հետագա զարգացման խնդիրները:

Դրանք մեծ արձագանք գտան և ըստ արժանվույն գնահատվեցին մասնագետների և գիտական հանրության կողմից, հրապարակվեցին զրախոսականներ և կարծիքներ: Այսպես, օրինակ՝ այդ զրախոսականներից մեկում, այն միտքն էր առահայտված, որ «Իրան. Այաթուլլահ Խոմենեյիի դարաշրջանը» զբրում զետեղված նյութերն արդիական են գիտական և քաղաքական առումով: Ն. Հովհաննիսյանին հատուկ է մատչելի լեզվով ներկայացնել գիտական տեսանկյունից շատ քարոզ և խճողված թեմաներ, որոնց ուսումնասիրությունը մի նոր որակ է ստեղծում հայրենական արևելագիտության մեջ, որի կայացման հարցում մեծ ներդրում ունի զրքի հեղինակ Նիկոլայ Հովհաննիսյանը» («Հայաստանի Հանրապետություն», Երևան, 22 հուլիս, 2004): Արժն ներկայացնել մի կարծիք նա. «Աշխատությունն ընթերցվում է չափազանց մեծ հետաքրքրությամբ և կարևոր աղբյուր է (հաճախ՝ նաև սկզբնաղբյուր) հի-

շյալ թեմաներով ուսումնասիրություններ կատարողների համար» («Ազգ», Երևան, 2 հուլիս 2004):

Այսպիսով, Ն. Հովհաննիսյանի ինքնատիպ աշխատությունները, նվիրված Մերձավոր և Միջին Արևելքում միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների ուսումնասիրությանը, նոր էջ քացեցին ռազմավարական առումով կարևոր եշանակություն ունեցող այդ տարածաշրջանի հանգուցային հարցերի խորքային հետազոտությունների քննազավատում՝ հիմք հանդիսանալով տեսական քնույթի նոր ընդհանրացումներ կատարելու համար:

Դա հայ ակնավոր գիտնականի կարևորագույն ներդրումներից մեկն է մերձավորարևելյան քարոյ ու խճողված քեջուկի պատճառների քացահայտման և նրանց լուծման ուղիների կանխորշման հարցում:

3. ԱՐԱՐԱԿԱՆ ՊԱՏԱՌԻԹՅԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Վատակալատ արարագետի ուսումնասիրություններում առանձնահատուկ տեղ է գրավում արարական երկրների տարբեր դարաշրջանների պատմության համակրդմանի հետազոտությունը, որին նա նվիրել է աշխատությունների մի ամբողջ շարք: Կարելի է ասել, որ այդ թեման տիրապետող է պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի գիտահետազոտական գործունեության մեջ, որի հիմնախնդիրների ուսումնասիրությանը նա նվիրվել է ամբողջապես, սկսած արարագիտության քննազավատում իր կատարած առաջին քայլերից: Անկախ այն քանից, թե ինչ խնդիրներ է նա ուսումնասիրել, լինեն դրանք ազգային-ազատագրական պայքարի, արտաքին քաղաքականության և դիվանագիտության, արարական գաղափարախոսության, իսլամագիտության, հայ-արարական հարաբերությունների և այլ ոլորտների պատկանող հիմնախնդիրներ, նա դրանք հետազոտել է արարական պատմության համատեքստում:

Դրանց մեջ իր կարևորությամբ առանձնանում է նրա «Արարական երկրների պատմություն (VII դ.–2005 թ.)» քառահատորյակը, որը հայ գիտնականի արարագիտական աշխատությունների թագն ու պսակն է, եզակի, իր նախադնալը չունեցող դասական ուսումնասիրություն: Նման ինքնատիպ, ծանրակշիռ աշխատությունը, քնականաբար, մեծ հետաքրքրություն առաջ քերեց գիտական շրջանակներում, առաջին հերթին, արարական երկրներում: Մասնազետներն ուղղակի ապշած էին և գտնում էին, որ անգամ իրենց՝

արաբները, և ոչ միայն արաբները, այլև ռուսները, նկրտագիները, ամերիկացիները և այլ ժողովուրդներ, չունեն նման համապարփակ և ծանրակշիռ ուսումնասիրություն: Այդ փաստը հաստատվեց 2007 թ. դեկտեմբերին Կահիրեում զումարված միջազգային գիտաժողովում, կապված Կահիրեի համալսարանում հայազիտական ուսումնասիրությունների կենտրոնի քաջման հետ, որտեղ ներկայացվեց հայ գիտնականի քառահատորյակը: Գիտաժողովը վարող նրկոսարյուրիստն հազար ուսանող ունեցող Կահիրեի համալսարանի ղեկավարը, քարձր զնահատելով և շնորհավորելով պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանին, հայտարարեց. «Հայ գիտնականը մեզ քոլորիս դաս տվեց»: Անդրադատնալով այդ հարցին՝ եզիպտոսի քարձրագույն կրթության նախարարի տեղակալ Ահմադ խայրին «Հորդորեց արաբներին սովորել հայկական քնավորությունից» («Ahmed Khairy, Egypt's Deputy Minister of High Education, urged the Arabs to learn from the Armenian character», «The Egyptian Gazette», Cairo, May 1, 2008): Հայ գիտնականի այդ կորոդային աշխատությանն անդրադարձել և քարձր է զնահատել Լոս Անջելեսում լույս տնետող արաքառատ «Բնյուրթ Թալսնը», միաժամանակ ներկայացնելով Ն. Հովհաննիսյանի գիտական գործունեությունը՝ անդրադատնալով նրա հիմնական աշխատություններին, և ընդգծելով նրա քաջատիկ ներդրումը արաքագիտության քնագավառում:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի քառահատորյակի վերաքերյալ արտահայտված կարծիքների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում եզիպտոսի Ալեքսանդրիայի համալսարանի Դամանհուրի պատմության քաժնի ղեկավար, դոկտոր, պրոֆեսոր Մուհամմադ Ռիֆատ ալ-Իմամի ստորն ներկայացվող կարծիքը. «Ես ուրախ եմ, որ հնարավորություն ունեմ զնահատականի խոսք ասել արաքագիտության քնագավառում հոչակավոր պատմարան, հայ արաքագիտական դպրոցի հիմնադիր Նիկոլայ Հովհաննիսյանի գիտական ծանրակշիռ վաստակի մասին: Ես քարձր եմ զնահատում արաքագիտության քնագավառում հայտնի պատմարան Նիկոլայ Հովհաննիսյանի այդ վաստակը: Ես շատ լավ գիտեմ դոկտոր Նիկոլայ Հովհաննիսյանին նրա արժեքավոր և ինքնատիպ աշխատություններից, որոնք տարբեր նրկրներում հրատարակվել են ոչ միայն հայերեն, այլև արաքերեն, անգլերեն, գերմաներեն և այլ լեզուներով: Նա հայտնի է աշխարհի արևելագետների և արաքագետների շրջանում իր ստեղծագործ զաղափարներով և հայեցակար-


զերով, արաքական աշխարհի հանգուցային հարցերի նկատմամբ նոր մտնեցումներով: Ես նրան գիտեմ նաև անձնական շփումներից եզիպտոսում, մանավանդ երբ Կահիրեի համալսարանում ընթանում էին հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի ստեղծման մեր համատեղ աշխատանքները: Ես՝ որպես արաքագետ, կարող եմ հավատել, որ Ն. Հովհաննիսյանի աշխատությունները, որոնք երևանից քացի, հրատարակվել են նաև Մոսկվայում, Լիբանանում, Եզիպտոսում, Սիրիայում, Անգլիայում, Գերմանիայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Իրանում, Իտալիայում, Թուրքիայում, Հունգարիայում, Ճապոնիայում և այլ երկրներում, նոր մակարդակի բարձրացրեցին արաքագիտությունը և խթանեցին արաքագիտական ուսումնասիրությունները աշխարհի տարբեր համալսարաններում և գիտական կենտրոններում: Այդ հրապարակումները նոր խոսք են արաքագիտության մեջ, և նրան բերել են միջազգային մեծ ճանաչում: Մենք կցանկանայինք առանձնացնել նրա «Արաքական երկրների պատմություն (VII դ. - 2005 թ.)» հիմնարար, բացառիկ կարևորություն ունեցող և քվանդակությամբ եզակի ուսումնասիրությունը, որը տիտանական աշխատանքի արդյունք է: Նրա ժամանակագրական շրջանակները շատ լայն են և ընդգրկում են արաքների պատմությունը VII դարից՝ Իսլամի ծագումից, Խալիֆայության կազմավորումից մինչև մեր օրերը: Արաք պատմաբանը քառաստորյակի ամենատարբերակոր մասերից մեկը համարում է այն հատվածները, որոնք նվիրված են արաքական երկրներում հայ համայնքների առաջացմանը, հայերի կարևոր, երբեմն բացառիկ դերակատարմանը արաքական երկրների պետական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում, այդ թվում և հայ-արաքական քարեկամական միջպետական հարաբերություններում: Այնուհետև արաք պատմաբանը նշում է. «Ինձ մեծ քաղաքակրթություն պատճառեց Ն. Հովհաննիսյանին այդ հիմնարար ուսումնասիրության համար Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակ ստանալու լուրը»: Պրոֆեսոր Ռիֆատ Ալ-Իմամը հայ տաղանդավոր գիտնականի քառաստոր կրթողային աշխատությունը համարում է «գիտական սիրանք»:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի պատմագիտական արձեքավոր ուսումնասիրությունը՝ «Արաքական երկրների պատմության» բոլոր չորս հատորները, 2011 թ. թարգմանվեց արաբերեն և հրատարակվեց Հալեպում, որը զարմանքի և հիացմունքի նոր այլք բարձրացրեց արաքական աշխարհի գիտական շրջանակներում:

Ստվարածալալ չորս հատորների թարգմանությունը հայերենից արաբերեն, որը հեշտ գործ չէր, վկայում է գիտական այն բարձր արժանիքների և քաջատիկ նշանակության մասին, որ արաբական գիտական միտքը տվել է հայ ակադեմիկոս գիտնականի դարակազմիկ աշխատությանը: Թարգմանությունը հայերենից արաբերեն կատարել է մեծավաստակ թարգմանիչ-մտալիրական Անթրանիկ Բեշիշյանը, որը պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի քառաստորյակն անվանել է «Հռչակալ աշխատություն» (“Magnificent work”), «Անզնահատելի հատորներ», իսկ «Իրան-Հայաստան քարեկամության միության» հիմնադիր անդամ, հայտնի մտալիրական Գարուն Սարգսյանը, որը հայ պատմաբանի մի շարք աշխատություններ հայերենից թարգմանել է պարսկերեն և հրատարակել Թեհրանում, հայ պատմաբանի աշխատությունը համարում է «Գիտական մեծ նվաճում»:

Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի չորս հատորների թարգմանությունը արաբերեն և հրատարակությունը Հալեպում, նկավ հաստատելու հայ տաղանդավոր արաբագետի միջազգային բարձր վարկը և նրա ուսումնասիրությունների կարևորությունը:

Այդ տեսակետը անվերապահորեն հաստատվեց Կահիրեի համալսարանի հայագիտական հետազոտությունների կենտրոնի վեցնորդ միջազգային գիտաժողովում, որը կայացավ 2016 թ. դեկտեմբերի 18-19-ը Կահիրեում: Գիտաժողովում լսվեց հատուկ զեկուցում՝ «Նիկոլայ Հովհաննիսյան գիտնական-պատմաբանը» թեմայով, որը ներկայացրեց հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի ղեկավար, թագմավաստակ գիտնական, դոկտոր, պրոֆեսոր Մահմուդ Ալավին: Դա, ըստ էության, քաջատիկ երևոյթ է: Ստորև ներկայացնում ենք այդ զեկուցման համառոտ տարբերակը. «Նիկոլայ Հովհաննիսյանը պատմաբան-գիտնական է, ով գրել է հանրագիտաբանային նշանակություն ունեցող արաբական երկրների պատմության քառաստորյակը (խոսքը «Արաբական երկրների պատմություն. VII դ.-2005 թ.» չորս հատորների մասին է, որը, ինչպես նշվել է, հրատարակվել է հայերեն, Երևան, 2007, ապա և արաբերեն, Հալեպում, 2011 թ.): Այս ուսումնասիրությունը խորքային վերլուծություն է, որն ընթերցողին թագմատեսակ և լայն գիտելիքներ ու տեղեկություններ է հաղորդում արաբական երկրների պատմության մասին՝ սկսած ամենավաղ շրջանից մինչև քաաներորդ դարը ընկած ժամանակահատվածը:



نيكولاي هوفمانسكيان

تاريخ الدول العربية

الجزء ١

حداثة الإسلام ١٩١٣-٢٠٠٥



NIKOLAI HOFFMANSKIY
KING OF KINGS TIGRAN THE GREAT
AND THE ARMENIAN EMPIRE AS EVALUATED
BY MODERN ARAB HISTORIOGRAPHY

НИКОЛАЙ ОФФМСОН
ЦАРЬ ЦАРЕЙ ТИГРАН ВЕЛИКИЙ
И АРМЯНСКОЕ ЦАРСТВО В ОЦЕНКЕ
СОВРЕМЕННОЙ АРАБСКОЙ ИСТОРИОГРАФИИ

ՆԻԿՈԼԱՅ ՕՖԲՄՍՈՆԻ
ՄԻՋԵՐԵ ԿՐԱՆՆԻԿՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ
ՍՈՒՐԵՆԻՍԻՆԵՐԸ ԽՆԴՐԱԿԱՆ
ՄԻՋԻ ՊԵՏԱՐԱԳՆԱՆՈՒՄԸՆ ԳԼԾՈՍԻՄՈՒՄԸ



العلاقات التاريخية الأرمنية - العربية

ترجمة: د. محمد جمال الدين
إدراك: نيكولاي هوفمانسكيان

الجزء ١
حداثة الإسلام
١٩١٣-٢٠٠٥

الطبعة الأولى: ٢٠٠٥





Այդ մեծանուն գիտնականը արաբագիտության ոլորտում հեղինակել է մոտավորապես հինգ հարյուր գիրք և աշխատասիրություն, որոնք տպագրվել են նաև արաբական և եվրոպական երկրներում:

Նիկոլայ Հովհաննիսյանը մեծ մասնագետ է և լայն համրավունքի արևելագիտության մեջ: Նա Հայաստանում արաբագիտության հիմնադիրն է և քառասուն տարուց ավելի ղեկավարել է այդ ոլորտը մեծ նվիրումով: Նրա աշխատանքները վերաբերում են արաբական երկրների պատմության տարրեր ոլորտներին, նաև հայ-թուրքական հարաբերություններին և այլն: Նա րազմաթիվ գիտական մրցանակների է արժանացել, այդ թվում և Տուրքայի, ԱՄՆ, (1993–1994): Նիկոլայ Հովհաննիսյանը նաև 2007 թ. Կահիրեի համալսարանի հուժանիտար գիտությունների ֆակուլտետում ստեղծված հայագիտական հետազոտությունների կենտրոնի հիմնադիրներից է» (Եգիպտոս, Կահիրե, 18–19 հոկտեմբերի, 2016 թ., Հայագիտությունն արաբական աշխարհում, Վեցերորդ գիտաժողովի նյութեր: Կահիրեի համալսարանի հուժանիտար գիտությունների ֆակուլտետի հայագիտության կենտրոն):

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի՝ հայ արաբագիտության լիդերի նախադեպը չունեցող «Արաբական երկրների պատմությունը» աշխատությունը լայն արձագանք գտավ նաև հայկական գիտական շրջանակներում՝ դառնալով հայ արաբագետների և արևելագետների աշխույժ քննարկման առարկա և արժանանալով երանց բարձր գնահատականին: Եզիպտոսում Հայաստանի դեսպան, պատմական գիտությունների դոկտոր, հայտնի արաբագետ Ռուբեն Կարապետյանը «Արաբական երկրների պատմությանը եվիրված առաջին համապարփակ կապիտալ աշխատությունը» խորագիրը կրող գրախոսականում նշում է, որ այդ կապիտալ աշխատության «չույս քննալույժը դարձավ խոշոր իրադարձություն ոչ միայն հայ, այլև համաշխարհային արևելագիտության համար: Նա վերանայում է հենց ամեն և պատմության քննությանը չլիմացած տարբեր հարցադրումներ և ասում իր հիմնական խոսքը» («Ազգ», Երևան, 11 մարտ, 2004): Նման բարձր գնահատական է տվել նաև Սիրիայում Հայաստանի դեսպան, պատմական գիտությունների դոկտոր, ականավոր արաբագետ-բրդագետ Արշակ Փոլադյանը: Ահա նրա կարծիքը. «Արևելագիտությունը հարստացավ մի նոր քարձրարժեք և ծանրակշիռ ուսումնասիրությամբ, որին վաղուց էր սպասում գիտական հասարակայնությունը: Լույս է տեսել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, միջազգային մի շարք ակադեմիաների և գիտական ընկերությունների անդամ, հայ արաբագիտության դպրոցի հիմնադիր, միջազգային մեծ ճանաչում ունեցող արևելագետ-պատմաբան, Նիկոլայ Հովհաննիսյանի «Արաբական երկրների պատմություն» քառահատորյակի վերջին՝ չորրորդ հատորը, որով ամբողջացավ նրա դարակազմիկ այդ ուսումնասիրությունը» («Ազգ», 21 նոյեմբեր, 2007): Անկուփելով իր կարծիքը՝ դոկտոր Ա. Փոլադյանն ընդգծում է. «Այս մեծաշուք կապիտալ աշխատությունն իր բնույթով և ոճով համապատասխանում է դասական արաբագիտության նորմերին և օրինաչափություններին»:

Իսկ ԱՄՆ-ի Միչիգան-Դիրբորն համալսարանի հայկական հետազոտությունների կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Դենիս Փափազյանը հայտնում է «Արաբական երկրների պատմության» հեղինակին, որ նրա աշխատությունը մատչելի է լինելու ուսանողներին, դասախոսներին, գիտնականներին և ընդհանուր հայությանը.

և ընդգծում. «Ձեր մեծարժեք ներդրումը մատչելի կլինի զալից սերունդներին»:

Մի շարք մասնագետներ Ն. Հովհաննիսյանի «Արարական երկրների պատմությունը» աշխատությունը դիտարկում են նաև որպես քաղաքակրթությունների երկխոսություն և այդ շրջանակներում արժեքավորում նրա կարևորությունը, համարելով այն անգնահատելի ներդրում այդ քննադատում:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի «Արարական երկրների պատմություն (VII դ. - 2005 թ.)» դասական աշխատությունը 2007 թ. արժանացել է Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակին:

Արարական երկրների պատմությանը նվիրված պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի աշխատությունների մեջ իր ուրույն տեղն է գրավում նրա «Արքայից արքա Տիգրան Մեծը և հայկական կայսրությունը արարական արդի պատմագիտության զնահատմամբ» եռալեզու՝ անգլերեն, ռուսերեն, հայերեն աշխատությունը, որը լույս է տեսել Երևանում, 2012 թ.: Ն. Հովհաննիսյանն իրավացիորեն էլում է, որ «Ճարդ Տիգրան Մեծի (մ.թ.ա. 95-55 թթ.) գործունեությունը համաշխարհային պատմագրության մեջ լուսաբանվել է հիմնականում անտիկ շրջանի հունա-հռոմեական աղբյուրների և նոր ու նորագույն շրջանի արևմտյան հետազոտողների ուսումնասիրությունների հիման վրա: Հետազոտողների տեսադաշտից դուրս են մնացել այլ աղբյուրներ, այդ թվում և արարական»: Այդ հանգամանքը, մի կողմից՝ և արարական արդի պատմագրության ուսումնասիրությունը, մյուս կողմից՝ հայ պատմաբանին մղում են անդրադառնալ արարական այն աղբյուրներին, արարական արդի այն հեղինակների աշխատություններին, որոնք ուղղակիորեն վերաբերում են արքայից արքա Տիգրան Մեծին և նրա հիմնած Հայկական կայսրությանը: Նա առաջին հեղինակն է, որ հատուկ և համակարգված ձևով անդրադարձել է թե՛ հայերի և թե՛ արարների պատմությանը վերաբերող այդ արտակարգ հետաքրքիր շրջանին: Դա իրավունք է տվել հայ արարագիտության նահապետին նշելու, որ «Սույն աշխատությունն առաջին փորձն է արարական արդի հետազոտողների ուսումնասիրությունների հիման վրա լուսաբանել Հայոց արքայից արքա Տիգրան Մեծի գործունեությունը և նրա հիմնած Հայոց կայսրության պատմական դերակատարումը, որի միջուկը հիմնականում կազմել են արարական երկրները»: Ըստ էության, Ն. Հովհաննիսյանի սույն աշխատության մեջ լու-

տարանված են նախաքրիստոնեական հայերի և նախախլամական արաբների քաղաքական, ռազմական, տնտեսական և մշակութային առեւտրությունները՝ միջպետական հարաբերությունների մակարդակով, ինչը նույնպես նորություն է: Արաբական պատմագրությունը, ինչպես ցույց է տրված աշխատությունում, գալիս է հաստատելու Հայկական կայսրության ռազմաքաղաքական կարևոր գործոն լինելու հանգամանքը: Այդ տեսակետից, շատ կարևոր է Ն. Հովհաննիսյանի վերին աստիճանի հետաքրքիր և արժեքավոր դիտարկումը, որ նա կատարում է, հենվելով արաբական պատմագրության տվյալների վրա, առ այն, որ «Հայկական ռազմաքաղաքական գործոնը Տիգրանի օրոք խախտեց հռոմեա-պարթևական ավանդական գերակայությունը և աշխարհի քաղաքական քարտեզն ըստ իրենց շահերի և կամոր վերամենելու նրանց քացարձակ իրավունքը: Նրա ստեղծած Հայկական կայսրությունը, մխրճվելով հռոմեական-պարթևական տիրույթը, չզիջելով հռոմեական գործոնին և պատմական մի որոշ ժամանակահատվածում անգամ հետին պլան մղելով պարթևական գործոնը, իր օրինական և ազդեցիկ տնող գրավեց տվյալ պատմական դարաշրջանի միջազգային հարաբերություններում»: Եվս մի նոր կարևոր դիտարկում հայ արաբագետը գտնում է, որ «Այդ շրջանում «Համաշխարհային հասկացություն» իր մեջ ներառում էր նաև հայկական ռազմաքաղաքական գործոնը»:

— Արաբ պատմաբանները՝ Ֆուադ Հասան Հաֆիզը, Մարվան ալ-Մուդավարը, Ռաման ալ-Թուրքը, Սամիր Արբաշը, Սալիհ Ջահր ալ-Դիեր, Ռամար ալ-Դակակը և այլք, — ինչպես նշում է պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը, — Տիգրան Մեծի դարաշրջանն ընդունել են որպես ուղենիշ Հայաստանի անտիկ շրջանի պատմության պարթև-րազման համար և այդ տեսակետից շատ հետաքրքիր տեսակետներ արտահայտում: Այսպես, օրինակ՝ եզրպտացի պատմաբան և իրավագետ Ֆուադ Հասան Հաֆիզն իր «Հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը» ատվարածավալ աշխատությունում ուրարտական դարաշրջանը վերնագրել է «Անտիկ Հայաստանը մինչև Տիգրան Մեծ թագավորի շրջան (մ.թ.ա. 880–95 թթ.)»: Նա և մյուս արաբ պատմաբանները ոչ միայն Ուրարտուն, այլև Նաիրին համարում են Հայաստան՝ «Նաիրի առ Արմինիյա հավյա բուհայ-րա Վան»՝ «Նաիրին կամ Հայաստանը Վանա լճի շուրջը», ավելացնելով, որ «Նաիրին հայերի համար Հայաստանն է»:

Հայ արարագետը հատուկ քննարկման առարկա է դարձրել մի այնպիսի առանցքային հարց, ինչպես արարական հայեցակարգը Հայոց բազավորության Հայոց կայսրության վերածման ուղիների ու պատմական անհրաժեշտության հարցը: Այդ հարցի լուսաբանությունը շատ կարևոր է արար պատմաբանների համար, քանի որ Հայոց բազավորության վերածումը Հայոց կայսրության կազմած է առաջին հերթին արարական երկրները՝ Սիրիան, Լիբանանը, Իրաքը, Հորդանանը, Պաղեստինը Տիգրան Մեծի պետության կազմում հայտնվելու հետ: «Նրանց մի մասը, — եչում է հայ պատմաբանը, — ինչպես Սիրիան, նաև Իսրայելը, Հայաստանի կազմում հայտնվել են կամովին, նրանց խնդրանքով է արքայից արքա Տիգրան Մեծը այդ երկրները ներառել իր տիրույթների մեջ, իսկ Եգիպտոսը գտնվել է Հայաստանից վասալական կախման մեջ»: Թվում էր, քն արար մասնագետները պետք է դատապարտեին կամ գոնե քննադատական խոսքեր ասեին Տիգրան Մեծի հասցեին: Այդ մասին ասա քն ինչ է գրում պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը. «Արար հեղինակները յուրառոտակ մտածելով են ցուցաբերում արարական երկրները Հայկական կայսրության մեջ ներառելու գնահատականի հարցում: Ուսումնասիրելով այդ խնդիրը՝ մենք այդպես էլ չհանդիպեցինք քննադատական, առավել ևս դատապարտող որևէ գնահատականի: Կարելի է ասել, որ նրանք այդ հարցի լուսաբանությունը չեն քաղաքականացրել և չեն փորձել այսօրվա աչքերով դիտարկել և դրան համապատասխան քաջասական գնահատականներ տալ: Նրանք արարական երկրները Հայկական կայսրության մեջ ընդգրկելը դիտում են որպես ինքնապաշտպանական քայլ և անհրաժեշտ միջոց Հայաստանի անվտանգությունն ապահովելու տեսանկյունից»: Ն. Հովհաննիսյանը գտնում է, որ «դա իր նախադեպը չունեցող գնահատական է, որ արար հեղինակները տվել են հայոց կայսրության դերակատարմանը»:

Այխատությունում անդրադարձ կա նաև Հայկական կայսրության սահմաններին: Ն. Հովհաննիսյանը եչում է, որ ըստ Ռեմանայ-Թուրքի գծած սահմանների, «Հայկական կայսրությունը հյուսիսում հասնում էր մինչև Կասպից ծովի ափերը, արևմուտքում՝ մինչև Կապադոկիա, արևելքում՝ մինչև Իրաք և հարավում նրա ազդեցությունը հասնում էր մինչև հրեաների երկիրը՝ այն բանից հետո, երբ Տիգրան Մեծը գրավեց Փյունիկիան և Սիրիան: Հայոց կայսրության սահմանները հասել են մինչև Եգիպտոս»:

Միս այսպիսին է աշխատությունում բնարկված հարցերի ոչ լրիվ շրջանակը: Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի այս աշխատությունը գտավ աննախադեպ արձագանքներ այնպարհի տարրեր երկրներում՝ Ֆրանսիայում, Լիբանանում, Սիրիայում Իրաքում, ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Իտալիայում, Եգիպտոսում, Իրանում և այլ երկրներում: Գրվեցին գրախոսականներ, և հեղինակը ստանում էր շնորհակալական նամակներ և ուղերձներ: Քեմբրիջի (Անգլիա) համալսարանի գրադարանի ղեկավարը Ն. Հովհաննիսյանին հասցեագրված ուղերձում գրում էր. «Հարգելի պրոֆեսոր Հովհաննիսյան: Ինձ մեծ հաճույք է պատճառում ձեզ շնորհակալություն հայտնել «Արքայից արքա Տիգրան Մեծը և Հայկական կայսրությունը» գիրքը համալսարանի գրադարանին նվիրաբերելու համար: Դա շատ քարձր է գեահատել գրադարանի սիդիկատը և գրադարանի աշխատակազմը, և ես գրում եմ երանց անունից ջերմորեն շնորհակալություն հայտնելով ձեր քարուքյան համար: Ի նոյեմբեր, 1912 թ.»։ Հեղինակին նման ջերմ երախտագիտություն է հայտնել ԱՄՆ-ի Քեմբրիջի, Մասաչուսեթս, Հարվարդի համալսարանի Մերձավորարևելյան դեպարտամենտը:

Ն. Հովհաննիսյանի սույն աշխատությանն անդրադարձել է անտիկ շրջանի հայտնի մասնագետ, դոկտոր Արտակ Մովսիսյանը «Տիգրան Բ Մեծը՝ արաբ պատմաբանների այցերով» իր հոդվածում («Ազգ», 4 դեկտեմբեր, 2012, էջ 4)՝ առանձնացնելով այն բոլոր նորամուծությունները, որ կատարել է հայ տաղանդավոր պատմաբանը: «Պետք է խոստովանել, — գրում է դոկտոր Մովսիսյանը, — որ հայագիտությանն ավելի շատ ծանոթ են արևմտյան հեղինակների ուսումնասիրությունները, իսկ արևելյան երկրների պատմագրության գեահատականները մեզանում մնացել են գրեթե անծանոթ: Այդ կարևոր բացը լրացնելու նպատակով էլ օրեր առաջ լույս տեսավ վաստակաշատ արևելագետ-պատմաբան Նիկոլայ Հովհաննիսյանի «Արքայից արքա Տիգրան Մեծը և Հայկական կայսրությունը արաբական արդի պատմագիտության գեահատմամբ» խիստ ուշագրավ գրքույկը»: Գրախոսականի հեղինակն ընդգծում է, որ «Այն մեծ արժեք ունի հայագիտության համար, քանզի առաջին անգամ դրանով փորձ է արվում ամփոփ և ամբողջական կերպով ներկայացնելու հայ ականավոր տիրակալի գործունեության գեահատականը արաբական պատմագրության մեջ»: Նա կարևորում է Ն. Հովհաննիսյանի այն տեսակետը, որ «Այդի արաբ հեղինակներն իրենց ուսումնասիրություններում անդրադարձել են

Տիգրան Մեծի գործունեության համարյա բոլոր կողմերին: Չկա շատ թե թիչ կարևոր հարց, կապված հայոց արքայի ներքին և արտաքին քաղաքականության հետ, որը դուրս մնացած լինի նրանց տեսադաշտից»: Դոկտոր Ա. Մովսիսյանն ուշազրալ է համարում այն հանգամանքը, որ արաբ պատմաբանները Տիգրան Մեծի կողմից արաբական երկրների ընդգրկումը Հայկական կայսրության մեջ դիտում են ոչ թե նվաճում, այլ որպես ինքնապաշտպանական և Հայաստանի անվտանգությունն ապահովող քայլ: Նա, բնաբովոր հարցի կուրսի և պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի մոտեցումների հիման վրա, անդրադառնում է օտար հեղինակների կողմից հայերի պատմությանն անդրադառնալու հարցին՝ ընդգծելով դրա կարևորությունը. «Կարծում ենք, գրքուկը կարող է շատ լավ օրինակ դառնալ Հայաստանի պատմության օտար հեղինակների կողմից լուսարանման ուղղությամբ տարվող աշխատանքների համար: Կողքից հայացքը մեր պատմությանը, ճանաչողական նշանակությունից բացի, կարող է բազմաթիվ նոր ու օգտակար մոտրումների պատճառ դառնալ»: Վերջում նա մատնանշում է, որ հայ ակադեմիկոս գիտնականի աշխատության «կարևոր արժանիքներից մեկն էլ նույնպես լինելն է ինչը հնարավորություն է տալիս արաբական պատմագրության գնահատականներին ծանոթանալու նաև ռուսալեզու և անգլիալեզու ընթերցողներին»:

Երկար ժամանակ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի ուշադրության կենտրոնում է եղել Լիբանանում 1975 թ. սկսված քաղաքացիական պատերազմի և լիբանանահայ համայնքի դրության հարցերի ուսումնասիրությունը: Մոտ 15 տարի տևած այդ պատերազմը տակնուվրա արեց Լիբանանը: Ն. Հովհաննիսյանը քաղաքացիական պատերազմի պատճառները, ընթացքը, մասնակից ուժերի քաղաքական նպատակները և օտարերկրյա երկրների՝ ԱՄՆ-ի, Իսրայելի, Թուրքիայի, Ֆրանսիայի, Սիրիայի, Սաուդյան Արաբիայի դիրքորոշումն այդ բարդ հանգույցի նկատմամբ: Նա բազմակողմանիորեն լուսարանել է այդ պատերազմի անդրադարձը Լիբանանի հայ համայնքի վրա, որը որդեգրել էր դրական չեզոքության շատ ձիշտ, իմաստուն քաղաքականություն: Չնայած այդ հանգամանքին՝ հայ համայնքը երկու անգամ՝ 1978 և 1979 թթ., ռազմական հարձակման ենթարկվեց լիբանանյան աջ ուժերի կողմից: Բայց նա կարողացավ հաղթահարել այդ վտանգները լիբանանյան հայրենասիրական ուժերի օգնությամբ, որոնք հայ համայնքը համարում էին Լիբանանի օրինական համայնքեն-

րից մեկը և երկրի բնակչության բաղկացուցիչ մասը: Այդ հարցերը մանրամասն լուսարանվել են հայ արարագետի մի շարք աշխատություններում՝ «Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը (1975-1982 թթ.)», Երևան, 1982, «Становление и развитие востоковедения в Советской Армении», Москва, 1988 մենագրություններում, «Լիբանանի տազնապնները և հույսերը», Երևան, 1978, «Լիբանանահայությունը ծանր փորձության առջև», Երևան, 1979, «Բաղաբացիական պատերազմը և հայերը որպես կամուրջ լիբանանցիների միջև», «Ան-Նիդա», Բելյուսթ, 13 նոյեմբերի, 1987, արարերեն և մի շարք այլ հոդվածներում:

Արարական երկրների պատմության և արարագիտության քննադատում պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի կարևոր ներդրումներից մեկը արարական երկրների անհամաչափ զարգացման տեսադրույթի առաջ քաշումը և մշակումն է, որը միանգամայն նոր խոսք էր այդ քննադատում: Այդ հարցի ծագումը կապված է արարական երկրների քաղաքական անկախության եվաճումից հետո ձևավորված նոր իրադրության, հատկապես արարական միասնության իրականացման զործընթացի ձախողման հետ: Դա շատ համարձակ քայլ էր հայ արարագետի կողմից: Նա, համաձայն իր սկզբունքի, հայեցակարգային այդ նորույթը ենթակայացրեց միջազգային յուրատեսակ փարձագիտության՝ հանձնելով այն մասնագետների դատին: Նա «Արարական երկրների անհամաչափ զարգացումը և դրա հետևանքները (1950-1970 թթ.)» թեմայով զեկուցումով հանդես եկավ 1986 թ. Համբուրգում կայացած արևելագետների միջազգային (ICANAS) XXXII կոնգրեսում՝ հանգամանորեն լուսարանելով անհամաչափ զարգացման քաղաքական, տնտեսական, պետական կառուցվածքային, գաղափարական ասպեկտները: Հայ պատմաբանի զեկուցումը՝ որպես տեսական բնույթի նորույթ, դարձավ արևելագետների միջազգային կոնգրեսի կենտրոնական հարցերից մեկը և բուռն քննարկման առարկա՝ արձանանալով կոնգրեսի մասնակիցների քարձր զեահատականին: Նրանք գտնում են, որ դա բանալի է ճիշտ հասկանալու իրադրությունը արարական աշխարհում և արարական երկրներին հուզող միասնության, համագործակցության, միջարարական ներքին հակասությունների առանցքային հարցերը: Գրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի այդ աշխատությունը լույս տեսավ 1992 թ. Համբուրգում անգլերենով հրատարակված «Ասիայի և Հյուսիսային Աֆրիկայի ուսումնասիրությունների XXXII միջազգային կոնգրեսի նյութեր»

ծողովածուում՝ «Irregularities in the Development of Arab Countries and their Consequences (1950-1970). Proceedings of the XXXII International Congress for Asian and African Studies», Hamburg, 1992:

Պրոֆեսոր Եփեղյայ Հովհաննիսյանի արարական երկրների պատմագիտական ուսումնասիրություններում իր արժանի տեղն է գտել նաև 2011 թ. հունվարին արարական երկրներում սկսված շարժումը, որը ցնցեց համայն արարական աշխարհը և մեծապես ազդեց համաշխարհային աշխարհաքաղաքական գործընթացների վրա, և որը ստացավ «Արաբական գարուն» հորջորջումը: Դա անկախության նվաճումից հետո արարական երկրների նորագույն պատմության թերևս ամենակարևոր իրադարձությունն է: Հայ գիտնականն այդ երևույթի, նրա բնույթի և պատճառների վերաբերյալ ունի իր ուրույն տեսակետը և մերժում է «Արաբական գարուն» անվանումը, որը նրա տեսակետից մի ամորֆ, կոնկրետությունից զուրկ, ինչ-որ մի տեղ վերացական և անորոշ հասկացություն է: Պրոֆեսոր Եփեղյայ Հովհաննիսյանը, հենվելով արարական երկրների անհամաչափ զարգացման իր իսկ առաջ քաշած տեսադրույթի վրա, արտահայտեց այն տեսակետը, որ արարական երկրներում լայն ծավալ ստացած շարժումը ոչ թե «Արաբական գարուն է», ոչ թե տարվա այս կամ այն եղանակի հետ կապված շարժում, մանավանդ, որ նա սկիզբ է առել ձևափոխ ամենացուրտ հունվար ամսին, այլ համաարարական ըմբոստություն: Ես օրսերենով հրատարակեց հատուկ հոդված՝ «Восарабская смута во имя модернизации общества» («Համաարարական ըմբոստություն հանուն հասարակության արդիականացման») («Голос Армении», Ереван, 22 мая, 2014) խորագրի ներքո: Հայ արարագետը, արարական հասարակության արդիականացում անելով, դրա մեջ շատ լայն հասկացություն է ներդնում, ընդգրկելով պետական կառուցվածքի, կառավարման համակարգի, տնտեսական կառուցվածքի, ցեղային և միջցեղային հարաբերությունների, դատական, ինչպես նաև կրթական-մշակութային համակարգի արդիականացման ոլորտները: Այդ շարժումն իր մեջ առավ արարական երկրների մեծամասնությանը, հատկապես Թունիսը, Եգիպտոսը, Սիրիան, Լիբիան, Եմենը, Ալժիրը, Բահրեյնը, Քուվեյթը, այս կամ այն չափով նաև արարական մյուս երկրները: Հեղինակը գտնում է, որ այդ համընդհանուր արարական շարժումը հանուն արդիականացման, խիստ անհանգստացրեց նախկին գաղութատեր արևմտյան երկր-

ներին՝ Անգլիային և Ֆրանսիային, որոնց տիրապետության տակ են եղել վերոնշյալ արաբական երկրները, ԱՄՆ-ին, Թուրքիային և մի շարք այլ երկրներին, որոնք դրա մեջ տեսնում են արաբական երկրների ինքնուրույնության ամրապնդում և յիակատար անկախացում, մի կողմից՝ և իրենց դիրքերի թուլացում՝ մյուս կողմից: Նրանք դրա հետ չէին կարող հաշտվել, արաբական հասարակական-քաղաքական զարգացման այդ մոդելը նրանց համար անընդունելի էր: Նրանք ամենակուպիտ կերպով, կարելի է ասել քարրաբուսաբար միջամտեցին այդ երկրներում ծավալված գործընթացին, շեղելու նրա ուղղվածությունը, կանխելու արաբական երկրների արդիականացման գործընթացը և պահպանելու իրենց դիրքերը: Արդյունքում արաբական մի շարք երկրներում ծայր առան քաղաքացիական քախումներ, պետական հեղաշրջումներ, արաբական պետական ղեկավարների ֆիզիկական ոչնչացում, որի հետևում կանգնած էին արևմտյան տերությունները, որի արդյունքում արդիականացման գործընթացը խաթարվեց, և արաբական երկրներն, ըստ էության, ընկղմվեցին մի ետր ճգնաժամի մեջ, որի դրսևորումներից մեկը եղավ արաբական, և ոչ միայն արաբական երկրների քնակչության գանգվածային արտագաղթը արևմտաեվրոպական երկրներ: «Եվրոպացիները, — ինչպես նշում է Նիկոլայ Հովհաննիսյանը, — ներգաղթածներին չդիմավորեցին ծաղկեկեցեծով, այլ հաճախ գեղացրային կրակոցներով, արգելափակոցներով, համապատասխան օրենսդրական ակտերով՝ երանց համար ստեղծելով դժոխային պայմաններ: Դա եղավ արևմտյան մասնագետների կողմից հորջորջված «Արաբական գարնան» արդյունքը»:

Պրոֆեսոր Հովհաննիսյանի այդ հոդվածին ուղղակիորեն առնչվում է նրա կողմից հրատարակված «Մուամար Կադաֆիի անեծքը» հոդվածը («Ազգ», 18 սեպտեմբեր, 2015), որում Լիբիայի առաջնորդն իր խոսքերն ուղղելով եվրոպական պետություններին՝ մասնավորապես Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային, անիծելով նրանց, ասում է. «Դուք ումբակոծում եք այն պատենչը, որը թույլ չէր տալիս աֆրիկյան միգրացիան մտնի Եվրոպա, մի պատենչ, որը զսպում էր «ալ-Կաիդայի» ահաբեկիչներին: Այդ պատենչը Լիբիան էր: Դուք այն քանդեցիք: Դուք ապուշներ եք: Համուն Աֆրիկայի միգրանտների, «ալ-Կաիդային» սատարելու համար թող վառվեք դուք դժոխքում: Եվ դա այդպես էլ կլինի»:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի տեսակետը համաարաբական ըմբոստության վերաբերյալ՝ համուն արաբական հասարա-

կուրսյան արդիականացման, լայն արձագանք գտավ արարական աշխարհում և այլ երկրներում: «Համաարարական ըմբռստությունը հանուն հասարակության արդիականացման» հողվածը թարգմանվեց արարներեն և հրատարակվեց Սիրիայում («Այ-Վարան», Դամասկոս, 15.VII. 2014), իսկ հայերենով՝ Կրասնոդարի «Երկրամասում», մատուլի այլ օրգաններում և սոցիալական ցանցերում: Նա դրական արձագանքների է արժանացել Մոսկվայի գիտական շրջանակներում: Հայ արարագետի այդ աշխատանքի վերաբերյալ իր քարձր կարծիքն է հայտնել Մոսկվայի քարձրագույն տնտեսական դպրոցի տրամաբանության, գոյաբանության և ճանաչողության տեսության ամբիոնի վարիչ, փիլիսոփայության պրոֆեսոր Պ. Վ. Նաթանովիչը, նշելով. «Լավ, գրագետ, քարձրորակ հողված է: Հեղինակը մասնագետ է, ինչը հաճելի է»:

Հետագա իրադարձությունները և միգրանտների հոծ գանգվածների հոսքը Մերձավոր Արևելքից, Հյուսիսային Աֆրիկայից եվրոպական մի շարք երկրներ, նրանց՝ գաղթականների, անտանելի ծանր պայմանները, քախումները տեղացիների հետ և իշխանությունների բռնությունները նրանց դեմ, եկան հաստատելու հայ պատմաբանի ամենամտայլ գուշակումները:

Այդ առումով, խիստ ուշագրավ է Չեխիայի նախկին նախագահ Վացլավ Կլաուսի տեսակետը: Նա 2017 թ. հունվարի 8-ին իր հեռուստանկարում հայտարարել է, որ «Միգրացիոն ճգնաժամի պատճառը եվրոպական էլիտաներն են»: Ավելի կոնկրետացնելով իր տեսակետները՝ Չեխիայի նախագահը հայտարարում է. «Միգրացիոն ճգնաժամի պատճառը ոչ թե «Իսլամական պետության ահաբեկչական խմբավորման գրոհայիններն են, այլ եվրոպական էլիտաները և կեղծ էլիտաները: Պետք է հստակ ընդունել, որ գանգվածային միգրացիան դեպի եվրոպա ոչ թե ԻՊ (Իսլամական պետության) գործունեության կամ Մերձավոր Արևելքում տիրող քաոսի, այլ եվրոպական էլիտաների և կեղծ էլիտաների քաղաքականության արդյունքն է: ԱՄՆ-ի և եվրոպական Միության մի մասի քաղաքականությունը նպաստել է մերձավորարևելյան տարածաշրջանի քայքայմանը: Կասկած չկա, որ միգրացիան եվրոպայում իրականացվող ահաբեկչական հարձակումների աղբյուրն է: Եթե եվրոպան վերջիվերջո խելք չհավաքի և անհրաժեշտ ու արդյունավետ փոփոխություններ չիրականացնի, մեր վիճակը վատ կլինի»:

Այսպիսով՝ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի հողվածների լույս աշխարհի գալուց նրեք տարի և Միամար Կաղաֆիի աննձեփցի նրկու տարի անց, Չեխիայի նախկին նախագահն ըստ էության հաստատում է նրանց տեսակետների ճշմարտացիությունը և իրավացիորեն մեղադրում ԱՄՆ-ին և Եվրոմիության որոշ պետությունների՝ նրանց պատասխանատու համարելով միզրացիոն ճգնաժամի առաջացման մեջ:

Իրվատանքի է արժանի Ն. Հովհաննիսյանի «Հայ-արաբական պատմական հարաբերությունները» մենագրական ուսումնասիրությունը, որը արաբերենով լույս տեսավ Կահիրեում 2008 թվականին: Դա իր տեսակի մեջ նզակի ուսումնասիրություն է, որն ընդգրկում է պատմական մի վիթխարի դարաշրջան՝ մ.թ.ա. I դարից մինչև մեր օրերը: Նրանում լուսաբանվում են այնպիսի հանգուցային հարցեր, ինչպես հայ-արաբական հարաբերությունները միջին դարերում, հայերը արաբական պետության ծառայության մեջ, արաբական նահգան՝ վերածնունդը և հայերի դիրքորոշումն ու դերակատարումը, Հայկական հարցը, Հայոց ցեղասպանությունը և արաբների դիրքորոշումը, հայ-արաբական հարաբերությունների նոր փուլը, որն ընդգրկում է նորագույն շրջանը, երբ հայ-արաբական հարաբերություններն իրականացվում են պետական մակարդակով: Իր նախադեպը չունեցող այդ ուսումնասիրությունը առաջ քերեց մասնագետների մեծ հետաքրքրությունը: Աշխատությունը քննարկվեց Կահիրեի համալսարանում՝ արժանանալով մասնագետների քարձր գնահատականին: Ուշագրավն այն է, որ հայ պատմաբանի աշխատության եկատմամբ մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին ոչ միայն արաբ պատմաբանները, քաղաքագետները, դիվանագետները, այլև իրանական գիտական հանրությունը: Այդ աշխատությունը արաբերենից թարգմանվեց պարսկերեն և հրատարակվեց Թեհրանում 2012 թվականին՝ «Արաբների և հայերի հարաբերությունները հնագույն շրջանից մինչև այսօր» խորագրի ներքո, ինչը իր նախադեպը չունեցող երևույթ է (տես «Փեյման», 61, Թեհրան, 2012, պարսկերեն):

Հարկ է հատուկ անդրադառնալ պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի աշխատություններում քազմիցս առաջ քաշված «Հայերը արաբական պետությունների ծառայության մեջ» տեսակետին: Նա անհերքելի փաստերի հիման վրա ցույց է տվել, որ հայերը, հայ քաղաքական և ռազմական, տնտեսական և մշակութային գործիչները, տարբեր դարաշրջաններում քացառիկ դերակատարում են ունեցել

արարական պետությունների, հատկապես Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Հորդանանի պետական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում, գրավելով քարձր դիրքեր, նպաստել արարական պետությունների կայացմանը, ամրապնդմանը և զարգացմանը: Նա այդ բավականին քարոզ խնդիրը քննարկում և լուսարանում է համաշխարհային պատմության համատեքստում (Բյուզանդական կայսրության, Արաքական խալիֆայության, ցարական Ռուսաստանի, շահական Պարսկաստանի, Օսմանյան կայսրության, Խորհրդային Միության և այլն) և կատարում անսպասելի, սակայն միանգամայն հիմնավորված և տրամաբանական եզրակացություն՝ հայերը պետութենաստեղծ ազգ են, պետության զարգացման ամուր նստած է հայության գեներում և հայերն ուր զեռում, որ երկրում հաստատվում են, պետության զարգացման իրենց հետ են տանում և նրանց ներդրումն հյուրընկալ նրկրներում եղել և մնում է պետութենաստեղծ գործունեությունը: Պատմագիտության մեջ առաջին անգամ էր նման համարձակ, տակալն միանգամայն հիմնավորված, անհերքելի տեսակետ առաջ քաշվում: Եվ դա արել է հայ ականավոր պատմաբան, գիտության բարձունքները գրաված, կենդանի դասական-արևելագետ, արաքագետ Նիկոլայ Հովհաննիսյանը (տե՛ս Ն. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետությունը կայացած արդիական պետություն է և միջազգային հանրության լիիրավ անդամ, պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի ռազմագիտական հանդես՝ «Հայկական քանակ», Երևան, 3(89), 2016: «Ազգ», 13 հունվար, 2017):

Հայերի պետութենաստեղծ ազգ լինելու Ն. Հովհաննիսյանական տեսադրույքը ամենակարևոր ներդրումներից մեկն է համաշխարհային պատմագիտության մեջ:

4. ՀԱՅՈՑ ՑԵՆԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄԼԱՄԻՐՈՒԹՅՈՒՆԸ. ԱՐԱՐԿԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՆԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

Հայոց ցեղասպանության հայեցակարգային հիմնախնդիրները մշտապես գտնվել են պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում: Դրանց լուսարանությանը նա նվիրել է հետազոտությունների մի ամբողջ շարք՝ մոտ 20 մենագրություն և 100-ից ավելի գիտական հոդվածներ, որոնք լույս են տեսել տարբեր երկրներում, այդ թվում և արաքական Լի-

բանանում, Սիրիայում, Եգիպտոսում և այլն: Ուշագրավ է, որ նրա մենագրական ուսումնասիրություններից մեկը անգլերեն քննադրից թարգմանվել է թուրքերեն և հրատարակվել Ստամբուլում 2005 թ.՝ «Ermeni Soykirimı, Ermenikirim», Istanbul, 2005 («Հայոց ցեղասպանություն. Արմենոցիդ», Ստամբուլ, 2005) խորագրի ներքո՝ Թուրքիայի հայտնի մտավորական, ականավոր հասարակական գործիչ Զարաթուրուի հոգածությամբ: Այդ աշխատությանն առաջինն արձագանքեց Հրանտ Դինքը, իր խմբագրած «Ակոսում» հրատարակելով մի հետաքրքիր և արժեքավոր գրախոսական (տե՛ս Hovannisyán'in kitabı Turkçe'de, «Ağos», Istanbul, 14 Ekim, 2005, p. 1. (Հովհաննիսյանի գիրքը թուրքերեն, «Ագոս», Ստամբուլ, 14 հոկտեմբերի, 2005 թ., էջ 1)):

Հայոց ցեղասպանության հարցերին նվիրված Ն. Հովհաննիսյանի աշխատությունների մեջ իր կարևորությամբ առանձնանում է 2009 թ. հրատարակված նրա «The Armenian Genocide. Armenocide—the most genocidal genocide. In ten languages of the world», Yerevan, 2009՝ «Հայոց ցեղասպանություն. Հայասպանություն՝ Ամենացեղասպան ցեղասպանություն. Աշխարհի տասը լեզուներով՝ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, գերմաներեն, թուրքերեն, ճապոներեն, հունգարերեն, հայերեն, արաբերեն, պարսկերեն» (Երևան, 2009, 855 էջ) իր նախադեպը չունեցող հիմնարար, եզակի, կոթողային ուսումնասիրությունը, որում գիտականորեն քաղաքականորեն ընդհանուր և ընդհանուր չէր իրագործել միայն ոչ թուրք ազգություններին, առաջին հերթին քրիստոնյաներին ճուլելու կամ ֆիզիկապես ոչնչացնելու ուղիով: Թուրքական դահիճները նախընտրեցին նրանց քննազերելու քաղաքականությունը, որի առաջին զոհը եղավ հայությունը: Ահա թե ինչ է գրել այդ աշխատության հեղինակին և նրա կարևորության մասին արդի ականավոր ցեղասպանագետ, Տեղասպանագետների միջազգային ասոցիացիայի պրեզիդենտ, երուսաղեմի Հոլոքոստի և Տեղասպանության ինստիտուտի գործադիր տնօրեն, պրոֆեսոր Իսրայել Զարևին. «Իմ հարզելի պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյան: Ես խորապես շնորհակալ եմ ձեր շատ կարևոր և տպավորիչ գիրքն ինձ նվիրելու համար: Ամենից շատ ես

շնորհավորում եմ ձեզ և շնորհակալ եմ ձեզ Հայոց ցեղասպանության պատմական հիշողության մեջ ձեր մեծ ինքնատիպ ներդրման համար: Ձերն հարգանքներով Իսրայել Վ. Չարնի, Երուսաղեմ, նոյեմբեր 30, 2010» («My dear Prof. Nikolay Hovhannisyan. I thank you so deeply for the gift of your very important and impressive book. Most of all I congratulate you and thank you for what seems like a major original contribution to the historical memory of the Armenian Genocide. With warm regards, Israel W. Charny. Jerusalem, November 30, 2010»):


Հայ գիտնականի տիտանական աշխատանքի արդյունք հանդիսացող այդ բարձրարժեք մենագրությունը ԱՄՆ-ի Հարվարդի համալսարանի Ջոն Ֆ. Քենեդիի կառավարման դպրոցի գրադարանը 2010 թ. ապրիլի 30-ին ներառել է դասական ուսումնասիրությունների ցանկում՝ այդ մասին տեղյակ պահելով հեղինակին: Մի ուշադրավ փաստ եւ: ԱՄՆ-ի Հայ իրավաց խորհուրդը և «Նոր օր» շաբաթաթերթի խմբագրական խորհուրդը 2010 թ. հունիսի 17-ին Լոս Անջելեսում կազմակերպեցին Ն. Հովհաննիսյանի այդ աշխատության շնորհանդեսը, որին հրավիրված էր նաև հեղինակը: Ընտրահանդեսին մասնակցում էին և լեւի-լեցուն դասիլիճի ներկաների առջև հանդես եկան ամերիկահայ մտավորականության ակաևալոր դեմքեր, պատմաբաններ, գրականագետներ, դոկտորներ, պրոֆեսորներ, քաղաքագետներ, իրավաբաններ, մշակույթի գործիչներ, որոնք՝ որպես արժեքավոր ներդրում, շատ բարձր գնահատականներ տվեցին աշխատությանը՝ բնութագրելով այն որպես նոր խոսք Հայոց ցեղասպանության և ընդհանրապես ցեղասպանագիտության բնագավառում, որը կնպաստի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին:


Այդ աշխատությունը շատ բարձր է գնահատել ակաևալոր եզրիպտական պատմաբան, Հայկական հարցին նվիրված մի շարք արժեքավոր աշխատությունների հեղինակ, դոկտոր Մուհամմադ Ռիֆատ ալ-Իմամը: Ահա թե նա ինչ է գրել իր կարծիքում. «Մենք վարժվել ենք պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի ինքնատիպ գիտական աշխատություններին, որոնք մշտապես հարուցում են գիտական աշխարհի հետաքրքրությունը: Բայց նրա վերջին աշխատությունը՝ «Հայոց ցեղասպանություն. Արմենոցիոլ — Ամենագնացիոլային գնացիոլը. Աշխարհի տասը լեզուներով» իսկական սենսացիա էր: Դա օրիգինալ և հիմնարար աշխատություն է, մի


երևույթ, որն իր նախադեպը չունի: Դա նոր խոսք է ոչ միայն հայկական ցեղասպանության քննազավատում, այլև քնդհանրապես ցեղասպանության քննազավատում: Իրականում նա ցեղասպանագիտության հիմնադիրներից մեկն է:-

Ավանավոր գիտնական, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի պինդ մարմինների ֆիզիկայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ Վենյամին Շեխումանը, ծանոթանալով Ն. Հովհաննիսյանի աշխարհի տասը լեզուներով արարած աշխատությանը և տեղյակ լինելով Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում Թուրքիայի կառավարության մխտողական դիրքորոշմանը, գրում է. «Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի աշխատությունը մի սեղմված բրուեցք է ընդդեմ Թուրքիայի և նրա ժխտողական քաղաքականության»: Իսկ Վենեստիկում լույս տեսնող «Marco Polo Magazine» ամսագրի խմբագիր, պրոֆեսոր Ներեո Լարոնին ծանոթանալով, նրա խոսքերով ասած, «Ն. Հովհաննիսյանի հետաքրքիր աշխատությանը», 2002 թ. դիմում է հեղինակին հետևյալ խնդրանքով. «Ես պետք է խնդրեմ ձեր թույլտվությունը «Մարկո Պոլո ամսագրում» տպագրելու ամբողջ Առաջաբանը կամ նրա մի մասը»: Ստանալով դրական պատասխան՝ Ներեո Լարոնին իր ամսագրում ամբողջությամբ տպագրում է գրքի Առաջաբանը (տես «Marco Polo Magazine», Venice, № 2, 2004):

Ն. Հովհաննիսյանի գրչին պատկանող աշխատություններից խիստ ուշագրավ է նրա «Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում» (Երևան, 2002) ուսումնասիրությունը: Առաջին անգամ էր Հայոց ցեղասպանությունը քննարկվում այդ տեսանկյունից: Այս ծավալով ոչ մեծ, բայց բովանդակային առումով արժեքավոր այդ աշխատության մեջ Ն. Հովհաննիսյանը քննարկում է այնպիսի հարցեր, ինչպես գոհ և դահիճ, ցեղասպան պետություն և ցեղասպան հասարակություն, պոլիտիցիդ քաղաքական սպանություն, ցեղասպանության իրականացման մեխանիզմներ և այլն: Այդ բոլոր հարցերը նա քննարկում է հայկական նյութի հիման և հասնում տպավորիչ արդյունքների: Նա պաշտպանում և զարգացնում է «ցեղասպան պետություն» հայեցակարգը, գտնելով, որ այդպիսի պետություն էր Օսմանյան պետությունը, որտեղ իրականացվեց Հայոց ցեղասպանությունը:







Իր մի շարք աշխատություններում Ն. Հովհաննիսյանը բնութագրում է Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը և հանգում այն եզրակացության, որ Հայոց ցեղասպանությունն արդեն միջազգայնորեն ճանաչված ցեղասպանություն է (տես նրա «Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է», Երևան, 2010): Նրա կողմից քննված փաստերը և տրտևարանական եզրահանգումները հաստատում են հայ գիտնականի այս տեսակետը, որն այսօր ավելի ու ավելի մեծ պաշտպանություն է գտնում գիտական հանրության կողմից, մասնավորապես Ցեղասպանագիտության միջազգային ասոցիացիայի կողմից, որի շարքերում համախմբված են աշխարհի բոլոր ականավոր ցեղասպանագետները: 2007 թ. նրա ընդունված բանաձևերից մեկում ուղղակի արձանագրված է՝ «Հայոց ցեղասպանությունը հաստատված է միջազգային գիտական, իրավական և մարդու իրավունքների հանրության կողմից» («The Armenian Genocide is corroborated by the international scholarly, legal and human rights community»):

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Ն. Հովհաննիսյանի աշխատությունը լույս տեսավ նաև ռումիներին քարգանաությանը՝ առաջին անգամ 2012 թ., իսկ նրկորդ անգամ՝ 2015 թ.՝ Բուխարեստում: Խորամուխ լինելով ցեղասպանագիտության ֆնեոմենի ծայքերի մեջ՝ Ն. Հովհաննիսյանը կատարել է նա մի շատ կարևոր եզրահանգում: Հայտնի է, որ «ցեղասպանություն» — «գենոցիդ» տերմինի հիմնադիրը Ռաֆայել Լեմկինն է, որը դեռևս 1920-ականների կեսերից, ապա ամբողջ 1930-ական թվականներին զբաղվել է Հայկական հարցով, Օսմանյան կայսրությունում հայկական ջարդերի պատմության ուսումնասիրությամբ: Հայ գիտնականը գտնում է, որ «գենոցիդ» տերմինի Լեմկինի մտահղացման հիմքում ընկած են հայկական ջարդերի փաստերը, Լեմկինի համար հայկական իրողությունն է ծառայել նախանյութ և հիմք գենոցիդ տերմինի հայտնաբերման գործում, որը հետագայում՝ 1939-1945 թթ., նա ամբողջացնում է Գերմանիայում իրագործված հրեաների ջարդերի նյութերով, որը ստացավ «հոլոքոստ» անվանումը: Ն. Հովհաննիսյանի այդ տեսակետը շատ կարևոր հանգամանք է և համրեմ ճշմարտության պետք է նշել, որ դա, ըստ Լոթյան, Լեմկինը երբեք չի միտնել: Իր տեսակետը հաստատելու համար Ն. Հովհաննիսյանը հենվում է Ռաֆայել Լեմկինի հետևյալ խոստովանության վրա. «Ես սկսեցի զբաղվել ցեղասպանությամբ, որովհետև դա պատահել էր հայերի հետ: Ես սկսեցի ավելի ու ավելի ինձ նայեացնել գոհների տառա-

պանքների հետ» (Ն. Հովհաննիսյան, Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է):

Դոկտոր Ներսես Մկրտչյանը, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի «Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է» մեկազրույունը համարել է «Հանրագիտարան Հայոց գենոցիդի՝ Արմենոցիդի մասին» («Հայաստանի Հանրապետություն», 14 դեկտեմբեր, 2010 թ.): Նա այդ աշխատության հանրագիտարանային բնույթը կապում է այն իրողության հետ, որ նրանում ներառված են բոլոր հանգուցային հարցերն՝ իրենց բազմապիսիությանը և սպառնչ ներկայացված է Հայոց ցեղասպանության Արմենոցիդի պատմությունը: Հետաքրքիր է գրախոսողի այն դիտարկումը, որ «Գրքում ոչ միայն շարքային ցնքերգողը, այլև պատմաքան մասնագետները և թուրքագետները կգտնեն Արմենոցիդի վերաբերյալ մի շարք նոր գնահատականներ, որոնց մեջ ամենակարևորը, որ տվել է Ն. Հովհաննիսյանը, 1919–1920 թվականների թուրքական արտակարգ ռազմական ատյանի որոշմամբ Հայոց ցեղասպանության ճանաչումն է»: Եվ դոկտոր Ն. Մկրտչյանը դա համարում է «Հեղինակի մեծարժեք գյուտը, որը շարադրված է դիպուկ մեղադրական վերնագրի տակ՝ «Անհերքելի պատմական վրիպում», և ուղղված է հատկապես հայ պատմաբաններին և հայոց պետական գործիչներին, որոնք, անտեսելով թուրքական օրինական դատարանի օրինական որոշումը, նշում են, թե Թուրքիան մինչև օրս չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը»: Նա Ն. Հովհաննիսյանի գիտական նորամուծությունների շարքում առանձնացրել է ևս մի կարևոր փաստ. «Ն. Հովհաննիսյանը տվել է թուրք ժողովրդի մեջ ձևավորված սոցիալական թալանով և սպանություններով հարստացող խավի գոյության փաստը», ինչն օգնում է հասկանալու Օսմանյան կայսրությունում հայերի ոչնչացման մեխանիզմը, թուրքերի շահագրգռվածությունը դրանում և նրա սահմուկեցուցիչ մեծ ծավալները: Ոչնչաբավ է նաև գրախոսականի հեղինակի նգրափակիչ հատվածը՝ «Վաղուց էր պետք, որ մեկը հայտնվեր և ի լուր աշխարհի հայտարարեր՝ «Այո, Հայոց ցեղասպանությունը միջազգայնորեն ճանաչված ցեղասպանություն է»: Ըստ նրա, այդ մեկը եղավ Նիկոլայ Հովհաննիսյանը:

Տիպաբանորեն սույն աշխատությանը համահունչ է պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի մյուս կարևոր աշխատությունը՝ «Հայոց ցեղասպանությունը հաստատված է միջազգային գիտական, իրավական և մարդու իրավունքների հանրության կողմից» եռալեզու՝

հայերեն, օուսերեն և անգլերեն աշխատությունը, որը լույս է տեսնել 2015 թ.: Դրա յուրահատկությունն այն է, որ ա) Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունը հուզական-զգայականից տեղափոխվում է գիտական-իրավական դաշտ՝ հայեցակարգային ռազմավարական նոր մոտեցումների հիմքի վրա, բ) Հայոց ցեղասպանության ճանաչումը հետազոտվում է ինստիտուցիոնալ և ոչ կառավարական կազմակերպությունների մակարդակներով և գ) սկսվել է նոր փուլ՝ Օսմանյան կայսրությունում իրագործված Հայոց ցեղասպանության ճանաչման փուլից անցում ցեղասպանության ծանր հետևանքների վերացման և հատուցման փուլի: Եվ այդ րոլորը կատարվում է միջազգային գիտական, իրավական և մարդու իրավունքների հանրության տեսանկյունից, ինչն, ինքնին, նորություն է ցեղասպանագիտության քննազնվաբանում:

Իր բացառիկությամբ աչքի է ընկնում պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի «Հայոց ցեղասպանությունը արարական պատմագիտության քննական լույսի ներքո» մենագրական ուսումնասիրությունը, որը հայերենով լույս տեսավ Երևանում 2004 թ.: Պատմագրության մեջ առաջին անգամ այդ քննման դառնում է հատուկ ուսումնասիրության առարկա: Աշխատությունը գրված է արարական աղբյուրների, արար հեղինակների աշխատությունների՝ մենագրությունների, հոդվածների, պաշտոնական աղբյուրների հիման վրա: Դա Հայոց ցեղասպանության առանցքային հիմնախնդիրներն ընդգրկող մի ինքնատիպ հետազոտություն է, որը նորություն է թե՛ արարական և թե՛ հայկական պատմագիտության մեջ: Հեղինակը քննարկում է այնպիսի հանգուցային հարցեր, ինչպես Հայոց ցեղասպանության անդրադառնալու արարական պատմագիտության դրդապատճառները, արար հեղինակների աշխատությունների դասակարգումն ըստ քննարկվող հարցերի, արարական պատմագիտությունը Օսմանյան կայսրության երթյան վերաբերյալ, սուլթան Արդուլ Համիդի հիմնած զուլումի վարչակարգը, Հայոց ցեղասպանության նախադրյալները և պատճառները, արևմտահայերի պահանջները, Հայոց ցեղասպանության իրագործումը երիտթուրքական դահիճների կողմից՝ ըստ վիլայեթների և շրջանների և այլն: Գլխավոր հարցերից մեկը, որին հանգամանորեն անդրադարձել է հեղինակը, արարների՝ քաղաքական գործիչների, պետական պաշտոնյաների, ցեղապետների և հասարակ ժողովրդի մարդասիրական վերաբերմունքն է արարական տարածքներով անցնող հայ բռնագաղթվածների քարավանների

նկատմամբ, որոնց նրանք օգնության ձեռք մեկնեցին: Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանն այն տեսակետն է հայտնում, որ, հայ գաղթականներին արտոբյուլ արարական երկրներ, առաջին հերթին Սիրիա և Իրաք, երիտթուրքական դափն ղեկավարները վստահ էին, որ հայերի սպանող շարունակելու էին մահմեդական արարները, սակայն նրանց հույսերը չարդարացան: «Այդտեղ իր ղերը խաղաց,— ինչպես նշում է հայ արարագետը,— այն հանգամանքը, որ արաք և հայ ազգային ղեկավարների միջև դեռևս XIX դարի վերջերից հաստատվել էին բարեկամական հարաբերություններ առ այն, որ հայերի և արաքների հակառակորդը միևնույն օսմանյան լուծն է, և դա էր նրանց ընդհանուր թշնամին»: Ն. Հովհաննիսյանի այդ տեսակետը կիսում են մի շարք արաք պատմաբաններ: Այսպես, օրինակ՝ Սայիի Ջահր ալ-Դինը գրում է, որ «Ինքը լրիվ համամիտ է պրոֆ. Ն. Հովհաննիսյանի այն տեսակետի հետ, որ «Դեռևս XIX դարի վերջերին — XX դարի սկզբներին արաքական և հայկական քաղաքական միտքը հանգեց այն եզրակացության, որ արաքների և հայերի ազգային շահերը համընկնում են, որ նրանք տատալում են միևնույն օսմանական լծից և ունեն մի ընդհանուր թշնամի՝ օսմանյան քոնապետությունը, հետևաբար նրանք քախտակից ժողովուրդներ են» (տե՛ս Սայիի Ջահր ալ-Դին, Օսմանյան կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում և մեծ տերությունների քաղաքականությունը Հայկական հարցում (XIX դարի վերջին — XX դարի առաջին քառորդ), Երևան, 1994, էջ 28-29):

Մի ուշագրավ հանգամանք նա, որին անդրադարձել է պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը: Արաք պատմաբան Ռամար Դուկակին հայ-արաքական հարաբերությունները դիտարկում է փոխադարձ կապակցության մեջ և անդրադառնում է հայ պատմաբանների աշխատություններին, որոնք նվիրված են արաքների պատմությանը՝ բարձր գնահատելով այդ գործերը: Նա հատկապես ընդգծում է «Նիկոլայ Հովհաննիսյանի, Արամ Տեր-Անտոյանի, Էրվանդ Քասունիի աշխատությունները», ցանկանալով, ինչպես նշում է Ն. Հովհաննիսյանը, «ցույց տալ արաք ընթերցողին, որ ոչ միայն արաքներն են գրում հայերի պատմության վերաբերյալ, այլև հայերն են իրենց աշխատություններն ամբողջապես նվիրում արաքների առջև կանգնած հիմնախնդիրների լուսարանությանը» (Ռամար Դուկակի, Հայերը Իսլամական հանրագիտարանում, Հերթորդ, Կահիրե, 1992, պրաքերեն):

Բերված փաստերը համոզիչ կերպով հաստատում են հեղինակի այն տեսակետը, որ շնորհիվ արարների առավելակամության տասնյակ, եթե ոչ հարյուր հազարավոր հայեր փրկվեցին մահվան ճիրաններից, և եթե դա տեղի չունենար, ապա չէր լինի այսօրվա հայ սփյուռքը: Հայ հեղինակը մատնանշում է, որ անսպաշտպան հայ գաղթականներին օգնության ձեռք մեկնելու համար շատ ազնիվ և մարդասեր արարներ վճարել են իրենց կյանքի գնով, սպանվել թուրքական դահիճների ձեռքով:

Արարների հայանաչատ դիրքորոշման հարցում Ն. Հովհաննիսյանն առաջինն էր, որ հատուկ քննարկման առարկա է դարձրել Հիջազի կառավարիչ և Մեքքայի շերիֆ Հուսեյն իրն Ալի ալ-Հաշմիի մուտեցումը երիտթուրքերի ուժազործությանը հայերի ցեղասպանության հարցում: Հուսեյն իրն Ալին մեծ հեղինակություն էր վայելում համայն մուսուլմանական աշխարհում, որը պայմանավորված էր երկու գլխավոր հանգամանքներով: Առաջին, նա ուղղակիորեն սերում էր իսլամի հիմնադիր Մուհամմադ մարգարեի Կորնյշ ցեղի Հաշիմի տոհմից, և, երկրորդ, նրա կառավարման ներքո էին գտնվում մուսուլմանական աշխարհի երկու ամենազխավոր սրբակենտրոնները՝ Մեքքան և Մադինան: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, 1916 թ. հունիսին, նա իր չորս որդիների՝ Ալիի, Աբդալլահիի, Ֆեյսալի և Ջեյդի հետ միասին գլխավորեց հակաթուրքական ապստամբությունը, որը նշանակալի դեր խաղաց Օսմանյան կայսրության կործանման և օսմանյան չորսհարյուրամյա տիրապետությունից արարների ազատագրման գործում: Արաբական սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը հիմք են հանդիսացել պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի համար նշելու, որ Հուսեյն իրն Ալին 1916-1917 թթ. մուսուլմանական աշխարհի ղեկավարներին հասցնագրված իր ուղերձներում խստորեն քննադատել է երիտթուրքական կուսակցության և Օսմանյան կայսրության ղեկավարությանը, հատկապես Թալեաթին, Էնվերին և Ջեմալին, արարների և ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում և հայերի նկատմամբ նրանց որդեգրած ուժազործ քաղաքականության համար: Ն. Հովհաննիսյանն առանձնացրել է հատկապես երեք հանգամանք, որոնք դրդել են Հուսեյն իրն Ալիին հանդես գալ ընդդեմ օսմանյան քաղաքականության: Առաջին, կայսրության բոլոր ժողովուրդներին թուրքացնելու երիտթուրքերի փորձերը, երկրորդ՝ թշնամական դիրքորոշումը արարների և աղաք լեզվի հանդեպ, որը մուսուլմանների սրբազան գրքի՝ Կորանի (Դուրանի) լեզուն է, և,

երրորդ, պատերազմի տարիներին հայերի զանգվածային սպանողը: Մեքքայի շերիֆի կարծիքով, երիտթուրքերի այդ քաղաքականությունը հակառակ էր իսլամի սկզբունքներին, և նրանք իրենց կատարած ոճիրներով «կապերը խզել են իսլամական աշխարհի, սրբազան Կորանի և սուննայի հետ»: Ինչպես նշում է Ն. Հովհաննիսյանը, դրանք ամենածանր մեղադրանքներն էին, որ կարելի էր ներկայացնել որևէ իսլամական երկրի: Միաժամանակ Ն. Հովհաննիսյանը գտնում է, որ արաբական իսլամը շատ սկզբունքային հարցերում տարբերվում է թուրքական իսլամից: Ըստ նրա, արաբական իսլամը խարսխված է հումանիտական սկզբունքների վրա, հավատարիմ է նրա հիմնարար, մարդասիրական դրույթներին, ինչն արտացոլում է արաբների ավելի քարձր քաղաքակրթական մակարդակը, միևնույն հետամնաց, քոչվորական թուրքական ցեղերի դավանած իսլամը դաժան էր, ներծծված էր ատելությանը Օսմանյան կայսրության քոլոր ոչ թուրքական ժողովուրդների, այդ թվում և մուսուլման արաբների հանդեպ՝ նրանց համարելով ուայյաներ՝ ստրուկներ, ընդունելով կայսրությունում ազգային հարցի լուծման սպանդային տարրերակը (տես Ն. Հովհաննիսյան, «Մերձավոր Արևելքի և Սիրիայի հայ համայնքները և նրանց հեռանկարները», Երևան, 2015, 53 էջ (The Armenian Communities of the Middle East and Syria and their perspectives, Yerevan, 2015, 53 p.)):

Հուսելն իրն Ալին նման արմատական եզրահանգման էր հասել նաև երիտթուրքական դահիճների կողմից Հայոց ցեղասպանության իրագործման հետևանքով: Եվ նա իր այդ տեսակետը չի քաքցրել և խոսել է հրապարակայնորեն: Նա այդ մասին գրել է 1916 թ. իր որդուն՝ Ֆեյսային և էմիր Աբդ ալ-Ազիզ ալ-Ջարրային ուղղված նամակներում: Երանք ղեկավարում էին արաբական ապստամբական քանակի գործողությունները սիրիական ռազմաճակատում: Այդ նամակները մատչելի են եղել Ն. Հովհաննիսյանին: Հուսելն իրն Ալին իր նամակում պահանջում է նրանցից ամեն տեսակի օգնություն ցույց տալ հայ բռնազաղթյալներին և «պաշտպանել նրանց այնպես, ինչպես դուք պաշտպանում եք ձեր անձը, ձեր երեխաներին և ձեր ունեցվածքը, որովհետև նրանք մուսուլմանների զինմիներն (հովանավորյալներ — *խուֆ.*) են» (տես Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, Հ. II, Երևան, 2004: Նույնի՝ Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո, Երևան, 2004: Բրուխեսոր Նիքոլայ

Հովհաննիսյան, Իրադար ալ-Արման Թահթա ալ-Ձու ալ-Թահլիլի ալ-Արաբի, Հայիր, 2015, արաբերեն):

Արաբների ցուցաբերած օգնությունն ու օժանդակությունը հայ գաղթականներին պատմության մեջ աննախադեպ երևույթ և պատահականություն չէ: Հայերը գտնում են, որ «Արաբների անունը հայերի պատմության մեջ կզրվի ոսկե տառերով»:

Արաբական պատմագիտության կարևոր յուրահատկություններից մեկը Ն. Հովհաննիսյանը համարում է այն իրողությունը, որ արաբ պատմաբանները սկզբից ենթ 1915 թ. հայերի կոտորածները Օսմանյան կայսրությունում ճանաչել են որպես ցեղասպանություն: Արաբական պատմագիտությունը, ինչպես մատենանշում է հայ գիտնականը, Հայոց ցեղասպանությունը ճանաչել է որպես XX դարի առաջին ցեղասպանություն, համարելով այն «XX դարի մարդկության պատմության սև էջը» և «հանցանք մարդկության դեմ»: Այդ հայեցակարգային դրույթները, ինչպես նշում է պրոֆեսոր Հովհաննիսյանը, շատ հստակ են արտահայտված արաբ պատմաբաններ Ֆուադ Հասան Հաֆիզի, Միվան ալ-Մուդալաբի, Մուսա Պրենսի, Մուհամմադ Բիքաթ ալ-Իմամի, Ամին Սահիի, Սալիհ Ջահր ալ-Դինի, Սամիր Արաշի, Նաժմ ալ-Ցաֆիի, Իլյաս Ջանանիրիի, Էմիլ Թումաշի, Մալիհ Ջիհադի, Յուսուֆ Ցազրենի և արաբ այլ հեղինակների աշխատություններում:

Ցեղասպանության հարցերին ավելում Ն. Հովհաննիսյանի աշխատությունների ազդեցության տակ Հայոց ցեղասպանության հանդեպ զգալի հետաքրքրություն առաջացավ հարավարևելասիական մի շարք երկրների պատմաբանների և քաղաքագետների մոտ, մասնավորապես Ճապոնիայում և Հարավային Կորեայում: Ճապոնիայում այդ ուղղությամբ մեծ աշխատանք է կատարում իրավաբան-միջազգայնագետ, Աիծի համալսարանի պրոֆեսոր Հիրոյուսի Սեզավան: Նա անգլերենից ճապոներեն է թարգմանել Ն. Հովհաննիսյանի «Հայոց ցեղասպանություն-Արմենոցիդ» աշխատությունը, որը լույս է տեսել Ճապոնիայում 2006 թ.: Հիրոյուսի Սեզավան նաև հեղինակն է «Հայերի մոռացված ցեղասպանությունը» աշխատության, որի առաջարկում, ինչպես հայտնում է հեղինակը, «Մույն գիրքն առաջինն է, որ անդրադառնում է հայերի ցեղասպանությանը»: Այդ եույն առաջարկում հեղինակը նշում է, որ ինքը օգտվել է մի շարք գիտնականների, այդ թվում և Նիկոլայ Հովհաննիսյանի, աշխատություններից, ընդգծում է, որ հայ գիտնականների «միջնորդությամբ ինձ հաջողվեց Հայաստանի գիտու-

բյուենների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանից ստանալ երեք խիստ կարևոր քարտեզ այս գրքում տեղադրելու համար: Ռեզում եմ իմ երախտագիտությունը հայտնել: Այդ մասին միջնորդել էր նաև ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը: Պրոֆեսոր Սեզավան Երևան իր այցելությունների ժամանակ մշտապես հանդիպել է Ն. Հովհաննիսյանին և նրա հետ քննարկել ցեղասպանության վերաբերյալ իրեն հուզող հարցեր:

Ինչ վերաբերում է կորեներենով հրատարակությանը, ապա այն քարգմանվել է Ն. Հովհաննիսյանի «Հայոց ցեղասպանությունը. Արմենոցիդ» անգլերեն աշխատությունից և լույս ընծայվել 2011 թ. Կորեայում (Կորեայի Դեմոկրատական Հանրապետություն, Սեուլ):

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը հանգամանորեն անդրադարձել է «Արմենոցիդ» եզրի ծագման հարցին, ընդգծելով, որ դրա հեղինակը լիբանանցի արաբ հետազոտող, պատմաբան Մուսա Պրենսն է (տևս Մուսա Պրենս, Մի անպատիժ ցեղասպանություն. Արմենոցիդ, Լիբանան, 1975 — Moussa Prince, Un genocide impuni: L'Armenocide, Lebanon, 1975): Ն. Հովհաննիսյանն իրավացիորեն գտնում է, որ «Մուսա Պրենսը «Արմենոցիդ» տերմինը հայտնագործել է՝ հենվելով Ռաֆայել Լեմկինի հայտնագործած «գենոցիդ» տերմինի վրա՝ նրա անալոգիայով»: «Արմենոցիդի» հայերեն համարժեքը Ն. Հովհաննիսյանը համարում է «Հայասպանությունը»:

Մուսա Պրենսը Արմենոցիդը համամատելով այլ ցեղասպանությունների հետ, ինչպես նշում է Ն. Հովհաննիսյանը, նկն է այն եզրակացության, որ «Արմենոցիդը ամենագենոցիդային գենոցիդն է»:

Հարկ է նշել, որ Ն. Հովհաննիսյանը մեծ վաստակ ունի «Արմենոցիդ» եզրը և նրա ամենագենոցիդային գենոցիդ լինելու հանգամանքը լայնորեն տարածելու, շրջանառության մեջ դնելու և գիտական աշխարհի սեփականությունը դարձնելու գործում: Բացի այդ, նա իր ներդրումն է ունեցել «Արմենոցիդը ամենագենոցիդային գենոցիդը» հասկացության փակագծերի քաղցման և մեկնաբանման մեջ: Անա այդ հարցում հայ պատմաբանի վերլուծական մոտեցումը, ելնելով այն իրողությունից, որ «Արմենոցիդը կամ հայասպանությունը մի քանի կողմերով տարբերվում է հետագայում այլ երկրներում և այլ ժողովուրդների նկատմամբ կիրառած ցեղասպան քաղաքականությունից և արդյունքներից:

Առաջին. Հայոց ցեղասպանությունն իրագործվեց հայերի քնորանում՝ Արևմտյան Հայաստանում:

Երկրորդ. նրա իրագործողները եղան ոչ բնիկները, եկվորները՝ բուրքերը, որոնք գրավել էին Հայաստանի արևմտյան մասը:

Երրորդ. Հայոց ցեղասպանությունն Արևմտյան Հայաստանում ոչ թե օջախային էր կամ սահմանափակ՝ տարածքային և քնակչության թվաքանակի առումով, այլ ամբողջական, տոտալ քնույք էր կրում, որն ընդգրկում էր համայն Օսմանյան կայսրությունը՝ հյուսիսից հարավ և արևելքից արևմուտք:

Չորրորդ. ցեղասպանության հետևանքով արևմտահայությունը հայրենիք կորցրեց, զրկվեց իր քնորանից: Արևմտյան Հայաստանը դառարկվեց իր բնիկ ազգաքնակչությունից՝ հայերից, որոնց տեղում՝ նրանց հայրենիքում հաստատվեցին օտարները՝ բուրքերը և քրդերը:

Հինգերորդ. հայությանը մնաց նրա պատմական հայրենիքի ընդամենը մեկ տասներորդը:

Վեցերորդ. ցեղասպանությունից վրկված հայերը, հանգրվանելով աշխարհի տարբեր երկրներում, դրեցին ժամանակակից հայ սփյուռքի կազմավորման հիմքերը: Դրա հետևանքով առաջացավ յուրահատուկ իրողություն՝ սփյուռքահայությունը թվաքանակով այսօր գերազանցում է ամենայն հայոց պետությունում՝ Հայաստանի Հանրապետությունում քնակվող հայությանը:

Այս բոլորը միասին հիմք է տալիս ասելու, որ Արմենոցիոլը ամենազենոցիդային զենոցիդն է՝ (Նիկոլայ Հովհաննիսյան, Հայոց ցեղասպանությունը աղաքական պատմագիտության քննական լույսի ներքո, Երևան, 2004, էջ 163-164):

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանն իր «Հայոց ցեղասպանությունը արարական պատմագիտության քննական լույսի ներքո» աշխատությունում լուսարանել է ևս մի շատ կարևոր հարց, որին հատկացրել է առանձին գլուխ՝ «Հայ վրիժառուների առաքելության զնահատականը աղաքական պատմագրության մեջ»: Խոսքը Հայոց ցեղասպանության գլխավոր հանցագործ դահիճների մասին է, որոնց օսմանյան դատարանը 1919 թ. դատապարտել էր մահվան: Սակայն նրանք հաջողացրել էին ճողալից և ապաստան գտնել տարբեր երկրներում: Այսպիսով՝ ինչպես գրում է Ն. Հովհաննիսյանը, «Թուրքական դատարանի որոշումը մնաց թրքի վրա և ի կատար չածվեց: Ստեղծված պայմաններում Թուրքիայի դատարանի օրինական որոշումը կատարելու առաքելությունը և

ծանրությունն իրենց ուսերի վրա վերցրեցին հայ ժողովրդական վրիժառուները»: Հայերն իրականացրին «Նեմեսիս» գործողությունը, որի շրջանակներում նրանց գնդակից սպանվեցին Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Սայիդ Հալիմին, Շաքիր Բեհաեդդինը, Ազըմին և այլք: «Արաք պատմաբանները, — ինչպես նշված է հայ արաբագետի աշխատությունում, — հայ վրիժառուների սխրանքը գնահատել են որպես հերոսություն, արդարացի պատիժ, նրանց համարելով իսկական ֆիդայիներ, որոնք իրենց նվիրել են արդար և սուրբ գործի: Նրանք այդ հարցին մոտեցել են ոչ միայն հայության, այլև արաբների ողբերգության տեսանկյունից»: Ն. Հովհաննիսյանն ի նկատի ունի այն հանգամանքը, որ ըստ արաք պատմաբանների և արաբական աղբյուրների, երիտթուրքերը ծրագրել էին Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի ցեղասպանության հետ միասին իրականացնել նաև արաբների ցեղասպանությունը և կախաղան հանեցին արաբական հայրենասեր ազգային գործիչների սերունդը: Սակայն արաբները չկարողացան պատժել երիտթուրքական դահիճներին: Ուստի արաք պատմաբանները՝ Ֆուադ Հասան Հաֆիզը, Ամին Սայիդը, Սամիր Արաշը և այլք, ինչպես նշում է Ն. Հովհաննիսյանը, «...զտնում են, որ հայ վրիժառուները վրեժ լուծեցին նաև արաբների փոխարեն»: Արաք պատմաբան Ասադ Դադիրը իր «Արաբական ապստամբությունը» գրքում զետեղել է Պետրոս Տեր-Պողոսյանի և Ծաղիկյանի համատեղ լուսանկարը, որի տակ գրված է. «Հայ հերոսներ Պետրոս Տեր-Պողոսյան և Ստեփան Ծաղիկյան, որոնք սպանեցին ծովակալ Ջեմալ փաշային Թիֆլիս քաղաքում 1922 թ.» վրեժ լուծելով մնկուկնս միլիոն հայ նահատակների և արաք նահատակների համար»:

Հայ արաբագետի կարծիքով՝ «Արաբների նման մոտեցումը իր նախադեպը չունեցող ֆենոմեն է»:

Ն. Հովհաննիսյանի աշխատությունը, որպես նորություն և իր նախադեպը չունեցող ինքնատիպ ուսումնասիրություն է գնահատել քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիան, որի ընդարձակ վերլուծականը տպագրվել է հայերեն (ՀՀ ԳԱՄ «Գիտություն», № 11, 2011) և ռուսերեն («Голос Армении», 13 декабря, 2011) լեզուներով:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի «Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո» արժեքավոր և ինքնատիպ աշխատությունը, որը հրատարակվել է 2004 թ. հայերեն, 2005 թ.՝ անգլերեն, 2009 թ.՝ պարսկերեն, 2011 թ.

թարգմանվել է արաբերեն և հրատարակվել Կահիրեում՝ Սահար Թուֆիկի թարգմանությամբ: Արաբերեն տարբերակը սպառվել է, մինչդեռ նրա պահանջարկը եղել է մեծ: Եվ ահա, 2016 թ. Հալեպում, կրկին արաբերեն, հրատարակվում է այդ աշխատությունը, սակայն այս անգամ արդեն Ալեքսանդր Քեչիչյանի թարգմանությամբ, որը հաղորդելով այդ մասին հեղինակին գրում է. «Հարգելի պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյան: Ես թարգմանել եմ ձեր հոլանդալ գիրքը»: Նման արտակարգ հետաքրքրությունը հայ գիտնականի աշխատության հանդեպ խոսուս վկայությունն է նշված ուսումնասիրության և նրանում քննարկված հարցերի կարևորության մասին:

Կարևոր է և քննատիկ առումով նորություն Հայոց ցեղասպանությանը նվիրված պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի վերջին մենագրական ուսումնասիրությունը՝ «Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը. Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում, Երևան, 2016»: Այդ աշխատությունն առաջին փորձն է մասնագիտորեն ուսումնասիրելու հայ-քրդական հարաբերությունների բնույթը՝ օսմանյան կառավարողների հակահայկական քաղաքականության ետևախորքում: Հեղինակը ցույց է տվել քրդերի մասնակցությունը Օսմանյան կայսրությունում նրխորոքական դահիճների իրականացրած Հայոց ցեղասպանությանը, երբ նրանք կանգնեցին թուրք դահիճների կողքին, քացահայտել քրդական օսմանամետ և հակահայկական դիրքորոշման քաղաքական, սոցիալ-տնտեսական և կրոնական դրդապատճառները: Նա հատուկ անդրադառնում է Արևմտյան Հայաստանի տարածքների նկատմամբ քրդական հավակնություններին և քննարկում քրդական գործոնը՝ որպես լուրջ խոչընդոտ Հայկական հարցի լուծման ճանապարհին: Մենագրությունում ներկայացված է Արևմտյան Հայաստանի հիմնախնդրի կարգավորման հայ մասնագետի հայեցակարգը և այդ կարգավորման հնարավոր տարբերակները՝ Արևմտյան Հայաստանի հայերի վերադարձն իրենց քնակավայրերը, տարածքային ինքնավարություն, մշակութային ինքնավարություն, ֆինանսական-նյութական փոխհատուցում՝ որպես միջանկյալ տարբերակ, Արևմտյան Հայաստանի անկախության կամ Հայաստանի Հանրապետության հետ միավորվելու տարբերակը՝ որպես իդեալական տարբերակ:

Ահա այսպիսին են հայ պատմաբանի պատկերացումներն այդ կնճոտ հարցի կարգավորման վերաբերյալ:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի այդ նոր մենագրությունը լայն արձագանք գտավ գիտական շրջանակներում, որոնք այն ընկալեցին որպես խիստ այժմեական, համարելով այն հայեցակարգային, որը ստեղծված պայմաններում կարող է դուռ բացել հայ-քրդական հարաբերությունների կարգավորման և Թուրքիայի տարածքում գտնվող հայկական հողերը հայերին վերադարձնելու և հայկական պետականությունը վերականգնելու տարրերակի առջև: Այդ հարցերը մասնագետների կողմից ենթարկվեց մանրագնին ցննարկման երևանում՝ հատուկ այդ նպատակով Ռամկավար ազատական կուսակցության ղեկավարության կողմից գումարված հավաքույթում և Գյումրիի Մ. Նայրանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի գիտական խորհրդում՝ արժանաւայով քարձր գնահատականի: Նրան անդրադարձավ հայկական մամուլը, առանձին հոդվածներով հանդես եկան ՀՀ ԳԱՍ քոջակից անդամ, դոկտոր Ա. Խառատյանը և սրատական գիտությունների քնննաժող Արամ Սաֆարյանը, նշելով, որ առաջին անգամ է պատմագիտության մեջ գրվել մի աշխատություն, որը հստակություն է մտցնում հայ-քրդական փոխհարաբերությունների մեջ և կոնկրետ ուղիներ նշում դրանց կարգավորման համար՝ նկատի ունենալով դրանց հեռանկարները: Գիտական հանրության հետաքրքրությունն այդ հարցի նկատմամբ այնքան մեծ էր, որ աշխատությունը հայերենից թարգմանվել է թուրքերեն (թարգմանիչ՝ Պետրոս Զավիկյան) և հրատարակվել «Ազգ» շաբաթաթերթի նախաձեռնությամբ և Հայաստանի ՌԱԿ-ի հոգածությամբ:

**Տ. ԱՐՄԲԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԷՎ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՍԼԱՄԻ ՌԻՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆԸ:
ՆԻԿՈՒԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ԻՍԼԱՄԱԳԻՏԱԿԱՆ
ՌԻՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
ՀԱՏԱՏԱՆՈՒՄ**

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի աշխատությունները, նվիրված արաբական զադափարախոսության ուսումնասիրությանը արաբների անկախության նվաճման և սուվերեն պետություններ ստեղծելու դարաշրջանում, որն ընդգրկում է մոտ մեկդարյա ժամանակահատված՝ 1918–2016 թվականները: Դա մի քարդ, իսկ կթն նկատի ունենանք արևելյան հասարակությունների յուրահատկություննե-

րը, եան վերին աստիճանի խճողված քնագավառ է, որը մեծ դժվարություններ է ստեղծում հետազոտողի համար: Դրա համար երանք սովորաբար խոսափում են անդրադառնալ նման հարցերի: Դրո՞՞քեսոր Լիկոլայ Հովհաննիսյանն այն բանից մեկն է, որ չի ընկրկել նման բարդությունների առջև:

«Անկախությանը նախորդող տարիներին,— ինչպես նշում է Ն. Հովհաննիսյանը,— արաքական քաղաքագիտական միտքը գլխավորապես կենտրոնացված էր միասնական արաքական պետություն վերականգնելու գաղափարի վրա»: «Որոշ ուժեր,— նկատում է հայ պատմաբանը,— հատկապես Սիրիայում և Իրաքում, երազում էին անզավ խալիֆայության ստեղծման մասին: Կաշին եան Լամարքագիայի՝ Ալալկենտրոնացման, կողմնակիցներ, որոնց դիրքերը քավականին ուժեղ էին: Իսկ Սաուդյան Արաքիան կառավարող Հաշիմյանների դինաստիան կանգնած էր մեկ միասնական արաքական թագավորության ստեղծման դիրքերում՝ Մեքքայի Հաշիմյանների թագի ենթքո»: «Պատմական այդ դարաշրջանում,— ընդգծում է Ն. Հովհաննիսյանը,— արաքական իրականությունում տիրապետող էին հակազաղութային զաղափարախոսության՝ օտարերկրյա տիրապետությունից ազատագրման, անկախության նվաճման և սուվերենության հաստատման տարաբնույթ հայեցակարգեր»:

Սակայն օսմանյան տիրապետության տապալումից հետո այդ տեսակետները հողս ցնդեցին: Ն. Հովհաննիսյանի կարծիքով՝ մեկ միասնական արաքական պետության ստեղծմանը, լինի խալիֆայություն, թե թագավորություն, խանգարեցին արևմտյան տերությունները, մասնավորապես Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, որոնք արաքական նրկրների վրա իրենց տիրապետությունը հաստատեցին մանդատի և պրոտեկտորատի ձևով: Դրոտեկտորատների և մանդատների համակարգի վերացումից հետո, արաքական նրկրները հանդես եկան որպես առանձին, ինքնիշխան պետություններ, որոնք, որպես գլխավոր գաղափարախոսություն, որդեգրեցին արաքական ազգայնականությունը: Սակայն դա, երա կարծիքով, դրսևորվեց յուրահատուկ ձևով: Տիրապետող դարձավ «արաքական միասնության» դոկտրինան՝ անկախ և սուվերեն արաքական պետությունների փուլ առ փուլ միավորումը և, ի վերջո, մեկ արաքական միասնական պետության ստեղծումը: Դա դարձավ զաղափարական այն հիմնական դրոշը, որի ենթքո փորձ արվեց համախոթել արաքական նրկրներին: Դրա բարձրակետը

հանդիսացավ 1958 թ. Եգիպտոսի և Սիրիայի միավորումը և Արաբական Միասնական Հանրապետության ստեղծումը: Սակայն այդ միավորումը նրկար կյանք չունեցավ և 1961 թ. լուծարվեց, ինչը, Ն. Հովհաննիսյանի բնորոշմամբ, ընդհանրապես ծանր հարված եղավ արաբական միասնության գաղափարին: Դրան հաջորդած մյուս փորձերը նույնպես ձախողվեցին, և ինչպես նշում է նա, արաբական միասնության՝ որպես պետական միավորման տեսակ, այլևս չի քննարկվում: Հայ արաբագետի կարծիքով՝ դրան նպաստեց նրա կողմից քաջահայտված արաբական երկրների անհամաչափ զարգացման քաջատիկ ներույթը, որի մասին արդեն խոսվել է. և արաբական երկրների կողմից զարգացման տարբեր ուղիների ընտրությունը: Հրապարակի վրա հայտնվեցին գաղափարական այլ ուղղություններ, որոնք խարսխված էին ոչ թե արաբական ազգայնականության, այլ սոցիալական հայեցակարգերի վրա: Դրանց թվում հայ արաբագետն առանձնացնում է «Ազգի միամուլ լինելու», «Ոչ շահագործողական քրոթուագիայի», «Ինֆիթահի»՝ «Բաց դռների քաղաքականության», «Իսլամը՝ որպես քաղաքական և սոցիալ-տնտեսական գաղափարների աղբյուր» և այլ տեսությունները:

Ն. Հովհաննիսյանն իր մի շարք աշխատություններում անդրադառնում է «արաբական սոցիալիզմի» տեսությանը, որը լայն տարածում գտավ արաբական մի շարք երկրներում՝ Եգիպտոսում, Սիրիայում, Իրաքում, Եմենում, Թունիսում, Ալժիրում, Սուդանում, Լիբիայում, և պաշտոնապես հռչակվեց որպես նրանց պետական քաղաքականություն: Նա իր աշխատություններում ցույց է տվել, որ արաբական սոցիալիզմը չպետք է շփոթել գիտական սոցիալիզմի հետ, նրանց միջև կային մեծ և սկզբունքային տարբերություններ, անգամ լուրջ հակասություններ: Հայ հեղինակը գտնում է, որ այդ ուղղությունը ևս իրեն չարդարացրեց, և Եգիպտոսը, Իրաքը, Սուդանը, Ալժիրը, Եմենը, Լիբիան տարբեր հանգամանքների բերումով հրաժարվեցին արաբական սոցիալիզմից:

Արաբական գաղափարախոսության հարցերը քննարկված են պրոֆեսոր Ն.Ֆիլոյայ Հովհաննիսյանի «Արաբական երկրների պատմության» քառահատորյակի երրորդ և չորրորդ հատորներում, «Հեղափոխական պրոցեսը արաբական աշխարհում» մենագրությունում, «Արաբական սոցիալիզմի էությունը», «Հեղափոխական-դեմոկրատական սոցիալիզմը և նրա հարաբերակցությունը ուտոպիստական և գիտական սոցիալիզմի հետ», «Ազգային դեմոկրատական հեղափոխությունների մասին» և այլ հոդվածներ:

բում, որոնք իրենց ընույրնով, հարցադրումներով և մեկնաբանութիւններով նորոգւում էին պատմագիտութեան մեջ:

Պրոֆեսոր Եկեղեցւոյ Հովհաննէականը բազմիցս այն տեսակետն է արտահայտել, որ արաբագետը չի կարող որոշ չափով նաև իսլամագետ չլինել: «Դա, — նշում է նա, — հիմնված է այն իրողութիւնների վրա, որ արաբական աշխարհն է իսլամի հայրենիքը, արաբներն են աշխարհին պարզելի իր ազդեցութեամբ և տարածվածութեամբ համաշխարհային երկրորդ կրօնը՝ իսլամը, և նրանց արաբական գիրքը՝ Կորանը, որը գրված է արաբերեն լեզվով»:

Իսլամագիտութեան հարցերին պրոֆեսոր Եկեղեցւոյ Հովհաննէականն անդրադարձել է իր գիտական գործունեության ողջ ընթացքում, և ուսումնասիրել նրա հիմնախնդիրները ա) պատմական կտրվածքով և բ) արդիական իրողութիւնների տեսանկյունից:

Պատմական կտրվածքով նա անդրադարձել է այնպիսի հանգուցային հարցերի, ինչպէս իսլամի տոնդժման ևափապայմանները, նրա հիմնադիր, Ալլահի առաջալս Մուհամմադի կյանքն ու գործունեությունը, Կորանի տեղծումը, նրա կառուցվածքը և կանոնակարգումը, իսլամի գլխավոր դոգմաները (սուննիզմ, չիիզմ, շարիաթ, մազհաթ), այդ դոգմաների վրա հիմնված արաբական պետության՝ Արաբական խալիֆայութեան կազմավորումը, իսլամի վերածումը համաշխարհային կրօնի և այլև: Այդ հարցերը հայ արաբագետը հիմնականում լուսարարել է իր «Արաբական երկրների պատմություն (VII դ. — 2005 թ.)» քառահատորյակի առաջին հատորում: Այդ հատորում նա անդրադարձ է կատարել մի վերին աստիճանի կարևոր հարցի՝ կապված հայ-արաբական առնչությունների հետ: Միս թն ինչ է գրել նա այդ մասին: Երեսուզեմում ընակույթուն հաստատած հայ համայնքի և հայ եկեղեցու ղեկավարը՝ Արաբահանը, կանխատեսելով արաբների մտտակա ներխուժումը Երուսաղեմ, Հանապարհորդում է Մեքքա, հանդիպում Մուհամմադ մարգարեի հետ և նրանից ստանում հրովարտակ (Մեծ Մանչուր), որը երաշխավորում էր Երուսաղեմում ընակվող հայերի կյանքի և գոյքի ապահովություն, իրենց եկեղեցիներն ու աղոթատեղիներն ունենալու, իրենց կրօնն ազատորեն դառնալու և եկեղեցական ծրարկատարություններ կատարելու իրավունք, որի դիմաց հայերը պետք է միայն հարկ վճարեին: Միաժամանակ մարգարեն Հանապում է հայ եկեղեցու իրավունքները Երուսաղեմի այն բոլոր սրբատեղերի վրա, որոնք գտնվում էին նրա վերահսկողության տակ: Հետագայում այդ երաշխիքներն ու իրավունքները տարածվում են ամբողջ հայութեան վրա, նրանից

օգտվում էին քոլոր հայ քրիստոնյաները, անկախ նրանց քնակության վայրից: Այդ քոլորը վկայված է արաբական և հայ պատմիչների աղբյուրներում, արաբական և նվրոպական, ռուսական և հայ պատմաբանների աշխատություններում: «632 թ. Մուհամմադ մարգարեի մահից հետո, — նշում է Ն. Հովհաննիսյանը, — նրա հաջորդները՝ Օմար խալիֆան, իր նոր հրովարտակով հաստատում է Մուհամմադ մարգարեի քոլոր այն երաշխիքները, որ տրվել էր Երուսաղեմի հայությանը: Նույն կերպ է վարվում նաև Եգիպտոսի և Սիրիայի տիրակալ, սուլթան Սալաի աղ-Դինը, որը նույնպես ճանաչում է Ալլահի առաքյալ Մուհամմադ մարգարեի հայերին շնորհած երաշխիքները և արտոնությունները» (1169–1193 թթ.) (տես Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, I, Արաբները VII դարից մինչև 1516 թ., Երևան, 2003, էջ 88):

Իսլամի պատմական կտրվածքով ուսումնասիրության շրջանակներում, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանն իր աշխատություններում զգալի տեղ է հատկացրել գիտության, գիտական ուղղությունների զարգացման հարցերին: Նա գտնում է, որ սկսած IX դարից մեծ վերելք է ապրում արաբական գիտությունը, ընդարձակվում և կոնկրետացվում է «գիտություն» հասկացությունը, որը հիմք է տալիս արդեն խոսել գիտության զարգացման փուլերի մասին: Այդ հիման վրա հայ գիտնականը գտնում է, որ արաբական գիտության զարգացման առաջին փուլն ընդգրկում է վաղ իսլամի շրջանը, երբ գլխավոր խնդիրը իսլամի՝ որպես նոր կրոնի օրինաչափ լինելու հիմնավորումն էր, երբ անհրաժեշտ էր առաջին, նախնական գիտելիքներ տարածել իսլամի, միաստվածության, մարգարեի, նրա հրաշագործությունների, Կորանի, սուննայի, հադիսների մասին և այլն: Փորձեր են կատարվում լուծել գիտական մեթոդոլոգիայի հարցերը, գտնելով, որ յուրաքանչյուր գիտական ուղղություն պետք է մշակի իր մեթոդը, կիրառվում է գիտական վերլուծական մեթոդը և այլն: Միջնադարյան արաբ գիտնականների շարքում, որպես ամենախոշորների, Ն. Հովհաննիսյանը նշում է արաբական փիլիսոփայության հիմնադիր ալ-Կինդիին (IX դ.) և Իբն Ռուշդիին (XII դ.):

Ինչ վերաբերում է իսլամագիտական ուսումնասիրություններին՝ արդիական իրողությունների, մասնավորապես, քաղաքական իսլամի հիմնախնդիրների տեսանկյունից, ապա այստեղ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանն ևս ունի խոշոր, կարելի ասել, ինք-

նատիպ ներդրում, որին նվիրված են նրա մի քանի աշխատություններ և զեկուցումներ:

Իսլամի հարցը կամ, ինչպես Ն. Հովհաննիսյանն է նշում, «Իսլամական բումը» սրվեց և իր գագաթնակետին հասավ Իրանի 1979 թ. իսլամական հեղափոխությունից և Իրանի Իսլամական Հանրապետության հռչակումից հետո: Դա վերածվեց զլորալ հարցի: Հայ ականավոր արևելագետը լուրջ ներդրում է ունեցել իսլամի ակտիվացման, դրա պատճառների և հետևանքների բացահայտման, քաղաքական իսլամի հայեցակարգի, իսլամի զլորալ քաղաքականության այդ բովում և «Իսլամի քաղաքականացման և քաղաքականության իսլամացման» հայեցակարգի ուսումնասիրության և մշակման գործում, անդրադարձել իսլամական հեղափոխության ղեկավար այաթոլլահ Խոմեյնիի ֆենոմենին, իսլամական հեղափոխության արտահանման Իրանի ղեկավարության քաղաքականությանը և այլ հարցերի: ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի ղեկավարության ներքո ստեղծվեց իսլամական հարցերին նվիրված հատուկ հանձնաժողով, որը պետք է հատուկ զբաղվեր իսլամագիտական հարցերով՝ համաժողովների գումարում, աշխատությունների հրատարակում և այլն:

Նիկոլայ Հովհաննիսյանը նշանակվում է իսլամագիտական ուսումնասիրությունների և աշխատանքների համակարգող Հայաստանի Հանրապետությունում:

Հենց նրա նախաձեռնությամբ և ղեկավարությամբ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արարագետներից, քուրբագետներից և իրանագետներից կազմված հեղինակային կոլեկտիվը, որի կազմի մեջ մտնում էր նաև նա, պատրաստեց «Իսլամը արդի Մերձավոր և Միջին Արևելքի երկրների քաղաքական կյանքում» կոլեկտիվ մենագրությունը, որը հրատարակվեց 1986 թ.: Այդ քննադատիկ նրա մի շարք հոդվածներ հրատարակվել են նաև Երևանի և Մոսկվայի գիտական զանազան հանդեսներում՝ դառնալով իսլամագիտական ուսումնասիրությունների ճանաչված ղեկավարներից մեկը: Նրա առաջարկով իսլամագիտական ուսումնասիրությունները մտցվեցին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտահետազոտական պլաններում և ինստիտուտի արարագիտական, քուրբագիտական, իրանագիտական, կովկասագիտական և քրդագիտական բաժինները համալրվեցին իսլամի հարցերը հետազոտող գիտական աշխատակիցներով: Հայ իսլամագետների պատվիրակությունը պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի գլխա-

վորությանը մասնակցել է Մուսկվայում, Մանկտ Պետերբուրգում գումարված իսլամազիտական համաժողովներին, հանդես եկել հետաքրքիր զեկուցումներով, որոնք, որպես կանոն, այնուհետև հրատարակվել են և ներկայացվել գիտական հանրությանը:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի իսլամազիտական աշխատությունների շարքում իրենց կարևոր նշանակությամբ և նորությամբ արժանի է հիշատակել, նախ և առաջ, Մուսկվայում 1985 թ. հրատարակված նրա «Իսլամի հակահնչարիալիստական և հակասոցիալիստական ներուժի հարաբերակցության մասին» (О соотношении антиимпериалистической и антисоциалистической потенции ислама, Современный ислам. Проблемы политики и идеологии, Вып. 3, ч. III, ДСП, Москва, 1985) հոդվածը, որի վերնագիրն ինքնին շատ խոսուն է: Առաջին անգամ էր նման աշխատանք հրատարակվում, որը շատ բարձր գնահատվեց մասնազիտական շրջաններում: Իսլամազիտական հարցերի հանձնաժողովի առաջարկությամբ, Ն. Հովհաննիսյանը նույն թեմայով զեկուցումով հանդես է գալիս իսլամազետների լայն լսարանի առջև: Նույնպիսի հաջողություն ունեցավ Մուսկվայում հրատարակված իսլամազիտական նրա ևս մի աշխատանք՝ «Իսլամի ակտիվացման մի քանի հետևանքների մասին» խորագրի ներքո (О некоторых последствиях активизации ислама, Современный ислам: Проблемы политики и идеологии, Вып. 4, ч. 3, Москва, 1988):

Մեծ արձագանք գտավ հայ ականավոր գիտնականի «Իսլամի զլորալ ստրատեգիան. Հիմնարար սկզբունքները և վերջնական նպատակները» աշխատանքը: Իսլամազիտական նրա նախորդ աշխատությունները, այդ հիմնահարցի քաղվածակողմանի ուսումնասիրությունը նրան հնարավորություն են տվել անդրադառնալ նման վերին աստիճանի քաղդ և քոլորովին չուսումնասիրված, կարելի է ասել, խոպան թեմայի հետազոտմանը: Անփոփելով իր ուսումնասիրության արդյունքները՝ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը եզրակացնում է՝ «Իսլամական զլորալ ստրատեգիայի վերջնական նպատակն է ուժերի ներկա հաշվեկշիռը փոխել հոգուտ մուսուլմանական պետությունների և տիրապետող դիրքեր նվաճել համայն աշխարհում» («Հ ԳԱԱ «Լրաքեր հասարակական գիտությունների», 1 (533), հունվար, Երևան, 1989, էջ 16–22):

ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի առաջարկությամբ, նկատի առնելով իսլամի զլորալ ստրատեգիայի ուսումնասիրության կարևորությունը և դրա նկատմամբ գիտական աշխարհում դրսևորված հետաքրքրասիրությունը, Նիկոլայ Հով-

հաննիսյանը այդ թեմայի շուրջը զեկուցումով հանդես է գալիս ՀՀ ԳԱԱ նախագահության ընդլայնված նիստում, որին մասնակցել են հանրապետության ականավոր գիտնականներ:

Հարկ է նշել, որ իսլամազիտական թեմատիկան այսօր էլ շարունակում է մնալ հայ արևելագետի գիտական հետաքրքրությունների շրջանակներում:

6. ԱՐՑԱՆԻ ՀԻՄՆԱՆԴԻՒ ՌԻՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի ուսումնասիրություններում իր ուրույն տեղն է գրավում էթնոքաղաքական կոնֆլիկտների՝ բախումների, գլխավորապես Լեռնային Ղարաբաղի՝ Արցախի հիմնախնդրի լուսաբանությունը՝ առաջ քաշելով ինքնատիպ ու համարձակ լուծումներ և ոչ ստանդարտ մոտեցումներ: Նա այն հեղինակներից մեկն է, ով հիմնավորել է այն տեսադրույթը, որ Լեռնային Ղարաբաղում 1988 թ. սկսված պայքարը հանուն ինքնորոշման, Ադրբեջանի կազմից դուրս գալու և մայր հայրենիքի՝ Հայաստանի հետ միավորվելու, առաջին էթնոքաղաքական կոնֆլիկտն էր նախկին Խորհրդային Միությունում, որը շղթայական ռեակցիա առաջացրեց համանման շարժումների ծագման համար: Ինչպես նա է ընդգծում, չնորհիվ Ղարաբաղյան շարժման, նրա ազդեցության և օրինակի, սկիզբ առան և ծավալվեցին էթնոքաղաքական լուրջ շարժումներ Անդրկովկասում՝ Վրաստանում (Աբխազիա, Հարավային Օսեթիա), միջինասիական հանրապետություններում՝ Ուզբեկստան, Ղրղզստան, Տաջիկստան, մերձքաղաքյան հանրապետություններում՝ Լաոսիա, Լիտվա, Էստոնիա, Բալկաններում և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում: Այս կամ այն չափի հուզումներ և ընդվզումներ տեղի ունեցան նաև այլ երկրներում, որոնց համար «Արցախ-Ղարաբաղը» դարձել էր արդարացի պայքարի խորհրդանշան:

ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Լեհաստանի և աշխարհի մի շարք այլ երկրների համալսարաններում և գիտական կենտրոններում խիստ մեծացավ հետաքրքրությունը դարաբաղյան հիմնահարցի վերաբերյալ, սկսվեցին հրատարակվել մեկնազրույթումներ և հոդվածներ, կազմակերպվում էին գիտական կոնֆերանսներ և այլն: Դա հիմք ծառայեց Նիկոլայ Հովհաննիսյանի համար կատարելու իր հերթական նորամուծությունն առ այն՝ որ ձևավորվել է մի նոր գիտական ուղղություն, որը նա անվանեց արցախազիտություն: Ըստ էության նա արցախազիտության հիմնադիր-

ներից մեկն է: Նա այդ տեսակետն առաջին անգամ արտահայտել է 2011 թ. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի կազմակերպած «Նոր մտնեցումներ ԼՂՀ հիմնահարցին» գիտաժողովում, ապա նաև 2013 թ. Ստեփանակերտում կազմակերպված «Արցախի ազգային-ազատագրական պայքարը Գյուլիստանից մինչև մինչև մեր օրերը» գիտաժողովում՝ եվրոպական Ղարաբաղյան շարժման 25-ամյակին, որը մեծ խանդավառությամբ ընդունվեց գիտաժողովի մասնակիցների և ԼՂՀ ղեկավարության կողմից:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը արցախյան-ղարաբաղյան հիմնախնդրի լուսարևոտությանը հատկացրել է տարբեր երկրներում տարբեր լեզուներով հրատարակված հինգ մենագրություն և բազմաթիվ հոդվածներ:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի առաջին մենագրությունը կրում էր «Ղարաբաղյան կոնֆլիկտը. Էտապները. Մտնեցումները. Լուծման տարրերակները» խորագիրը, որը լույս տեսավ Երևանում 1997 թ., ռուսերեն լեզվով, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի մակնիշով: Դա ոչ թե տեղեկատվական քնույթի հրատարակություն էր, որն այդ ժամանակ մեծ տարածում էր գտել, այլ առաջին քննական ռատմնասիրությունը, որում հեղինակն անդրադարձել է թեմային առնչվող այնպիսի առանցքային հարցերի, ինչպես Ղարաբաղյան կոնֆլիկտի ծագման պատճառները, այդ հիմնախնդրի պատմաաշխարհագրական և էթնոմշակութային գործոնները, Ղարաբաղյան պայքարի փուլերը և նրանց խնդիրները: Առաջին անգամ, շնորհիվ Նիկոլայ Հովհաննիսյանի, քննարկման առարկա դարձավ Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի քաղաքական լուծման տարրերակները՝ աղբյուրաբանական տարբերակը, Հայաստանի և ԼՂՀ-ի դիրքորոշումը, տարածքների փոխանակման, ասոցացված պետության տարրերակները, կիպրոսյան մոդելը, չեչնական տարրերակը, և ամենակարևորը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության տարրերակը՝ որպես իրենալական տարրերակ:

Իսկ ինչո՞ւ է Ն. Հովհաննիսյանը հատուկ քննարկման առարկա դարձրել Ղարաբաղյան կոնֆլիկտի լուծման տարրերակների հարցը: Դրա պատասխանը տալիս է ինքը՝ հեղինակը, իր սույն աշխատությունում: Նա նշում է, որ Ղարաբաղյան կոնֆլիկտը մեկուսացված չէր արտաքին աշխարհից, նրանում խաչաձևվում են Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Թուրքիայի, Իրանի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի և այլ պետությունների քաղաքական, ռազմավարական և տնտեսական շահերը: Ելնելով այդ իրողությունից՝ Ն. Հովհաննիսյանը նշում է. «Իրադրությունը, ինչպես նաև ուժերի հաշվեկշիռը,

ուզածը պահին կարող է փոխվել ոչ հոգուտ Հայաստանի և ԼՂՀ-ի: Բացառված չէ, որ հայկական կողմի համար կարող է շատ վտանգավոր դրությոն ստեղծվի, այդ թվում և ռազմական, որի հետևանքով անհնար կլինի պահպանել ներկա ընդհանուր առմամբ ԼՂՀ-ի և հայության համար քարենպաստ դրությունը»: Հեղինակը, մտահոգված հայության անվտանգության ապահովման խնդրով, քաջատրու է. «Այդ պայմաններում, դարաքաղյան կոնֆլիկտի լուծման տարբեր մոդելների անկայությունը կարող է հայկական կողմի համար մասնաբերելու անհրաժեշտ դաշտ ստեղծել այն հաշվով, որպեսզի ունենալ այլընտրանքային տարրերակներ և ձախողել դարաքաղյան կոնֆլիկտի լուծման համար ամենավատար տարրերակն իրականացնելու փորձերը»: Նկատենք, որ այդ մտահոգությունը դրսևորվել է և այդ տեսակետն արտահայտվել է դեռևս 1997 թ., ինչը չի կորցրել իր արդիականությունը նաև այսօր («Karabachxətin konflikt. Ətrafı. Pöhdöyü. Variantıy rəşəntıy», Erevan, 1997, c. 9–10): Կոնֆլիկտի լուծման տարբեր մոդելները, այդ թվում և ադրբեջանական տարրերակը քննարկելիս, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը, եշելով, որ «Ադրբեջանը ձգտում է վերականգնել իր լրիվ իրավասությունը ԼՂՀ-ի վրա և ամբողջապես ենթարկել իրեն», դեռ այն ժամանակ այն կարծիքն է արտահայտել, որ «ԼՂՀ-ի քնակչության համար հին կարգավիճակին վերադառնալու տարրերակ չկա» (նույն տեղում):

ԱՄՆ-ի պետական դեսպարտամենտը 1995 թ. պատրաստել էր մի նախագիծ՝ «Կոնֆլիկտի գծով գործընկերներ խաղաղության կամուրջների կառուցումը Անդրկովկասում», և հանձնարարել Մերիլենդի համալսարանի Միջազգային զարգացման և կոնֆլիկտների կառավարման կենտրոնին (ՄՋԿԿԿ) կազմակերպել այդ ծրագրի քննարկումը անդրկովկասյան մասնագետ քախումնարանների՝ կոնֆլիկտոլոգների, մասնակցությամբ: Ն. Հովհաննիսյանը, որն այդ ժամանակ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենն էր, ստանում է համապատասխան հրավեր և մեկնում ԱՄՆ, Մերիլենդի համալսարան՝ մասնակցելու վերոնշյալ աշխատանքներին: Համանուն հրավերներ են ստանում նա յոթ մասնագետներ՝ երկուական Ադրբեջանից և Վրաստանից, մեկական Արխագիայից, Հարավային Օսիայից և ԼՂՀ-ից: Աշխատանքները համակարգում էր ծրագրի տնօրեն, Երուսաղեմի հրեական համալսարանի Հարրի Տրումենի անվան խաղաղության ինստիտուտի գործադիր տնօրեն պրոֆեսոր Էդի Կաուֆմանը:

НИКОЛАЙ ОГАНЕСИИ

КАРАБАХСКИЙ КОНФЛИКТ

ЭТАПЫ
ПОДХОДЫ
ВАРИАНТЫ РЕШЕНИЯ

NIKOLAY OGHANESYAN

THE KARABAKH
PROBLEM

FACTORS, CRITERIA,
VARIANTS OF SOLUTION



ЭТНОПОЛИТИЧЕСКИЕ
КОНФЛИКТЫ
В ЗАКАВКАЗЬЕ:
ИХ ИСТОКИ И ПУТИ
РЕШЕНИЯ

Составитель:
Николай Оганесян
Адрес: Ереван, Армения
Адрес электронной почты:
n.oghanyan@cscc.am
Телефон: +374 10 52 11 11
Факс: +374 10 52 11 12
E-mail: n.oghanyan@cscc.am
www.cscc.am



ИЗДАТЕЛЬСТВО «САРАЖИНСКИЕ ПЕЧАТЫ»
СЕРБИЯ, УЛ. ТУРАКА 200
БЕОГРАД, 11000

NIKOLAY OGHANESYAN

THE KARABAKH
PROBLEM

THE THORNY ROAD TO FREEDOM
AND
INDEPENDENCE



Անդրկովկասյան ուրբյակը չորս ամիս, 1995 թ. օգոստոսից մինչև դեկտեմբեր, համատեղ աշխատում էր վերոնշյալ ծրագրի վրա: Նրանց գլխավոր խնդիրն էր կոնֆլիկտի մեջ ներգրավված կողմերի դիրքերի մերձեցում երկխոսության, փոխզիջման և հանդուրժողականության սկզբունքների հիման վրա: Համատեղ քննարկումները, ինչպես նշում է Ն. Հովհաննիսյանը, ընթանում էին ծայրահեղ լարվածության, կարելի է ասել շիկացած և անհանդուրժողականության մթնոլորտում, ամեն մի մասնակից համառորեն և անզիջում կերպով պաշտպանում էր իր երկրի դիրքորոշումը՝ իտանարելով այն միակ ճշմարիտը: Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը ջանք ու եռանդ չի խնայել պաշտպանելու Հայաստանի և ԼՂՀ-ի դիրքորոշումները հակահարված հասցնելով Ղարաբաղի նկատմամբ աղբրեցանական հսկակնություններին և Հայաստանին ագրեսոր ճանաչելու աղբրեցանցիների նկրտումներին: Ղարաբաղյան, արխազական և հարավօսեթրական կոնֆլիկտների լուծման հարցում չհաջողվեց հասնել կողմերի դիրքերի մերձեցման և գտնել ընդունելի քառաձև: Հարցը մտավ փակուղի: Ստեղծված պայմաններում որոշվեց շարունակել աշխատանքները տեքստերի վրա, բայց արդեն տանը, յուրաքանչյուրն՝ իր երկրում:

Կենտրոնն առաջարկում է Հայաստանի, Ադրբեջանի և Կրաստանի պատվիրակներին, վերադառնալուց հետո, իրենց երկրներում ստեղծել կոնֆլիկտների կարգավորման համապատասխան կազմակերպություններ: 2003 թ. Ն. Հովհաննիսյանի նախաձեռնությամբ Հայաստանում ստեղծվում է Հայաստանի կոնֆլիկտների լուծման կենտրոն, որի հիմնադիր տնօրենը դառնում է հենց նա: Այդ կոմիտեն մի քանի տարի շարունակ մեծ և ակտիվ աշխատանքներ է տարել հանրապետությունում կոնֆլիկտների գծով քաղաքիվ միջոցառումներ կազմակերպելու ուղղությամբ, այդ թվում նաև դարաքաղյան կոնֆլիկտի գծով (կրոր սեղանի քննարկումներ, սեմինարներ՝ օտարերկրյա մասնագետների մասնակցությամբ, համապատասխան նյութերի հրատարակումներ, հարցազրույցներ և այլն):

1996 թ. մայիսին ութնյակն սկսեց ծրագրի աշխատանքների երկրորդ փուլը: Այս անգամ ութնյակի հանդիպումները և քննարկումները տեղի էին ունենում տարբեր երկրներում՝ Իսրայելում, Ֆինլանդիայում՝ Ալանդյան կղզիներում, Թուրքիայում՝ Մտամբուլում, որոնց մասնակցում էին ԱՄՆ-ի, Իսրայելի, Կանադայի, Հորդանանի, Ֆինլանդիայի, Ռուսաստանի կոնֆլիկտոլոգները: Ամփոփելով համատեղ աշխատանքի արդյունքները և գտնելով, որ ոչ մի էական տեղաշարժ չի արձանագրվել՝ որոշվեց մենազրույթուն հրատարակել այն տեսքով, ինչպես այն կներկայացնեն ծրագրի ութ մասնակիցներից յուրաքանչյուրը՝ հնարավորություն տալով ընթերցողին ծանոթանալ յուրաքանչյուր կոնֆլիկտի լուծման երկու տարբերակներին էլ: Միաժամանակ Միջազգային զարգացման և կոնֆլիկտների կառավարման կենտրոնն առաջարկեց անգլիական տեքստին զուգահեռ պատրաստել և հրատարակել տեքստ նաև ռուսերեն լեզվով: Կողմերը համաձայնվեցին և 1997 թ. ԱՄՆ-ի Մերիլենդի համալսարանը հրատարակեց այդ աշխատությունը «Էթնոքաղաքական կոնֆլիկտները Անդրկովկասում. Նրանց արմատները և լուծման ուղիները» վերտառությամբ: Նրանում, քննադատաբար, տեղ էր գտել Ն. Հովհաննիսյանի «Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտը և նրա լուծման տարբերակները» աշխատությունը (92-122):

Չնայած այն հանգամանքին, որ ծրագրի մասնակիցներին չհաջողվեց մերձեցնել հակադիր կողմերի դիրքորոշումները, անգամ մերձեցման եզրեր գտնել, այդուհանդերձ, ինչպես նշում է պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը, համատեղ քննարկումները, անընդ-

հաստ հանդիպումները և ոչ պաշտոնական զրոյցները նպաստեցին ավելի հասակ պատկերացում կազմել կոնֆլիկտի մեջ հայտնված յուրաքանչյուր երկրի քաղաքականության ու դիրքորոշման վերաբերյալ: Իսկ դա ինչ—որ բան, այդուհանդերձ, նշանակում էր:

1997 թ. նոյեմբերին «Ռեապորտիկա Արմենիա» թերթում հրատարակվեց Ն. Հովհաննիսյանի «Լեռնային Ղարաբաղին» չեզոքության կարգավիճակ» հոդվածը, որն իր թարմությամբ և համարձակ հարցադրումներով ուղղակի սենսացիա առաջացրեց ոչ միայն Հայաստանում և Ադրբեջանում, այլև ԱՄՆ—ում, Իսրայելում, Ռուսաստանում և այլ երկրներում: Այն լույս տեսավ նաև հայերեն և անգլերեն լեզուներով (Status of Neutrality to Nagorno-Karabakh, «The Yerevan Times», November 22, 26, 1997): Գրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի առաջարկած կարգավիճակը բաղկացած էր տասը հոդվածներից: Հեղինակն առաջարկում էր հետևյալը. «Հայաստանը, Ադրբեջանը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հռչակում են Լեռնային Ղարաբաղի չեզոքությունը, որն այսուհետև կոչվելու է Լեռնային Ղարաբաղի Չեզոք Հանրապետություն (ԼՂՉՀ): ԼՂՉՀ—ի չեզոքությունը երաշխավորում են ՄԱԿ—ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամները՝ ԱՄՆ—ը, Չինաստանը, Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը և Ֆրանսիան, ե՛վ ՀԿԿ—ը, Հայաստանը և Ադրբեջանը»: Մյուս հոդվածները վերաբերում էին սահմաններին, անվտանգային գոտու տեղեւանը, կառավարման համակարգին, քաղաքացիությանը, արտաքին հարաբերություններին, փախստականների հարցին, տնտեսական կարգավիճակին, կոմունիկացիաներին, պետական խորհրդանիշներին, ՄԱԿ—ում այդ փաստաթուղթը զրանցելուն և այլն: Միջազգային հանրության կողմից Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի չեզոքության տարբերակն ընկալվեց արտակարգ հետաքրքրությամբ և մեծ հույսերով: Իսկ ինչպիսին էր կողմերի արձագանքը:

Հայաստանի արձագանքը եղավ դրական: ՀՀ պրեզիդենտ Լեոն Տեր—Գեորգյանը, 1997 թ. նոյեմբերին ՀՀ ԳԱԱ ակադեմիայի ներկայացուցիչների՝ ակադեմիկոսների և ինստիտուտների տնօրենների հետ հանդիպման ժամանակ, որին, հրավիրված էր նաև պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը, ի պատասխան մասնակիցների տված այն հարցին, քն առոյոք եւս կարդացնլ է Ն. Հովհաննիսյանի հոդվածը Ղարաբաղի չեզոքության կարգավիճակի մասին, և եթե այո, ապա ինչ կարծիքի է, պատասխանում է. «Ես ոչ միայն կարդացել եմ, այլև շատ լուրջ ուսումնասիրել: Ես պաշտպա-

նում նմ դա զույգ ձևերով և պատրաստ նմ դա իրագործել, եթե Աղբրեջանի պրեզիդենտ Հեյդար Ալիևը նույնպես դա պաշտպանի: Ես անզամ պատրաստ եմ Հայաստանի Մահմանադրության մեջ մտցնել հողված Ղարաբաղի չեզոքության մասին»:

Ինչ վերաբերում է Աղբրեջանին, ապա կրա պատասխանը քաջասկան էր: Հեյդար Ալիևը հրապարակային ոչ մի հայտարարություն չարեց և, ինչպես նշում էր «Հայաստանի Հանրապետություն» պարբերականը, «Բաքվում որդեգրել էին քաջարձակապես ոչ կառուցողական դիրքորոշում»: Աղբրեջանի Մուսավաթ կուսակցության առաջնորդ Իսա Համբարը «Թուրան» գործակալությանը տված հարցազրույցի ժամանակ հայտարարել է, որ ինքը մերժում է «Հովհաննիսյանի մոդելը, քանի որ դա Լեռնային Ղարաբաղի անկախության մասին է» («Республика Армения», 21 ноября, 1997): Նույնպիսի ժխտողական դիրքորոշում է ընդունում Աղբրեջանի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավար Զարդուշտ Ալի-գադեն: Նրա կարծիքով «Հովհաննիսյանի պլանի նպատակն է օրինականացնել Հայաստանի տարածքային անեքսիոնիստական, նվաճողական և ագրեսիվ քաղաքականությունը» (նույն տեղում):

Սակայն բոլորովին այլ դրական կարծիքներ հնչեցին ԱՄՆ-ից և Իսրայելից: ԱՄՆ-ի Մերիլենդի համալսարանի գիտաշխատող, «Գործընկերներ հանուն խաղաղության» ծրագրի ղեկավարներից մեկը՝ Բարի Սանդերսը, ծանոթանալով Ն. Հովհաննիսյանի Ղարաբաղի չեզոքության վերաբերյալ առաջարկությանը, կարգադրում է այն մտցնել համակարգչային սերվիսում, «որպեսզի շատերը ծանոթանան և գնահատելու հնարավորություն ունենան»: Այնուհետև նա դիմում է հեղինակին. «Ես տեսնում եմ, Նիկոլայ, որ դու շատ ակտիվ ես եղել Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի լուծման քո առաջարկությամբ: Եվ ինչն է առավել հետաքրքիր, որ դրան աջակցել են զանգվածային լրատվամիջոցները, և դա հրատարակվել է: Ընտրիավորանքներ: Ես չգիտեմ՝ դու կհամաձայնվես ինձ հետ, քայց ես կարևոր եմ համարում, որ մեր տեսակետը լայնորեն տարածվի: Յուրաքանչյուր գաղափարում կարելի է գտնել ինչ-որ բան, որն արժե, որ մտցվի այլ գաղափարի մեջ»:

Շատ կարևոր է նաև Երուսաղեմի հրեական համալսարանի Հարրի Տրումնի անվան խաղաղության ինստիտուտի գործադիր տնօրեն և «Գործընկերներ հանուն խաղաղության» ծրագրի ղեկավար պրոֆեսոր Էդդի Կաուֆմանի նամակը ուղղված ծրագ-

րի բոլոր մասնակիցներին, որում ասված է. «Ես ակնկալում եմ, որ կկարողաց Ըովհաննիսյանի հողվածը: Հետո մենք պետք է նայենք հնարավոր առաջարկությունների ցանկին, արված Նիկոլայի կողմից նրա հողվածում՝ զբոսի համար (նկատի ունի ութնյակի կողմից պատրաստվող գիրքը — *խմբ.*): Միգուցե մենք խնդրենք նրան կրկին դա դնել քննարկման և տեսնենք թե այլընտրանքային լուծումներից որը կարող է դառնալ առաջնային: Եկեք ընդունենք կողմերի տրոշում» (նույն տեղում):

1999 թ. անգլերեն լեզվով լույս տեսավ 'Նարաբաղյան հիմնախնդրին նվիրված Ն. Հովհաննիսյանի երրորդ մենագրությունը՝ «The Karabakh problem. Factors, Criteria. Variants of Solution» (Yerevan, 1999) («Նարաբաղյան կոնֆլիկտը. Գործոններ. Չափանիշներ. Լուծման տարբերակներ»), որը պարունակում էր մի շարք նորություններ համեմատած նրա նախորդ երկու մենագրությունների հետ, մասնավորապես չափանիշների և գործոնների հարցում: Լորություն էր նաև կոնֆլիկտի լուծման տարբերակների քաժմում նոր տարբերակի առաջադրումը: Խոսքը «Լեռնային Ղարաբաղի չեզոքության կարգավիճակի» մասին է, որը, ինչպես նշվել է, տպագրվեց նաև հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով Հայաստանի և ԱՄՆ-ի պարբերականներում:

2004 թ. Երևանում հրատարակվեց պոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի չորրորդ մենագրությունը՝ «Նարաբաղյան հիմնախնդիրը. Ազատության և անկախության փշն ճանապարհը», անգլերեն լեզվով: Նրանում հեղինակի ուշադրությունը կենտրոնացված է Ադրբեյջանին Ղարաբաղի բռնակցման պատճառների վրա, մի պետությանը, որը մինչև 1918 թ. գոյություն չի ունեցել: Մենագրությունում դա համարվում է Ղարաբաղի հայության ինքնորոշման իրավունքի կոպիտ խախտում: Հեղինակը շնչում է նոր մտեցումների կարևորությունը Ղարաբաղի հիմնախնդրի լուծման հարցում՝ հաշվի առնելով քաղաքական, ուսումնական և իրավական նոր իրողությունները: Նա միաժամանակ ընդգծում է այս հնագույն հայկական տարածքի լիիրավ իրավունքը միանալու մայր հայրենիքին կամ ստեղծելու իր անկախ պետությունը: Առանձին գլուխ է հատկացված Ղարաբաղյան կոնֆլիկտի լուծման զանազան տարբերակների քննարկմանը և գնահատմանը, առաջարկված զանազան միջազգային կազմակերպությունների, գիտնական մասնագետների կողմից, այդ թվում և ԵԱՀԿ-ի շրջանակներում: Այս մենագրությունում, ի հավելումն նախորդ տարբերակների, որոնք քննարկվել են

հեղինակի հրատարակած առաջին, երկրորդ և երրորդ հատորներում, ավելացվել է ևս երեքը՝ «Ընդհանուր պետության նախագիծը», «Փարիզ—Քի Վեստ համաձայնագիրը», «Պյեր Լելուշ — Անա Պիացիո առաջարկությունը»:

Հայ գիտնականի վերոնշյալ աշխատությունները բարձր են գնահատել բազմաթիվ մասնագետներ, ընդունելով, նաև, որ իրենք ազդվել են պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի այդ աշխատություններից, ինչպես Համբուրգի համալսարանի պրոֆեսոր, իրավագետ Օտտո Լուխտերհանդտը, արաբ հեղինակներ՝ Սալիհ Զահրալ-Դինը, Ֆուադ Հասան Հաֆիզը և ուրիշներ:

«Ղարաբաղի կոնֆլիկտը, Ազատության և անկախության փշե ճանապարհը» մենագրությունը անգլերենից թարգմանվեց իտալերեն և 2011 թ. հրատարակվեց Հոռմում՝ Իտալիայի արտաքին գործերի նախարարության միջազգային դիվանագիտական ակադեմիայի խրախուսանքով և Իտալիայում ՀՀ դեսպան, դոկտոր Ռուբեն Կարապետյանի աջակցությամբ՝ «Il Problema del Karabakh. Il faticoso percorso verso la liberta e l'indipendenza»: Գիրքը թարգմանել է հայազգի գրող Անտոնիո Արսլանի, «Արտությունների ազարակը» հանրահայտ գրքի հեղինակի դուստրը՝ Սեսիլիա Վերոնեզե: Անտոնիո Արսլանը ստուգել և խմբագրել է ամբողջ թարգմանությունը:

2011 թ. մայիսի 25-ին Հոռմում տեղի ունեցավ Ն. Հովհաննիսյանի իտալերեն հրատարակված վերոնշյալ, հինգերորդ գրքի ներկայացումը Իտալիայի դիվանագիտական հանրությանը և պատմաբան-մասնագետներին՝ Իտալիայի արտաքին գործերի նախարարության միջազգային դիվանագիտական ակադեմիայի գիտաժողովների սրահում, օտարերկրյա դիվանագետների, պատմաբանների, պրոֆեսորների մասնակցությամբ և հեղինակի ներկայությամբ, իսկ մայիսի 28-ին Միլանում՝ Իտալիայի հայերի միության կենտրոնատեղիում, որոնց, իտալական կողմի հրավերով, մասնակցել և զեկուցումով հանդես է եկել հեղինակը:

Քննարկմանը ելույթ են ունեցել Իտալիայի ականավոր գիտնականներ, պրոֆեսորներ Ա. Պոլիտին, Է. Ալիպոհանդին և Մ. Բայսը, որոնք շատ բարձր են գնահատել հայ գիտնականի աշխատությունը, որը, ինչպես նշել են նրանք, իտալերեն լեզվով հրատարակված առաջին գիտական աշխատությունն է Իտալիայում նվիրված Արցախի հիմնախնդրին, ընդգծելով, որ այն պարունակում է շատ հարուստ, միանգամայն ճշգրիտ և վստահելի տեղեկություն, ինչը կն-

պատի Իտալիայում գիտականորեն հիմնավորված կարծիք կազմելու հայերի մեծ հերոսամարտի, այդ կնճռու հարցի պատճառների, բնույթի, ընթացքի ու լուծման հեռանկարների մասին: Նրանք միաժամանակ դատապարտել են աղբրեջանցիների իրազորման հայկական ջարդերը Սումգայիում, Կիրովաքաղում և Բաքվում: Պրոֆեսոր Ա. Պոլիսին նշում է, որ «...միանգամայն համոզիչ են հայ գիտնականի հայեցակարգային եզրահանգումները՝ շեշտելով, որ հայ պատմաբանի աշխատությունը մեծ տպավորություն է գործում, և ինքը լավատես է և գտնում է, որ արդի քաղաքական զարգացումներն ունեն այնպիսի միտումներ, որ Ղարաբաղի քաղաքական անկախության միջազգային ճանաչումը կսակած չի հարուցում»: Պրոֆեսոր է. Ալիպոսանդին, Ն. Հովհաննիսյանի աշխատության հրատարակությունը իտալերեն համարել է կարևոր իրադարձություն, որը նոր հորիզոններ է քացում հիմնահարցի ներքին ծայրերը քացահայտելու և հիմնավոր եզրակացություններ կառուրելու համար: Իսկ պրոֆեսոր Բայան ընդգծում է հայ գիտնականի օգտագործած սկզբնաղբյուրների կարևորությունը, որոնք վկայում են, որ «Արցախը պատմական Հայաստանի անբաժան մասն է և լուծման միակ օրինական ու տրամաբանական տարբերակը նրա միավորումն է Հայաստանի հետ, և անհեղափոխ է նրան պատկերացնել Աղբրեջանի կազմում»:

Գրքի ներկայացումը դիվանագիտական և գիտական հանրությանը մեծ արձագանք գտավ, այդ թվում իտալական մամուլում և այլ լրատվամիջոցներում, մասնավորապես, Իտալիայի «Եվրասիա» ռազմավարական կենտրոնում և նրա համանուն լրատվական օրգանում: «Եվրասիա» պարբերականի 2011 հոկտեմբերի 14-ի համարում գրախոսակաճով հանդես է եկել կենտրոնի առաջատար մասնագետ, Իտալիայի ակաճակոր քաղաքագետ Տուլիանո Լոնգոն: Ահա նրա կարծիքը. «Մահմաճամեճ շրջանի այն հիմնահարցը, որը մինչ օրս վշտացնում է հայ ազգին, կարճես անելանելի փակուղի լինի: ՀՀ ԳԱԱ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանին «Արցախյան հիմնախնդիրը դեպի ազատություն տանող դճվարին ուղին» 200 էջից պակասն էլ է քաճականացրել, որպեսզի հեղինակը հիմնավոր և արդյունաճետ կերպով ամփոփի վերոնշյալ տարաճաշրջանի բնակիչներին դեպի ինքնորոշում և ազատություն տանող երկարուճից և վշտալի ուղու պատճուրջուը:

Գրքի ողջ շարաղղոնքը իր իսկ պարզուրյան մեջ խորը բովանդակություն ունի: Յուրաքանչյուր գլուխը ինքնին Արցախի պատ-

մության առանձնահատուկ փաստերի վերաբերյալ խորը ուսումնասիրություն է: Գիրքը հիմնավոր կերպով պատասխանում է աղբյուրաբանական կողմի բոլոր հավակնոտ պահանջներին:

Գրքի գլխավոր թեմաներից մեկը իրականում ոչ միայն Բարսի կառավարության դժգոհությունների անհիմն լինելը քացահայտելն է, այլև Ադրբեջանի՝ իբրև պետության գոյության պատմական հիմքերը կասկածի տակ դնելը:

Գիրքն առավել արժևորվում է արծարծված թեմայով, որն անարդարացի կերպով անտեսվել է mainstream-ի շատ պատմաբանների կողմից, ինչպես նաև պատմական փաստերի վերակառուցման աննախադեպ ճշգրտությամբ և ի վերջո այն ոճով, որով հեղինակը նկարագրում է պատմական փաստերը և դրանց հիմնավորումները:

Ողջ աշխատությունը, չնայած արձակի չեզոք ոճին, վկայում է քանիմաց և արհեստավարժ պատմաբանի օրյեկտիվության և գիտական մտքի ուշադրության մասին: Պրոֆ. Հովհաննիսյանը կենսաբանություն է հաղորդում իր հայրենակիցների ազատության ձգտմանը, չանտեսելով գիտական վերլուծության մեթոդը, որն իր ուրույն տեղն է գտել վերոնշյալ աշխատության մեջ:

Իտալական դիվանագետների, քաղաքագետների և պրոֆեսորների տեսակետները հայ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի աշխատության և նրանում տեղ գտած հայեցակարգային դրույթների մասին, կազմում են արցախագիտության օրգանական մասը, և վկայում գիտական այդ նոր ուղղության, որի ակունքների մոտ կանգնած է հայ պատմաբանը, կենսունակության մասին:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի Արցախի չեզոքության պլանի նկատմամբ մեծ հետաքրքրություն է դրսևորում ԱՄՆ-ի Հյուստոնի, Տեխաս, Ռայս համալսարանի Ջեյմս Բեյկերի անվան հանրային քաղաքականության ինստիտուտի ղեկավարությունը, որը հայ գիտնականին ողարկած հեռագրում, նշում է, որ «Ամերիկյան քաղաքագետները մեծապես հետաքրքրված են Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի լուծման հնարավորության ինքնատիպ ուսումնասիրությամբ» և «Հովհաննիսյանի նախագիծը» համարելով Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի լուծման աստիճանագրական տարբերակ», նրան «...առաջարկում են մինչև 1998 թ. մարտ ամիսը պատրաստել մի հոդված»: Ն. Հովհաննիսյանը ընդունում է այդ առաջարկը և եզված ժամկետին ներկայացնում է համապատասխան հոդված: Ինստիտուտի տեօրենն այդ հոդվածը «...գնա-

հատում է որպես ներդրում անդրկովկասյան և կասպիական արդի խնդիրների ուսումնասիրության մեջ»:

Համատեսակի ահա այսպիսին էին Արցախի չեզոքության կարգավիճակի վերաբերյալ Նիկոլայ Հովհաննիսյանի առաջարկած տարբերակի շուրջը ծագած միջազգային արձագանքները:

Ինչպես նշում է Ն. Հովհաննիսյանը, 1998 թ. պրնզիդենտ Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո, երան հաջորդած Հայաստանի ղեկավարությունը, անտարբեր զտնվեց չեզոքության հիմքի վրա Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի կարգավորման տարբերակի նկատմամբ և երբեք չանդրադարձավ երան: Նա գտնում է, որ այն ժամանակ այդ տարբերակին անդրադառնալը քննվ չէր վեհաժողովի ղարաբաղյան հիմնախնդրի արդարացի կարգավորմանը, քանի որ դա ուղղված էր Ղարաբաղի վրա ադրբեջանական իրավասության վերականգնման դեմ:

7. ԴԱՋՄՆՎԱՐԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը, ինչպես արդեն նշվել է, 2007 թ. համատեղությամբ աշխատանքի է անցնում ՀՀ պաշտպանության նախարարության Դրաստամատ Կանաչյանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտում (ԱՌՀԻ)՝ զբաղեցնելով ինստիտուտի պետի խորհրդակցանի պաշտոնը, կատարելով նաև վերլուծարանի աշխատանքներ: Այդ ինստիտուտն, ըստ Ն. Հովհաննիսյանի, իր առջև կանգնած խնդիրներով և թեմատիկ առումով մի եզակի, իր նախադեպը չունեցող կառույց է, որով Հայաստանում հիմք դրվեց ազգային ռազմական գիտության ձևավորմանը և զարգացմանը: Աշխարհի շատ քիչ պետություններ ունեն ռազմավարական նշանակության այդպիսի ինստիտուտ: Նրա հիմնադիր-տնօրենն է քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ռազմական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, գեներալ լեյտենանտ Հայկ Ս. Քոթանջյանը, որն անցել է արդի աշխարհի ամենաուժեղ երկու ուսական և ամերիկյան, դպրոցների բովու՛: Նա հայ ազգային ռազմական գիտության՝ որպես գիտական նոր ուղղության, հիմնադիրն է և իր ուսերի վրա է կրել հայկական ռազմագիտության ստեղծման ողջ ծանրությունը: Նրան հաջողվում է շատ կարճ ժամանակամիջոցում ստեղծել մասնագետների մի համերաշխ գիտական կոլեկտիվ՝ մեծ հմտությամբ գլխավորելով և ուղղություն տալով նրա աշխատանքներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՄՍՈՒՆԻՏԻ ՎԵՐԱԿՈՆԿՐԱԿՆԵՐ
Ն. ԿՈՄՍՈՒՆԻՏԻ ՉԵՐԿԻ ԵՄԵՐԻ ԿՈՄՍՈՒՆԻՏԻ
ՉԵՐԿՈՒՄԻ ՎԵՐԱԿՈՆԿՐԱԿՆԵՐ

ՈՒՏՄՈՎԱՐԴԱՆ
ԱՆԿՏԱՆԳԱՅԻՆ
ՎԵՏԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎՁՈՒՐ 1
07/04/2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՄՍՈՒՆԻՏԻ ՎԵՐԱԿՈՆԿՐԱԿՆԵՐ
Ն. ԿՈՄՍՈՒՆԻՏԻ ՉԵՐԿԻ ԵՄԵՐԻ ԿՈՄՍՈՒՆԻՏԻ
ՉԵՐԿՈՒՄԻ ՎԵՐԱԿՈՆԿՐԱԿՆԵՐ

ՈՒՏՄՈՎԱՐԴԱՆ
ԱՆԿՏԱՆԳԱՅԻՆ
ՎԵՏԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎՁՈՒՐ 2
07/04/2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՄՍՈՒՆԻՏԻ ՎԵՐԱԿՈՆԿՐԱԿՆԵՐ
Ն. ԿՈՄՍՈՒՆԻՏԻ ՉԵՐԿԻ ԵՄԵՐԻ ԿՈՄՍՈՒՆԻՏԻ
ՉԵՐԿՈՒՄԻ ՎԵՐԱԿՈՆԿՐԱԿՆԵՐ

ՈՒՏՄՈՎԱՐԴԱՆ
ԱՆԿՏԱՆԳԱՅԻՆ
ՎԵՏԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎՁՈՒՐ 3
07/04/2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՄՍՈՒՆԻՏԻ ՎԵՐԱԿՈՆԿՐԱԿՆԵՐ
Ն. ԿՈՄՍՈՒՆԻՏԻ ՉԵՐԿԻ ԵՄԵՐԻ ԿՈՄՍՈՒՆԻՏԻ
ՉԵՐԿՈՒՄԻ ՎԵՐԱԿՈՆԿՐԱԿՆԵՐ

ՈՒՏՄՈՎԱՐԴԱՆ
ԱՆԿՏԱՆԳԱՅԻՆ
ՎԵՏԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎՁՈՒՐ 4
07/04/2017

ԱՌՀԻ-ն իր գոյության ոչ շատ մեծ ժամանակաշրջանում կատարել է զգալի աշխատանք, որը նրան բերել է միջազգային մեծ ճանաչում: Նա հրատարակում է «Հայկական բանակ» և «Աշխատանքային տետրեր» ռազմագիտական հանդեսները, որին մասնակցում են աշխարհում շատ հայտնի օտարերկրյա մասնագետներ:

Պրոֆեսոր Նիկողայ Հովհաննիսյանի համար դա նոր քնազավատ չէր այն ատումով, որ նրա գիտական հետաքրքրությունների դաշտում էին գտնվում Անդրկովկասում, Մերձավոր և Միջին Արևելքում, Հարավային Ասիայում աշխարհաքաղաքական, ռազմական տարբեր բլոկների ու դաշինքների, պատերազմի և խաղաղության առանցքային հարցերի ուսումնասիրությունը: Նրա մի շարք աշխատություններ, ինչպես «Իվկանագիտություն», «Հայաստանի արտաքին քաղաքականությունը», «Անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի ձևավորումը», «Մեծ տերությունների քաղաքականությունը Արարական Արևելքում» և այլ աշխատություններ, որոնք հրատարակվել էին հացերեն, ռուսերեն, անգլերեն, արաբերեն և այլ լեզուներով, ուղղակիորեն առնչվում են ԱՌՀԻ-ի պրոբլեմատիկայի հետ: Ն. Հովհաննիսյանն այդ քնազավատում տարիների ընթացքում կուտակված իր գիտելիքները և մեծ փորձն ի սպաս դրեց ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտում: Ն. Հովհաննիսյանն իր լուծման է ներդրում ինստիտուտի գիտահետազոտական թեմատիկայի ճշգրտման, հստակեցման և հարստացման աշխատանքներում, գիտակազմակերպչական հարցերում, երիտասարդ կադրերի պատրաստման և կատարելագործման քնազավատում, աշխատությունների, մեծագրությունների, առենախոսությունների քննարկումներում, վերլուծական տեղնկատվությունների, գիտաժողովների, այդ թվում և միջազգային, կազմակերպման և անցկացման գործում: Նա ԱՌՀԻ-ի գիտական խորհրդի և նրանում գործող ԲՈՒՀ-ի առենախոսությունների պաշտպանության գիտական մասնագիտական խորհրդի անդամ է:

Ինստիտուտի գործունեության մեջ մեծ տեղ է զբաղում աշխատողների կողմից գիտական արդիական մեծագրությունների և զանազան հոդվածների հրատարակումը: Հոդվածները հրատարակվում են հիմնականում ինստիտուտի վերոնշյալ նրկու՝ «Հայկական բանակ» և «Աշխատանքային տետրեր» հանդեսներում: Նրանցում պրոֆեսոր Նիկողայ Հովհաննիսյանը տպագրել է մոտ

երկտասնյակ հողվածներ: Այդ հողվածները թե՛ բվաբանակի և թե՛ բովանդակային առումով շատ տալավորիչ են:

Սակայն, հաշվի առնելով ռազմական ինստիտուտի աշխատանքային յուրահատկությունները և ընտյոթը, ինչպես նաև նշված հանդեսների սահմանափակ բվաբանակը, հողվածները մատչելի չէին հասարակության լայն խավերին: Ռատի պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանն առաջարկում է այդ հողվածները վերամշակել, վերախմբագրել և մատչելի դարձնել լայն զանգվածներին: Այդ առաջարկն ընդունվում է: Այդ նոր ծրագրի գիտական ղեկավարությունը ստանձնում է դոկտոր Հ. Քոբանջյանը, որն այդ դժվարագույն խնդիրը կարողանում է լուծել քարձք մակարդակով: Ստեղծվում է խմբագրական խորհուրդ, որի նախագահ է նշանակվում դոկտոր Նիկոլայ Հովհաննիսյանը: Հողվածների վերամշակման աշխատանքներն ավարտվում են հաջողությամբ և վերախմբագրված տեքստը 2014 թ., որպես մատենաշար, հրատարակվում է չորս սովորածավալ հատորներով՝ «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ (գիտափորձագիտական մատենաշար)» խորագրի ներքո: Նրանում ներառված են ԱՌՀԻ-ի, ինչպես նաև հանրապետության և արտասահմանյան մասնագետների հողվածները, որոնք գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում և նորություն են հայ իրականությունում:

Այդ հատորներում բայնորեն ներկայացված են նաև պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի մի շարք աշխատանքներ: Առաջին հատորում ընդգրկված են նրա «Աղբյուրների հակահայկական քաղաքականությունը «Իսլամական կոնֆերանս» կազմակերպության շրջանակներում», «ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հարցը Հայաստանի ազգային անվտանգության տեսանկյունից», «Թուրքիան և Մերձավոր Արևելքը. տարածաշրջանային շահեր ու Հայաստանի արտաքին քաղաքականության ռազմավարական խնդիրներ», նրկրորդ հատորում՝ «Իրանի դերը իսլամական աշխարհում և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրները», «Հայաստան-Սփյուռք ինտեգրման ռազմավարական ուղենիշները. հայեցակարգային մոտեցումներ», երրորդ հատորում՝ «Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հիմնահարցի կարգավորման հայկական հայեցակարգում», «Միջազգային կենտրոնի տեղաշարժը արևմուտքից արևելք. նոր իրողություններ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից», «Հարավային Կովկասի վարչատարածքային և քա-

դարական կառուցվածքը և նրա անվտանգային գոտիները», ուսերեն և անգլերեն, չորրորդ հատոր՝ «Ցեղատարածության մատուցող քրեականացնող օրենքի ընդունումը՝ ցեղասպանության կանխման և դատապարտման որպես նոր փուլ», «Տարածաշրջանային անվտանգությունը Հարավային Կովկասում, հոչակագրերից դեպի պատմամիջոցներ», «Ամերիկյան մտնեցումները արցախյան հիմնախնդրի նկատմամբ» հոդվածները:

Իրանը այնպիսի ուսումնասիրություններ են, որոնք վկայում են հայ քաղաքագետի գիտական մեծ կարողությունների, նորարարական ստեղծագործական մեծ ներուժի մասին և հանդիսանում են լուրջ ներդրում հայկական ռազմավարական անվտանգային հետազոտությունների գիտության համեմատաբար այդ նոր ճյուղի քննադատում:

Արդեն հրատարակության համար պատրաստ են այդ մատենաշարի երեք նոր հատորները նույնպես:

Ուշագրավ է Ն. Հովհաննիսյանի «Հայաստանի Հանրապետությունը կայացած պետություն է և միջազգային հանրության լիիրավ անդամ» հոդվածը, որը լույս տեսավ ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմական հանդեսում («Հայկական բանակ», 3(89), 2016), որը ելիքված է Հայաստանի Հանրապետության 25-ամյակին: Հոդվածում առաջին անգամ շոշափում են այնպիսի հարցեր, ինչպես հայերը պետութենաստեղծ ազգ են, Հայաստանի միջազգային հանրության լիիրավ անդամության գործընթացը, Հայաստանը համայն հայության պետության հանգամանքը և այլ հարցեր:

Ն. Հովհաննիսյանը մասնակցել և ելույթներ է ունեցել ԱՌՀԻ-ի կազմակերպած մի շարք կարևոր միջազգային գիտաժողովների և ֆորումներին, եղել նրանց նիստերի համակարգող, ինչպես «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը և Հարավային Կովկասը. խաղաղության ու անվտանգության հեռանկարները» (Երևան, մայիսի 19-20, 2011 թ.), «Հարավային Կովկասում տարածաշրջանային անվտանգության դիմամիկան» (Երևան, նոյեմբերի 17-18, 2011 թ.), «Ազգային և տարածաշրջանային խաղաղաստեղծ ներուժի ինտեգրացիան խաղաղարար գործողությունների գլոբալ համակարգին՝ ՄԱԿ-ի սկզբունքների և ստանդարտների հիմքի վրա» Միջազգային ստրատեգիական քաղաքական ֆորումին (Երևան, 2.VII.2014) և այլ համաժողովներ:

2015 թ. դեկտեմբերին ՀՀ ՊՆ Գ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը կերպափոխվեց ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի, որի պետ նշանակվեց, քնականաբար, քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր, գեներալ-լեյտենանտ Հայկ Քոբանջյանը: Այդ կերպափոխումը նա իրագործեց փայլուն կերպով՝ վայելելով ինչպես Հայաստանի ղեկավարության, այնպես էլ Ռուսաստանի և ԱՄՆ-ի համապատասխան ռազմագիտական հաստատությունների աջակցությունը: Նման համալսարան ոչ բոլոր երկրներն ունեն և նրա ստեղծման գործում քաջաոնկ է գեներալ Հ. Քոբանջյանի դերակատարումը: 2016 թ. օգոստոսի 8-ին պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը նշանակվեց ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի պետի խորհրդական-վերլուծաբան:

Դրանով իսկ սկսվում է հայ ռազմական գիտության զարգացման նոր, ավելի բարձր և պատասխանատու փուլը, որը նոր խնդիրներ է դնում համալսարանի ռազմագիտական անձնակազմի առջև, և Ն. Հովհաննիսյանը վստահություն է հայտնում, որ համալսարանի գիտական անձնակազմն ի վիճակի է այդ նոր փուլում նա բարձր մակարդակով լուծել իր առջև կանգնած խնդիրները:

8. ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ՝ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի՝ այդ ինքնատիպ, տաղանդավոր մասնագետի ուսումնասիրությունների դաշտը, ինչպես ցույց է տրվել նախորդ էջերում, շատ ընդարձակ է, իսկ գիտական հետաքրքրությունների շրջանակները՝ քազմակողմանի:


Դա մի կողմից: Իսկ մյուս կողմից՝ տարիների ընթացքում կուտակված գիտական փորձը և ամբարած գիտելիքները նրան հնարավորություն են տվել նվաճելու նորանոր քնազավառներ և իր խոսքն ասել նրանց վերաբերյալ: Քառորդ դար զբաղվելով արաբական և մերձավորարևելյան տարաբնույթ հիմնախնդիրների ուսումնասիրությամբ, նա, դրան զուգահեռ, 1980 թվականների կեսերից սկսում է մեծ ուշադրություն դարձնել դասագրքերի պատրաստմանը: Նա գտնում է, որ դասագրքի պատրաստումը շատ կարևոր և բարդ խնդիր է, պահանջում է մեծ գիտելիքներ, նյութը գիտականորեն և մատչելի ներկայացնելու կարողություն և հմտու-

թյուն: Նա փայլուն կերպով դրսևորել է նման կարողություններ բոլոր այն դեպքերում, երբ մասնակցել և ղեկավարել է դպրոցական ձեռնարկների և դասագրքերի տեղիծման գործընթացը:

Նման առաջին ձեռնարկը եղավ հեղինակային կոլեկտիվի, որը հիմնականում կազմված է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատողներից, պատրաստած «Հայաստանի հարակից երկրների պատմություն. միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի համար» ձեռնարկը, (Երևան, 1992 թ.), որն իր տեսակի մեջ առաջին փորձն էր: Ժամանակագրական առումով այն ընդգրկում է հին շրջանից մինչև 1918 թ.: Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը, այդ ժամանակ լինելով արևելագիտության ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալ, ի պաշտոնն զլխավորեց այդ ձեռնարկի գիտակազմակերպչական բոլոր աշխատանքները (ձեռնարկի ժամանակագրական շրջանակները, հեղինակների և նրանց թեմաների ընտրությունը, համապատասխան բաժինների քննարկումները և այլն): Ն. Հովհաննիսյանն այդ ձեռնարկի ներածության և արարական երկրների պատմության գլխի հեղինակն էր և խմբագիրներից մեկը: Այդ ձեռնարկը չտնտեսված ընդունելություն գտավ աշակերտների և մանկավարժների կողմից: Գիրքը, որը սպազորվել էր 70 հազար օրինակ տպարանակով, սպառվեց մեծ արագությամբ: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ ձեռնարկը ծառայեց ոչ միայն դպրոցների աշակերտներին, այլև քաղճրագույն ուսումնական հաստատությունների ուսանողությանը:

1996 թ. հրատարակվեց «Նորագույն պատմություն (1939–1995 թթ.), Դասագիրք հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի համար» ձեռնարկը: Այդ դասագրքի յուրահատկությունը կայանում էր նրանում, որ նրա 1–4 գլուխները գրել էին հայ գիտնականները՝ Ն. Հովհաննիսյանի զլխավորությամբ, իսկ 5–8 գլուխները՝ ոտս պատմաբանները (Մոսկվա)՝ Վ. Ֆուրանի զլխավորությամբ: Ն. Հովհաննիսյանը ներածության և 1–3 գլուխների հեղինակն է: Այդ ձեռնարկը 1999 թ. ունեցավ երկրորդ, լրացված հրատարակությունը:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը կատարեց մի կարևոր նորամուծություն՝ մտցրեց մրցութային համակարգ, ըստ որի, դասագիրք կարող էին գրել միայն այն հեղինակները, որոնք մասնակցել և հաղթել էին մրցութուն: Պարտադիր պայման համարվեց նվազագույնը երկու–երեք հոգուց կազմված հեղինակային խմբի ստեղծումը:





Պրոֆեսոր Հովհաննիսյանը և նրա հեղինակակիցը հաղթեցին նորագույն պատմության շրջանի դասագրքի համար հայտարարված մրցույթում: Նրանց ներկայացրած տեքստը լույս տեսավ 1999 թ., իսկ երկրորդ, լրացված հրատարակությունը՝ 2001 թ. «Նորագույն պատմություն, Դասագիրք հանրակրթական դպրոցների համար. 8-րդ դասարան» վերտառությամբ:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը «Պատմություն. Հայոց պատմությունը համաշխարհային պատմության համատեքստում», հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի համար գրված դասագրքի հեղինակներից մեկն է, որը հրատարակվեց 2001 թվականին: Նա այդ դասագրքի ներածության և 15, 18, 20, 22 գլուխների հեղինակն է: Դրանցում լուսարանվել են «Վերսալ-վաշինգտոնյան համակարգը», «Ազգերի լիգան», «Ամբողջատիրական և դեմոկրատական վարչակարգերը», «Մտը պատերազմի տարիները (1946-1990 թթ.)», «Քաղաքական նոր իրադրությունը աշխարհում» հիմնախնդիրները:

Նա նաև հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի համար գրված «Համաշխարհային պատմություն» դասագրքի հեղինակներից է, որն ընդգրկում է XVII դարից մինչև 1918 թվականը, հեղինակներից է, որը հրատարակվել է 2013 թ.: Նրա գրչին են պատկանում այդ դասագրքի երկրորդ քաժնի 23-27-րդ գլուխները, որոնք վերաբերում են հիմնականում արևելյան հասարակություններին. «Արևելյան հասարակությունների արդիականացման փորձերը», «Միջազգային հարաբերությունները XIX դարի վերջին և XX դարի սկզբին. Աշխարհի գաղութային քաժանման ավարտը», «Առաջին աշխարհամարտը. 1914-1918»:

Եվ, վերջապես, Նիկոլայ Հովհաննիսյանի ղեկավարությամբ և խմբագրությամբ հանրակրթական դպրոցի իններորդ դասարանի համար հեղինակային խմբի գրված «Համաշխարհային պատմություն. 9», դասագիրքը, որը հրատարակվեց 2014 թ.: Դա 1918 թվականից մինչև մեր օրերն ընդգրկող ժամանակաշրջանն է, որն ընդունված է անվանել «Նորագույն շրջան» կամ «Նորագույն պատմություն»: Առաջին անգամ էր նման ծավալներով, համակարգված և դասագրքի պահանջներին համապատասխանող ձեռնարկ գրվում:

Սույն դասագրքում աշակերտների համար մատչելի կերպով և հասկանալի ձևակերպումներով ներկայացված են «Աշխարհը արդյունաբերական հասարակության երրորդ փուլում», «Աշխարհը

«Մառը պատերազմի» ժամանակաշրջանում» և «Աշխարհը արդի փուլում», որոնք պարունակում են հարուստ տեղեկատվություն միջազգային նոր կառույցների և երևույթների՝ Եվրոպական Միության, Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ), ռազմական բյուկների, զլորայիզացիայի (համընդհանրացման), ռատայականության, ցեղասպանության և ահաբեկչության մասին: Լուսարանվում է դրանց անդրադարձը անկախ Հայաստանի Հանրապետության, արաբական երկրների, Իրանի, Թուրքիայի, Հարավային և Հարավարևելյան Ասիայի ու Աֆրիկայի երկրների դրության ու զարգացման հեռանկարների վրա:

Ուշագրավ է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բոլոր հանրակրթական դպրոցները նախապատվությամբ տվել էին Ն. Հովհաննիսյանի գլխավորած հեղինակային խմբի ստեղծած տարբերակին: Մեծ թիվ էին կազմում նաև Հայաստանի Հանրապետության այն դպրոցների թվաքանակը, որոնք նույնպես զերպահանջ էին նորագույն շրջանի համաշխարհային պատմությունը սովորել նրանց պատրաստված դասագրքով:

Հակիրճ կերպով և ընդհանուր գծով ահա այսպիսին է պրոֆեսոր Ն. իկոյ Հովհաննիսյանի գիտական վաստակը:

Տարբեր երկրների մասնագետներ պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանին քննադատել են որպես «Նոր գաղափարների զենքատոր», «Կենդանի դասական», «Իմաստուն պատմաբան», «Բազառիկ անհատականություն», «Տաղանդավոր պատմաբան», «Հուշակալի պատմաբան», «Բանիմաց և արհեստավարժ պատմաբան», «Մեծանուն պատմաբան», «Ստեղծագործ (creative) և կառուցողական գաղափարների աղբյուր», «Ակադեմիական-գիտական տպավորիչ տաղանդ», «Արարագիտությունը միջազգային նոր մակարդակի բարձրացրած արևելագետ» և այլն:

III

ՊՐՈՖԵՍՈՐ ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը ոչ միայն ականավոր, միջազգային մեծ ճանաչում ունեցող գիտնական է, այլև հայտնի հասարակական-քաղաքական գործիչ: Այդ քնազախտում նրա մեծածավալ, բազմակողմանի գործունեությունը կապված է արևելագիտական քաղաքական, մշակութային և գիտական խնդիրների հետ, առնչվել է միջազգային, տարածաշրջանային և սփյուռքահայության հիմնահարցերին ու հանրապետության ներքին իրադարձություններին՝ ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային Հայաստանի անկախության շրջանում:

Ն. Հովհաննիսյանն իր համալսարանական կրթությամբ միջազգայնագետ պատմաբան է և շատ հաճախ է ներգրավվել զանազան պատմիրակությունների կազմում, որոնք մեկնել են արտասահմանյան տարբեր երկրներ, մասնակցել կարևոր և յուրջ քանակցությունների և իր գիտելիքներն ու փորձառությունը դիվանագիտության քնազախտում շատ օգտակար են եղել քննարկվող հարցերը հաջողությամբ լուծելու: Նա այդ այցելությունների ընթացքում հաճախ յիազորված է եղել ստորագրել զանազան պայմանագրեր, հուշագրեր և դեկլարացիաներ, ինչպես Սիրիայում, Չինաստանում, Հնդկաստանում, Եգիպտոսում և այլ երկրներում: Հյուրընկալ երկրների պատմիրակությունները մեծադույն հարգանքով են վերաբերվել Նիկոլայ Հովհաննիսյանին և քարձր զնահատել բանակցություններ վարելու նրա ունակությունները և կոլտուրան, հիացել հարցերը քննարկելու ժամանակ նրա դրսևորած մտքի ճկունությամբ և դժվարությունները հաղթահարելու նրա արվեստով:

Նրա այդ գործունեությունը շատ հաճախ է խաչաձևվել կարևոր պետական հարցերի լուծման հետ: Եվ այն ղեպքը, որի մասին կխտալի ստորև, տիպաբանորեն պատկանում է նման հարցերին:

**1. ԹԱԼԵԱԹԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԿԱԸ ԱԼԵՔՍԵՅ ԿՈՍՏԳՈՒՆԻՆ
ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՅՐԱԾ ՏԵՂԵԿԱՔԸ
ԵՎ ԴՐԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Դա, ինչպես նշում է Նիկոլայ Հովհաննիսյանը, տեղի ունեցավ 1966 թ., երբ պատմաբան-միջազգայնագետ Ջոն Կիրակոսյանը (1929-1985) զբաղեցնում էր Հայաստանի կոմկուսի կենտրոնական կոմիտեի պրոպագանդայի բաժնի վարիչի տեղակալի պաշտոնը, (հետագայում՝ 1975-1985 թթ. զխսավորել է Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը), իսկ ինքը, նույնպես պատմաբան-միջազգայնագետ, աշխատում էր ՀՀ զիտությունների ակադեմիայի արևելագիտության բաժնում՝ որպես արաբական երկրների բաժնի վարիչ: Երկուսն էլ եղել են 1945 թ. Երևանի պետական համալսարանում բացված միջազգային հարաբերությունների ֆակուլտետի շրջանավարտներ: Ն. Հովհաննիսյանը գրում է, որ դեռ ուսանողական տարիներին իրենց միջև հաստատվել էին քաղեկամական, ընկերական հարաբերություններ:

Հաշվի առնելով քննարկվող հարցի կարևորությունը՝ նպատակահարմար է ամբողջությամբ ներկայացնել այս հարցին նվիրված այն տեքստն այնպես, ինչպես դա ներկայացված է Ջոն Կիրակոսյանի ծննդյան 80-ամյակին նվիրված Ն. Հովհաննիսյանի «Նրա տարերքը միջազգային հարաբերությունների ոլորտն էր» հոդվածում, որը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի մակեհիշով 2009 թ. հրատարակվել է «Ջոն Կիրակոսյան. Անկախ պետականության և քաղաքական հայազգիտության ակունքներում» հոդվածների ժողովածուում, որի կազմողը նրա որդին՝ պ.գ.դ. Արման Կիրակոսյանն է:

Ն. Հովհաննիսյանը գրում է. «Ջոն Կիրակոսյանն ինձ զանգահարեց և ասաց շտապ գնամ կենտրոնական կոմիտե՝ իր մոտ: Ես սովոր էի նման զանգերի, դա ասացին դնաքը չէր, երբ ինձ զանգան առիթներով հրավիրում էին կենտկոմ՝ խորհրդակցության և զանազան փաստաթղթեր կազմելու: Մենք լինելով միևնույն միջազգային հարաբերությունների ֆակուլտետի շրջանավարտներ, դեռ ուսանողական տարիներից մեր միջև հաստատվել էին ընկերական լավ հարաբերություններ, որոնք պահպանվեցին մինչև վերջ, և այդ տարիներին մեկ անգամ չէ. որ մենք համազործակցել ենք տարբեր հարցերում, խորհրդակցել միմյանց հետ և քննարկել զանազան ծրագրեր:

Երբ ես գնացի կենտրոնի շենք, և մենք հանդիպեցինք նրա աշխատասենյակում, ապա նա ինձ հայտնեց, որ, Խորհրդային Միության Նախարարների խորհրդի նախագահ Ա. Ն. Կոսիգինը պաշտոնապես մեկնում է Թուրքիա և բուրջական կողմը նրա համար կազմել է մեծ ծրագիր, այդ բվում և պսակադրման արարողություն ոչ միայն Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի, այլ նաև երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավար, 1915 թ. հայ ժողովրդի ցեղասպանության գլխավոր կազմակերպիչ Թալանթի գեներալնին: Հայ վրիժառու Մողոմոն Թեհլերյանի կողմից 1921 թ. Բեռլինում գնդակահարված Թալեբաթի աճյունը այդ ժամանակ նոր էին Բեռլինից տեղափոխել Անկարա և մեծ շուքով նրան վերաթաղել այնտեղ: Նշենք նաև, որ առաջին անգամ էր Խորհրդային Միության կառավարության ղեկավարը պաշտոնական այցով մեկնում Թուրքիա:

Խորհրդային Միության կառավարության ղեկավարի Թուրքիա այցելության մասին ինձ հայտնելուց հետո, Ջ. Կիրակոսյանն առաջ, որ Հայաստանի ղեկավարությունը մտադիր է պատրաստել մի փաստաթուղթ Ա. Կոսիգինի համար՝ հորդորելով նրան Անկարա իր այցի ժամանակ հրաժարվել պսակադրման արարողությունից: Նա միաժամանակ ավելացրեց, որ այդ փաստաթուղթը ծավալով մեծ չպետք է լինի, քանի որ այդ կատեգորիայի ղեկավարները սովորաբար խուսափում են բազմաշե գրություններ կարդալուց, պետք է ունենա շատ կոնկրետ քոլանդակություն և, ամենազլխավորը, լինի փաստարկված ու առանց ավելորդ զգացմունքային տարրերի: Ես, քնականաբար, ամբողջ սրտով ողջունեցի Հայաստանի ղեկավարության այդ հիանալի մտադրությունը, ընդգծելով, որ բոլոր միջոցներով պետք է քիկուեք կանգնել Հայաստանի ղեկավարության այդ քայլին: Դրանից հետո ես նրան առաջի. «Տոն, այդ տեղեկանքը կազմելու ամենահարմար թեկնածուն դու ես, դու լավ գիտես այդ պատմությունը, հենց նոր է լույս տեսել քո դոկտորական դիսերտացիան արևմտահայության մասին, և քեզնից լավ ոչ ոք չի գրի»: Նա պատասխանեց, որ ինքը չի կարող գրել, որովհետև ղեկավարությունը որոշել է, որ այդ տեղեկանք-փաստաթղթի տակ չի կարող լինել որևէ պետական կամ կուսակցական պաշտոնային ստորագրություն: Տեղեկանքը պետք է ներկայացվեր ոչ թե Հայաստանի ղեկավարության անունից, այլ հայ հասարակության կողմից՝ որպես ժողովրդական զանգվածների ցանկությունների և տրամադրությունների արտահայտություն: Եվ ավելացրեց, որ

ղնկավարությունը նախընտրելի է համարում, որ փաստաբույրը զրկված լինի զիտական հասարակայնությունը ներկայացնող որևէ մասնագետի կողմից, որը մոտ է կանգնած այդ խեղդիներին և չավատելյակ է հարցի պատմությանը, այն նկատառումով, որ Մոսկվայի համար դա համոզիչ չէ: Այդ ասելուց հետո, նա ավելացրեց. «Ղնկավարության ընտրությունը կանգ է առել թո թեկնածության վրա, հաշվի առնելով թո զիտական աստիճանը, հրատարակված աշխատությունները և այն հանգամանքը, որ դու արևելագետ ես և զիտությունների ակադեմիայի արևելագիտության սեկտորի ղեկավարներից մեկն ես: Տեղեկանքի տակ պետք է լինի թո ստորագրությունը».— առարկություն չընդունող վճռական տոնով ավարտեց նա իր խոսքը: Հասկանալի է, նման քացատրությունից հետո ինձ ոչինչ չէր մնում անել, քան համաձայնվել, և նս հարցրեցի, թե քանի օր եք տալիս ինձ դրա համար: Նա ծիծաղեց և ասաց «Մյ մի օր, դու պետք է հիմա նստես իմ աշխատասենյակում և ամենաշատը մի երկու ժամվա ընթացքում պատրաստես այդ տեղեկանքը, որովհետև Կոսիգինը Թուրքիա է մեկնելու երկու օրից հետո, ժամանակ չկա»: Այնուհետև նա փարատեց իմ կասկածները մի հարցում: Երբ ես նրան ասացի, որ եթե Կոսիգինը մեկնելու է մի երկու օրից, այս փաստաբույրը մինչև փոստով հասնի Մոսկվա, Կոսիգինն արդեն Անկարայից վերադարձած կլինի: Նա ինձ պատասխանեց, որ պայմանավորվածություն կա, որ այսօր երեկոյան Երևանից Մոսկվա թռչող վերջին ինքնաթիռով ծրարը կողարկվի և համապատասխան մարդը Մոսկվայի օդանավակայանում կդիմավորի, կստանա ծրարը և հենց նույն երեկոյան կհանձնի ում որ հարկն է:

Այնուհետև մենք քննարկեցինք փաստաբոյրում ներառնելիք գլխավոր հարցերը: Կարծիքներ փոխանակելով՝ մենք եկանք այն եզրակացության, որ չպետք է առարկել Քեմալի գերեզմանին պատկ ղեկելու արարողությանը, քանի որ Քեմալը թուրքական հանրապետության հիմնադիրն է և նրա գերեզմանին պատկազրումը մտնում էր թուրքական պետության պաշտոնական արարողակարգում և պարտադիր կիրառվում էր օտարերկրյա քաղաքակարգ պատմիրակությունների այցելության ժամանակ: Բացի այդ, վստահ չէինք, թե Կոսիգինը նման առաջարկությունը հաշվի կառներ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ խորհրդային ղեկավարությունը շարունակում էր հավատարիմ մնալ և հետևել, այսպես կոչված, «Լենինի-Քեմալ» բարեկամության կեղծ տեսադրույթին և հաշվի առնում այդ հանգամանքը Թուրքիայի հետ իր հարաբերու-

թյուններում: Ուստի որոշեցինք կենտրոնանալ Թալեաթի հարցի վրա, այն անջատելով Քեմալի հարցից, այն ակնկալությամբ, որ դա Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության ղեկավարության, առաջին հերթին քաղցյուրոլի համար ավելի ընկալելի, հասկանալի և ընդունելի կարող է լինել:

Ձ. Կիրակոսյանն, ինձ տրամադրելով իր աշխատասենյակը, հեռացավ, և մենք պայմանավորվեցինք, որ նա կգա մոտ մեկ-մեկուկես ժամից հետո, երբ ես ավարտած կլինեմ տեքստը:

Տեքստում շատ համառոտակի խոսվում էր 1915 թ. ցեղասպանության մասին, որ իրագործեցին երիտթուրքերն Օսմանյան կայսրությունում, առանձնացնելով Թալեաթի հանցագործ դերակատարումը, ընդգծելով, որ դա հանցագործություն էր համայն մարդկության դեմ, որն իր ժամանակին դատապարտել էին տարբեր ժողովուրդների, այդ թվում ռուսների, առաջադեմ գործիչները և այլն, և այլն: Փաստաթղթի ավարտական մասում այն միտքն էր արտահայտվում, որ Խորհրդային Միության կառավարության, որը միաժամանակ նրա կազմում մտնող Խորհրդային Հայաստանի կառավարությունն է, ղեկավարի այցելությունը մի այնպիսի դաժճի գերեզմանին, ինչպես Թալեաթն է, խոնարհվելը նրա գերեզմանի առջև և որպես հարգանքի նշան պսակ ղեկը, անհասկանալի կլինի Հայաստանի ժողովրդի և համայն հայության համար, նրա կողմից կրեկալվի որպես վիրավորանք երիտթուրքական դաժճների կողմից ոչնչացված մեկուկես միլիոն անմեղ հայերի հիշատակին և մեծ վնաս կհասցնի խորհրդային պետության միջազգային վարկին ու հեղինակությանը: Ելնելով այդ հանգամանքից՝ Ա. Կոսիգինին առաջարկվում էր ձեռնպահ մնալ Թալեաթի գերեզմանին այցելելուց և պսակադրումից:

Ձ. Կիրակոսյանը վերադարձավ մոտ երկու ժամից հետո, և ես նրան հանձնեցի ավարտուն տեքստը, որը քաղկացած էր երկու էջից: Նա կարդաց տեղեկանքը, ասելով՝ «լավ է ստացվել», տվեց մեքենագրելու, որից հետո ինձ ապսպրելով սպասել իր աշխատասենյակում, վերցրեց տեղեկանքը և ասելով՝ «տաննմ ղեկավարությանը ներկայացնեմ», դուրս եկավ աշխատասենյակից: Նա տեքստը ներկայացնում է ՀՀ կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանին: Մոտ մեկ ժամից Ձ. Կիրակոսյանը վերադարձավ ուրախ տրամադրությամբ և, ինձ շնորհավորելով, ասաց. «Նկավարությունը հավանություն տվեց տեքստին, այժմ ստորագրիր և քո ձեռքով դիր ամիս-ամսաթիվը»: Ես ստորագրեցի, և մենք հույս

հայտնեցինք, որ Ալեքսեյ Կոսիգինը հաշվի կառնի հայերի խնդրանքը: Կրկին ինձ շնորհակալություն հայտնելով՝ նա խոստացավ ինձ տեղյակ պահել արդյունքների մասին: Հաջորդ օրն առավոտյան նա զանգահարեց ինձ տուն և բառացիորեն ասաց հետևյալը. «Ծրարը տեղ է հասել և արդեն գտնվում է Ա. Կոսիգինի սեղանի վրա»: Իսկ մի քանի օր անց, երբ արդեն ավարտվել էր Ա. Կոսիգինի պաշտոնական այցը Թուրքիա, և նա արդեն վերադարձել էր Մոսկվա, Ջոն Կիրակոսյանը զանգահարեց ինձ և ասաց. «Ուրախ լուր. Կոսիգինը չի այցելել Թալեաթի գերեզմանին և ոչ մի պսակ չի դրել»: Մենք միմյանց շնորհավորեցինք և որոշ դադարից հետո նա կեչուրջ-կենսկատակ ասաց. «Եփեղայ, դու մտաբ պատմության մեջ: Հետագայում արխիվները կբացեն և մադոլիկ կկարդան այդ փաստաթուղթը»: Ես նրան նույն ոգով պատասխանեցի. «Եթե պատմության մեջ մտնելու հարց կա, ապա նրկուսով ենք մտնելու, սա այն դեպքն է, երբ պատմություն կոչվածի մեջ առանձին-առանձին չեն մտնում»:

(Տես «Եփեղայ Հովհաննիսյան, Նրա տարերքը միջազգային հարաբերությունների ոլորտն էր — Ջոն Կիրակոսյան, Անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում», Երևան, 2009: Կազմող, խմբագրող՝ պատմ. գիտ. դոկտոր Արման Կիրակոսյան):

2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎՆԵՐՈՒՄ

Ն. Հովհաննիսյանը 1975–1991 թթ. եղել է «Մովսես-արաքական քարեկամության ասոցիացիայի» փոխնախագահ, մի կազմակերպություն, որի հեղինակությունը շատ բարձր էր թե՛ հորհրդային Միությունում, և թե՛ արաքական նրկրներում: Նա համարվում էր նրա ամենաաչքի ընկնող փոխնախագահը, որի մասնազիտական խորհուրդները մեծ դեր են խաղացել նրա առաքելությունը հավասարակշռված և բարձր մակարդակով իրականացնելու գործում:

Նա նաև եղել է «ԽՍՀՄ-Իրաք» քարեկամության ընկերության փոխնախագահը, «ԽՍՀՄ-Լիբանան» և «ԽՍՀՄ-Եմենի Դնոկ-րատական Ժողովրդական Հանրապետության» քարեկամության ընկերությունների վարչության անդամ ընդհուպ մինչև 1991 թ.՝ Խորհրդային Միության փլուզումը:

Ն. Հովհաննիսյանը 1975–1991 թթ. եղել է հայ-արաբական բարեկամության և մշակութային կապերի ընկերության նախագահ: Անգնահատելի է նրա գործունեությունն այդ պաշտոնում: Նրա ղեկավարության տարիներին այդ ընկերության աշխատանքները քարձրացվեցին նոր մակարդակի և հայ-արաբական բարեկամության ընկերությունը, որի կազմում ընդգրկված էին հանրասփտության ականավոր գիտնականներ, գրողներ, կոմպոզիտորներ, հասարակական և քաղաքական գործիչներ, դարձել էր հայ-արաբական համագործակցության յուրահատուկ կենտրոն և զգալի դեր խաղացել հայ-արաբական կապերի, այդ թվում և հայ-արաբական միջպլետական հարաբերությունների զարգացման գործում:

Հայ ականավոր հասարակական գործիչ Նիկոլայ Հովհաննիսյանը 1970–1991 թթ. ընտրվել է Ասիայի և Աֆրիկայի համերաշխության խորհրդային կոմիտեի և վարչության, Ասիայի և Աֆրիկայի համերաշխության հայկական կոմիտեի և վարչության անդամ, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապերի հայկական ընկերության (ԱՕԿՍ) վարչության և նախագահության անդամ՝ իր արժանի լուծան ներդրելով այդ նշանավոր կազմակերպությունների գործունեության մեջ:

1982 թ. սկզբներին Հայաստան ժամանեց Ասիայի և Աֆրիկայի համերաշխության կազմակերպության պատվիրակությունը՝ բաղկացած Ասիայի և Աֆրիկայի շուրջ 30 երկրների՝ Հնդկաստանի, Հորդանանի, Սիրիայի, Լիբանանի, Թուրքիայի, Գանայի, Մալիի, Բանգլադեշի և այլ երկրների պետական, քաղաքական, հասարակական և կուսակցական ղեկավար գործիչներից, ԽՍՀՄ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, Ասիայի և Աֆրիկայի համերաշխության խորհրդային կոմիտեի նախագահի տեղակալ, ակադեմիկոս Եվգենի Պրիմակովի գլխավորությամբ: Պատվիրակությանը ուղեկցում էր և աշխատանքները համակարգում Ասիայի և Աֆրիկայի հայկական կոմիտեի նախագահության անդամ, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը:

Պատվիրակության՝ Հայաստանում գտնվելու ծրագրի ամենակարևոր կետերից մեկն աչցելությունն էր Էջմիածին, Մայր Աթոռ և հանդիպումը Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաքինի հետ: Պատվիրակությանը շատ ջերմորեն ընդունեց Վեհափառը: Դիմելով Ն. Հովհաննիսյանին՝ Վեհափառը խնդրեց ներկայացնել պատվիրակության անդամներին, որը նա կատարեց Ե. Պրիմակովի հետ՝ միաժամանակ Վեհափառին ներկայացնելով ակադեմի-

կոս Պրիմակովի ով լինելը: Եվ քանի որ Ե. Պրիմակովը ոտսերն էր խոսում, Ն. Հովհաննիսյանն իր վրա է վերցնում նաև թարգմանչի պարտականությունները, ի հարկին՝ նաև անգլերեն: Երբ ներկայացվեց Հեղկաստանի ներկայացուցիչը, որը այդ երկրի կառավարող կուսակցության ղեկավար անդամներից էր, Վեհափառը շատ ջերմ ու քարի խոսքեր ասաց Հեղկաստանի և նրա ժողովրդի, հայ-ինդկական բարեկամական կապերի մասին: Նա շատ ջերմ արտահայտվեց նաև արաբների մասին, երբ Պրիմակովը ներկայացրեց Հորդանանի տեղեկատվության նախարարին:

Բայց, ինչպես նշում է Ն. Հովհաննիսյանը, բոլորը սպասում էին, թե Ե. Պրիմակովը ինչպես կներկայացնի Թուրքիայի ներկայացուցիչ լրագրող Մյուսթագ Մոյսային, որը հայտնի էր իր հակահայկական դիրքորոշումով և գրվածքներով: Ե. Պրիմակովն ուղղակի ասաց, որ նա Թուրքիայի ներկայացուցիչն է, գրում է տարբեր քննքներում զանազան հարցերի մասին, և ուրիշ ոչինչ: Ն. Հովհաննիսյանը նշում է, որ այնուհետև Վեհափառը ներկաներին ներկայացրեց Հայոց նկեղեցու պատմությունը, հիշատակելով, որ հայերն առաջինն են, որ 301 թ. քրիստոնեությունը հայտարարել են պետական կրոն, կանգ առնելով հայ ժողովրդի պատմության հիմնական դրվագների վրա, և չխուսափեց խոսել նաև Թուրքիայում 1915 թ. իրագործված հայերի ցեղասպանության մասին: Երբ Վազգեն Առաջինն արտասանեց ցեղասպանություն բառը, բոլոր ներկաների հայացքներն ուղղվեցին Թուրքիայի ներկայացուցչի կողմը, քայքայեց նա այդ պահին կարողացավ զսպել իրեն և չարձագանքեց հայոց կարողիկոսի խոսքերին: Այնուհետև սկսվում է հետաքրքիր զրույց, որն ավելի շատ հարց ու պատասխանի էր նման: Վեհափառին իր հարցն ուղղեց և գրույցի մեջ մտավ նաև Մոյսայը, որը մանրամասն գրի է առել Ն. Հովհաննիսյանը: Միս դա. «Մոյսայը փորձում էր համոզել ոչ միայն ներկաներին, այլև Վեհափառին, որ հայերը լավ պայմանների մեջ են գտնվել Օսմանյան կայսրությունում, սուլթանները գնահատել են նրանց ունակությունները և աշխատասիրությունը: Որպես դրա ապացույց նա նշում է այն հանգամանքը, որ հայերը քարձր պաշտոններ են զբաղել օսմանյան կառավարության մեջ, հատկապես ընդգծելով այն իրողությունը, որ, օրինակ՝ հայազգի Գարրիել Նորատունկյանը 1912-1914 թթ. զբաղեցրել է Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարի պաշտոնը և այլև: Շարունակելով իր դատողությունները՝ Մոյսայը ժխտեց Հայոց ցեղասպանության փաստը և զարմանք հայտնեց, որ Հա-

յաստանում կառուցվել է Մճճ եղևնիի հուշարձան: «Վեհափառն իր պատասխանում հերքեց նրա «փաստարկները»՝ ասելով. «Ավելի լավ կլիներ սույթաններն առանձին հայերի պաշտոններ չտալին, քան կազմակերպելն հայերի գանգվածային կոտորածներ»:

Պատվիրակության՝ Հայաստանում գտնվելու ծրագիրը, ինչպես հաստատում է Ն. Հովհաննիսյանը, իրագործվեց ամբողջությամբ, և դա բարձրացրեց Ասիայի և Աֆրիկայի համերաշխության հակապան կոմիտեի և նրա ղեկավարության հեղինակությունը:

3. ԲԱՐԵՎԱՄՈՒԹՅԱՆ ՕՐԵՐԻ ԱՆՑԱՑՈՒՄԸ ԵՎ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

XX դարի երկրորդ կեսերին զարգացման բարձր մակարդակի վրա էին գտնվում խորհրդային Միության հարաբերությունները Եգիպտոսի, Իրաքի Սիրիայի, Եմենի և արաբական մի շարք այլ երկրների հետ: Ինչ վերաբերում է Արաբական թերակղզու երկրներին՝ Սաուդյան Արաբիային, Քուվեյթին, Արաբական Միացյալ Էմիրություններին, Կատարին և Բահրեյնին, ապա հարաբերությունները նրանց հետ թույլ էին, անգամ որոշ երկրների հետ, ինչպես Սաուդյան Արաբիան, չկային դիվանագիտական հարաբերություններ: Խորհրդային Միությունը ցանկանում էր ընդլայնել հարաբերությունները նրանց հետ, և այդ գործընթացում խորհրդային ղեկավարությունը ներգրավեց հասարակական, ոչ կառավարական կազմակերպություններին: Ընտրությունն ընկավ «Սովետա-արաբական բարեկամության ասոցիացիայի» վրա: 1986 թ. հոկտեմբերին խորհրդային պատվիրակությունը, ասոցիացիայի նախագահ, ԽՍՀՄ մանկավարժական ակադեմիայի նախագահ Ի. Կոնդակովի գլխավորությամբ, որի կազմի մեջ մտնում էին Աննինգրադի էր-միտաժի տնօրեն, ակադեմիկոս Բ. Պիտորովսկին, ասոցիացիայի փոխնախագահ Ն. Հովհաննիսյանը, Սաուդյան Արաբիայի պատմության մասնագետ Ի. Բելյանը և այլք, թվով ութ հոգի, որոնցից երկուսը Ուզբեկստանից, մեկնեցին այդ տարածաշրջան՝ նպատակ ունենալով այցելել Քուվեյթ, Սաուդյան Արաբիա և Արաբական Միացյալ Էմիրություններ: Սաուդյան Արաբիան, չնայած նախնական պայմանավորվածությանը և արաբական երկրների մի քանի ազդեցիկ գործիչների միջամտությանը, արգելեց պատվիրակության մուտքը երկիր: Ինչ վերաբերում է Քուվեյթին և Արաբական Մի-

ացյալ Էմիրություններին, ապա պատվիրակության անդամները փայլուն կերպով կատարեցին իրենց առաքելությունը, որը շատ բարձր գնահատվեց Մոսկվայում համապատասխան մարմինների կողմից: Դրանում մեծ էր պատվիրակության երկու արարազետ անդամների՝ Ն. Հովհաննիսյանի և Ի. Բելյակի ներդրումը:

Ն. Հովհաննիսյանը խորհրդային պաշտոնական պատվիրակությունների կազմում 1965-1986 թթ. եղել է Իրաքում, Սիրիայում, Լիբանանում, Հորդանանում, Լիբիայում, Ալբանական Միացյալ Էմիրություններում, մասնակցել Իրաքի պրեզիդենտ Ահմադ Հասան ալ-Բաթրի, Սիրիայի պրեզիդենտ Հաֆիզ Ասադի, Լիբանանի պրեզիդենտ Սուլեյման Ֆրանժիեի հետ քանակցություններին: Նա հանդիպումներ և զրույցներ է ունեցել նաև Իրանի, Լիբիայի, ԱՄՆ-ի, Եգիպտոսի քաղաքական գործիչների, Պաղեստինի ազատագրության կազմակերպության նախագահ Յասիր Արաֆաթի, Իրանի հոգևոր առաջնորդ այաթոլլահ Խոմենիի հատուկ ներկայացուցիչ, Իրանի Իսլամական Հանրապետության պաշտպանության նախարար, Հեղափոխական խորհրդի նախագահ Մուսթաֆա Չամրանի, Լիբանանի պառլամենտի նախագահներ Հուսեյն Հուսեյնի և Նաքիի Բերրիի, վարչապետ Ռաշիդ Սոլիի, Սիրիայի վարչապետ Մուսթաֆա Սիրույի, Սիրիայի կառավարության խորհրդական Ահմեդ Ջարուշի և այլոց հետ:

Այդ ժամանակաշրջանում Հայաստանում անց են կացվել Սիրիայի, Իրաքի, Լիբանանի, Լիբիայի և Պաղեստինի քարեկամության ու մշակույթի օրեր, որի կազմակերպման և անցկացման գործում մեծ դերակատարում են ունեցել հայ-արաբական քարեկամության ընկերությունը և նրա նախագահ Նիկոլայ Հովհաննիսյանը: Հայաստան էին ժամանում այդ երկրների պատվիրակություններ պետական բարձրաստիճան ղեկավարների գլխավորությամբ, որի կազմում ընդգրկվում էին ակամավոր քաղաքական և հասարակական գործիչներ, գիտնականներ, արվեստի գործիչներ և այլն:

Համապատասխանաբար Հայաստանի քարեկամության և մշակութային օրեր են անցկացվել Սիրիայում, Լիբանանում, Իրաքում, Հորդանանում, Լիբիայում, Ալժիրում և այլն, որը մեկնում էին Հայաստանի պատվիրակությունները՝ կառավարության որևէ ղեկավարի գլխավորությամբ, որի կազմում ընդգրկվում էր նաև հայ-արաբական քարեկամության և մշակութային կապերի ընկերության նախագահ Նիկոլայ Հովհաննիսյանը: Հայ ակամավոր արարազետի մասնակցությունը պատվիրակության կազմում եղել

է շատ կարևոր, կարելի է ասել անփոխարինելի, և նպաստել նախատեսված ծրագրերի հաջող իրականացմանը:

Իսկ Հայաստանի անկախության շրջանում նա ընդգրկվել է ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորած պատմիրակության կազմում Հնդկաստան (2003 թ.) և Չինաստան (2004 թ.) պետական այցի ժամանակ, որի ընթացքում նշված երկրների տարրեր գիտական կենտրոնների հետ ստորագրել է համագործակցության հուշագրեր:

4. «ՆՒԿՈՒԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ»

Այս խոսքերը պատկանում են Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանին:

1975 թ. ապրիլի 13-ին սկսվեց քաղաքացիական երկրորդ պատերազմը Լիբանանում, որը տևեց մոտավորապես 15 տարի: Ինչպես նշում է Ն. Հովհաննիսյանը, երկիրը բաժանվեց երկու հակադիր թշնամական ձամբարի՝ աջերի, որոնց միջուկը կազմում էին քրիստոնյա մարոնիների խումբը՝ Պինո ժամայելի և նրա երկու որդիների գլխավորությամբ, և, ձախերի, որոնք միավորվել էին «Ազգային շարժում» խմբավորման մեջ: Լիբանանահայությունը որդեգրեց դրական չեզոքության քաղաքականություն, որին դեմ էին աջերը: Ն. Հովհաննիսյանը, որն այդ հարցը ուսումնասիրել է հիմնովին, մասնակցել այդ քաղաքականության սկզբունքների մշակմանը և նրա ընդունմանը հայ համայնքի կողմից, նշում է, որ մարոնիները վարում էին հեզեմոնիստական քաղաքականություն և ձգտում էին իրենց ենթարկել Լիբանանի քոլոր քրիստոնյա համայնքները, այդ թվում և հայ համայնքը, ինչպես նաև հույն ուղղափառ և կաթոլիկ համայնքները, և այդ կերպ իրենց իշխանությունը հաստատել ամբողջ Լիբանանի վրա: Հայերը դեմ էին մարոնիների նկրտումներին և չենթարկվեցին նրանց: Ձախերը կամ «Ազգային շարժումը», հարգում էր հայերի դիրքորոշումը, այսինքն՝ դրական չեզոքության քաղաքականությունը:

Լիբանանը, հայտնվելով քաղաքացիական պատերազմի հորձանուտում, կանգնեց անդունդի նզրին: Դրանից չխուսափեց նաև 250-հազարանոց հայ համայնքը, որի դիրքերը տևտևության մեջ, երկրի կառավարման համակարգում քավակաճին ուժեղ էին: Դրությունն ավելի վատթարացավ, նրբ լավ զինված քրիստոնյա

մարտնիական ռազմամուկները՝ մարտնի փառանգավորները և շամունականները, 1978 թ. հոկտեմբերի 1-ին հարձակում սկսեցին Արևելյան Բեյրութի հայկական քաղամասերի վրա: Հոկտեմբերի 1-7-ը ծանր հրետանային ուժերով հարձակումն ենթարկվեցին Բուրջ Համուդ, Բիբլոս, Մեքն, Քեարվան, Աշրաֆիա, Նոր Հաջն, Ջալկա և այլ հայկական քաղամասեր: Գազազած հրոսակները պայթեցնում և քանդում էին հայերին պատկանող շինությունները: Խիղճը կորցրած ջարդարարները պայթեցրին Բիքֆայայում լիբանանահայության կողմից հայերի ցեղասպանության հիշատակին կանգնեցված հուշարձանը: Հոկտեմբերյան արյունալի օրերին գոհվեց 80 և վիրավորվեց 350 հայ, մոտ 20 հազար հայ փախուստ տվեց և հաստատվեց Սիրիայում, Հորդանանում, Կիպրոսում, Իրաքում և այլ երկրներում (տես Ն. Հովհաննիսյան, Արաքական երկրների պատմությունը, III. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005, Երևան, 2006):

Հայաստանում ուշիուշով հետևում էին դեպքերի զարգացմանը և մտահոգ էին հայ համայնքի գլխին կախված վտանգի պատճառով: Երբ հայ համայնքի վրա հարձակման լուրը հասավ Հայաստան, 1978 թ. հոկտեմբերին Երևանում տեղի ունեցան ցույցեր: Ցուցարարները պատաստներով դուրս եկան փողոցները և ուղևորվեցին դեպի Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի շենքը, պաշանջելով, որ մայր հայրենիքը օգնության հասնի Լիբանանի հայությանը, Հայաստանի դուները քաջի լիբանանահայության առջև և թույլ տա հայ կամավորներին մեկնել Լիբանան և կանգնել վտանգի ենթարկված հայության կողքին: Օրակազրգի հարց է դառնում լիբանանահայությանն օգնություն ցույց տալու, անվտանգությունն ապահովելու խնդիրը: Այդ պահին, Հայաստանի ղեկավարությունը հանձնարարում է պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանին հանդես գալ հեռուստատեսությամբ և հասարակությանը քաջատրել, թե ինչ է տեղի ունեցել, հաշվի առնելով, որ եւ արաքազեւ է լավատեղյակ Լիբանանի իրադրությանը և հայ-արաքական բարեկամության և մշակութային կապերի ընկերության նախագահն է: Ն. Հովհաննիսյանն իր ելույթի տեքստը ներկայացնում է Կարեն Դեմիրճյանին, որը հավանություն է տալիս և Ն. Հովհաննիսյանը հանդես է գալիս հեռուստատեսությամբ՝ քաջատրելով եղելությունը, կոչ անելով հայերին հանդարտության, նշելով, որ խուճապի մատուցելու ոչ մի պատճառ չկա, ընդգծելով, որ Հայաստանի ղեկավարությունը հետևում է իրադարձությունների

զարգացմանը և անհրաժեշտության դեպքում համապատասխան քայլեր կձեռնարկի պաշտպանելու լիրանաևահայությանը: Տույցերը դադարեցին (տես Կարիլներ մեծ ծովից, Կարեն Դեմիրճյանը երախտապարտ ժամանակակիցների հուշերում, Երկրորդ գիրք, Երևան, 2007): Մակայն բոլորն էլ գիտակցում էին, որ հայ համայնքի գլխին մեծ վտանգ է կախվել և անհրաժեշտ են արտակարգ միջոցներ ձեռնարկել կանխելու նման վտանգավոր գործողությունների հետագա զարգացումը: Այդպես հասունացավ Լիբանան պատվիրակություն ուղարկելու հարցը, որը Կ. Դեմիրճյանը կարողացավ համաձայնեցնել Մոսկվայի հետ: Նրա կազմում ընդգրկվեցին Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը, Հայաստանի Մինիստրների խորհրդի պատասխանատու աշխատակից Թ. Հարությունյանը և պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը: Ն. Հովհաննիսյանի առաքելության գլխավոր նպատակներն են եղել՝ օգտագործելով իր կապերը լիբանանյան պետական, քաղաքական, հասարակական, կուսակցական, կրոնական, զինվորական և դատախոհական գործիչների հետ, մոտիվացնել նրանց ներուժն ու հնարավորությունները լիբանանահայությանը քաղաքական, քարոյական, նյութական և այլ բնույթի աջակցություն ցույց տալու, նրա անվտանգությունն ապահովելու և հայ համայնքի վրա հնարավոր նոր հարձակումները կանխելու համար:

Անա թե ինչ էլ գրել այդ մասին Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանն իր անտիպ հուշերում, որը Նիկոլայ Հովհաննիսյանին է տրամադրել Կ. Դեմիրճյանի այրին՝ տիկին Ռինա Դեմիրճյանը. «Ն. Հովհաննիսյանին մենք գործուղեցինք Լիբանան (այդ պատրվակի տակ նա պետք է այցելեր Մերձավոր Արևելքի այլ երկրներ) ավելի լայն շրջանակի խնդիրներ լուծելու համար (օգտագործելով նրա լայն կապերն այդ ոեզիոնի շատ հասարակական գործիչների հետ): Այնպես, որ նա պատվիրակության կազմում ընդգրկված է **հատուկ** նպատակների համար: Եվ ի պատիվ նրա պետք է ասել, որ նա հենց **հատուկ** առաջադրանքները կատարեց քավական հաջող (ընդգծումները՝ Կ. Դեմիրճյանի — *խմբ.*)»:

Մեկնելով Բեյրութ՝ պատվիրակությունը մեծ աշխատանք է տանում լիբանանահայությանը համախմբելու և միասնական ուժերով հայության անվտանգությունն ապահովելու ուղղությամբ: Արդյունքում ստեղծվում է վերին մարմինը, որի կազմում, ինչպես նշում է

պատվիրակության անդամ Ն. Հովհաննիսյանը, ընդգրկվում են Ռամկավար ազատական և Սոցիալ-դեմոկրատ հնչական կուսակցությունների և հայ համայնավարների քարձրագույն ղեկավարները: Սիկոյայ Հովհաննիսյանն իր գրառումներում հանգամանորեն անդրադարձել է վերին մարմնի աշխատանքներին և համատեղ գործունեությանը հայկական պատվիրակության երկու անդամների՝ Թ. Հարությունյանի և Ն. Հովհաննիսյանի հետ (Վարդգես Համազասպյանն արդեն մեկնել էր Սիրիա այլ խնդիրներով և ապա վերադարձել Հայաստան):

Ն. Հովհաննիսյանը, արաբական ուժերի հնարավորությունները և ներսոմն օգտագործելու նպատակով, հանդիպումներ է ունենում Լիբանանի պրեզիդենտ Մուլեյան Ֆրանսիի, վարչապետ Ռաշիդ Մոլիի, Լիբանանի շիա համայնքի ղեկավար իմամ Շամսէդդինի, Լիբանանի պառլամենտի նախագահ Հուսեյն Հուսեյնիի և հետագայում նրան այդ պաշտոնում փոխարինած Նաբիի Քերրիի հետ և քազմաթիվ այլ պետական, քաղաքական, հասարակական, զինվորական գործիչների, տարրեր կուսակցությունների ղեկավարների հետ: Հանդիպումների և քննարկումների հիմնական թեման եղել է լիբանանահայության անվտանգությունն ապահովելու, աջակողմյան ուժերի հարձակումները կանխելու, լիբանանահայերի որպես Լիբանանի օրինական քաղաքացիների իրավունքները պաշտպանելու և դրա հետ առնչվող այլ հարցեր: «Նրանք բոլորն էլ, — հաստատում է Ն. Հովհաննիսյանը, — քննարկումների ժամանակ շատ քարձր կարծիք էին հայտնում Լիբանանի պետական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում հայերի դերի վերաբերյալ և վստահեցնում, որ նրանք կանգնած են հայերի կողքին և օգնություն ցույց կտան հայությանը»: Այդ կապակցությամբ ուշագրավ է Լիբանանի վարչապետ Ռաշիդ Մոլիի տեսակետը, որ նա արտահայտել է Ն. Հովհաննիսյանին ընդունելու ժամանակ. «Մենք՝ արաբներս, խոր հարգանք են տածում հայերի նկատմամբ, որ շատ քան են արել Լիբանանի տնտեսական և մշակութային կյանքի զարգացման համար: Հայ համայնքը Լիբանանի օրինական համայնքներից մեկն է, իսկ հայերը՝ այս երկրի օրինական քաղաքացիները և մեր եղբայրները: Ուստի մեր պարտականությունն է պաշտպան կանգնել մեր հայ եղբայրներին»: Ն. Հովհաննիսյանը նշում է, որ զրոյցի ընթացքում վարչապետը մեկ անգամ չէ, որ կրկնում էր «...հայերը մեր եղբայրներն են և մեր պարտականությունն է պաշտպան կանգնել մեր հայ եղբայրներին» (տես Ն. Հովհան-

Ն. Հովհաննիսյանը մեծ ելանում է համարում նաև քարեկամական հարաբերությունների հաստատումը Լիբանանի ամենաազդեցիկ համայնքներից մեկի՝ դրուզների համայնքի և նրա ղեկավար Վալիդ Ջունբլասի հետ, որը միաժամանակ Լիբանանի առաջադիմական սոցիալատական կուսակցության ռախը՝ նախագահն էր: Ն. Հովհաննիսյանը դրուզ համայնքը նույնպես լիբանանահայությանն աջակցողների մեջ ներգրավելու համար երկու անգամ հանդիպում է Վալիդ Ջունբլասի հետ, որոնք անցնում են շատ ջերմ մրնտրություն: Առաջին անգամ՝ Քեյրոսում, նրա տանը, իսկ երկրորդ անգամ՝ Մուխթարա գյուղում, որը Ջունբլասների տոհմական կենտրոնատեղին էր, ուր մեկնում է Ն. Հովհաննիսյանը դրուզական զինյալների ուղեկցությամբ: Վալիդ Ջունբլասն ամենալայն օգնությունն է խոստանում «...իր լիբանանահայ նոցայրենրին» լի նեղով իր խոսքի տերը:

Այս բոլորի հետևանքով արմատականորեն փոխվեց քաղաքական մրնտրուրը Լիբանանում ի նպաստ հայերի, լիբանանյան աջերը հարկադրված էին դադարեցնել ռազմական գործողությունները և իրենց զինված քանդաները դուրս բերել հափկական թաղամասերից: Մասնավերջ որ նրանք լավատեղյակ էին, որ բացի քաղաքական և քարոյական աջակցությունից, Լիբանանի հայրենասիրական ուժերը լիբանանահայերին տրամադրում էին նաև զենք, զինամթերք և այլ օգնություն:

Ն. Հովհաննիսյանը գտնում է, որ ինքը կարողացել է իր կարևոր առաքելությունը, որի մասին խոսում է Կ. Գեմիլոնյանն իր հուշերում, հաջողությամբ կատարել նաև շնորհիվ Լիբանանում ևօրհրդային Միության արտակարգ և լիազոր դեսպան Սուլալտուֆի արտակարգ քարյացակամ վերաբերմունքի և ամենալայն աջակցության: Ն. Հովհաննիսյանը շատ բարձր է գնահատում նաև խորհրդային դեսպանության աշխատակից Վասիլ Ղազարյանի աշխատանքը, որը, նրա խոսքերով, «...միշտ, զիշեր թե ցերեկ, ուղեկցել է իրենց, շատ լավ իմանալով, թե ինչ վտանգներ էին սպասում մեզ բոլորիս»:

Ռազմական գործողությունների դադարեցումից հետո լիբանանահայ փախատականները կարողացան վերադառնալ իրենց քնակավայրերը:

«Բայց այստեղ, — ինչպես նշում է Ն. Հովհաննիսյանը, — ծագեց մի նոր խնդիր: Վերադարձած հայերը չունեին զոյատևման տարրական պայմաններ, ապրուստի միջոցներ, շատերի տները քանդված էին և այլն: Անհրամեշտ էր շտապ օգնություն: Այդ մասին

պատվիրակությունը տեղյակ պահեց Կ. Դեմիրճյանին, նշելով, որ «...լիբանանահայերը սևփական ուժերով չեն կարող հարքահարկ իրենց առջև կանգնած խնդիրները, ուստի նրանք ակնկալում են մայր հայրենիքի օգնությունը»:

Ն. Հովհաննիսյանը նշում է, որ Հայաստանի ղեկավարությունը, Կարեն Դեմիրճյանը շատ արագ արձագանքեցին այդ առաջարկությանը և պատրաստ էին ամեն կերպ այդ օգնությունը կազմակերպել: Միաժամանակ Ն. Հովհաննիսյանն ընդգծում է, որ այդ հարցի դրական լուծման ճանապարհին կային ղեկավարություններ:

Առաջին, անհրաժեշտ էր Մոսկվայի համաձայնությունը, որը հաջողությամբ է լուծում Կ. Դեմիրճյանը, թեև որոշ ղեկավարություններ են եղել այդ հարցը խորհրդային Միության կոմունիստական կուսակցության քաղքյուրդյում քննարկելու ժամանակ:

Երկրորդ, անհրաժեշտ էր Լիբանանի կառավարության համաձայնությունը և թույլտվությունը: Այդ հարցի կապակցությամբ Ն. Հովհաննիսյանը մշտական կապի մեջ է եղել Լիբանանի վարչապետ Սեյիմ Հոսի և այլ քարճրաստիճան պաշտոնյաների հետ: Սեյիմ Հոսը թույլատրում է, որ երևանից Բեյրութ թռչող ինքնաթիռներն ազատ վայրէջք կատարեն Բեյրութի խալդե օդանավակայանում, այնտեղ հատկացվում են եկող թեւների համար առանձին պահեստներ և նրա կարգադրությամբ խիստ հսկողություն է սահմանվում պահեստների և եկող թեւների անվտանգությունն ապահովելու համար: Այդ մասին Ն. Հովհաննիսյանը տեղյակ է պահում Կ. Դեմիրճյանին:

Եվ, երրորդ, երևանից Բեյրութ թռչող ինքնաթիռները վառելիքով ապահովելու հարցը, որը Լիբանանում հնարավոր չէր՝ երկրում տիրող քարոզ իրավիճակի և շարունակվող քաղաքացիական պատերազմի պատճառով: Այդ հարցը լուծվում է Կիպրոսի կառավարության քաղաքականության շնորհիվ, որը թույլ է տալիս այդ ինքնաթիռները վառելիակալությամբ լիցքավորվին Լաոնակայի օդանավակայանում:

Այդ բոլորից հետո Հայաստանում ստեղծվեց օգնության քաջաման կոմիտե ընդհանուր Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ալեքսան Կիրակոսյանի գլխավորությամբ, որի հետ մշտական կապի մեջ էր Նիկոլայ Հովհաննիսյանը: Բացի այդ, նա Բեյրութում վերին մարմնի անդամների հետ քննարկում է և որոշում են ընդունում լիբանանահայերին օգնությունը բաժանելու սկզբունքների, բաժանման կետեր ստեղծելու, համապատասխան

աշխատակիցներով ապահովելու և կազմակերպչական բազմաթիվ այլ հարցեր: Մեկ ամսվա ընթացքում Հայաստանից Բելյուոչ մեկնեց 29 բեռնատար ինքնաթիռ՝ ամեն օր մեկ ինքնաթիռ: Հայաստանը Լիբանան՝ պատերազմից տուժած հայերին ուղարկեց սննդամթերք, հագուստ, ծածկոցներ, քարձեր, կոշիկներ, զգալի մաս էր կազմում սննդամթերքը՝ քրինձ, շաքարավազ, քաղցրավենիք և առաջին անհրաժեշտության շատ ու շատ այլ իրեր: Որոշ քանակի օգնություն հատկացվեց նաև քաղաքացիական պատերազմից տուժած արաբ ընտանիքներին: Ինչպես նշում է Ն. Հովհաննիսյանը, «Հայաստանի օգնությունը շատ բարձր զնահատականի արժանացավ լիբանանահայության կողմից, մարդիկ արցունքները աչքերին շնորհակալություն էին հայտնում հայրենիքին, որի օգնությունը նրանք դիտում էին ոչ միայն որպես նյութական օգնություն, այլ քերես ավելի շատ բարոյական և քաղաքական աջակցություն: Հենց այդ ժամանակ Լիբանանի հայերի մեջ ինքնաբերաբար ծնվեց «Այժմ մենք գիտենք, որ անտեր չենք» և «Հայրենիքը մեզ հետ է» կարգախոսները» (տես Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, III, 1918–2005):

Լիբանան երկարաժամկետ գործուղման ընթացքում, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը զբաղվել է նաև շատ այլ կարևոր հարցերով, որին անդրադարձել է Հայաստանի կոմկուսի կենտրոնի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանն իր վերոնշյալ անտիպ հուշերում: «Մեզ՝ Հայաստանի ղեկավարությանը, — գրում է Կ. Դեմիրճյանը, — շատ էր հետաքրքրում հենց Խոմենյևի վերաբերմունքը հայերի նկատմամբ: Ն. Հովհաննիսյանը իրոք լուրջ աշխատանք տանելով Իրանի տարբեր շրջանների հասարակական գործիչների հետ, մեզ հաղորդեց, որ այսօրվա խոմենյևին կվարի հայանպաստ քաղաքականություն: Ն. Հովհաննիսյանի այն հարցին, թե կարո՞ղ եմ այսօրվա խոմենյևի կարծիքի մասին տեղյակ պահել Հայաստանի բնակչությանը և ղեկավարությանը, Չամբանը (խոմենյևի ամենամոտ զինակից, հետագայում պաշտպանության նախարար և այլն) պատասխանեց, որ ոչ միայն կարող եմ, այլև դա այսօրվա խոմենյևի ցանկությունն է:

Ն. Հովհաննիսյանը մեր իսկ առաջադրանքով Մուստաֆա Չամբանի հետ զրույցում շոշափել է զազի մատակարարման հարցը և ստացել դրական պատասխան 1979 թ. զազ Հայաստան մղելու մասին (через обаяніе газопровод, конечно):»

Ահա թե ինչ է հետազայում այդ մասին գրել Ն. Հովհաննիսյանը. «Ես մանրամասնություններին տեղյակ չեմ, թե Ռուսաստանից Հայաստանին զազ մատակարարելու քննազավտում ինչ դժվարություններ էին առաջացել, որն անհանգստացրել էր Հայաստանի ղեկավարությանը: Միայն գիտեմ, որ Իրանից Խորհրդային Միությանը մատակարարվող զազի զգալի մասն ընդհանուր զազախորվակով մղվում էր Հայաստան: Եվ թեև այդ ժամանակ Խոմենյին դեռևս իշխանության զուլխ չէր նկել, ինչը ոչ մի կասկած չէր հարուցում, հավանաբար Երևանում նախատակահարմար էին զտել կանխավ հարցի մեջ հստակություն մտցնել, որպեսզի հետազայում քարդություններ չառաջանային: Ահա այդ հարցն էր, որ ես քարձրացրեցի Չամբանի հետ հանդիպման ժամանակ: Ես նրա ուշադրությունը հրավիրեցի այն հանգամանքի վրա, որ շահական վարչակարգի ժամանակ անխափան զազ է մատակարարվել Հայաստանին, և այժմ հայերի համար անհասկանալի կլիներ, եթե Իրանի նոր ղեկավարությունը դադարեցներ զազի մատակարարումը: Մուստաֆա Չամբանը համոզված կերպով ընդգծեց, որ նման տազնապներն անհիմն են և հավաստիացրեց, որ Հայաստանի ժողովուրդը կարող է վստահ լինել, որ Իրանը չի դատապարտի նրան տառապելու 1979 թ. ցրտաշունչ ձմռանը: Նա կեսկատակ-կեսլուրջ ավելացրեց, որ ավելի շուտ իրենք, այսինքն՝ պարսիկները, կմրսեն, քան թե թույլ կտան որ իրենց հայ քարեկամները մրսեն, և խոստացավ, որ ինքը այդ հարցը Փարիզում կներկայացնի Խոմենյիի քննարկմանը: Եվ, իրոք, ինչպես ինձ տեղյակ պահեց Հուսեյն Հուսեյնին, նման քննարկում տեղի էր ունեցել և ընդունվել էր դրական որոշում: Ամբողջ 1979 թվականի ընթացքում զազի մղումը Հայաստան եղել է անխափան» (տե՛ս Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով. Միջազգային գիտաժողովի նյութեր. 13 մարտի, 2012, Երևան, էջ 55-77):

Այստեղ անհրաժեշտ է լուսաբանել ևս մի կարևոր հանգամանք՝ կապված հայերի նկատմամբ Խոմենյիի և իրանական պետության դիրքորոշման և Ն. Հովհաննիսյանի գործունեության հետ:

Ն. Հովհաննիսյանը հայտնում է, որ որոշ իրանահայեր՝ գործարարներ, առևտրականներ, միջին խավերի ներկայացուցիչներ, կանխազգալով Իրանի շահի և նրա վարչակարգի մոտալուտ անկումը, հեռանում են Իրանից և ապաստան զտնում հարևան նրկրներում: Լիբանանում ապաստան է զտնում մոտ 10 հազար իրանահայ: Ն. Հովհաննիսյանը նշում է, որ նրանց փախուստի պատճառ-

ներից մեկն այն էր, որ նրանք յոյալ են եղել շահական վարչակարգին և վախենում էին, որ այսօրվա հոմեյնիի առաջնորդությամբ մահմեդական ումմիի իշխանության գլուխ գալու պարագայում նրանք կարող էին պատժել հայերին: Լիբանանում ապաստան գտած հայերը, իմանալով Լիբանանում Հայաստանի պատմիրակության մասին, և լսելով, թե նա ինչ մեծ հեղինակություն ունի և ինչ մեծ աշխատանք է կատարել լիբանանահայության անվտանգությունը ապահովելու ուղղությամբ, դիմում են պատմիրակությանը, հատկապես Նիկոլայ Հովհաննիսյանին, խնդրանքով, որ Հայաստանի կառավարությունը միջամտի և օգնի իրենց վերադառնալ Իրան և ապահովել նրանց անվտանգ գոյությունը:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը Մուստաֆա Չամրանի հետ, որը այսօրվա հոմեյնիի իշխանության գլուխ գալուց հետո դարձավ Իրանի Իսլամական Հանրապետության պաշտպանության նախարարը և Հեղափոխական խորհրդի նախագահը, գրույցի ժամանակ նրան հայտնում է իրանահայերի մտահոգությունը: Չամրանը թեև քաջատուն է հայերին պատժելու կամ նեղություն պատճառելու հայերի մտավախությունը, խոստանում է այդ հարցի մասին տեղեկացնել հոմեյնիին: Շատ չանցած, Չամրանը տեղեկացնում է Նիկոլայ Հովհաննիսյանին, որ նրա բարձրացրած հարցը քննարկել են հոմեյնիս և նրա մերձավոր խորհրդակցանները և լիազորել են իրեն՝ Մուստաֆա Չամրանին, այդ մասին հայկական կողմին հաղորդել հետևյալը. «հոմեյնիի կարծիքով իրանահայերի մտավախությունը ոչ մի հիմք չունի: Նա գտնում է, որ հայերն Իրանի լիիրավ համայնքներից մեկն են, ունեն իրենց արժանի տեղն Իրանում և օգտակար գործ են կատարում: Հայ համայնքի քղոր իրավունքները, այդ թվում և կրոնական, կհարգվեն իր կողմից»: Այնուհետև Չամրանն ընդգծում է, որ թեև հոմեյնիս, և թե իրենք շատ լավ ծանոթ են հայերի պատմությանը, այդ թվում հայերի 1915 թ. ցեղասպանությանը Օսմանյան կայսրությունում: Չամրանը բառացիորեն Ն. Հովհաննիսյանին հաղորդում է այսօրվա հոմեյնիի հետևյալ խոսքերը. «Իրանն այն պետությունը չէ, իսկ պարսիկներն էլ այն ժողովուրդը չեն, որ հայերի նոր ցեղասպանություն կազմակերպեն: Հայերը մեր եղբայրներն են»:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը մեկ անգամ ևս, 1990 թ. մարտին, Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի նոր առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանի հանձնարարությամբ մեկնում է Լիբանան հայ համայն-

քին օգնություն կազմակերպելու առաջադրանքով: Լիբանանյան տասնհինգամյա պատերազմը ծանր հարված էր հասցրել նրկրին՝ քայքայվել էր տնտեսությունը, ավերվել էին շատ քնակավայրեր, քանդվել տներ, չկային աշխատատեղեր, մեծացել էր գործազրկությունը և սպառնալի չափերի հասել արտագաղթը: Դրանից խիստ տուժել էին քոլոր համայնքները, այդ թվում և հայ համայնքը: Չնայած 1988 թ. դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժին, որի պատճառով ծանր դրության մեջ էր հայտնվել նաև Հայաստանը, այնուամենայնիվ, Հայաստանի ղեկավարությունը որոշեց օգնության ձեռք մեկնել լիբանանահայությանը և Ն. Հովհաննիսյանին գործուղեց Լիբանան: Լիբանանում Ն. Հովհաննիսյանը հանդիպում է քոլոր չորս հայկական կուսակցությունների՝ Հայ հեղափոխական դաշնակցության, Ռամկավար ազատական կուսակցության, Մոցիալ-դեմոկրատ հեշակյան կուսակցության և հայ կոմունիստների խմբի ներկայացուցիչների հետ և նրանց հայտնում, որ Հայաստանը պատրաստ է օգնել լիբանանահայ եղբայրներին, կարող է անհապաղ Քեյրոս ուղարկել երեք տրանսպորտային ինքնաթիռ պարեն, հագուստ, դեղորայք և այլ անհրաժեշտ իրեր ու պարագաներ, հանգստանալու համար Հայաստան հրավիրել երեխաների, քոմման համար հիվանդանոցներում տեղավորել վիրավորներին և հիվանդներին, ընդգծելով, որ մայր հայրենիքը պատրաստ է հաշվի առնել լիբանանյան հայերի նաև այլ առաջարկություններ:

Ն. Հովհաննիսյանը եշում է, թե այն, ինչ տեղի ունեցավ դրանից հետո, աննկարագրելի է: Նրանք մի պահ քարացան, ապա արցունքները սկսեցին հոսել նրանց այքերից և անընդհատ կրկնում էին. «Մենք ուրեմն անտեր չենք», «Մեզ հիշում են», «Մեզնով մտահոգված է մայր հայրենիքը»: Նրանք, իրենց նրախտագիտությունը հայտնելով Հայաստանի ղեկավարությանը, միաբերան հայտարարեցին, որ չեն կարող ընդունել հայրենիքի օգնությունը, քանի որ նա երկրաշարժից հետո ինքն է հայտնվել ծանր դրության մեջ, իրենք կոֆուսանան դժվարություններին, մանավանդ գիտեն, որ Հայրենիքն իրենց հետ է: Լիբանանահայ մամուլը տեղյակ պահեց հայ համայնքին Ն. Հովհաննիսյանի այցի նպատակի և նրան օգնության ձեռք մեկնելու մայր հայրենիքի պատրաստակամության մասին, որը շատ քարձր գնահատվեց նրանց կողմից:

Այնուամենայնիվ, լիբանանահայությունը, նրա քոլոր քաղաքական ուժերը և կազմակերպությունները հրաժարվեցին ընդունել մայր հայրենիքի առաջարկած օգնությունը և Նիկոլայ Հովհաննի-

այանից խնդրեցին միայն մի բան՝ իրենց խորը երախտագիտություները հայտնել մաշր հայրենիքին և նրա ղեկավարությանը, և որ հիմա նրանք գտնում են, որ անտեր չեն:

**5. ՅՄՈՒՐ ԱՐԱՅԱԹ. «ՄԵՂ՝ ԴԱՂԵՍՏԻՆՏԻՆԵՐԻՍ,
ՀԱՄԱՐՈՒՄ ԵՆ ԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՅԵՐ»**

Խիստ հետաքրքիր են Ն. Հովհաննիսյանի կապերը և համագործակցությունը Դաղեստինի ազատագրության կազմակերպության (ԴԱԿ), նրա նախագահ Յափր Արաֆաթի և զինակիցների հետ լիբանանյան քաղաքացիական պատերազմի ժամանակ, պատերազմ, որը սկսվել էր պաղեստինցիների վրա աջակողմյան, մարտնի քրիստոնյա զինված ուժերի հարձակումով: ԴԱԿ-ը հարգում և պաշտպանում էր լիբանանահայության որդեգրած դրական չնդրության քաղաքականությունը, դատապարտում էր լիբանանյան աջերի, մասնավորապես, մարտիների ագրեսիվ քաղաքականությունը հայերի նկատմամբ:

Նիկողայ Հովհաննիսյանը լայն շիրմներ և կապեր ուներ Յափր Արաֆաթի և պաղեստինյան մյուս ղեկավարների ժողով Հարաչի, Դակին Հավաքմայի, Ֆարուկ Կադրամի, Յափր Արդ Ռարոյի, Արդալլահ Հատրանիի և այլոց հետ: Դրան մեծապես նպաստել էր այն հանգամանքը, որ Հայաստանում հայ-արաբական քարեկամության ընկերությանը կից քաջվել և գործում էր Դաղեստինի հետ քարեկամության ընկերության քաժանմուտը, երևան էր այցելել նրա նախագահ զենեղալ Ծահերը, որին ընդունել և քարեկամական գրույց էին ունեցել Նիկողայ Հովհաննիսյանը և հայ-արաբական քարեկամության միության ակտիվիստները: Քաղաքացիական պատերազմի տարիներին Նիկողայ Հովհաննիսյանը, գտնվելով Բեյրութում, հաճախ էր հանդիպում պաղեստինյան առաջնորդների հետ և քննարկում միմյանց օգնություն և աջակցություն ցույց տալու հարցեր: Իսկ նրբ մարտիների ռազմական ջեկատները հարձակվեցին հայ համայնքի վրա, ապա Յափր Արաֆաթը իր ներկայացուցչի միջոցով տեղյակ պահեց Նիկողայ Հովհաննիսյանին առ այն, որ ինքը պատրաստ է պաղեստինյան ռազմական ուժերը ղնել հայերի տրամադրության տակ: Դա շատ մեծ օգնություն էր, և նրբ հայերին օգնելու Յափր Արաֆաթի պատրաստակամության մասին հայտնի դարձավ, ապա դա իսկական խրճապ առաջաց-

րեց մարտիկների շարքերում, և նրանք ստիպված էին չափավորել իրենց ազդեսիվ ախորժակները:

Հայ-պաղեստինյան շփումների մեջ առանձնահատուկ տեղ է զբաղում Յասիր Արաֆաթի այցելությունը Երևան, երբ նա Լեոնիդ Բրեժնևի հետ Կրեմլում վարած բանակցություններից հետո Մուկվայից Բեյրութ վերադառնալու ճանապարհին կարճատև կանգառ ունեցավ Երևանում: Նրան դիմավորեցին Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի միջազգային կապերի բաժնի վարիչ Լևոն Մանասերյանը և հայ-արաբական քաղեկամության ընկերության նախագահ և «ՆՍՀՄ-Լիբանան» քաղեկամության ընկերության վարչության անդամ Նիկոլայ Հովհաննիսյանը: Յասիր Արաֆաթը մի փոքր պտույտ կատարեց Երևանում, հիանալով հայկական ճարտարապետությամբ, որից հետո տեղի ունեցավ զրույց: Զրույցի ընթացքում Յասիր Արաֆաթը շատ քարձր կարծիք հայտնեց հայերի, նրանց ունակությունների, տաղանդի, աշխատասիրության, գիտությանը և մշակույթին նրանց նվիրված լինելու մասին: Այնուհետև, ինչպես վկայում է Ն. Հովհաննիսյանը, Արաֆաթն ասում է. «Մեզ՝ պաղեստինցիներին, նրանց քարձր մտավոր կարողությունների, արհեստավարժության, լեզուների իմացության և կրթության քարձր մակարդակի համար, համմատում են հայերի հետ և անվանում արաբական աշխարհի հայեր»: Դրանից հետո Արաֆաթը նշում է. «Մենք՝ պաղեստինցիներս, շատ բան ենք վերցրել հայերից և ընդօրինակել նրանց, բացի հայերի մեկ սխալից»: Ինչպես նշում է Ն. Հովհաննիսյանը, ներկաները բոլորը զարմացած նայեցին Աբու Ամարին, ինչպես մտերիմները կոչում էին Արաֆաթին: Եվ նա բացատրեց իր միտքը՝ ընդգծելով հետևյալը. «Դուք՝ հայերդ, ցնդասպանությունից հետո փոփոխվում տարբեր երկրներում, ընդունեցիք հյուրընկալ երկրների քաղաքացիություն և զանգվածաբար ձեռք բերեցիք անշարժ գույք: Դա մեր կարծիքով հանգեցրեց նրան, որ հայերը դադարեցրին պաշարը իրենց կորցրած հողերը վերադարձնելու համար, որոնք զտնվում են Թուրքիայի տիրապետության տակ: Մենք հաշվի առանք հայերի այդ սխալը և արգելել ենք պաղեստինցիներին, որոնք նույնպես փոփոխված են տարբեր երկրներում, ստանալ հյուրընկալ երկրների քաղաքացիություն և ձեռք բերել անշարժ գույք: Եվ մենք մինչև վերջ պայքարելու ենք Իսրայելի դեմ մեր տարածքները հետ վերցնելու համար»: Ն. Հովհաննիսյանը նշում է. «Մենք բոլորս լուռ էինք, ընկճված և ոչինչ չպատասխանեցինք Աբու Ամարին»:

**6. ԱՎԱԴԵՄԻԿՈՍ ՍԱՆԱՐԴՈՒՄԻ ԱՅՏԸ ՀԱՅՍՏԱՆԸ ԵՎ ԱՐՑԱՆ.
«ՆԻԿՈՒԱՅ, ՀԱՇՎԻՐ, ՈՐ ԴՈՒ ԱՅՍՕՐ ՆՈՐԻՏ ԵՆՎԵՏԻՐ»**

1988 թ. դեկտեմբերի վերջերին Հայաստան այցելեց հույակավոր գիտնական, մարդու և ժողովուրդների իրավունքների պաշտպան ակադեմիկոս Անդրեյ Սախարովը, տիկնոջ՝ Էլենա Բոնեթի և երեք ուղեկցողների՝ Գալինա Ստարովոյտովայի, Լեննիդ Բատկիևի և Անդրեյ Զուբկովի հետ: Պաշտոնապես նրան ընդունող կողմը Հայաստանի գիտությունների ակադեմիան էր և այդ նպատակով ստեղծվել էր հինգ հոգուց կազմված խումբ ակադեմիայի փոխնախագահ Վիկտոր Ֆանաբջյանի գլխավորությամբ, որի կազմում ընդգրկվել էր նաև պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը: Ա Սախարովը ժամանել էր Խորհրդային Միության ղեկավար Միխայիլ Գորբաչովի առաջարկությամբ, կապված Լեոնային Ղարաբաղի հարցի հետ, և հանձնարարել նրան այցելել Բաքու, Երևան և Ստեփանակերտ, հանդիպել Հայաստանի, Ադրբեջանի և Լեոնային Ղարաբաղի ղեկավարության, մտավորականության և հասարակայնության ներկայացուցիչների հետ, հստակ պատկերացում կազմել ստեղծված իրադրության, արցախյան կոնֆլիկտի պատճառների և քննադատական վերաբերյալ, և ղեկավարությանը ներկայացնել իր առաջարկությունները:

Անդրեյ Սախարովը և նրան ուղեկցողները Երևան էին եկել Բաքվից, որտեղ նրանք հանդիպում էին ունեցել Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Վեզիրովի հետ, որը, ինչպես նշում է Ն. Հովհաննիսյանը, վկայակոչելով Էլենա Բոնեթին, շատ վատ տպավորություն էր թողել նրանց վրա:

Երևանում Ա Սախարովի քազմաթիվ հանդիպումներից, Ն. Հովհաննիսյանն առանձնացնում է հանդիպումը գիտությունների ակադեմիայում գիտնականների ու մտավորականության հետ, որը վարում էր ՀՀ ԳԱ պրեզիդենտ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը: Հանդիպմանը ներկա Ն. Հովհաննիսյանը նշում է, որ ակադ. Ա Սախարովը, դիմելով ներկաներին, ցանկություն հայտնեց լսել Հայաստանի մտավորականության կարծիքը արցախյան կոնֆլիկտի լուծման հնարավոր տարբերակների, հայերի փոխզիջման գնալու պատրաստակամության և դրա սահմանների մասին: Ծավալված շատ աշխույժ քննարկման ընթացքում արտահայտվեցին տարբեր կարծիքներ և տեսակետներ: Ա Սախարովը ուշադիր հետևում էր դիսկուսիային, առանց միջամտելու և հոն-

տորներին ընդհատելու: Նրան ուղեկցողներից մեկը՝ Ա. Զուբկովը, խոսք վերցնելով, ներկայացրեց իր պլանը՝ Ադրբեջանի և Հայաստանի միջև հաստատել նոր սահմաններ՝ տարածքների փոխանակության սկզբունքի վրա, ըստ որի առաջարկվում էր Ադրբեջանի այն տարածքները, որտեղ հայերը կազմում են մեծամասնություն, պետք է անցնեն Հայաստանին, իսկ Հայաստանի այն տարածքները, որտեղ ադրբեջանցիներն են կազմում մեծամասնություն, պետք է անցնեն Ադրբեջանին, որը մերժվեց ներկաների կողմից: Այնուհետև Ա. Սախարովը ներկայացրեց իր տեսակետը, որը ներկայացնում ենք Ն. Հովհաննիսյանի գրառումների հիման վրա. «Նա արցախյան շարժումը համարում է բնական արձագանք ճնշման և ստորացման այն քաղաքականությանը, որին ենթարկվել է հայ ժողովուրդը իր պատմական տարածքում՝ Արցախում: Իր կարծիքով այդ խնդիրը կարելի է և պետք է լուծվի ժողովրդի ինքնորոշման իրավունքի հիման վրա, իսկ հայերը Արցախում, կազմելով ինքնավար մարզի բնակչության ճնշող մեծամասնությունը, հստակ կերպով արտահայտել են իրենց քաղաքական կամքը և արդար կլինի հարգել այդ կամքը» (տե՛ս Николой Оганесян, Академик Сахаров в Арцахе, «Республика Армения», Ер., 1 марта, 1995, с. 2): Սախարովը միաժամանակ զգուշացնում է հայերին, որ ինքը վստահ չէ, որ ամեն ինչ կստացվի հեշտ կամ ինքնարեքարաբ:

Ա. Սախարովը, ելննա Բոնեբը և նրանց ուղեկցողները հաջորդ օրը ինքնաթիռով մեկնում են Ստեփանակերտ: ՀՀ ԳԱ պրեզիդետ Վ. Համբարձումյանի հանձնարարությամբ նրանց ուղեկցում է պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը: Պրոֆեսորը նշում է, որ ինքնաթիռի ուղևորները չտեսնված հարգանքով և ցնրությամբ դիմավորեցին ակադ. Սախարովին և նրա ուղեկիցներին, և ավելացնում. «Ինձ մտեցավ մի հայ երիտասարդ և խնդրեց ինձ ուսներեն Սախարովին թարգմանել իր հետևյալ խոսքերը՝ «Արցախցիները շատ ուրախ են մի այնպիսի մեծ մարդու գալստյանը, ինչպիսին Սախարովն է: Նա մեր ժամանակների Չերնիշևսկին է»: Անդրեյ Գմիտրիևիչը շատ զգացված էր այդ բառերից և սրտագին շնորհակալություն հայտնեց նշելով. «Ամենից կարևորն է՝ չուսահատվեք» (նույն տեղում):

Ստեփանակերտում նույնպես տեղի է ունենում դարաքաղյան հարցի հանգամանալից քննարկում, որը վարում էր Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության կենտկոմի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ԼՂՄ-ի գծով Հատուկ կառավարման կոմի-

տեի նախագահ Արկադի Վոլսկին: Նա շատ ջնրմ է արտահայտվում Ղարաբաղի և դարաբաղցիների մասին՝ շնչտելով. «Զի կարելի ապրել այստեղ երկու-երեք ամիս և չսիրահարվել այդ ժողովրդին: Դա շատ տաղանդավոր ժողովուրդ է»: Այնուհետև նա ցանկություն հայտնեց լսել Սախարովին: Ակադեմիկոսը կրկին առաջարկեց լսել Ա. Զուրկովին, որը Երևանում ներկայացրել է տարածքների փոխանակման վերաբերյալ իր տեսակետը և նույնը կրկնեց այստեղ, որը, ինչպես նշվեց, հանգում էր հետևյալին. «Հայաստանի և Ադրբեջանի միջև անցկացնել տերիտորիայի նոր սահմանաբաժանում: Ադրբեջանի կազմում գտնվող այն տերիտորիաները, որտեղ քնակչության մեծամասնությունը կազմում են հայերը, պետք է անցնեն Հայաստանին, իսկ Հայաստանի կազմում գտնվող այն տերիտորիաները, որտեղ մեծամասնություն են կազմում ադրբեջանցիները, պետք է անցնեն Ադրբեջանին»: Նա նման տասնմեկ տարածք նշեց: Այդ քննարկմանը ներկա Ն. Հովհաննիսյանը նշում է, որ ինքն անհամբեր սպասում էր, թե ինչպիսին էր լինելու Ա. Վոլսկու և Ղարաբաղի մյուս ղեկավարների արձագանքը: Իսկ դա շատ չուշացավ: Վոլսկին զայրացած տոնով քնդհատում է այդ պլանը ներկայացնողին և, ձեռքը թափահարելով, քացականչում. «Վերջ տվեք, ինչ եք դուք առաջարկում: Եթե ձեր նախագիծն իրականանա, ապա մեկ Ղարաբաղի փոխարեն մենք կունենանք տասնմեկ Ղարաբաղ: Իսկական մղձավանց կլինի»:

Այդ հանդիպման ժամանակ քննարկվեց դարաբաղյան կոնֆլիկտի կարգավորման տարբերակների հարցը, որը քարձրացրեց դարաբաղյան ղեկավարներից մեկը, մատնացույց անելով Ն. Հովհաննիսյանին, որ նա իր հրապարակած «Ղարաբաղյան կոնֆլիկտը. Փուլերը, Մտնեցումները. Լուծման տարբերակները» աշխատության մեջ հանգամանորեն անդրադարձել է այդ հարցին: Ն. Հովհաննիսյանը հակիրճ ներկայացնում է այդ տարբերակները: Քննարկման ընթացքում պարզվեց նաև, որ ժամանակին իր տարբերակն է ունեցել նաև Սախարովը, որն առաջարկել է Խորհրդային Միության քոլոր ինքնավար հանրապետությունների կարգավիճակը բարձրացնել և նրանց տալ միութենական հանրապետության կարգավիճակ: Սախարովի այդ առաջարկը նիստի ժամանակ եռանդուն կերպով պաշտպանեց ԼՄՄ-ի մարզային կոմիտեի առաջին քարտուղար Ռուբեն Դողոսյանը, որը, ինչպես նշում է Ն. Հովհաննիսյանը, հայտարարեց. «Ո՛վ է ասել, որ Խորհրդային

Միությունը պետք է կազմված լինի հենց 15 և ոչ թե 50 հանրապետություններից»:

Ծրագրում նախատեսված էր այց Շուշի և Սախարովը, ելնա Բոններն ու Նիկոլայ Հովհաննիսյանը, ինչպես նաև Լ. Բատկինը և Ա. Զուրկովը, Ա. Վոլսկու ուղեկցությամբ Ստեփանակերտից մեկնում են Շուշի: Նրանց ուղեկցում էին մի քանի զրահամեքենաներ և զինվորականների մի խումբ, քանի որ Վոլսկին մտավախություն ուներ, որ աղորբեջանցիները կարող է ագրեսիվ պահեն իրենց: Եվ նա չէր սխալվում: Շուշիում նախատեսված էր հանդիպում աղորբեջանական մտավորականության հետ, քանի որ հայեր Շուշիում այդ ժամանակ արդեն չկային: Հանդիպումը տեղի ունեցավ քաղաքային կոմիտեի սրահում: Անա թե ինչ է գրել այդ մասին Ն. Հովհաննիսյանը. «Հանդիպումը քաղցր կոմունիստական կուսակցության Շուշիի քաղկոմի քարտուղար Վազիֆը և խոսքը փոխանցեց Ելենա Բոններին, որը մեկ առ մեկ ներկայացրեց ակադեմիկոս Սախարովին ուղեկցողներին՝ սկսելով իրենից. «Ես Ելենա Գեորգիևնա Բոններն եմ, կիսահայ և կիսահրեա: Իմ հայրը հայ է, Գևորգ Ալիխանյանը, որը նղել է Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար»: Այնուհետև նա ներկայացրեց Սախարովին ուղեկցող Լ. Բատկինին և Ա. Զուրկովին: Մի փոքր դադարից հետո Ելենա Գեորգիևնան ներկայացրեց ինձ. «Նիկոլայ Հովհաննեսի Հովհաննիսյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն»: Դահլիճն ուղղակի քարացավ: Ներկաների բոլորի հայացքներն ուղղվեցին ինձ: Նրանք հավանաբար չէին սպասում, որ Սունգայիթի սպանդից, Կիրովաքաղի, Մինգչաուրի, Շուշիի և այլ վայրերի ողբերգություններից հետո, հայերից որևէ մեկը կհամարձակվի նրանց մոտ գալ: Ես հանգիստ նայում էի նրանց և հոգեբանորեն պատրաստվում ամեն մի անակնկալի: Սրահում հավաքվածներն իրենց արտաքինով և պահվածքով շատ հեռու էին մտավորական կոչվելու իրավունքից: Նրանք աղմուկ բարձրացրին Սախարովի և Բոնների այցի առիթով, իսկ երբ իմացան, որ Բոները կիսահայ է և նրանց հետ է հայ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը, ապա աղմուկը վերածվեց հիստերիկ գոռում-գոչյունի: Նրանք, դիմելով Սախարովին, բղավում էին. «Ինչո՞ւ նա դու եկել: Ռ՛վ է քեզ կանչել: Ռ՛վ նա դու: Հնոացի՞ր այստեղից: Մենք դարաքաղյան խնդիր չունենք: Դա մեր հողն է, որը միշտ նղել է մերը և միշտ կլինի մերը, ամեն քանում մեղավոր են հայերը» և այլն, և այլն: Եվ երբ

Սախարովը մտտեցաւ ամբիոնին ու ցանկացաւ իր խոսքն ասել, ներկաներն իրենց աղաղակներով չքույլատրեցին դա: Սախարովը այսպիսի և գունատով էր, իսկ Ա. Վոլսկին անընդհատ փորձում էր սաստել աղաղակողներին և Սախարովին վիրավորողներին, քայքայաբարդով: Քննարկում չստացվեց: Ներկաներից իրենց աղմկաբարուքայանք և հակահայկական վիրավորանքներով հատկապէս աչքի էին ընկնում Շուշիի ադրբեջանական դպրոցի ուսաց լեզվի մի ուսուցչուհի և մի բժիշկ: Վերջինս քառացիորեն ասաց հետևյալը. «Այդ հայերն ասում են հողեր տվեք մեզ: Բայց ո՞վ է լսել, որ հողը կանուփն տան: Միթե հողը տալիս են: Հողը վերցնում են արյունով: Խնդրեմ, ես կարող եմ իմ վերարկուն տալ իմ հայկական եղբայրներին, քայքայ որ դարարադյան հողը նրանց տամ, կրթեք: Դա մեր հողերն են: Այստեղ ապրել են մեր նախնիները, այստեղ թաղված է իմ տղան, որը զոհվել է Աֆղանստանում: Եթե Ղարաբաղը հանձնել հայերին, նշանակում է նրանց տալ նաև իմ որդու գերեզմանը» (տե՛ս Никопай Оганесян, Академик Сахаров в Арцахе, «Республика Армения», 3 марта, 1995): Այդ պահին, ինչպէս նշում է Ն. Հովհաննիսյանը, Ա. Վոլսկին այլևս չկարողացաւ համբերել և խիստ կնքով ընդհատեց նրան և նրա նրեսին շարտեց հետևյալը. «Ավելի լավ է դուք լտեք և չխոսեք գերեզմանների մասին: Ինչքան հայկական գերեզմաններ են պղծվել այստեղ գերեզմանոցում: Դուք պղծել եք հազարավոր հայկական գերեզմաններ և հայկական գերեզմանոցի տարածքում կառուցել չայխանա»:

Այդ ժամանակ Շուշիում արդեն տարածվել էին լուրերը Սախարովի, նրա կիսահայ-կիսահրեա կնոջ և հայ պրոֆեսորի Շուշի գալու մասին: Ադրբեջանցիները կամաց-կամաց հավաքվում էին քաղկոմի շենքի հրապարակում և արդեն աղաղակում էին. լսվում էին սպառնալիքներ, անզամ հայիոյանքներ: Ուստի Արկատի Վոլսկին որոշեց անհապաղ հեռանալ Շուշիից: Ն. Հովհաննիսյանը նշում է, որ երբ շենքից դուրս էին գալիս, նրան մտտեցաւ մի ադրբեջանուհի նրիտասարդ աղջիկ և հարցրեց. «Իսկապէս դուք հայ եք»: Լսկով դրական պատասխան՝ նա գլուխը թափահարում է և ասում. «Դուք մեծ դիսկ եք արել»: Այնուհետև Ն. Հովհաննիսյանը շարունակում է. «Նախքան շենքից դուրս գալը, Վոլսկու տեղակալը մտտեցաւ ինձ և ասաց, որ ես նրա հետ հանգիստ, ասանց խոճապի մատնելու, ուղիղ գնամ դեպի իր մեքենան: Մենք նստեցինք մեքենան և փակեցինք դռներն ու պատուհանները»: Այնուհետև իրենց մեքենաները նստեցին նաև Սախարովը, Ելենա Բուները, Վոլսկին և գրահապատ

մեքենաների ուղեկցությանը վերադարձանք Մտեփանակերտ, որտեղ արդեն յուրերը հասել էին Շուշիում աղբրեջանցիների դատապարտելի վարքագծի մասին: Մարզկոմի շնչքում հավաքված մարդիկ տազնապով սայաում էին նրանց վերադարձին: Նրանց բվում էր Մոսկվայի «Լիտերատուրնայա գազետայի» քրջակից, հայտնի լրագրող Յուրի Ռոստը, որը մոտենալով Ն. Հովհաննիսյանին, ասում է. «Նիկոլայ, հաշվիր, որ դու այսօր նրկրորդ անգամ ծնվեցիր»:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը գտնում է, որ աղբրեջանցիների ագրեսիվ պահվածքն էլ ավելի համոզեց ակադեմիկոս Սախարովին, որ Լեոնային Ղարաբաղը ոչ մի դեպքում չպետք է բողնել Աղբրեջանի կազմում, և ավելի վճռական դիրք գրավեց Լեոնային Ղարաբաղի ինքնորոշման հարցում: Իսկ ղարաբաղցի հայերը համոզվեցին, որ, ի դեմս ակադեմիկոս Սախարովի, նրանք ունեն համարձակ, հետևողական պաշտպան, որի ձայնը լսելի է համայն աշխարհին:

7. ԵՐԿՐԱՇԱՐԺԸ, ՄԱՅԻ ԹԵՐՆԵԱՆ ԵՎ ԱՄԵՆԱՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՋԳԵՆ ԱՌԱՋԻՆ ՎԵՀԱՓԱՌԸ

Հայաստանում 1988 թ. դեկտեմբերին տեղի ունեցած ահավոր նրկրաշարժի ծանր օրերին Հայաստան ժամանած միջազգային մեծ հեղինակություն վայելող ականավոր գործիչների թվում էր Մայր Թերեզան: Ղեկավարվելով քրիստոնեական վեհ սկզբունքներով՝ Մակեդոնիայում ծնված այդ կուսակրոն աղբանուհին իր ողջ կյանքը նվիրել էր քրիստոնեական սկզբունքները կյանքում կիրառելու վսեմ նպատակին, տոնդծել մի յուրօրինակ կրոնական օրդեն, օգնության էր հասնում վտանգի մեջ հայտնված ժողովուրդներին ու մարդկանց, հիվանդներին ու աղքատներին, աշխարհի որ ծայրում էլ, որ նրանք գտնվեին: Նա ամենուր ընդունվում էր որպես սուրբ:

Մայր Թերեզան ժամանել էր Խորհրդային Միության խաղաղության կոմիտեի հրավելրով, և, քնականաբար, Հայաստանում ևս նրան հյուրընկալողը Հայաստանի խաղաղության կոմիտեն էր: Ն. Հովհաննիսյանը նշում է, որ նրա աղբին տեղյակ էր Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առային Վեհափառը, և ևս սիրով օթևան տրամադրեց Մայր Թերեզային Մայր Աթոռի հյուրանոցում, որը գտնվում էր վանքի տարածքում, և ևս սպրում էր այնտեղ Հայաստանում գտնվելու երեք օրերի ընթացքում: Հայաստանի խա-

դադուրյան կոմիտեի նախագահի տեղակալ, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանին էր վիճակված այդ օրերին ուղեկցել Մայր Թերեզային: Նրա ժամանան հաջորդ օրվա առափոխյան նշանակված էր նրա այցը Վեհափառին: Անա թե ինչպես է նկարագրում Ն. Հովհաննիսյանը նրանց հանդիպումը. «Իմ ուղեկցությամբ Մայր Թերեզան հյուրանոցից ուղղվեց Վեհարան, որտեղ մեզ արդեն սպասում էին: Երբ մենք մտանք Վեհափառի ընդունարան—աշխատասենյակ, Վեհափառը դանդաղորեն քարճրացավ իր քազկարտից՝ նպատակ ունենալով ընդատաջ գնալ Մայր Թերեզային: Բայց նա ապշած տեսա, թե ինչպես Մայր Թերեզան պոկվեց տեղից և արագ մոտեցավ Վեհափառին ու բռնելով, կարելի է ասել, խելով նրա աջը, կոացավ ու սկսեց համբուրել: Վեհափառի հայացքից երևաց, որ ինքը հայտնվել է ոչ այնքան հարմար վիճակում: Ապա նա մի թույլ փորձ կատարեց ազատելու իր ձեռքը, բայց դա նրան չհաջողվեց, քանի որ Մայր Թերեզան ամուր բռնել էր նրա աջը և շարունակում էր համբուրել: Այնժամ Վեհափառն իր ձախ ձեռքը դրեց Մայր Թերեզայի գլխին և, դատելով նրա շրթունքների շարժումից, ինչ—որ բան էր շնչում, ամենայն հավանականությամբ օրհնանքի խոսքեր, որոնք մենք չէինք լսում: Մենք՝ հանդիպմանը ներկա Մայր Աթոռի ղեկավանապետ, արքեպիսկոպոս Ներսես Պողոսյանը և ես, ոտքի կանգնած, ուղղակի ցնցված դիտում էինք նրկու մեծություների այդ անմոռաց հանդիպումը» (տես Ն. Հովհաննիսյան, «Վազգեն Ա Վեհափառը և Մայր Թերեզան — «Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց. Նվիրվում է մահվան 10-րդ տարելիցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2005): Մայր Թերեզան ցավակցություն է հայտնում Վեհափառին և ամբողջ հայ ժողովրդին նրկրաշարժի կապակցությամբ, շնչտելով, որ Աստծու օգնությամբ հայ ժողովուրդը կհաղթահարի այդ պատուհասը: Զրույցի ավարտին Վեհափառը խորհուրդ տվեց Մայր Թերեզային անպայման այցելել Լենինական և սեփական աչքերով տեսնել նրկրաշարժի կատարած ավերածությունները, իսկ Ն. Հովհաննիսյանին մի կողմ տարավ և հասկացրեց, որ լավ կլիներ, եթե Մայր Թերեզան ինչ—որ կերպ օգներ Լենինականի Ա. Փրկիչ եկեղեցու վերականգնմանը: Ն. Հովհաննիսյանը խոստացավ Վեհափառին Լենինականում այդ հարցը շուտփնել Մայր Թերեզայի հետ զրույցի ժամանակ: Մայր Թերեզան մեծապես տպավորված էր Վեհափառից: Երբ դուրս ելան Վեհարանից, Մայր Թերեզան Ն. Հովհաննիսյանին ասաց. «Հայերը քախտավոր են, որ «Վազգեն Ա»-ի նման իմաստուն հոգևոր առաջնորդ ունեն» (նույն

տեղում): Ն. Հովհաննիսյանը հավելում է, որ Հայաստանի բարձրագույն ղեկավարությունից իրեն նույնպես խնդրել էին Մայր Թերեզայի հետ գրույցի ժամանակ շոշափել Ա. Փրկիչ եկեղեցու վերականգնման հարցում նրանից օգնություն ակնկալելու հարցը:

Լենինական մեկնելիս, ճանապարհին Մայր Թերեզան խնդրում է Ն. Հովհաննիսյանին պատմել հայերի ծագման, հայկական պետությունների, քրիստոնեություն ընդունելու, հայոց արվեստի և գրականության մասին, տեղեկություններ հաղկանա՞վոր պետական և քաղաքական գործիչների վերաբերյալ: Ն. Հովհաննիսյանը նրան հանգամանորեն պատմում է հայ ժողովրդի անցած պատմական ուղու, այդ բլում և Օսմանյան կայսրությունում հայերի ցեղապանության մասին, որը նա լսում է մեծ ուշադրությամբ: Այցելությունը Լենինական և տեղի ունեցած ավերածությունները ցնցող տպավորություն են գործում Մայր Թերեզայի վրա, հատկապես քաղաքի տարբեր մասերում բուրգաձև շարված փողոցաչափ դազաղները, որոնք նախատեսված էին զոհված նրխանների համար: Ն. Հովհաննիսյանը մի կարևոր դիտարկում էլ է անում. «Երբ մեր մեքենան դանդաղորեն ընթանում էր քաղաքի տարբեր փողոցներով ու քաղամասերով, որի ժամանակ նորանոր, ավելի սահմուկեցուցիչ տեսարաններ էին նրան զայիս, Մայր Թերեզան անընդհատ կրկնում էր «My God, My God» («Աստված իմ, Աստված իմ»): Եվ այնու չդիմանալով՝ դիմեց ինձ. «Nikolay, it is enough, let us go back» («Նիկոլայ, հերիք է, եկեք վերադառնանք»): Բայց Ն. Հովհաննիսյանը նրան, այդուհանդերձ ցույց է տալիս ավերված Ա. Փրկիչ եկեղեցին և նշում. Մայր Թերեզան քարացած նայում էր այդ եկեղեցու ավերակներին: Ն. Հովհաննիսյանը, Վեհափառին և իշխանություններին տված խոստմանը հավատարիմ, խոսք է բացում նրա վերականգնման մասին և դիմելով Մայր Թերեզային ասում. «Եթե դուք նախաձեռնություն ցուցաբերեք նրա վերականգնման ու անհրաժեշտ դրամական միջոցների հավաքման համար, ապա դուք շատ մեծ և շնորհակալական գործ արած կլինեք, իսկ ձեր անունն էլ ընդմիշտ կմնա նրախտապարտ հայերի սրտերում»: Ու սպասեցի նրա պատասխանին: Լա երկար սպասեցնել չտվեց և համաձայնվեց ինձ հետ, որ «... շատ կարևոր է Աստծու այս տան վերականգնումը: Եվ թող Աստված օգնի ձեզ այդ հարցում» (նույն տեղում):

Ն. Հովհաննիսյանն այդ մասին տեղյակ է պահում Հայաստանի ղեկավարությանը և Վազգեն Առաջին Վեհափառին: Մյուս կողմից պարզվում է, որ Մայր Թերեզան իր ամբողջ կյանքում առաջնայինը

համարել է հույսը Աստծո օգնության վրա դնելը և ոչ թե դրամական աջակցությունը: Այնպես որ, ինչպես նշում է պրոֆեսորը, Մայր Թերեզայի մտնեցումը պետք է դիտարկել նրա այդ սկզբունքների շրջանակներում:

Մայր Թերեզայի այցելությունը Հայաստան մեր երկրի համար այդ ժամը պահին և դրա համաշխարհային արձագանքները, ըստ Նիկոլայ Հովհաննիսյանի, քարենաչատ մրնոլորտ ստեղծեց համաշխարհային մաշտաբներով, աշխարհի համարյա քոլոր երկրների և ժողովուրդների կողմից օգնության հասնելու Հայաստանին: Հայաստանը միայնակ չմնաց աղետի դեմ հանդիման:

Իսկ դա քիչ քան չէր:

8. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՌՈՄԱՅԻ «ՊՍՈՒԱՄԵՆՏԱԿԱՆ ԳԱՋԵՏԱՆ», ՀՐԱՎԵՐՆԵՐ ԱՄՆ-Ի ՊԵՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ, ՍԵՆԱՏ ԵՎ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՖՈՐՆ ՕՖԻՍ

Պրոֆեսոր Հովհաննիսյանի XX դ. վերջերին — XXI դ. սկզբներին հրատարակված աշխատություններն առաջացրել են մասնագետների քաղաքական և պետական գործիչների աննախադեպ հետաքրքրությունը: Նրանք ձգտում էին դրանցում գտնել իրենց հուզող շատ հարցերի պատասխանները, փորձում էին հասկանալ Հայաստանում, Անդրկովկասում և հարակից երկրներում տեղի ունեցող նոր իրողությունները, զարգացման հետանկարները, առաջացած բազմաթիվ և տարատեսակ խնդիրների քննարկումը նրանց լուծման ուղիները:

Ռուսաստանում, այլ հարցերի կողքին, մեծ հետաքրքրություն ցուցաբերվեց ՆԱՏՕ-ի, ինչպես նաև Ն. Հովհաննիսյանի տեսակետների նկատմամբ, որին անդրադառնում է Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի պաշտոնական օրգան «Պատկամնատական գազետան» («Патриотическая газета», 23.XI.2002): Նրանում տպագրված հաղորդագրությունը ուշագրավ է համարում Ն. Հովհաննիսյանի կարծիքն առ այն, որ Հայաստանին անհրաժեշտ է խորացնել իր հարաբերությունները ՆԱՏՕ-ի հետ, և որ ի տարբերություն Վրաստանի և Ադրբեջանի, «Հայաստանը ՆԱՏՕ-ն չի հակադրում Ռուսաստանին, այլ, ընդհակառակը, վարում է փոխլրացման քաղաքականություն» և որոշ իմաստով «Հայաստանը կապող օղակ է ՆԱՏՕ-ի և ՌԳ-ի միջև»: Այնուհետև նշվում է, որ «Հայաստանի կողմից կիրառվող փոխլրացման քաղաքականու-

քյունը հարաբերությունների նոր տեսակ է, որն առաջին անգամ հաջողվեց կիրառել կյանքում և պրակտիկայում: Եվ Ռուսաստանն ու ՆԱՏՕ-ն հասկացողությամբ են մոտենում երևանի կողմից կիրառվող քաղաքականությանը» (նույն տեղում):

Ն. Հովհաննիսյանի աշխատությունների և նրա կողմից արձարծված հարցերի, մանավանդ հայեցակարգային քնույթի ուսումնասիրությունների նկատմամբ, ուշադիր է եղել Կարնեգիի մոսկովյան կենտրոնը: Դա ամերիկյան Կարնեգի ֆոնդի մասնաճյուղն է (Carnegie Endowment for International Peace, Carnegie Moscow Center): Նրա ղեկավար Դ. Տրենինը, ստանալով Ն. Հովհաննիսյանի «Ռուսաստանը և Կովկասը. Հայացք Երևանից» հոդվածը, որը Անատոլիայում նրա կարդացած զեկուցումն էր, գրում է նրան. «Հաճույքով եմ հիշում մեր հանդիպումը և գրույցները մարտին Թուրքիայում կայացած սեմինարի ժամանակ: Շնորհակալ եմ Ձեզ ձեր ուղարկած զեկուցման համար, որը ես խնդրել եմ բազմաքանակ Կարնեգիի մոսկովյան կենտրոնում աշխատող իմ գործընկերների համար: Այն բնման, որին նվիրված է Ձեր ուղարկած զեկուցումը, հավանաբար, ինձ շատ է հետաքրքրելու: 29 հունիսի 1996 թ.» («С удовольствием вспоминаю нашу встречу и беседы на мартовском семинаре в Турции. Благодарю Вас за присланный вами доклад, который я попросил размножить для моих коллег, работающих в московском центре Карнеги. Тема, которой посвящен присланный Вами доклад, вероятно, будет интересовать меня очень плотно. 29 июня 1996 года»):

Ն. Հովհաննիսյանի զեկուցումը՝ «Ռուսաստանը և Կովկասը. Հայացք Երևանից», բարձր է գնահատել Ռուսաստանի Դաշնության նախագահին կից ռազմավարական ուսումնասիրությունների ուսական ինստիտուտի տնօրեն Ե. Կոժովինը, որը, ստանալով ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի զեկուցման հրատարակված տարբերակը, գրել է նրան. «Անկեղծորեն շնորհակալ եմ Ձեզ՝ Ձեր ելույթի տեքստի համար, որի հրատարակումը կնպաստի Հայաստանի և Ռուսաստանի միջև բարեկամական կապերի զարգացմանը: Հույսով եմ, որ, չնայած ֆինանսական դժվարություններին, մենք ձեզ հետ հնարավորություն կգտենք մեր ինստիտուտների միջև հարաբերությունների զարգացման համար: 2.07.1996» («Искренне благодарю Вас за текст Вашего выступления, публикация которого будет способствовать развитию дружественных связей между Арменией и Россией. Надеюсь, что

несмотря на финансовые трудности мы найдем с вами возможность для развития отношений между нашими институтами. 2.07.1996»).

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը 1993–1995 թթ.³ ԱՄՆ-ում Ջորջ Վաշինգտոնի համալսարանում գիտահետազոտական աշխատանքներ կատարելու ընթացքում ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի հրավերով մասնակցել է ԱՄՆ-ի տարրեր կենտրոններում կազմակերպված քննարկումներին՝ նվիրված էրևոքադաքական կոնֆլիկտների, մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի հիմնահանգրի լուծման ուղիներին՝ ներկայացնելով դարաքաղյան հարցի կարգավորման իր տարրերակները: Նա հրավիրվել է պետական դեպարտամենտ, որտեղ երա հետ քննարկվել են Հայաստանի արտաքին քաղաքականության, դարաքաղյան խնդրի, մերձավորարևելյան և այլ տարածաշրջանային հարցեր՝ մեծ նշանակություն տալով երա լավատեղյակությանը, հարցերի լուծման ոչ ստանդարտ մոտեցումներին և վերլուծական կարողություններին: Ահա, օրինակ, դրանցից մեկը, թվագրված 1995 թ. սեպտեմբերի 22-ին. «Միացյալ Նահանգների պետական դեպարտամենտ: Հարգելի դ-ր Հովհաննիսյան. Հրավիրում ենք ձեզ մասնակցելու Ատրկովկասին և Կենտրոնական Ասիային նվիրված աշխատանքային քննարկմանը պետական դեպարտամենտի «Ինտերատացումը և քաղաքական մասնակցությունը հետկոմունիստական հասարակություններում» ծրագրի շրջանակներում»: Նրան այդ նույն 1995 թ. պետական դեպարտամենտում գրույցի է հրավիրում պետական դեպարտամենտի Հայաստանի հարցերի կուրատորը, որը գրույցի ընթացքում նրան տեղյակ է պահում, որ «Ղարաքաղյան կոնֆլիկտի լուծման դեպքում Լաչինը կմնա հայերի վերահսկողության ներքո՝ որպես Ղարաքաղը Հայաստանի հետ կապող միջանցք»: Այդ տեղեկությունը Ն. Հովհաննիսյանն անհապաղ հաղորդում է Երևան՝ Հայաստանի ղեկավարին:

Նիկոլայ Հովհաննիսյանը հրավիրվել և մասնակցել է քննարկումների նաև ԱՄՆ-ի Սենատում: 1998 թ. փետրվարին նա ԱՄՆ-ի Սենատի ղեկավարությունից հրավեր է ստանում որպես հայկական տեսակետը ներկայացնող փորձագետ և զեկուցող, մասնակցելու Սենատի Միջազգային հարաքերությունների կոմիտեի Եվրոպական գործերի ենթակոմիտեի և Մեծավորարևելյան ու Հարավարևելյան Ասիայի ենթակոմիտեի համատեղ լուծմանին, որտեղ քննարկվելու են Հարավային Կովկասում գոյություն ունե-

ցող կոնֆլիկտների առաջացման և նրանց հնարավոր լուծումների, Հարավային Կովկասի պետությունների անկախության, սուվերենության և տնտեսական զարգացման վրա այդ կոնֆլիկտների ազդեցության հարցերը, ինչպես նաև այն հարցը, թե ինչու Միացյալ Նահանգների համար կարևոր է աջակցել այդ կոնֆլիկտների լուծմանը: «Մենք հույս ունենք,— ասված էր Ն. Հովհաննիսյանին ուղղված հրավերում,— որ դուք կլուսարաններ վերևում եշված որոշ խնդիրներ, ինչպես նաև կներկայացնեք ձեր տեսակետները տարածաշրջանում առկա ապակայունացնող գործոնների, եթե այդպիսիները կան, կայուն խաղաղության հեռանկարների վերաբերյալ, և այն մասին, թե ինչպիսի ավելի լայն քաղաքականության պետք է հետևեն Միացյալ Նահանգները՝ այդ նպատակին հասնելու համար: Մենք ակնկալում ենք քննարկել այս կարևոր խնդիրները ձեզ հետ: Գորդոն Սմիթ, ԱՄՆ-ի սենատոր, Մեմ Բրոուներակ, ԱՄՆ-ի սենատոր: ԱՄՆ-ի Սենատ, II փետրվարի, 1998»: Դրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանն ընդունում է այդ առաջարկը, որի համար արժանանում է Սենատի ղեկավարության շնորհակալությանը:

1992 թ. փետրվարին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության՝ Ֆորին Օֆիսի հրավերով Նիկոլայ Հովհաննիսյանը մեկնում է Լոնդոն: Նախարարությանը հետաքրքրում էր հայ մասնագետի կարծիքը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի արտաքին քաղաքականության վերաբերյալ, անդրկովկասյան և մերձավորարևելյան տարածաշրջանային հարցերի նկատմամբ նրա գնահատականներն ու կանխատեսումները, ինչպես նաև ԱՄՆ-ի, Թուրքիայի և արաբական մի շարք երկրների դիրքորոշումը Մեծ Մերձավոր Արևելքի ծրագրի նկատմամբ: Նա խորհրդատվական հանդիպումների մի ամբողջ շարք ունեցավ Ֆորին Օֆիսի համապատասխան պատասխանատու գործիչների հետ:

Ինչպես արդեն եշվել է, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը՝ որպես ԱՄՆ-ի Թուրքայքի մրցույթի հաղթող, 1993–1994 թթ., մեկ տարուց ավելի աշխատելով Վաշինգտոնի Ջորջ Վաշինգտոնի համալսարանում (Washington D. C.), Վուդրո Վիլսոնի կենտրոնում հանդիպումներ և գրույցներ է ունեցել ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Պերրի և պետական դեպարտամենտի քարտուղար Ջեյմս Բեյկերի հետ Լոնդոնյին Նարաբադի հիմնախնդրի շուրջը:

Այդ քոլորից հետո, կարծում ենք, որ քնավ պատահական չէ այն քարձր կարծիքը և խոր հարգանքը, որ տարբեր առիթներով պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի մասին արտահայտել են տարբեր

երկրների, այդ բլմով և ԱՄՆ–ի գիտնականները, ինչպես նաև պետական ու քաղաքական գործիչները:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի մասին շատ ընդգրկուն տեսակետ և քարձր կարծիք է է հայտնել ԱՄՆ–ի պաշտպանական տեղեկատվական կենտրոնի փոխտնօրեն, փոխծովակալ Քերոլլը: Այդ հեղինակավոր կենտրոնը անհրաժեշտ վերլուծական նյութեր է պատրաստում ԱՄՆ–ի Կոնգրեսի և զործադիր քարձրագույն մարմինների համար: Ահա ամերիկյան փոխծովակալի կարծիքը հայ ականավոր գիտնականի մասին. «Ես գիտեմ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանին 12 տարի: Ես առանձնաշնորհությամբ եմ ունեցել աշխատելու նրա հետ, լսել նրա խորաքափանց, կառուցողական գնահատականները ԱՄՆ–ԽՍՀՄ հարաբերությունների վերաբերյալ 1988–ին և Լեոնային Ղարաբաղի ճգնաժամի վերաբերյալ՝ 1994–ին: Նրա հանգամանալից, հավասարակշռված տեսակետները և կառուցողական լուծումների առաջարկությունները ԱՄՆ–ԽՍՀՄ և ԱՄՆ–Ռուսաստան վիճելի հարցերի վերաբերյալ միշտ էլ նշել են տպավորիչ, տրամաբանական և օգտակար: Նա մարդկային անհատականություն է, մասնավորապես օժտված Միացյալ Նահանգների քաղաքական և սոցիալական խնդիրների ուժեղ հասկացողությամբ և կարող է ներդնել փորձառություն ու իմաստնություն մեր երկու ազգերին վերաբերող կարևոր խնդիրների ռուսումնասիրության քննազավառում: Ե. Քերոլլ, փոխծովակալ, ԱՄՆ–ի պաշտպանական տեղակատվական կենտրոնի փոխտնօրեն, 16 փետրվարի, 2000 թ.»:

Փոխծովակալ Ե. Քերոլլը, նշելով 1988 թ. պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի հետ հատիխազումների և զրույցների մասին, նկատի ուներ նաև խորհրդային և ամերիկյան պատվիրակությունների հանդիպումները և քննարկումները, և նրանց համատեղ ուղևորությունը Լավով, Միսիսիպի գետով Սեն Լուիս քաղաքից մինչև Մեքսիկական ծոց, Նյու Օռլեան քաղաքը: Նա գլխավորում էր ամերիկյան պատվիրակությունը: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ արդեն երկու կողմերն էլ հոգնել էին սառը պատերազմից և ուսգմական մրցավազքից և երևում էին գինաքափան, համագործակցության և վիճելի խնդիրները բանակցությունների ու փոխգիշումների քաղաքականությունը որդեգրելու նախանշանները: Խորհրդային և ամերիկյան պատվիրակությունների վերոնշյալ հանդիպումը և քաղաքականությունները իրականացվում էին այդ նոր իրողությունների

շրջանակներում, ինչն իր արժանի ներդրումն ունեցավ այդ կարևոր գործընթացում:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը եղել է խորհրդային պատվիրակության անդամ և նավարկության ընթացքում բազմաթիվ ելույթներ է ունեցել քննարկվող հարցերի վերաբերյալ՝ ներկայացնելով իր կառուցողական տեսակետները և արժանանալով երկու կողմերի պատվիրակությունների ղեկավարների և անդամների քարձր գնահատականներին:

Մի ուշագրավ հանգամանք ևս: Այդ համատեղ ուղևորությունը Միսիսիպի գետով համընկավ ԱՄՆ-ի քաղաքական կյանքում ամենակարևոր իրադարձության՝ ԱՄՆ-ի պրեզիդենտական նոր փուլի և նոր թեկնածուների առաջադրման հետ: 1988 թ. օգոստոսի 14-ին Նյու Օռլեանում նշանակված էր ԱՄՆ-ի հանրապետական կուսակցության ազգային համագումարը: Ն. Հովհաննիսյանը հիշում է, որ խորհրդային պատվիրակության համար մեծ անակնկալ էր, նրբ ամերիկյան կողմը համագումարին և պրեզիդենտի նոր թեկնածուի առաջադրմանը ներկա լինելու համար խորհրդային պատվիրակությանը տրամադրեց նրեք հրավիրատու, որոնցից մեկը՝ պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանին: Խոսքն այն մասին է, որ արդեն լրանում էր Ռոնալդ Ռեյգանի պրեզիդենտության ժամկետը և 1988 թ. պետք էր նրա փոխարեն առաջադրվեր նոր թեկնածու: Այդ մասին հստակորեն նշված էր հրավիրատուում՝ «Նյու Օռլեանը ողջունում է Միացյալ Նահանգների պրեզիդենտին: Հրավիրվում եք ողջունելու պրեզիդենտ Ռոնալդ Ռեյգանին և տիկին Նենսի Ռեյգանին Հանրապետականների 1988 թ. ազգային համագումարում, կիրակի, օգոստոսի 14, 1988» («New Orleans Welcomes the President of the United States. Come Welcome President and Mrs. Ronald Reagan to the 1988 Republican National Convention, Sunday, August 14, 1988»):

Ն. Հովհաննիսյանը նշում է, որ համագումարն ընթանում էր Նյու Օռլեանի ամենախոշոր սրահում, որը շատ տպավորիչ էր: Տիրապետողը աղմուկ-աղաղակն էր: Դա չտեսնված տեսարան էր, մանավանդ երբ դահլիճ մտան պրեզիդենտ Ռոնալդ Ռեյգանը, որի պրեզիդենտության ժամկետն արդեն ավարտվում էր, կնոջ՝ Նենսիի հետ, և պրեզիդենտության նոր թեկնածու՝ Ջորջ Բուշ ավագը իր տիկնոջ՝ Բարբարայի հետ: Խելագարված ամբոխը, տարբեր երաժշտական խմբերը և անսամբլները, այդ քվում և Նյու Օռլեանի հռչակավոր ջազային խմբերը, զոռում-գոյունները, գետի

նման հորդող կոկա-կոլան, որը բաժանվում էր անվճար, ստեղծել էին մի յուրատեսակ, աննկարագրելի մթնոլորտ: Ճատերին զարմացրել էր համագումարին խորհրդային պատմիբանկների ներկայությունը, իսկ ոմանք էլ մոտենում և ողջունում էին նրանց: Համագումարը ԱՄՆ-ի պրեզիդենտ թեկնածու հաստատեց Ջորջ Բուշ Ավագին, որը և հաղթեց նոյեմբերին կայացած ընտրությունների ժամանակ:

Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանին բարձր գնահատականի է արժանացրել ԱՄՆ-ի Մերիլենդի և Նյու Մեքսիկո համալսարանների պրոֆեսոր Բարի Սանդերսը: Նրանք 1995-1999 թվականներին միասին աշխատել են ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի Անդրկովկասում էթնոքաղաքական կոնֆլիկտների լուծման ծրագրի մշակման վրա: Նշելով պրոֆեսոր Հովհաննիսյանի «ակադեմիական և քաղաքական մեծ փորձառությունը»՝ նա գրում է. «Ն. Հովհաննիսյանի տեղեկությունները և Ռուսաստանի նոր արտաքին հարևանների, Մերձավոր Արևելքի և ԱՄՆ-ի միջև հարաբերությունների նրա իմացությունը կարող է ամենաարժեքավոր ռեսուրսը լինել մեր ազգի համար: Մերիլենդի համալսարանում գտնվելու ընթացքում, ղոկտոր Ն. Հովհաննիսյանն օտար չէր վաշխագտոնի համար: Նա իշխանությունների հետ խոսում էր նախկին ԽՍՀՄ-ի նորանկախ պետությունների խաղաղասիրական ջանքերի մասին և պաշտոնական քաղաքական մի քանի շրջանակներ նրան հրավիրում էին ներկայացնել իր տեսակետները: Նա բացառիկ անհատականություն է՝ այնպիսի գիտելիքներով, ինչը կարևոր է նախկին Խորհրդային Միության հետ մեր շատ նուրբ հարաբերությունների վերաբերյալ մեր արտաքին քաղաքականությունը ձևավորելու համար: Նրա գիտելիքները կարող են նպաստել, որ մենք Մերձավոր Արևելքի և Կովկասի նկատմամբ ընդունենք իմաստուն, հավասարակշռված որոշումներ: Բարի Սանդերս, 10 փետրվարի, 2000 թ.»:

2003 թ. ստեղծվեց մերձավորարևելյան հարցերով ԱՄՆ-ի կառավարության խորհրդատվական խորհուրդ, որը զբաղվելու էր հատկապես արաբա-իսրայելական հիմնախնդիրներով: Նրա նախագահ է նշանակվում Հյուստոնի Ռայս համալսարանի Ջեյմս Բեյկերի անվան Հանրային քաղաքականության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր, Էդվարդ Ջեյքոբյանը: Նա դիմում է Նիկոլայ Հովհաննիսյանին օգնել իրեն իր առաջարկություններով և խորհուրդներով. «Հարգելի պրոֆեսոր Հովհաննիսյան: Դա շատ կարևոր

պատասխանատվություն է և շատ ծանր աշխատանք: Խնդրեմ, ինձ ուղարկիր մտքեր, որ դու կարող ես ունենալ այս թեմայի վերաբերյալ, որոնք քո կարծիքով կարող են օգտակար լինել»: Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը թավարարում է այդ խնդրանքը և նրան ուղարկում առաջարկությունների մի ամբողջ փաթեթ:

Հայ գիտնականի հետ համագործակցելու ցանկություն է հայտնում նաև Եվրոպական խորհուրդը (European Council): Հայ մասնագետին ուղղված նրա ուղեբժում, ասված էր. «Հարգելի պարոն Հովհաննիսյան: Ձեր ակադեմիական-գիտական տվյալները տպավորիչ են և ձեր շփումներն անգլիախոս աշխարհի հետ, ինչպես նրեում է, լայնածավալ են»: Այդ էր պատճառը, որ Եվրոմիության քարձրագույն մարմինը դիմել էր Ն. Հովհաննիսյանին համագործակցության առաջարկով, մասնավորապես փորձագիտական խորհրդատվական աշխատանքներ կատարելու ազգային փորքամասնությունների և էթնոքաղաքական կոնֆլիկտների հարցերում:

9. ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅԱՆ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի հասարակական-քաղաքական գործունեությունը չի սահմանափակվում միայն վերոնշյալով: Նա ավելի ընդգրկուն է և բազմաշերտ:

Նա 1967–2006 թթ. եղել է արևելագիտության ինստիտուտի ամենագլխավոր ժողովածուի՝ «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» խմբագիր, ապա խմբագրական խորհրդի նախագահ, որը նրա տնօրինության ժամանակ վերածվեց տարեգրքի:

1996 թ. հունիսին նրա ակտիվ ջանքերի շնորհիվ ստեղծվում է Հայաստանի կոնֆլիկտների լուծման կենտրոնը, և նա դառնում է նրա հիմնադիր տնօրենը: Դա իր քննչքով Հայաստանում առաջին նման հասարակական կազմակերպությունն էր, որը զգալի դեր է խաղացել հանրապետության հասարակական կյանքում:


Հայաստանի Հանրապետության նախագահի 1999 թ. օգոստոսի 25-ի ՆՀ-371 հրամանագրով նա նշանակվել է Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարության կազմակերպման պետական հանձնաժողովի անդամ և իր արժանի լուծման ներդրել դրա հետ կապված միջոցառումները բարձր մակարդակով իրականացնելու գործում:

ՄԵՐ ԶԱՎՈՐԵԿՄԱՆ
ԱՐԵՎԵՆԻ
ԵՐԿՐՆԵՐ
ՈՒ
ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐ
III

ՄԵՐ ԶԱՎՈՐԵԿՄԱՆ
ԱՐԵՎԵՆԻ
ԵՐԿՐՆԵՐ
ԵՎ
ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐ
XXV

ХАРАКТЕРНЫЕ ЧЕРТЫ
СОЦИАЛЬНО-ПОЛИТИЧЕСКОГО
РАЗВИТИЯ
АРАБСКИХ СТРАН
В 1950-1970-Е ГОДЫ

ԱՐԵՎԵՆԱՍՏԻԿԱՆ
ԸՍՏՈՒՆԱՍԻՐՈՅՈՒՆՆԵՐ





Հայաստանի Հանրապետության վարչապետի 1999 թ. նոյեմբերի 24-ի № 719 որոշումով ականավոր արարագետը նշանակվել է Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջև միջկառավարական համատեղ հանձնաժողովի հայկական մասի անդամ՝ իր գիտելիքներն ի սպաս դնելով երկու երկրների միջև քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունների զարգացմանը:

2000 թ. Ն. Հովհաննիսյանն ընտրվել է Հայկական հանրագիտարանի գիտախմբագրական խորհրդի և Հայկական համառոտ հանրագիտարանի խմբագրական հանձնաժողովի անդամ, և գործուն մասնակցություն ունեցել նրանցում հնարավորինս ամբողջական ներկայացնելու արաբական երկրների պատմությունը, քաղաքականությունը, մշակույթը և ականավոր գործիչներին, ինչպես նաև հայ-արաբական հարաբերություններին վերաբերող հարցերը:

Նա ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի խմբագրական հանձնաժողովի անդամ է:

Ն. Հովհաննիսյանը 2001 թ. ընտրվել է Հայկական աստվանտյան ասոցիացիայի համանախագահ, և այդ բացառիկ հասարակա-

կան կազմակերպության շրջանակներում, Բյուրսելում, Լոնդոնում, Հոտմում, Աֆենցում, Ստամբուլում զուսմարված համաժողովներում հետևողականորեն պայքարել հայոց պետականության, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերը պաշտպանելու համար, իր նպաստը բերել ՆԱՏՕ-Հայաստան հարաբերությունները կարգավորելու Հայաստանի կառավարության քաղաքականությանը: Այդ կապակցությամբ նա ունեցել է զեկուցումներ, ակտիվորեն մասնակցել համապատասխան քննարկումներին՝ սերտորեն համագործակցելով ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ:

ՀՀ նախագահի 2003 թ. ապրիլի 22-ի ՆՀ-13 հրամանագրով Ն. Հովհաննիսյանը նշանակվել է Հայոց ցեղասպանության 90-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովի անդամ: Նա ակտիվ կերպով մասնակցել է նախապատրաստական աշխատանքներին՝ հատկապես կապված արտասահմանյան ցեղասպանագետների մասնակցության ապահովման հարցերի հետ: Պետական հանձնաժողովի պենար նիստը զուսմարվել է 2005 թ. ապրիլի 24-ին: Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը զեկուցումով հանդես է եկել «Երրորդ կողմի ներգրավումը ցեղասպանության կանխման և հրահրման հարցում. Հայերի ցեղասպանությունը» թեմայով և մասնակցել քննարկումներին:

Պրոֆեսոր Հովհաննիսյանը 2010 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդ Վեհապատի որոշմամբ, նշանակվում է Ամենայն Հայոց կաթողիկոսության և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության կանոնական հանձնախմբի անդամ: Կանոնական հանձնախումբը ստեղծվել էր դեռևս 2005 թ. և պարբերաբար նիստեր էր զուսմարում նվիրված երկու Աթոռների միջև հարաբերությունները կարգավորելուն՝ նպատակաուղղված նրանց մերձեցմանը: Ն. Հովհաննիսյանը մասնակցել է կանոնական հանձնախմբի նիստերին և քազմիցս նյութներ ունեցել քննարկվող հարցերի վերաբերյալ:

Նիկոլայ Հովհաննիսյանը մեծ մասնակցություն է ունեցել 1914-1915 թթ. Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախապատրաստական աշխատանքներին: Նա իր առաջարկություններն է ներկայացրել կառավարական հանձնաժողովին, որոնք հրատարակվել են «Հայաստանի Հանրապետություն» թերթում և այլ լրագրերում, ընդունվել հանձնաժողովի կողմից: Նա հրավիրվել և մասնակցել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին

նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նիստերին:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառայ և նրա միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացը խթանելու միտումով, 2014–2015 թթ. կազմակերպում է խորհրդարանական լսումներ, որին հրավիրվում է նաև պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը: Հրավերն ընդունվում է, և նա ելույթ է ունենում ու ակտիվորեն մասնակցում քննարկումներին և ներկայացնում կոնկրետ առաջարկություններ: Նա ներկաներին տեղեկացնում է, որ ինքը իր մի շարք մենագրություններում քազմակողմանիորեն քննարկել է այդ հարցը և եկել այն եզրակացության, որ Հայոց ցեղասպանությունն արդեն միջազգայնորեն ճանաչված ցեղասպանություն է, որը ներկաների կողմից ընդունվում է գոհունակությամբ: Նշենք, որ առաջին անգամ էր նման հայեցակարգ ներկայացվում (տես Ն. Հովհաննիսյան, Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, Երևան, 2010: Ն. Հովհաննիսյան, Հայոց ցեղասպանությունը հաստատված է միջազգային գիտական, իրավական և մաթդո իրավունքների հանրության կողմից, Երևան, 2015, հայերեն, ռուսերեն, անգլերեն և այլ աշխատություններ):

Նիկոլայ Հովհաննիսյանը, ինչպես նշվել է, 2015 թ. ապրիլի 12-ին Հայաստանի պատմիրակության կազմում մասնակցել է Վատիկանում Սուրբ Պետրոսի տաճարում Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված Հռոմի պապ Ֆրանցիսկոս Առաջինի պատարագին:

Նույն թվականի մայիսին, ՀՀ արտաքին գործերի նախարարության առաջարկով նա մասնակցում է Բաղդադում գումարված «Հայոց ցեղասպանության ճանաչումը՝ քայլ դեպի միջազգային խաղաղություն» միջազգային գիտաժողովին, որը, ինչպես նշում է պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը, փաստորեն մուսուլմանական երկրների ներկայացուցիչների համաժողովն էր, որը խստորեն դատապարտեց Թուրքիային և թուրքական միստոլականությունը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում: Բաղդադում գումարված այդ համաժողովին, որը Վատիկանից հետո երկրորդ կարևոր միջազգային համաժողովն էր, Ն. Հովհաննիսյանը հանդես է գալիս զեկուցումով՝ «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման արդի փուլը և արարների դիրքորոշումը» թեմայով:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանի և ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի հրավերով, Նիկոլայ Հովհաննիսյանը մասնակցել է 2016 թ. ապրիլի 23-ին երևանում գումարված «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության Երկրորդ գլոբալ ֆորումին» և հանդես եկել ելույթով: Հրավերում ասված էր. «Հրավիրում ենք ձեզ մասնակցել ֆորումի աշխատանքներին՝ դրանով իսկ Ձեր արժեքավոր ներդրումը բերելով մարդկության դեմ իրականացված ամենածանր ոճրի՝ ցեղասպանության դատապարտման և կանխարգելման ուղղությամբ»:

Անդրադառնալով 2016 թ. հունիսին Հոմի պապ Ֆրանցիսկոս Առաջինի երեքօրյա այցին Հայաստան և քարձր գնահատելով այդ այցի նպատակներն ու հետևանքները, պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը հրատարակում է հոդված շատ խոսուն վերնագրով՝ «Երեք օր, որը ցնցեց աշխարհը» (տե՛ս «Ազգ», 1 հուլիս, 2016):

IV

ՊԱՐԳԵՎՆԵՐ

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը գիտական մեծ վաստակի և հասարակական-քաղաքական ակտիվ գործունեության համար պարգևատրվել է Հայաստանի, Խորհրդային Միության, ԱՄՆ-ի, Եգիպտոսի, Իրաքի և այլ երկրների զանազան շնորհագրերով, պատվոգրերով, մրցանակներով, հուշամեդալներով, մեդալներով և այլն:

1. Մրցանակներ.

2007 թ. — Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակ՝ «Արարական երկրների պատմություն (VII դ.-2005 թ.)» քառահատոր աշխատության համար:

2009 թ. — Էյնշթեյնի միջազգային մրցանակ՝ գիտական նվաճումների համար:

Բեմքրիջի կենսագրական կենտրոն, Անգլիա: (International Einstein Award For Scientific Achievement. IBC, Cambridge, England):

2010 թ. — ՀՀ մշակույթի նախարարության «Իմ հայրենիքը» անվանակարգով առաջին կարգի մրցանակ՝ «Հայոց ցեղասպանությունը. Ամենազենոցիդային զենոցիդ. Աշխարհի տասը լեզուներով» աշխատության համար:

2011 թ. — ՀՀ մշակույթի նախարարության առաջին կարգի մրցանակ՝ «Տիգրան Մեծ» աշխատության համար: «Գրքարվեստ-2011» հանրապետական չորրորդ մրցանակարաշխություն: Հեղինակային կոլեկտիվ, համահեղինակ:

2. Մեդալներ.

1970 թ. — Президиум Верховного Совета СССР. «За доблестный труд», медаль, Москва.

- 1980 թ. — «За Вклад в Дело Дружбы», Почетный Знак, ССОД Москва.
- 2001 թ. — «Մովսես Խորենացի» մեդալ:
- 2005 թ. — ՀՀ Կառավարության «Հայոց Մեծ եղին» ոսկեկոտ արձարյա մեդալ:
- 2005 թ. — «Հայոց ցեղասպանության ուսումնասիրության քննազատում եվանճումների համար. 1915–2005», մեդալ:
- 2007 թ. — «Կահիրեի համալսարան» մեդալ:
- 2011 թ. — ՀՀ պաշտպանության նախարարություն. «ՀՀ զինված ուժեր. 1992–2012. 20 տարի», մեդալ:
- 2012 թ. — ՀՀ ՊՆ «Վազգեն Սարգսյան» մեդալ:
- 2013 թ. — Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, «Ղարաբաղյան շարժում» մեդալ:
- 2015 թ. — ՀՀ ՊՆ «Դրաստամատ Կանայան» մեդալ:
- 2015 թ. — «Երախտագիտություն» մեդալ՝ ԼՂՀ Նախագահի հրամանագրով:
- 2016 թ. — «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» երկրորդ աստիճանի մեդալ՝ ՀՀ Նախագահի հրամանագրով:
- 2017 թ. — Всероссийская комиссия по координации мероприятий, посвященных 100-летию геноцида армян награждает Оганесяна Николая Оганесовича юбилейной медалью в память 100-летия геноцида армян.

3. Հուշամեդալներ.

- 1977 թ. — «Ալ-Ձուհուրիյա ալ-Իրաքիյա. Արաբա-քրդական համազորմանկցությունը նախրված հուշամեդալ», որը նրան է հանձնել Իրաքի քուրդ նախարար Աբդ ալ-Սաուտար ալ-Շարիֆը Բաղդադում:
- 1986 թ. — «Ս. Մեսրոպ Մաշտոց» հուշամեդալ, Ազգային վարժարանի 25-ամյակ, Քուվեյթ:
